ՀԱՄԲՈՒՅՐՆԵՐ, ՈՐՈՆՔ ՀԵՏՈ ՔԵԶ ԿԹՈՂՆԵՆ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԻ ՄԵՋ

Ինչու են կանայք *ունենում կորուստներ*,

երբ նվիրվում են

ԼԻԶԱ ԲԻՎԵՐ

Սիրելի ընկեր,

Մեղքը և ամոթը զույգ եղբայրներ են, որոնք կաթվածահար են անում մեզ՝ կուրացնելով Աստծո սիրո հանդեպ և սահմանափակելով մեր ազատությունը: Միայն ճշմարտությունը կարող է ազատել մեզ, և Հիսուսը խոստացավ, որ Իր ճշմարտությունը «հիրավի կազատի» մեզ (տես Հովհ. 8.36): Կանայք մեծ հարձակումներ են կրել իրենց թշնամուց, որը փորձել է զրկել իրենց արժանապատվությունից և թաղել դատապարտության մեջ:

«Համբույրներ, որոնք հետո քեզ կթողնեն արցունքների մեջ» գիրքն ուղերձ է Աստծո սրտից Իր սիրելի դուստրերին: Նա այնպես է ստեղծել ձեզ, որ դուք ձգտեք մտերմության, ռոմանտիկ հարաբերությունների և սիրո: Դուք ստեղծված եք, որ լինեք ավելին, քան սեռական առարկա, և գտնեք ավելին, քան պարզապես սեռական բավականություն: Աստծո զորությունը և խոսքն ի զորու են կրկին քնեցնելու այն ցանկությունները, որոնք չափազանց վաղ են արթնացել ձեր կյանքում: Նա կվերականգնի ձեր պատիվը, իշխանությունը և ուժը. Աստված կանի ձեր կյանքում նույնը, ինչ Նա հրաշալիորեն արեց իմ կյանքում:

Ես նվիրում եմ այս գիրքը ձեզ և ամբողջ աշխարհում գտնվող այլ առաջնորդների՝ որպես իմ սիրո և աջակցության փոքրիկ նշան: Այն մարդկանց հետ, ում ճանաչում եք, համարձակ կիսվեք այս գրքով և այլ անվճար նյութերով, որոնք հասանելի են առցանց CloudLibrary.org կայքում: Ցանկանում եմ, որ խորասուզվելով այն ճշմարտությունների մեջ, որոնք գրված են այս գրքի էջերում՝ դուք ընդունեք ամբողջ գեղեցկությունը և առատությունը, որ Աստված նախատեսել է ձեզ համար:

Սիրելի ընկեր, այս հայտնությունը սիրո և շնորհքի մասին հավիտյան փոխեց իմ կյանքի ընթացքը: Ես աղոթում եմ, որ դուք հավիտյան վերափոխվեք այն բանից հետո, երբ բացահայտեք, թե ինչ է Աստված ի սրտե ցանկանում ձեզ՝ Իր թանկ զավակին: Շատ կուզեմ իմանալ, թե ինչ ազդեցություն ունեցավ այս ուղերձը ձեզ վրա և այն մարդկանց վրա, որոնք վստահված են ձեզ:

Անկեղծորեն՝

Լիզա Բիվեր
LisaBevere@ymail.com

MESSENGER INTERNATIONAL
MessengerInternational.org

CloudLibrary.org

ԳՈՎԵՍՏԻ ԽՈՍՔԵՐ «ՀԱՄԲՈՒՅՐՆԵՐ, ՈՐՈՆՔ ՀԵՏՈ ՔԵԶ ԿԹՈՂՆԵՆ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԻ ՄԵՋ» ԳՐՔԻ ՀԱՄԱՐ

«Լիզա Բիվերը Աստծո ամենաթափանցիկ, անմիջական և ուղիղ կանանցից մեկն է, ում ես ճանաչում եմ: Դու կարող ես վստահ լինել, որ այն ամենը, ինչով նա կիսվում է այս գրքում, եկել է աղոթքի, կարգ ու կանոնի և Աստծուն անձամբ ճանաչելու կյանքից և ուրիշներին օգնելու նվիրված սրտից: Երբ կանայք ցանկանում են մտնել այն ամենի մեջ, ինչ Աստված ունի իրենց համար, նրանք խաբվում են և շեղվում իրենց հոգիների թշնամու կողմից:

Գրքում խոսվում է այս խնդրի մասին այնպիսի ճշմարտությամբ, պարզությամբ և գեղարվեստական ոճով, որը գրավում է ընթերցողի ուշադրությունը և չի թողնում կտրվել գրքից: Ես գիտեմ սա, որովհետև, երբ սկսեցի կարդալ, չէի կարողանում այն ցած դնել: Սա այնպիսի գիրք է, որը խիստ անհրաժեշտ է այսօր, և յուրաքանչյուր կին՝ անկախ տարիքից, պետք է կարդա այն: Որքա՜ն կցանկանայի նման գիտելիք ունենալ, երբ դեռ պատանի էի»:

– ՍԹՈՐՄԻ ՕՄԱՐԹԻԱՆ

«Աղոթող կնոջ ուժը» գրքի հեղինակ

«Լիզան օգտագործել է Աստծո Խոսքը, որպեսզի «ճշմարիտ լույս» սփռի այն բաների վրա, ինչ Աստված նախատեսել է՝ բացահայտելով դրանց խեղաթյուրված պատկերը: Սա հզոր գիրք է իմ և ձեր դստեր համար, նաև այն կանանց համար, ովքեր ցանկանում են ազատություն գտնել Աստծո ծրագրերում»:

– ՍԹԻՎ ԱՐՏԵՐԲԵՐՆ

«Յուրաքանչյուր տղամարդու պայքարը»,
«Խուսափել պրն. Սխալից և գտնել պրն. Ճշտին»
գրքերի հեղինակ նաև «Հավատքի կանայք» ծառայության հիմնադիր

«Լիզան անդրադառնում է կնոջ սեռական ոլորտի հարցերին՝ ընդգծելով այն գեղեցկությունը, շնորհքը և ուժը, որ թաքնված է կանացիության մեջ: Աստված կոչ է անում բոլոր կանանց՝ վերականգնել իրենց սեռական կյանքի ճակատագիրը:

Ես հավատում եմ, որ Լիզան դիպչել է Աստծո սրտին և կանանց վերադարձրել սեռական արժանապատվության հանդերձները:

Վերականգնումը Աստծո սրտի ցանկությունն է և այս գրքի նպատակը:

Լիզան շնորհալի և համոզիչ ներկայացնում է Աստծո սրտի մտադրությունները կնոջ սեռական բնագավառի մաքրության վերաբերյալ:

Ես խորհուրդ եմ տալիս Աստծո դուստրերին՝ կարդալ այս գիրքը՝ անկախ տարիքից: Խորհուրդ եմ տալիս, որ այն կարդան պատանեկան ծառայության ավագները, խորհրդատուներն ու այն ծնողները, ովքեր սիրում են իրենց դուստրերին»:

– ԴՈՒԳԼԱՍ ՎԵՅՍ

«Սրտից սիրտ» խորհրդատվական կենտրոնի գործադիր տնօրեն

«Այս գրքում Լիզա Բիվերը պատասխանում է սեռական բնագավառին վերաբերող այնպիսի հարցերի, որոնք մտահոգում են կանանց, և որոնցից խուսափում է ավագների մեծ մասը: Լիզայի համարձակությունը և անզիջում դիրքորոշումը ստիպում են ավագներին և ծնողներին՝ կարդալ այս գիրքը: Ամենակարևորը, այս գիրքը պետք է կարդա յուրաքանչյուր կին, ով անկեղծորեն ցանկանում է ունենալ Աստծո իմաստությունը՝ այս ապականված աշխարհում մաքուր ապրելու համար»:

– ՆԵՆՍԻ ԱԼՔՈՐՆ

Ամերիկայի Գթության ծառայությունների նախագահ և հիմնադիր

«Աստված տարիների ընթացքում Լիզա Բիվերին տվել է իմաստություն և գիտություն: Ես շատ հիացած եմ այս գրքով: Այն պարունակում է հոգևոր առողջ խորհուրդներ, որոնք կօրհնեն երիտասարդ կանանց և կազատեն այն ճնշումներից, որոնք հասարակությունը դնում է նրանց վրա: Գիրքը օգտակար ուղեցույց է նաև մայրերի, երիտասարդ ավագների և հովիվների համար»:

– ԲԵԹԻ ՌՈԲԻԶՈՆ

«Կյանքն այսօր» ամսագրի թղթակից

«Իմ սիրելի ընկերուհի Լիզան կրկի՛ն գրեց: Այս նոր հզոր գրքով նա սովորեցնում է կանանց և դիպչում նրանց սրտերին»:

– ՇԵՐԻ ՌՈՈՒԶ ՇԵՖԵՐԴ

«Գերազանցությանը վայել» և «Կյանքը գլխավոր փորձ չէ» գրքերի հեղինակ և քարոզիչ

«Լիզան սրտացավությամբ և խորաթափանցությամբ խոսում է կնոջ սրտի խորը և գաղտնի ցանկությունների մասին և նրան ուղղում դեպի միակ ճշմարիտ Սերը, որը կարող է բավարարել նրան: Նա մերկացնում է այս աշխարհի համակարգի մոլորությունն ու սուտը՝ վերադարձնելով իրական կանացիության արժեքն ու արժանապատվությունը»:

– ԿԵՏԻ ԼՅՈՒՍ

«Դեռահասության մոլուցք», համահիմնադիր

«Ես հաճախ եմ գրել տղամարդկանց սեռական մաքրության մասին և ինձ անընդհատ հարցնում են. «Իսկ մե՞նք՝ կանայքս: Մենք նույնպես պայքարում ենք սեռական մեղքի դեմ»: Կանայք պետք է կնոջի՛ց լսեն այս հարցի պատասխանը, և Լիզան հենց այն կինն է, որ արեց դա: Աստված բազում անգամներ բառացիորեն վերափոխել է իմ կյանքը Բիվերների գրքերի միջոցով: Լիզան այս հարցում խնամքով ժամանակ է տրամադրել աղոթքին, ծոմին և Աստծո սիրտը փնտրելուն, ուստի վստահ եմ, որ այս գիրքը կվերափոխի քո կյանքը նույնպես»:

– ՖՐԵԴ ՍՏՈՒԿԵՐ

«Յուրաքանչյուր տղամարդու պայքարը, յուրաքանչյուր կնոջ ցանկությունը» գրքի համահեղինակ

Kissed the Girls by Lisa Bevere, Armenian, Edition 2
© 2019 Messenger International
www.MessengerInternational.org

Originally published in Armenian
© 2010 Word of Life Publishing House
Under license from Thomas Nelson Inc.

Originally published in English as Kissed the Girls
© 2002 Thomas Nelson Inc.
Additional resources in Armenian by John and Lisa Bevere are available for free download at: www.CloudLibrary.org

To contact the author: www.LisaBevere@ymail.com

This book is a gift from Messenger International and is
NOT FOR SALE

«Համբույրներ, որոնք հետո քեզ կթողնեն արցունքների մեջ»,
Լիզա Բիվեր, հայերեն
Երկրորդ հրատարակություն
© 2019 Messenger International
www.MessengerInternational.org

Սկզբնապես հրատարակվել է հայերենով
© 2010 Word of Life Publishing House
«Thomas Nelson Inc.» հրատարակչության թույլտվությամբ

Սկզբնապես հրատարակվել է անգլերենով, «Kissed the Girls» վերնագրով
© 2002 Thomas Nelson Inc.
Դուք կարող եք ներբեռնել Զոն և Լիզա Բիվերների հավելյալ նյութեր հայերենով հետևյալ կայքից. www.CloudLibrary.org

Հեղինակի հետ կապ հաստատելու համար. www.LisaBevere@ymail.com

Այս գիրքը նվեր է «Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայության կողմից և
ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ

ՀԱՄԲՈՒՅՐՆԵՐ, ՈՐՈՆՔ ՀԵՏՈ ՔԵԶ ԿԹՈՂՆԵՆ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԻ ՄԵՋ

Ինչու են կանայք *ունենում կորուստներ*,

երբ նվիրվում են

ԼԻԶԱ ԲԻՎԵՐ

Գիրքը նվիրվում է երիտասարդ և տարեց կանանց, ովքեր փափագում են երազել, բայց մոռացել են՝ ինչպես: Համբույրները նախատեսված չեն մեզ արցունքների մեջ թողնելու համար: Ընդհակառակը, դրանք ուրախության համար են: Թող այս էջերին գրված խոսքերն արթնացնեն և ուժեղացնեն ձեր սրտի ցանկությունը: Իմ աղոթքն է, որ դուք այս ճշմարտությունները դարձնեք ձերը և հեռացնեք յուրաքանչյուր ստվերոտ հիշողություն, վախ կամ մղձավանջ, որը կանգնած է ձեր և անպատմելի ուրախության միջև:

Վազե՛ք ձեր արքայազնի գիրկը և մտե՛ք ձեր երազանքի մեջ:

– Լիզա Բիվեր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նվիրում 7

ԳԼՈՒԽ 1 Պատմություն, որն Աստված ցանկանում է պատմել մեզ քնելուց առաջ 11

ԳԼՈՒԽ 2 Որտե՞ղ ենք մենք 25

ԳԼՈՒԽ 3 Գնա՛ և այլևս մեղք մի՛ գործիր 37

ԳԼՈՒԽ 4 Երբ արթնանում է սերը 51

ԳԼՈՒԽ 5 Քնած գեղեցկուհին 73

ԳԼՈՒԽ 6 Իսկական Մոխրոտիկը 87

ԳԼՈՒԽ 7 Ի՞նչ անել, երբ արթնանում է սեռական ցանկությունը 101

ԳԼՈՒԽ 8 Պատվի՛ր քո Հորը 117

ԳԼՈՒԽ 9 Կենդանի զոհեր 129

ԳԼՈՒԽ 10 Քանդել անեծքը 143

ԳԼՈՒԽ 11 Ընտրված՝ սիրատենչ և սուրբ Աստծո կողմից 163

ԳԼՈՒԽ 12 Մաքրության ուժը. 177

ԳԼՈՒԽ 13 Հագնվել շշմեցնելու համար 195

ԳԼՈՒԽ 14 Ապրել առանց զղջալու 211

ԳԼՈՒԽ 15 Ինչու ենք ունենում կորուստներ, երբ նվիրվում ենք 231

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Սիրո ուժը 240

Հեղինակի մասին 244

Երախտիքի խոսքեր. 245

1 Պատմություն, որն Աստված ցանկանում է պատմել մեզ քնելուց առաջ

Հնչեց հեռախոսազանգը, և ընդհատվեց տանը տիրող սովորական քաոսը, որը ստեղծել էին ամառային արձակուրդների պատճառով տանը գտնվող չորս տղաներս:

- Ալո՛:

- Լի՛զա, հովիվ Թեդն է: Ինձ հետաքրքիր է՝ արդյո՞ք դու կկարողանաս այս երեկո բարձր դասարանների աղջիկների հետ խոսել սեքսից:

Ես սառեցի՝ հիշելով հեռուստաշոուի վերջին դրվագը, որը դիտել էի կեսօրին տեղական հեռուստատեսությամբ, մինչ հավաքում էի չորացած լվացքը: Եթե այս շոուն ճիշտ էր, ուրեմն շատ բան էր փոխվել բարձր դասարաններում իմ սովորելուց հետո: Համաձայն հեռուստաշոուի՝ նույնիսկ միջին դասարանների աշակերտները ներգրավված էին այնպիսի սեռական գործողությունների մեջ, որոնց մասին ես նույնիսկ տեղյակ չեմ եղել իմ վաղ պատանեկան հասակում:

- Այս երեկո՞,- կմկմացի ես նյարդայնանալով:

- Այո՛,- շարունակեց նա,- ահա՛ ծրագիրը: Մենք բաժանելու ենք տղաներին և աղջիկներին: Ես կլինեմ տղաների հետ, իսկ դու՝ աղջիկների հետ պատանեկան սենյակում:

- Ձոնը այս երեկո ինքնաթիռով վերադառնում է: Դեմ չե՞ք լինի, եթե սկզբում նրա հետ խոսեմ,- հապաղելով հարցրի ես՝ փորձելով հետաձգել ժամանակը:

- Իհա՛րկե, երբ որոշեք, զանգեք ինձ կամ պատանեկան ծառայության հովվին:

> *Նույնիսկ միջին դասարանների աշակերտները ներգրավված էին այնպիսի սեռական գործողությունների մեջ, որոնց մասին ես նույնիսկ տեղյակ չեմ եղել իմ վաղ պատանեկան հասակում:*

Ես կախեցի լսափողը... մի փոքր դողալով: Ի՞նչ է կատարվում: Ես ճանապարհորդում եմ ամբողջ երկրով և խոսում տարբեր տարիքի կանանց մեծ խմբերի առջև, ինչո՞ւ պետք է հուզվեմ մեր տեղական դպրոցի բարձր դասարանների աղջիկների առջև: Ես փորձեցի կառավարել ինձ: Բացի այդ, իմ ամուսինը նախկինում պատանեկան ծառայության հովիվ է եղել: Եվ այդ երկու տարիները քիչ թե շատ անվնաս էին անցել ինձ համար: Հետո ես հասկացա, որ տարիքային խումբը չէր, որ անհանգստացնում էր ինձ, այլ՝ թեման:

Ես զանգեցի Զոնին: Նա գտնվում էր մի օդանավակայանում, որտեղից պետք է թռչեր տուն:

- Սիրելի՛ս, հովիվ Թեդը ցանկանում է իմանալ՝ արդյո՞ք կարող եմ այս երեկո բարձր դասարանների աղջիկների հետ խոսել սեքսից: Ես չգիտեմ ինչ անել: Դու այս երեկո տուն ես վերադառնում, և ինձ կարծես թե ուշ են զգուշացրել: Բացի այդ ես չգիտեմ, թե ինչ եմ ասելու նրանց: Նկատի ունեմ, դու գիտե՞ս, որ բարձր դասարաններում կան շատ աղջիկներ, որոնք զբաղվում են օրալ սեքսով:

Իմ վերջին մեկնաբանությունն արվեց՝ Զոնին ցնցելու նպատակով, բայց Զոնն ակնհայտորեն չազդվեց դրանից:

- Ինձ հետ խնդիր չունես: Կարծում եմ, դու պետք է գնաս:

- Բայց ի՞նչ եմ ասելու բարձր դասարանների աղջիկներին: Ես նույնիսկ դուստր չունեմ և գրեթե ժամանակ էլ չունեմ պատրաստվելու,- պատճառաբանեցի:

- Դու ունես երեք ժամ, Լի՛զա, կարծում եմ, պետք է համաձայնես,- պնդեց Զոնը:

Հիանալի՜ է, նա չէր պատրաստվում ինձ թաքնվելու տեղ տալ: Ես լսեցի, թե ինչպես էին տղաները վիճում և աղմկում վերևի հարկում:

- Ո՛չ, տղաները չափից շատ են աղմկում, և ես չեմ կարողանա ինչ-որ բան անել, և, ընդհանրապես, ի՞նչ պետք է խոսեմ սեքսից:

- Աստված քեզ ցույց կտա: Լսի՛ր, ես արդեն նստում եմ ինքնաթիռ, զանգի՛ր Թեդին և ասա՛, որ ինձ հետ կապված ամեն ինչ կարգին է:

- Լա՛վ, ես այդքան էլ համոզված չեմ, բայց կգնամ: Զանգահարի՛ր, երբ վայրէջք կատարես,- մրմնջացի ես:

Իհա՛րկե, Զոնի համար ամեն ինչ հիանալի էր, որովհետև երեկո-

յան խոսողը նա չէր: Ես ատում եմ, երբ ուզում եմ գլուխս մի բանից ազատել, իսկ նա ինձ թույլ չի տալիս: Ես աչքի անցկացրի նրա գրասենյակը՝ փորձելով դարակներում փնտրել հնարավորինս հարմար գրքեր: Այդ ընթացքում զանգեցի հովիվ Թեդին՝ դեռևս չիմանալով, թե ինչ պետք է ասեմ:

- Հովիվ Թե՛դ, Զոնի հետ կապված խնդիր չկա:

Մինչ կգիտակցեի, ինձ արդեն հանձնարարություն տրվեց:

- Հիասքա՜նչ է: Լսի՛ր, ես չեմ ուզում, որ դու չափից շատ պատրաստվես: Ահա՛ կաղապարը: Մենք միասին կփառաբանենք և կերկրպագենք: Հետո աղջիկները կմնան քեզ հետ: Նրանց կտրվի հնարավորություն լրացնելու երեքից հինգ քարտ՝ նշելով ցանկացած հարց, որ նրանք հավանաբար կունենան: Առաջին մասում դու կպատասխանես նրանց հարցերին, այնուհետև՝ կսովորեցնես, ապա թույլ կտաս, որ գնան:

- Ես հարցերը նախօրոք կտեսնե՞մ:

Պատասխանը՝ ոչ էր: Ես ինձ ավելի անհարմար զգացի:

- Հովիվ Թե՛դ, դուք գիտեի՞ք, որ նախքան քրիստոնյա դառնալը ես լիովին հեթանոս եմ եղել: Նկատի ունեմ, որ չունեմ մաքրության կամ սրբության հիանալի վկայություն: Ես կարծում եմ, որ մեկ ուրիշը ավելի հարմար կլինի այդ դասախոսության համար:

- Դե, ես չեմ կարծում, որ դու պետք է տաս քո վկայությունը (քանի որ արդեն հայտնի էր, որ ես չունեի այդպիսի վկայություն): Ես ցանկանում եմ, որ դու խոսես մաքրության մասին և տաս նրանց ուղիղ պատասխաններ: Դու կարո՛ղ ես:

Նրա ձայնն այլևս չլսվեց: Ես կախեցի լսափողը՝ զարմանալով, թե ինչպես եղավ, որ ներգրավվեցի սրա մեջ: Ես բազմաթիվ գործեր ունեի անելու: Եվս մեկ երեկո՝ երեխաներիցս հեռու, և ես զգում էի, որ այդ պահին ընդհանրապես որակավորված չեմ այդպիսի թեմայի համար: Ես դուրս վազեցի Զոնի գրասենյակից և համախմբեցի չորս տղաներիս, որպեսզի ներկայացնեի իմ վիճակը:

- Տղանե՛ր, ես ձեր համագործակցության կարիքն ունեմ: Հովիվ Թեդը խնդրել է երեք ժամից խոսել պատանեկան խմբի բարձր դասարանների աղջիկների հետ: Եվ իսկապես պատրաստվելու կա-

րիք ունեմ: Ես կլինեմ հայրիկի գրասենյակում: Խնդրո՛ւմ եմ, շա՛տ եմ խնդրում, ինձ չանհանգստացնեք, եթե միայն հարցը չհասնի արյուն թափելուն: Սիրալի՛ր եղեք մեկդ մյուսի հանդեպ: Գնացե՛ք դուրս և թարմ օդ շնչե՛ք, վերև բարձրացե՛ք կամ իջե՛ք ներքև, բայց ես չեմ ցանկանում, որ ձեզնից որևէ մեկը մնա այս հարկում: Ես չեմ ուզում որևէ վիճաբանություն լսել: Պա՞րզ է:

Նրանք նայեցին միմյանց և գլխով համաձայնության նշան արին: Նրանք հասկացան հուսահատված մոր հայացքը:

Ես վազեցի Զոնի սենյակ և հանեցի համաբարբառներն ու համապատասխան նյութերը: Հանկարծ նկատեցի իննամյա որդուս՝ Ալեքին, որն ինձ էր նայում սենյակի ապակե դռան ետևից: Ես բացեցի դուռը:

- Ի՞նչ է պատահել, Ալե՛ք,- անհամբերությամբ հարցրի:

- Օ՜, ոչի՛նչ, ես պարզապես քեզ եմ նայում, - հանգիստ պատասխանեց նա:

- Այդպես չի՛ կարելի: Հիշի՛ր, դու պետք է լինեիր վերևում, ներքևում կամ էլ դրսում: Խնդրո՛ւմ եմ՝ գնա՛:

- Շատ լավ,- ասաց նա՝ ուսերը թափ տալով:

Ես կրկին մեկուսացա և բացեցի Մեթյու Հենրիի «Մեկնաբանությունները», բայց իրականում գաղափար չունեի, թե որտեղից սկսեմ: Ես բացեցի իմ Աստվածաշնչի Ընդլայնված տարբերակը և վերանայում էի բոլոր ծանոթ խոսքերը մաքրության, պղծության և պոռնկության վերաբերյալ, երբ հեռախոսը կրկին զանգեց: Հիմա ես արդեն նյարդայնանում էի: Արագ վերցրի լսափողը:

- Ալո՛:

- Լի՛զա, Թե՛դն է: Լսի՛ր, այսօրվա երեկոն հետաձգվեց: Մենք պարզապես չենք կարող այն այդքան շուտ իրականացնել: Բայց ուզում ենք այս երեկո հայտարարել այդ մասին և իրականացնել հաջորդ շաբաթ: Իսկ դու քաղաքում կլինե՞ս:

Ահա իմ հնարավորությունը: Հավանաբար քաղաքից դուրս կլինեմ: Ես ճանկեցի օրագիրս և աչքի անցկացրի ամբողջ շաբաթը:

- Հաջորդ շաբաթ ես տանը կլինեմ:

- Հիանալի՛ է, մենք այդ ժամանակ էլ կհանդիպենք:

Նրա ձայնն այլևս չլսվեց:

Ես ինչ-որ թեթևություն զգացի՝ իմանալով, որ պատրաստվելու համար ունեի մեկ շաբաթ և ոչ թե երեք ժամ (որն իրականում երեք էլ չէր, քանի որ ո՛չ լոգանք էի ընդունել, ո՛չ էլ ճաշ պատրաստել): Ես թեթև շունչ քաշեցի և տղաներին տեղյակ պահեցի, որ կյանքը կարող է վերադառնալ սովորական ռիթմին, հետո առաջ շարժվեցի՝ շարունակելով օրը շատ ավելի թեթև զգացողությամբ:

Հաջորդ շաբաթվա ընթացքում սրտումս կրում էի ծառայությունը և նրա բովանդակությունը: Ես իսկապես փնտրում էի Աստծուն, ուսումնասիրում Սուրբ գիրքը և քննում իմ սիրտը այն հարցերի պատասխանների համար, որոնց, գիտեի, որ կհանդիպեմ: Ես կռահեցի, որ հնարավոր է ինձ հարցնեն այն մասին, թե որքան կարելի է «խորանալ» այդ տարիքում երկու սեռերի միջև փոխհարաբերություններում:

Ես քննում էի Աստվածաշունչը՝ հստակ և որոշակի պատասխան գտնելու համար, և հիշեցի այն մեկը, որ տվել էի իմ երեխաներին, երբ նրանք դեռ փոքր էին: Ես նրանց ասել էի, որ կախարդ Զոնսոնը վարակվել էր ՁԻԱՀ-ով՝ չափից շատ աղջիկների համբուրելու պատճառով: Դրանից հետո, ի զարման ինձ, իմ երեխաները վախենում էին համբուրել մեր բարեկամներին: Ես չէի ցանկանում նրանց անհանգստացնել մանրամասներով, քանի դեռ «այդքան փոքր» էին:

Երբ ավագ որդիս տասներկու տարեկան էր, ես նրան ուղարկեցի տղաների և աղջիկների փոխհարաբերությունների մասին թեմայով սեմինարի և խոստացա, որ ինքս կդասավորեմ նրա ամուսնությունը: Ես նույնիսկ առաջարկեցի իմ ճանապարհորդությունների ընթացքում ապագա հարսնացուի թեկնածուներից հարցաթերթիկներ հավաքել: Ես համոզել էի նրան, որ եթե նա չվճարեր ժամադրությունների համար, բավականին շատ գումար կխնայեր և կկարողանար իսկապես մի լավ մեքենա գնել:

Բայց հիմա ես պետք է լուրջ լինեի: Այնտեղ կլինեին մի քանի հարյուր աղջիկներ, ովքեր ինձ հետ չէին կիսի իմ տեսությունը ամուսնության մասին: Ես անկեղծորեն աղոթեցի.

«Հա՛յր, ես այս աղջիկների համար պատասխանի կարիք ունեմ: Ցանկանում եմ տալ Քո իմաստությունը և ոչ թե իմ սեփական կարծիքը կամ մեկ ուրիշինը: Կարո՞ղ եմ ասել, որ զույգերը կարող են իրար ձեռք

բռնել այն դեպքում, երբ նրանց փոխհարաբերությունները չեն խորացել: Կամ, միգուցե, Դու մտածում ես, որ կարելի է համբուրել: Ես իրոք կարիք ունեմ, որ շուտ իմանամ այս ամենը»:

Ես սպասեցի, բայց ոչ մի պատասխան չստացա Աստծուց, ուստի ոտքի կանգնեցի և գնացի լոգարան: Վաղը վճռական օր է: Մինչ լոգանք էի ընդունում, ես մտքով հաջորդ օրվա ծառայության վայրում էի: Հանկարծ լսեցի, որ Սուրբ Հոգին խոսում է ինձ հետ և ուղղություն տալիս:

Նա ինձ ասաց. «Դու կանոններ ես փնտրում նրանց վարքագիծը սահմանափակելու համար: Կանոնները նրանց չեն պահի: Այն ուժը և կարողությունը, որ նրանց անհրաժեշտ է, պետք է ծնվի փոխհարաբերությունից: Փոխի՛ր քո շեշտադրումը՝ մտածելով ոչ թե այն մասին, թե ինչ չեն կարող անել նրանք, այլ՝ թե ինչ կարող են անել: Ասա՛ աղջիկներին, որ նրանք իրենց ընկերների հետ փոխհարաբերություններում կարող են խորանալ այնքան, որքան նույն արարքը առանց անհարմար զգալու կանեին իրենց հայրերի առջև: Որովհետև հայրերը իրենց աղջիկների արժանապատվության պաշտպանն ու պահապանն են»:

Ես ցնցվեցի: Հարցը կանոնների մեջ չէր, և ես չէի կարող ինձ թույլ տալ գնալ այդ ճանապարհով: Դա կվերածեր քննարկումը օրենքների մասին դասախոսության, և պատանիներին կթողներ անզոր, իսկ ինձ՝ հուսախաբված վիճակում: Փոխարենը, այն իրենց երկնային Հոր հետ փոխհարաբերություններ ունենալու և երկրային հայրերին պատվելու մասին էր: Այն սահմանափակումների, բարոյական օրենքների մասին չէր, այլ՝ իրենց սրտերում գրված օրենքների: Ես դուրս եկա և սկսեցի ինքս ինձ համար նշումներ անել:

> *Նրանք իրենց ընկերների հետ փոխհարաբերություններում կարող են խորանալ այնքան, որքան նույն արարքը առանց անհարմար զգալու կանեին իրենց հայրերի առջև:*

Հաջորդ երեկո, երբ ժամանեցի, փառաբանությունն արդեն սկսվել էր: Ես ինձ այդքան էլ հարմար չէի զգում: Այդքան շատ պատանիների առջև կանգնած էր արդեն քառասունը լրացած մի կին: Նրանց աչքից հնարավոր չէր աննկատ մնալ: Ես պատկերացրի, որ պատանիները նայում էին ինձ՝ որպես «մեկ այլ անկոչ մայրիկի», որը

եկել է լրտեսելու իրենց երիտասարդական խումբը:

Երբ երկրպագությունն ավարտվեց, 3-5-ական սպիտակ քարտեր բաժանվեց ամբողջ լսարանին՝ հարցերը գրանցելու համար: Ես ժպտացի իմ կողքին նստած աղջիկներին և շրջվելով նրանց կողմը՝ խրախուսեցի գրել՝ ինչ որ կցանկանան: Հուսով էի, որ նրանք վախից բարեհամբույր կլինեին, և ես հետագայում կկարողանայի ճանաչել նրանց ձեռագիրը:

- Օ՜, ես հարց ունեմ հագուստի վերաբերյալ, - անմեղորեն արձագանքեց մեկը:

Ես վստահորեն գլխով արեցի և ժպտացի՝ ինքս ինձ մտածելով. «Հիանալի՜ է, ես կարող եմ պատասխանել հագուստին վերաբերող հարցին: Սա ավելի հեշտ կլինի, քան կարծում էի: Ես չպետք է այդպես տանջվեի»:

Քարտերը լրացնելուց հետո բոլոր աղջիկները թողեցին գլխավոր դահլիճը և գնացին պատանեկան դահլիճ: Մուտքի մոտ աղջիկները հանձնում էին քարտերը և ներս մտնում: Ես չէի կարող չնկատել, թե որքան աղմկոտ էին նրանք, երբ դահլիճից դուրս էին գալիս: Ես վախեցած սպասում էի մի կողմում, մինչ պատանեկանի ավագները աղջիկներից հավաքում էին քարտերը, որոնք մոտավորապես չորս հարյուրն էին: Երբ բոլոր տեղերը զբաղեցվեցին, աղջիկները տեղավորվեցին հատակին: Քարտերի խուրձը և բարձրախոսը հանձնեցին ինձ, և ես բարձրացա բեմ՝ անցկացնելու «Հարց ու պատասխան» բաժինը:

Եթե ինձ նույնիսկ տրվեր լրացուցիչ մեկ շաբաթ, ես չէի կարողանա ինձ պատրաստել այն հարցերին, որոնք ստացա այդ երեկո: Առաջինը այն հարցն էր, թե արդյո՞ք ես համաձայն եմ, որ եկեղեցու այսինչ ուսանողը (անունը գրված էր թերթիկին) ամենագայթակղիչ տղամարդն է: Ես պատասխանեցի, որ համաձայն չեմ, և որ իմ կարծիքով ամենագայթակղիչ տղամարդը իմ ամուսինն է:

Հաջորդ հարցը կապված էր հագուստի հետ. «Կարելի՞ է գայթակղիչ հագնվել, որքա՞ն կարող ես բացել մարմինդ»:

Ես նայեցի ներկա աղջիկներին: Նրանցից շատերն այնքան կարճ կիսաշրջազգեստներ էին հագել, որ ես վախենում էի, թե ինչ կպատահեր, եթե նրանք նստեին: Մյուսներն էլ կրում էին այնպիսի տաբատ-

ներ, որ կարողանային ցույց տալ իրենց մերկ փորն ու պորտը:

Հստակեցման համար ես հարցրի. «Ձեզ հետաքրքրում է, թե արդյոք կարելի է հագնվել գայթակղի՞չ»:

Մեծ մասը գլխով արեց՝ գոհ լինելով, որ ես հասկացա:

- Անշո՛ւշտ, իմ կարծիքով դա հրաշալի միտք է: Գնա՛ և հագնվի՛ր պոռնիկի նման, եթե ուզում ես գրավել պոռնիկի: Դա նման է ձկնորսությանը. ինչ խայծ օգտագործես, այդպիսի որս էլ կունենաս: Ուստի, եթե ցանկանում ես գրավել անբարոյական տղայի, ոչինչ մի՛ խնայիր անբարոյական հագնվելու համար:

Նրանք մի փոքր ապշած էին, ուստի ես շարունակեցի.

- Ես չեմ ասում, որ գրավիչ կամ նորաձև հագնվելը սխալ է, բայց գայթակղիչ հագնվելը տեղին է միայն փակ դռների ետևում՝ ամուսնու և կնոջ միջև:

Դա նման է ձկնորսությանը. ինչ խայծ օգտագործես, այդպիսի որս էլ կունենաս:

Ես կիսվեցի նրանց հետ՝ ասելով, որ կան բաներ, որ ես հագնում եմ միայն ննջասենյակում՝ իմ ամուսնու մոտ: Բոլորովին տեղին չէր լինի, եթե ես դրանք հագնեի շանը զբոսանքի տանելիս կամ առավոտյան իմ չորս տղաների համար նախաճաշ պատրաստելիս:

Հաճախ, երբ իմ երեխաներն օգնում են հավաքել և դասավորել չորացած լվացքը, նրանց աչքին կանացի որևէ գունագեղ և արտասովոր սպիտակեղեն է ընկնում: Ես նրանց բացատրում եմ, որ դրանք մայրիկի և հայրիկի իրերից են: Նրանք, ուսերը թափ տալով, այն մեկնում են ինձ. «Վերցրո՛ւ, դո՛ւ ծալիր, ես չգիտեմ՝ ինչպես պետք է այն ծալել»:

Մեկ այլ հարց, որ տվեցին աղջիկները, այն մասին էր, թե մարմնի ո՛ր մասը կարելի է ծակել, ես պատասխանեցի՝ մեջբերելով աստվածաշնչյան խոսքը՝ ականջները և քիթը (տե՛ս Եզեկիել 16.12): Ես նրանց խորհուրդ տվեցի խուսափել ծակել մարմնի այն մասերը, որտեղ չկա կռճիկային հյուսվածք:

Մի քանի հարց էլ կար համասեռամոլության վերաբերյալ աստվածաշնչյան տեսակետից: Արդյո՞ք Աստվածաշունչը ինչ-որ բան ասում է այդ մասին: Արդյո՞ք դա սխալ է: Ինչպե՞ս կարող է ցանկացած երկու մարդկանց միջև սխալ սեր լինել՝ լինի դա նույն, թե՝ հակառակ սե-

ռերի միջև: Որպես պատասխան՝ ես նրանց տվեցի կարդալու մի քանի աստվածաշնչյան տեղեր, որ ուսումնասիրեն, և բացատրեցի, որ ճիշտ բանը (սերը) սխալ ձևի մեջ (սեռական կապ նույն սեռի մարդկանց միջև) համարվում է սխալ: Այն՝ օրինական կարիքը անօրինական ճանապարհով բավարարելու ձև է, Աստծուց նշանակված օրինական սեռական սիրո արտահայտման խեղաթյուրում:

Կային այլ հարցեր օրալ սեքսի մասին, որոնցից մի քանիսն այնքան անհարգալից և անպարկեշտ էին, որ նույնիսկ դժվարանում եմ նշել այս գրքում: Բայց հետո հերթը հասավ ամենամեծ հարցին: Խնդրում եմ, ինձ սխալ մի՛ հասկացեք: Ես դրան հանդիպել էի արդեն մի քանի անգամ, բայց շարունակում էի թողնել վերջում: Այն ամենից հաճախ կրկնվողն էր՝ արագորեն նախորդելով նմանատիպ մեկ այլ հարցի. «Կարելի՞ է գայթակղիչ հագնվել»: Ես այլևս չէի կարող խուսափել. դա այն պահն էր, որին նրանք սպասել էին. ամենից շատ հետաքրքրող հարցը. «Որքա՞ն կարելի է խորանալ տղա-աղջիկ փոխհարաբերությունում»:

Որքա՞ն կարելի է խորանալ:

Երբ ես կիսվեցի այն պատասխանով, որ Սուրբ Հոգին տվել էր ինձ, շշնջոցն ու քրքջոցը դադարեցին, և այնպիսի լռություն տիրեց, որ ճանճի տզզոցը նույնիսկ կլսվեր: Յուրաքանչյուր աղջիկ իր մտքով անցկացնում էր այդ տեսարանը. «Իմ հայրիկի առջև՞»: «Ինչպե՞ս դա կլինի»: «Դե՛, մենք այդպիսի բաներ չենք անում մեր հայրիկների առջև»:

Սա ճշմարտություն է, քանի որ ամեն տեսակի սեռական բնույթի արարք մեծ մասամբ մենք անում ենք փակ դռների ետևում, մութ անկյուններում, գիշերվա քողի տակ, մեքենայի մեջ կամ թմրանյութերի ու ալկոհոլի ազդեցության տակ: Եթե մենք բավականաչափ անամոթ լինեինք, հավանաբար նաև կառանձնանայինք մեր տների մութ սենյակում, մինչ մեր ծնողներն ուրիշ տեղ քնած կլինեին: Բայց այդպիսի բաներ երբեք չէինք անի լույսի ներքո, զգաստ վիճակում, մեր հայրերի առջև:

Սենյակում դեռևս լռություն էր տիրում, և ես գիտեի, որ դա խճճված և խոցելի սերնդի կողմից տրված սխալ հարցի ճիշտ պատասխանն էր: Ամենից տագնապալի հայտնությունն ինձ համար այն էր, որ ես կանգնած էի եկեղեցի հաճախող բարձր դասարանների աղջիկների

առջև, որոնց հովիվը ջերմեռանդ և կրակով լցված անձնավորություն էր: Ես գիտեի, որ այս երիտասարդների խմբի ավագները ծարավ էին սրբության և Աստծո կրակի, որոնք կմաքրեին նրանց և կբերեին արթնություն ու վերականգնում: Ես գիտեի, որ այս ավագներն անձամբ հետամուտ էին սրբությանը: Որտե՞ղ էր թաքնված խնդիրը: Շուտով ես որոշ բաներ հասկացա:

Ծառայությունը ավարտվեց երեկոյան ժամը 9-ին: Ովքեր ցանկանում էին մնալ աղոթքի կամ պարզապես զրուցելու և ավելի շատ հարցեր տալու, կարող էին մնալ և խոսել պատանեկանի ավագներից որևէ մեկի կամ հենց ինձ հետ: Ես ցնցվեցի՝ տեսնելով, թե որքան շատ աղջիկներ մնացին, նրանց դեմքի արտահայտությունը տարբերվում էր այն մարտահրավեր նետող հայացքից, որ ես նկատել էի սկզբում: Այն, ինչ լսեցի հաջորդ երկու ժամերին, պարզապես կոտրեց իմ սիրտը:

Երիտասարդ աղջիկներ, ովքեր դողում էին սեռական բռնության և ոտնձգության ցավից ու ամոթից, որոնք ստացել էին այն մարդկանց կողմից, ում վստահել էին՝ ընկերներ, տղա-ընկերներ, հորեղբայրներ, քեռիներ, եղբայրներ, խորթ հայրեր կամ, նույնիսկ, հարազատ հայրեր: Երիտասարդ աղջիկներ, որոնք տանջվում էին սեռական պատկերների, այլասերված կինոնկարների, երաժշտական տեսահոլովակների, լուսանկարների կամ ինտերնետային կայքերի՝ մտքում շարունակ պտտվող տեսարաններից: Երիտասարդ աղջիկներ, ովքեր իրենց համարում էին կեղտոտ այն զրույցներից ու կատակներից, որոնց մասնակից էին եղել, ովքեր հոգնել կամ ամաչում էին այն անուններից, որոնք ասվում էին իրենց հասցեին: Մյուսները զբաղվում էին ձեռնաշարժությամբ (սեռական հաճույք ստանալ սեփական սեռական օրգանները գրգռելու միջոցով):

Այս գաղտնիքները մոխրագույն կինոնկարի նման ծածկում էին նրանց երիտասարդ կյանքը՝ իրենց ետևից թողնելով կեղտոտ փոշու հոտը, որպեսզի բոլորը իմանային, որ նրանք քայլել են կեղտոտ կրակի միջով:

Այս աղջիկները չունեին ապաստարան, որտեղ պարզապես կկարողանային հանգստանալ և քնել առանց պայքարելու անցյալի պատկերների, երևակայությունների, ձայների կամ ստվերների հետ: Վախն ու ամոթը նրանցից հեռացրել էին խաղաղությունը: Մի քանիսը զինվել

էին կանոններով, բայց համարել էին, որ դրանք կեղծ պաշտպանություն են իրենց մտքերի դեմ ուղղված հարձակումներին: Շատ հաճախ, եթե մարմինները խուսափել էին ֆիզիկական բռնությունից, մտքերը տեղի էին տվել: Նրանք փափագում էին, որ ինչ-որ ասպետ՝ փայլուն զենք ու զրահով, կփրկի իրենց, և իրենք կազատվեն մութ ստվերներից, որոնց մեջ բանտարկված էին: Շատ հաճախ նրանց կյանքում հենց տղամարդիկ են եղել, որ հիասթափեցրել, բռնության են ենթարկել կամ լքել են՝ թողնելով նրանց խոցված:

Ինձ պատմեցին բռնության պատմություններ, որոնք այնքան նուրբ ու աննկատ էին, որ կարող էիր սխալվել և դրանք նույնիսկ անվնաս համարել: Օրինակ՝ ծնողներն իրենց երեխաների հետ տներում կամ կինոթատրոններում դիտում էին այնպիսի կինոնկարներ, որոնք լցված էին սեռական հարաբերությունների տեսարաններով, պիղծ ակնարկներով և հաճախ կիսամերկ մարմիններով: Երիտասարդ աղջիկներն ասում էին, թե որքան անհարմար էին զգում՝ դիտելով այս ամենը ծնողների հետ, հատկապես՝ հայրերի: Նրանք ամոթ և անհանգստություն էին զգում, հետո նայում էին իրենց ծնողներին և նկատում, որ նրանք նույնիսկ գլուխները չէին թեքում: Մի քանի նման կինոնկարներից և հեռուստատեսային ներկայացումներից հետո նրանք վանում էին իրենցից անհարմար զգացողությունները, բայց այլևս չէին կարողանում ծնողներին նայել նույն լույսի ներքո: Նայելով իրենց հորը, թե ինչպիսի գայթակղությամբ է դիտում ուրիշ կնոջ մերկ կուրծքը՝ նրանց թվում էր, թե իրենց կուսական կրծքերն էին մերկանում: Չգիտես ինչու, նրանց մոտ առաջանում էր այնպիսի զգացողություն, կարծես իրենց բռնության էին ենթարկել:

> *Նրանք փափագում էին, որ ինչ-որ ասպետ՝ փայլուն զենք ու զրահով, կփրկի իրենց, և իրենք կազատվեն մութ ստվերներից, որոնց մեջ բանտարկված էին:*

Բայց ինչպե՞ս կարող է աղջիկը ապահով և պաշտպանված զգալ, եթե նրա հայրը տարված է սեռական հարաբերություններով: Արդյո՞ք նա կզգա հոր պաշտպանությունը, անհամաձայնությունը կամ հիասթափությունը, երբ վերջինս իր կողքին չլինի, եթե նա նման բան չի տեսել հոր ներկայությամբ: Ի՞նչ է տեղի ունենում, երբ փոքր աղջիկներն

այլևս իրենց ապահով չեն զգում:

Միգուցե դու երբեք դա չես զգացել, բայց հայտնաբերել ես, որ սեռական բնագավառում փակվել ես մեր հասարակության կողմից ներկայացված այլանդակ անաստված պատկերի պատճառով: Կարծես թե չարը արատավորել է առողջ ցանկության և սիրո պատկերը՝ այն վերածելով կրքի էժանագին վայրկենական լուսանկարի: Այդ իսկ պատճառով, ցանկացած տեսակի ցանկություն արթնացնելը քեզ համար դարձել է վախեցնող հեռանկար: Դու զարմանում ես, թե ինչպես կարող էիր երբևէ փոխել օրենքի ապահովությունն ու սահմանափակումը կրքով և վերահաս լքվածությամբ:

Բայց ինչպե՞ս կարող է աղջիկը ապահով և պաշտպանված զգալ, եթե նրա հայրը տարված է սեռական հարաբերություններով:

Եվ ինչո՞ւ, ինչո՞ւ ես պետք է գիրք գրեմ սեռական մաքրության արժեքների մասին, երբ պարզվում է, որ ոչ ոք իրականում դրանով չի հետաքրքրվում: Եվ ո՞ւմ համար գրեմ: Որպես պատասխան՝ այս գիրքը այն դուստրերի համար է, ովքեր սպասողականության մեջ են: Այս գիրքը՝ մայրերին հիշեցնելու համար է: Այս գիրքը՝ ամեն ընկածի համար է, ով տենչում է բարձրանալ, և նրանց համար, ովքեր պահել են իրենց մաքրությունը. այդպիսիները թող ուժեղ մնան՝ իմանալով, որ վարձք ունեն: Այս գիրքը նամակ է մայրերի և ավագների սերնդին, ովքեր կյանքում զգացել են, թե ինչ է զղջումը, և իհարկե՝ այս սերնդի դուստրերին, որ նրանք հեռու մնան մեր սխալներից և ժառանգեն խոստումները, այլ ոչ թե ամոթը: Այս գիրքը օգնություն է այն մայրերին, ովքեր չեն կարող իրենց դուստրերին ասել՝ ո՛չ, քանի որ տարիներ առաջ իրենք ասել են՝ այո՛:

Այս գիրքը արգելքների և թույլտվությունների գիրք չէ... այն վերականգնման գիրք է: Այն Աստծո հայացքն է, Նրա սկզբնական մտադրության հայտնությունը: Ոմանք կարող են սա հեքիաթ անվանել, բայց ես հավատում եմ, որ այն կարող է ճշմարիտ լինել: Կանոնները մեզ երբեք ազատ չեն արձակի, ինչպես վախն ու վերահսկողությունը երբեք մեզ ապահով չեն պահի: Այն ճշմարտություն է, որ մեզ ազատում է, ճշմարտություն, որն ավելի ուժեղ է, քան բոլոր ստերը, որ շրջապա-

տում են մեզ: Ճշմարտությունը՝ առավոտյան լուսաբացն է, որ հաջորդում է երկար ու խավար գիշերվան՝ լի սարսափելի հիասթափությամբ ու հուսահատությամբ:

Ես լսել եմ, թե ինչպես են ասում, որ եթե ցանկանում ես՝ ինչ-որ մեկը մի բան լսի, ասա՛ դա որևէ պատմության միջոցով: Եվ հայտնաբերեցի դրա ճշմարտացիությունը տարիներ առաջ, երբ իմ երեխաներին պատմություններ էի պատմում քնելուց առաջ: Դրանցից մեկը մի հորինված պատմություն էր ընտանիքի մասին, որը տեղափոխվում է արևմուտք և շատ արկածների է հանդիպում: Ես պատմում էի այս պատմությունը, երբ բոլորս պառկում էինք քնելու: Հաճախ երեխաները բաց էին թողնում պատմության այս կամ այն հատվածը՝ մե՛կ քուն մտնելով, մե՛կ կրկին արթնանալով: Նրանց հետ ես էլ էի ճանապարհորդում՝ քնի դեմ պայքարելով, և եթե մեկը արթուն էր մնում, ինձ ձայն էր տալիս և ուղղում՝ որևէ հատված բաց թողնելիս: Ես միշտ զարմանում եմ, որովհետև մինչև օրս նրանք պատմությունը շատ ավելի հստակ և մանրամասն են հիշում, քան ես:

Ինչո՞ւ ես սա պատմեցի: Որովհետև Աստված ցանկանում է մի պատմություն պատմել ձեզ, որը կմտցնի խորը քնի մեջ, որից ձեզ այդպես կոպտորեն արթնացրել են: Նրա պատմությունը հանդարտեցնում է կրքերը և վերադարձնում ձեզնից գողացված երազանքը: Այդ քնի մեջ ամեն վախ հեռանում է, և վերականգնվում է կորսված հույսը: Այն մի ապաստարան է, որտեղ չի մտնում ամոթը, և ամեն բան այնպես թարմ է, նոր և մաքուր, ինչպես ծաղիկները գարնանային անձրևից հետո:

> *Որովհետև Աստված ցանկանում է մի պատմություն պատմել ձեզ, որը կմտցնի խորը քնի մեջ, որից ձեզ այդպես կոպտորեն արթնացրել են:*

Նախքան այնտեղ գնալը՝ միասին աղոթենք.

Սիրելի՛ երկնային Հայր,

Դո՛ւ ես երկնքի և երկրի Արարիչը: Դու ես նաև մտերիմ հարաբերությունների հեղինակը: Իմ կյանքում կան բնագավառներ, որ արթնացել են ժամանակից շուտ: Դրանք իմ սեռական կյանքի բնագավառներն են, որոնք պետք է հանգիստ կամ երազային վիճակում լինեին, բայց արթնացել և բորբոքվել են: Ես խնդրում եմ, որ դիպչես Քո բժշկարար հանգստությամբ: Խնդրո՛ւմ եմ, որ այս գիրքը կարդալու ժամանակ Քո ճշմարտության լույսը ցրի իմ կյանքի այս բնագավառի ստվերները:

Ես հավատում եմ, որ միայն Դո՛ւ կարող ես անել սա, որովհետև Դու Ամենակարող և Ամենագետ ես: Բացի՛ր իմ սրտի աչքերը, որ ճանաչեմ Քեզ և քայլեմ Քո ճանապարհներով: Եվ այն հարցերը, որոնք կարգավորվելու կարիք ունեն, վերջնականապես կարգավորվեն: Հեռացրո՛ւ իմ վախերը և քաշի՛ր ինձ Քո ապահով թևերի տակ: Բացի՛ր իմ սիրտը և պատմի՛ր ինձ Քո պատմությունները, որպեսզի իմանամ և հասկանամ Քո նպատակը:

Սիրով՝ Քո դուստր

2 *Որտե՞ղ ենք մենք*

Նախորդ գլխում խոսեցի այն մասին, թե որպես Բարձրյալ Աստծո դուստրեր՝ որն է մեր դիրքը սեռական բնագավառի հարցում: Բայց ինչպե՞ս մենք հասանք այդպիսի հուսահատ և խոցելի վիճակի: Արդյո՞ք ինչ-որ սխալ քայլ կամ բազում քայլեր մեզ բերեցին և կանգնեցրին բռնության այս ճանապարհին: Մի՞թե մենք սիրախաղ արեցինք նրանց հետ, ովքեր գողացան մեր արժանապատվությունը և մեզ թողեցին մերկ ու անզոր: Ինչպե՞ս եղավ, որ մեր կանացի գեղեցկությունը և սեռական ոլորտի գաղտնիքը դարձան այդքան էժան ու հասարակ: Ինչպե՞ս այդքան հեռացանք մանկության հեքիաթների հույսից և խոստումից ու մտանք տանջող մղձավանջների խավարի և հուսահատության մեջ:

Երազանքները տեղի են տալիս մղձավանջներին, երբ մենք ականջ ենք դնում չարի շշուկներին և ստերին՝ փակելով մեր ականջներն ու սրտերը իմաստության ձայնի համար, երբ Նա բարձրաձայն կանչում է մեզ (տե՛ս Առակ. 1.20): Երազանքները փոխարինվում են մղձավանջներով, երբ փորձում ենք օրինական կարիքները բավարարել անօրինական և անհամապատասխան ձևերով: Երազանքները դառնում են մղձավանջներ, երբ ծանր լուծն ու հոգսերը կորացնում են մեր մարմինները: Երազանքները տեղի են տալիս մղձավանջներին, երբ թույլ ենք տալիս վախին գողանալ մեր հույսն ու երազանքը և ապա ուժասպառ անել մեզ մեր ճանապարհին (տե՛ս Հեսու 1.9):

> *Ինչպե՞ս եղավ, որ մեր կանացի գեղեցկությունը և սեռական ոլորտի գաղտնիքը դարձան այդքան էժան ու հասարակ:*

Ես շահագրգռված չեմ դեպքեր նշելու՝ ցույց տալու համար մեր բառացի վիճակագրական դիրքը (ինչպես, օրինակ, ամուսնալուծված ընտանիքների, միայնակ մայրերի տոկոսային հարաբերությունը կամ նախաամուսնական սեռական հարաբերությունների մեջ մտած պատանիների քանակը): Ինքներդ կարող եք պարզել այդ վիճակագրական տվյալները: Ես ցանկանում եմ խոսքս ուղղել ոչ թե ձեր բանականությանը կամ մտքին, այլ՝ ձեր սրտին: Ցանկանում եմ գտնել և ցույց տալ կանանց հոգևոր դիրքը. հավատացած եմ, որ մենք մերկ ենք և գտնվում ենք մղձավանջի ծուղակում:

Աշխարհով մեկ կանայք աղաղակում են. «Ինձ դուր չի՛ գալիս այն, ինչ տեսնում եմ: Ես ե՛տ եմ ուզում իմ հանդերձը: Ես ցանկանում եմ վերականգնել իմ արժանապատվությունը, պատիվը և խորհրդավորությունը: Ես ցանկանում եմ ե՛տ մղել վախը: Ցանկանում եմ զորանալ և ազատ լինել»:

> *Ցանկանում եմ գտնել և ցույց տալ կանանց հոգևոր դիրքը. հավատացած եմ, որ մենք մերկ ենք և գտնվում ենք մղձավանջի ծուղակում:*

Մենք ապրում ենք մղձավանջի մեջ, որովհետև անհնազանդ երեխաների նման հավատացել ենք այն ստին, որ ապստամբությունը մեզ ազատ կարձակի: Բայց վերջին հաշվով կանայք են, որ ամենից շատ տառապել են, երբ սիրո օրենքները պղծվել են: Սա նոր պայքար չէ. դա միևնույն պայքարն է, որ տեղի ունեցավ Եդեմի պարտեզում, շա՛տ վաղուց, երբ օձը շշնջաց. «Ապստամբի՛ր Աստծո դեմ, և դու իմաստուն ու ազատ կլինես»:

Ուստի մենք վերցրինք պտուղը, կերանք և փակեցինք մեր աչքերը՝ ակնթարթորեն հաճույք ստանալով նրա թունավոր բուրմունքից: Բայց երբ բացեցինք մեր աչքերը, հայտնաբերեցինք, որ ինչ-որ բան այն չէ: Մենք մերկ էինք և ամոթով ծածկված: Շրջվեցինք դեպի Ադամը, բայց նա էլ էր մերկ և չափից շատ զբաղված էր իր իսկ հարցերով, որպեսզի օգներ կամ վերականգներ մեզ: Այդ ամենից հետո նա նույնպես ամոթ զգաց, տեսավ, որ անզոր է, և մեղադրեց կնոջը: Այսպիսով՝ կինն ու տղամարդը վազում են

> *Բայց վերջին հաշվով կանայք են, որ ամենից շատ տառապել են, երբ սիրո օրենքները պղծվել են:*

և թաքնվում՝ փորձելով ծածկել իրենց մերկությունը, մինչ Աստված մտնում է Եդեմի պարտեզ: Եվ այդ ժամանակ սկսվում է մեղադրանքը:

Ադամ. «Այն կինը, որ ինձ տվիր, նա տվեց ինձ այն ծառից, և ես կերա» (Ծննդոց 3.12):

Եվա. «Օձն ինձ խաբեց, և ես կերա» (Ծննդոց 3.13):

Աստված. «Եվ Ես թշնամություն եմ դնում քո և կնոջ մեջտեղը… և դեպի քո մարդը լինի քո փափագը, և նա իշխի քեզ վրա» (Ծննդոց 3.15,16):

Ուշադրություն դարձրեք, որ Ադամը մեղադրում է թե՛ Եվային, թե՛ Աստծուն… «այն կինը, որ ինձ տվիր»: Այնուամենայնիվ, ինչպիսի՞ մեկնաբանություն է սա: Ի՞նչ պատահեց «ոսկր է իմ ոսկրից և մարմին՝ իմ մարմնից» ուրախ բացականչությունից հետո (Ծննդ. 2.23): Պարզապես կատարվեց վերաբերմունքի փոփոխություն: Այստեղ իրոք ինչ-որ բան տեղի ունեցավ. երկուսն այլևս մեկ չէին, քանի որ նրանք այլևս մերկ չէին և արդեն ամաչում էին: Ամոթն արդեն կատարել էր իր բաժանման գործը:

Այնուհետև կինը կասկածի տակ է դրվում, և անկեղծորեն պատասխանում. «Ես խաբվեցի և կերա»: Նրա խոսքերում ես մեղադրանք չեմ լսում, բայց լսում եմ զղջում: Որոշ չափով նա արդեն գիտակցում է իր կորուստը: Նա ընդմիշտ անհամերաշխ կլինի օձի հետ: Կցանկանա իր ամուսնուն, բայց վերջինս կիշխի նրա վրա: Ահա առաջին ակնարկը այն մասին, որ վերահսկողի դերում օրենքն է (բարու և չարի գիտությունը) և ոչ թե սերը, որովհետև օրենքը պահանջում է և իշխում, իսկ սերը առաջնորդում է և տալիս:

Շատ հաճախ Ադամի նման տղամարդիկ արձագանքում են իրենց անզորության զգացումին՝ վերաբերվելով կանանց որպես վերահսկվող օբյեկտների: Նրանք կարող են այս վերահսկողությունը կիրառել որոշ երկրներում օրենքներ հաստատելով, իսկ այլ տեղերում՝ անօրինական ձևով: Կանանց վերահսկում են որպես սեփականության կամ սեռական բավարարվածության առարկա: Նրանց վերահսկում են, օգտագործում և ղեկավարում:

> *Որովհետև օրենքը պահանջում է և իշխում, իսկ սերը առաջնորդում է և տալիս:*

Այսպիսով՝ սկսվում է պայքարը: Ուժի համար այս պայքարում կոր-

չում է կանանց ազնվական ծագումը՝ որպես տղամարդկանց լրացում և օգնական: Կորչում է տղամարդու կերպարը՝ որպես ուժեղ պաշտպան և մատակարարող: Փափագելով վերականգնվել՝ կոտրված և վիրավորված Ադամներն ու Եվաները շրջվում են մեկը մյուսից և բավարարվածություն փնտրում մեկ այլ տեղ: Համասեռամոլությունը կուրացրել է կոտրված տղամարդկանց՝ խոստանալով նրանց բավարարվածություն և լիարժեքություն ուրիշ տղամարդկանց հետ միության միջոցով: Բայց այսպես այլևս հնարավոր չէ: Երբ ինչ-որ բան լիարժեք է, այն կյանք է բերում: Ինչպես որ տղամարդը չի կարող լիարժեք դարձնել տղամարդուն, այնպես էլ կինը երբեք չի կարող լիարժեքության հասնել կնոջ կողքին:

Նախքան մեղանչելը Ադամն ուսումնասիրեց ամբողջ արարչությունն իր փառավոր կատարելության մեջ և չգտավ մեկին, ով կարող էր լրացնել իրեն, մինչև չհանդիպեց Եվային. ազատ տղամարդ Ադամն ու նրա գեղեցիկ կողակից Եվան միասին անհաղթելի կլինեին, իսկ սատանան պարզապես չէր կարող ետևում կանգնել և նայել դրան: Ուստի նա աղավաղեց մաքուր և կատարյալ ճշմարտությունը՝ կասկածի տակ դնելով Աստծո բարությունն ու իմաստությունը: Նա խաբեց Եվային՝ առաջարկելով արգելված պտուղը, իսկ Եվան տվեց այն իր կողքին լուռ կանգնած Ադամին: Ստի հայրը խաբելով՝ հեռացրեց նրանց Աստծո ներկայությունից և խլեց իշխանության ու զորության դիրքը:

Հետո նա այս վնասին ավելացրեց վիրավորանքը՝ յուրաքանչյուրին ասելով, որ իր կողակիցն իր թշնամին է: Եվ պայքարը շարունակվում է թուլացած ու բարկացած տղամարդու և վիրավորված ու բարկացած կնոջ միջև, քանի որ նրանցից յուրաքանչյուրը մեղադրում է մյուսին իր ցավի համար և ցանկանում է, որ սխալն ուղղվի: Բայց թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք չեն կարող բժշկել այդ վերքերը. միայն Աստվա՛ծ կարող է վերադարձնել մեզ մեր երազանքների պարտեզը:

> *Աստծո դուստրե՛ր, Ադամի երկրային որդիները չեն կարող փրկել ձեզ այս օձից, դրա համար կպահանջվի երկնային Արքայազնը:*

Կնոջ և օձի միջև պայքարը մինչև այժմ շարունակվում է (տե՛ս Ծնն. 3.15): Աստծո դուստրե՛ր, Ադամի երկրային որդիները չեն կարող փրկել ձեզ այս օձից, դրա համար կպահանջվի երկնային Ար-

քայազնը: Օձի նպատակը միշտ նույնն է եղել՝ Եվայի դուստրերին զրկել արժանապատվությունից, ուժից ու պատվից և դրանով նրանց անզոր դարձնել: Որոշ քաղաքակրթություններում նա իրականացնում է սա անօրինականության միջոցով՝ խրախուսելով կանանց հանել իրենց հագուստները և մերկացնել իրենց գեղեցկությունը բոլորի աչքի առջև:

Իսկ ուրիշ քաղաքակրթություններում նա օրենքներ է հաստատում կնոջ դեմ, որպեսզի վերջինս իրեն ոտքից գլուխ ծածկի մուգ ծածկոցով: Երկու քաղաքակրթություններում էլ, միևնույն է, կինը ոտքից գլուխ հագնված լինի, թե մերկ, նա պատված է ամոթով, և նրա գեղեցկությունը ներկայացված է որպես տղամարդկանց անախորժության և կրքի չար արմատ:

Երբ կանայք զրկվում են արժանապատվությունից և ստորացվում, տղամարդիկ նույնպես խայտառակվում են, որովհետև կինը տղամարդու փառքն է (տե՛ս Ա Կորնթ. 11.7): Երբ տղամարդը մերկացնում է կնոջը, նա պատվազրկում է ինքն իրեն: Նա կորցնում է կնոջը պաշտպանելու իր աստվածատուր ցանկությունը՝ միաժամանակ կորցնելով իսկական իշխանության նպատակը: Ինչպես որ մենք զրկվեցինք զորության և պատվի մեր կանացի հանդերձներից, այնպես էլ տղամարդիկ զրկվեցին իրենց իսկական տղամարդկային իշխանությունից:

> *Երբ կանայք զրկվում են արժանապատվությունից և ստորացվում, տղամարդիկ նույնպես խայտառակվում են:*

Երբ կանացիությունն ու առաքինությունն այլևս պատվի չեն արժանանում, կանայք ավելի հեշտությամբ են դիմում գայթակղության ամենափոքր ուժին և հագնում զգայականության հանդերձները: Եթե կանայք երբեք չմիանան իրենց կանացի գեղեցկության, պատվի և արժանապատվության նպատակին, ապա նրանք խոցելի կդառնան սեռական շահագործման համար:

Ցավոք, մեր երիտասարդ աղջիկներին չենք տվել մաքրությամբ, գեղեցկությամբ և զորությամբ պատված կանացի կերպարներ: Ես նույնիսկ համոզված չեմ, որ մեզնից շատերը գիտեն, թե որն է դա: Նայե՛ք ձեր շուրջը և տեսե՛ք այն կերպարները, որոնք երիտասարդ

աղջիկները ստիպված են ընտրել: Նրանց զրպարտում են՝ նախքան իրենց կրծքերը ձևավորվելը: Նախքան երիտասարդ աղջիկները կիմանան, թե ինչ է սեռական հարաբերությունը, նրանք արդեն փորձում են նմանվել սեռական ցանկություններ առաջացնող կանանց կերպարներին: Ամսագրերի կազմերին շատ քիչ մաքրության գրավիչ և ուժեղ կերպարներ կան, որոնցից կարելի է օրինակ վերցնել, իսկ ավելի տարեց կանանց համար ընտրությունն ավելի խղճուկ է:

Ես ցանկանում եմ, որ դու համարձակություն ունենաս տեսնելու, թե ինչի համար է իրականում այս պայքարը. օձն է խլում քեզնից քո ուժը, արժանապատվությունն ու հագուստը: Դու կարիք ունես տեսնելու սա և զայրանալու, որովհետև միայն այդ ժամանակ դու բավականին համարձակ կլինես կռվելու քո իսկական թշնամու դեմ և լիարժեք նվիրվելու հավատարիմ ու ճշմարիտ Թագավորին: Այդ ժամանակ դու կգտնես հանդերձներ քո մերկությունը շքեղությամբ ծածկելու համար: Դու կարթնանաս ու կհասկանաս, որ մեր պատերազմը տղամարդկանց կամ մեր ամուսինների դեմ չէ, այլ՝ մեր հոգիների թշնամու: Մենք պետք է արթնանանք գիշերային մղձավանջից և սկսենք աղաղակել երազանքի վերականգնման համար:

> *Ես ցանկանում եմ, որ դու համարձակություն ունենաս տեսնելու, թե ինչի համար է իրականում այս պայքարը. օձն է խլում քեզնից քո ուժը, արժանապատվությունն ու հագուստը:*

Քո հոգու հենց այդ աղաղակի մասին է, որ ես խոսում եմ. սեռական կյանքը երբեք չի կարող լցնել այդ դատարկ, ծածուկ վայրը: Դու փափագում ես ավելի խորը սիրո, մտերմության և հաղորդակցության, քան մարդը կարող է տալ քեզ: Դու ավելի ապահով ապաստան ես փնտրում, քան կարող ես գտնել երկրի վրա: Դու աղաղակում ես երկնային Արքայազնի սիրո համար: Եվ ես մի գաղտնիք ունեմ քեզ ասելու. հավատաս, թե ոչ, Նա էլ անհագորեն քե՛զ է փափագում: Հենց Նա՛ է քո սրտի խորքում տնկել ցանկության այս սերմը, և միայն Նա՛ կարող է կատարել քո փափագը:

Մենք շարունակ հուսախաբ կլինենք բավարարվածության համար մեր որոնումներում, եթե շարունակենք փնտրել այն սխալ տեղերում: Տղամարդիկ չեն կարող լուծում տալ քո խնդիրներին, ո՛չ էլ

պատասխանել քեզ: Մենք կարիք ունենք մեր աչքերը բարձրացնել դեպի երկինք, որովհետև մեր օգնությունը Տիրոջից է՝ երկնքի ու երկրի Արարչից (տե՛ս Սաղմ. 121.1,2): Միայն այդ ժամանակ մենք կգտնենք մեր աղբյուրը և կվերականգնենք մեր ուժն ու պատիվը:

> *Տղամարդիկ չեն կարող լուծում տալ քո խնդիրներին, ո՛չ էլ պատասխանել քեզ:*

Ինչո՞ւ ենք մենք՝ կանայք, այսքան խոցելի: Մենք ակնհայտորեն ապրում ենք այն ժամանակներում, երբ անօրինությունն ու անարդարությունը շատանում են (տե՛ս Մարկ. 24.12): Երբ անօրինական ձևով թագավորում է «ես»-ը, մահանում է սերը, և մեր պաշտպանությունը հեռանում է: Երբ մեղքի ցանկությունն իշխում է մարդկանց, քայքայվում են ընտանիքները, և կոտրվում են կանանց սրտերը: Ցանկությունները փոխվում են, իսկ ճշմարտությանը փոխարինում է սուտը: Հռոմեացիների գիրքը հետևյալ խոսքերով է նկարագրում այս ներկա ուժգնացող իրավիճակը. «Նրա համար Աստված էլ նրանց մատնեց իրենց սրտերի ցանկության մեջ՝ պղծության համար, որ խայտառակեն իրենց մարմիններն իրենց անձերում: Որոնք Աստծո ճշմարտությունը ստության հետ փոխեցին և երկրպագեցին և պաշտեցին ստեղծվածներին, քան թե Ստեղծողին, որ օրհնյալ է հավիտյանս. ամե՛ն» (Հռոմ. 1.24,25):

Երբ մենք ճշմարտությունը փոխում ենք ստով, ավելի շատ ծառայում մեր սեփական ցանկություններին, քան թե Աստծուն, մենք ցածրանում ենք և իջնում սեռական անմաքրության մակարդակին: Երբ մեր սիրտն ուղղված է լինում սեռական ցանկությանը, Աստված թողնում է մեզ ապրել մեր ուզած ձևով: Ինչպես որ Նա ետ չպահեց Ադամին ու Եվային իրենց ցանկություններից, այնպես էլ հիմա մեզ չի սանձում մեր ցանկություններից: Նա ցանկանում է, որ Ինքը լինի մեր իսկական ցանկությունը, բայց եթե մենք չենք փափագում Նրան, Նա թույլ է տալիս մեզ ունենալ այն, ինչ ուզում ենք, նույնիսկ եթե դա վնասակար է մեզ:

> «Նրա համար Աստված մատնեց նրանց անարգ կրքերի, ու նրանց էգերը բնական գործածությունը փոխեցին անբնականի հետ: Այնպես էլ արուները, կնոջ բնական գործածությունը թողնելով, իրենց ցանկություններով իրար հետ բորբոքվեցին… արուներն արուների հետ

խայտառակություն էին գործում, և այն, փոխարենը, որ արժանի էր իրենց մոլությանը, իրենց անձերում ընդունում էին» (Հռոմ. 1.26,27):

Եթե մեր դրդապատճառը ոչ թե մեր կյանքը տալն է, այլ միայն հաճույք ստանալը, ապա ուշ թե շուտ պոռնկությունն ու սեռական անմաքրությունն այլևս բավական չեն լինի մեր ախորժակը բավարարելու համար: Ցանկությունը տանում է է՛լ ավելի ամոթալի ու խեղաթյուրված կրքերի և շարունակում ցած իջեցնել:

«Եվ ինչպես որ չընտրեցին Աստծուն ունենալ իրենց գիտության մեջ, Աստված մատնեց անարգ մտքի, որ անարժան բաներ գործեն» (Հռոմ. 1.28):

Երբ Աստծո գիտությունը մերժվում է, մենք ժառանգում ենք հիմարության և արատավորության մի վիճակ, որը զուրկ է բարոյականությունից կամ սրբությունից: Այստեղ կորչում է բարին, և մենք սայթաքում ենք խավարի մեջ՝ կաղալով ավելի ու ավելի ներքև: Մի՞թե Աստված է մեզ արատավոր դարձրել: Իհարկե՝ ո՛չ: Նրա վերջնական ցանկությունը մեզ վերականգնելն է, որն անշուշտ նշանակում է, որ մեր սրտերը դառնան Իրենը: Բայց երբ մենք խփում ենք մեր ոտքը և ասում. «Ո՛չ, ես իմ ուզածն եմ ուզում», Աստված ետ է քաշվում ու թողնում, որ ունենանք այն, ինչ մեր հիմար կամքն է պահանջում:

Երբ տղամարդիկ թուլանում են և կորցնում իրենց տղամարդկությունը, նրանք սեռական փորձառություններ են փնտրում իրենց կրկին տղամարդ զգալու համար: Երբ տղամարդիկ նվաստանում են, նրանք ամեն բան անում են իրենց կրկին ուժեղ զգալու համար: Այսպիսի մթնոլորտում նրանք փնտրում են հայրերին ու իսկական առաջնորդներին, բայց շատ հաճախ ոչ մեկին էլ չեն գտնում: Չունենալով աստվածային օրինակներ՝ հուսահատության մեջ նրանք հեռանում են իրենց ավագներից և օտարանում իրենց կանանցից ու երեխաներից, իսկ շատ հաճախ՝ լքում նրանց: Կանայք տեսնում են այդ դատարկությունը և փորձում գրավել այն դիրքը, որը տղամարդու համար է նախատեսված, բայց չկարողանալով ինչ-որ բան անել՝ նրանք երեխաների հետ հայտնվում են գերության մեջ: Ամբողջ աշխարհում թուլացած և զայրացած տղամարդիկ կռիվ են փնտրում իրենց կանանց և երեխաների հետ՝ փորձե-

լով կրկին իրենց զորացած զգալ, բայց դա երբեք չի գործում:

Անհնազանդությունը բերում է գերություն և պատիժ: Բայց մեզ պատժելը երբեք չի եղել Աստծո մտադրությունը: Նա ցանկանում է ազատություն հռչակել: Լսե՛ք Նրա հրավերը.

> «Հիմա եկեք ու վիճաբանենք,- ասում է Տերը,- եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պես լինեն, ձյան պես պիտի սպիտակեն, եթե որդան կարմիրի պես լինեն, ասրի պես սպիտակ պիտի դառնան: Եթե հոժարեք և լսեք, երկրի բարիքը կուտեք» (Եսայի 1.18,19):

Նա առաջարկում է մեզ լինել խոհեմ, նայել մեր վիճակին խիզախությամբ ու ճշմարտությամբ և գիտակցել, որ այն այնքան էլ գեղեցիկ չէ: Մեր մեղքերը բաց վարդագույն չեն, այլ՝ ճչացող վառ կարմիր, և պահանջում են արյան զոհաբերություն: Բայց Աստված չի ցանկանում մեր զոհը, որովհետև Իշխանն արդեն գինը վճարել է: Աստված փափագում է լվանալ և մաքրել մեզ: Դատարկ, երբեք չհագեցնող «կերակուր» ուտելու փոխարեն (սեռական հարաբերություն՝ առանց անձնական խորը մտերմության, ամուսնություն՝ առանց ուխտի) Նա առաջարկում է մեզ երկրի լավագույն բարիքները, եթե հոժար լինենք և հնազանդվենք: Հոժար լինենք ապաշխարելու և խոստովանելու, որ հեռացել ենք ճանապարհից: Հոժար լինենք ծառայել Նրան ուրախությամբ, որովհետև Նա բարի է, հավատարիմ և ճշմարիտ: Հոժար լինենք հնազանդվել Նրա Խոսքին, որովհետև այն սիրո, կյանքի և ազատության օրենքն է: Հոժար լինենք վերցնելու մեր խաչը և մեր կյանքը ծածկելու Քրիստոսի՝ մարմին դարձած Խոսքի մեջ, և հետևելու Նրա օրինակին: Հովել մարգարեի խոսքերն այսօր ուղղված են մեզ.

> *Բայց մեզ պատժելը երբեք չի եղել Աստծո մտադրությունը:*

> «Սակայն հիմա էլ,- ասում է Տերը,- դեպի Ինձ դարձե՛ք ձեր ամբողջ սրտով և ծոմով, լացով ու սգով: Եվ պատռե՛ք ձեր սրտերը, ոչ թե ձեր հանդերձները, և ետ դարձե՛ք դեպի ձեր Տեր Աստվածը, ըստ որում ողորմած և գթած է, երկայնամիտ, բազումողորմ և զղջացող չարիքի համար» (Հովել 2.12,13):

Աստված կանչում է այս սերնդին: *Սակայն հիմա էլ, երբ ամեն բան անհույս է թվում, և դու քեզ կեղտոտ ու անօգնական ես զգում, երբ բոլորը թուլացել են, և այն, ինչ դուք փորձել եք, հիասթափեցրել է ձեզ… Ես չեմ հիասթափեցնի: Սակայն հիմա էլ, երբ թվում է, թե արդեն չափազանց ուշ է… ո՛չ, ուշ չէ: Դարձե՛ք Ինձ ձեր ամբողջ սրտով: Պայքարը միշտ եղել է կանանց սրտերի համար, և Աստված խնդրում է ձեր կոտրված, խոցված և վիրավորված սիրտը: Նա հրավիրում է ձեզ շրջվել ձեզ տանջող մղձավանջից և քայլ անել դեպի Իր երազանքը, որովհետև ժամանակների սկզբից Նա փնտրում է հարսնացուի՝ հենց ձեզ նման: Նա ամենուրեք կանչում է գերի կանանց՝ «Ազատվի՛ր այդ շղթաներից և դարձի՛ր Իմը», որովհետև «սիրտս հափշտակել ես, ո՛վ իմ քույր հարս. սիրտս հափշտակել ես նայվածքներիցդ մեկով…» (Երգ երգոց 4.9):*

> *Պայքարը միշտ եղել է կանանց սրտերի համար, և Աստված խնդրում է ձեր կոտրված, խոցված և վիրավորված սիրտը:*

Դու հափշտակել ես Նրա սիրտը: Հիմա վազի՛ր Նրա մոտ և թույլ տուր, որ Նա էլ քո սիրտը հափշտակի: Բացի՛ր քո սիրտը այն սիրո և ճշմարտության համար, որ կգտնես այս էջերում, և թույլ տուր, որ դրանք կենդանանան քո կյանքում: Աշխարհը տվեց մեզ իր համբույրները և հետո թողեց մեզ արցունքների մեջ: Բայց նույնիսկ հիմա Արքայազնը կանչում և ավելի լավ բաներ է խոստանում նրանց, ովքեր կարծագանքեն Իր սիրուն:

> «Իմ սիրեկանը պատասխանեց և ասաց ինձ. «Վե՛ր կաց, ո՛վ ընկերուհիս, ո՛վ գեղեցիկս, ու արի՛, ե՛կ: Որովհետև ահա ձմեռն անցել է, անձրևը անցել-գնացել է: Ծաղիկները երևում են տափի վրա. երգելու ժամանակը հասել է. տատրակի ձայնը լսվում է մեր երկրում»» (Երգ երգոց 2.10-12):

Սիրելի՛ երկնային Հայր,

Ես լսում եմ, թե ինչպես է Քո ձայնը կանչում ինձ. «Սակայն հիմա էլ»: Հափշտակի՛ր իմ սիրտը և պահպանի՛ր այն: Ների՛ր ինձ, որ ընդունել եմ սուտը և շրջվել Քեզնից: Ես ընդունում եմ, որ իմ մեղքերը ալ կարմիր են եղել, և շնորհակա՛լ եմ, որ Քո Որդու կյանքը տվեցիր, որպեսզի դարձնես ինձ ձյան պես սպիտակ: Ես թանկ կգնահատեմ Նրա թափած արյունը: Շնորհակալություն, որ ցույց ես տալիս ինձ իմ իսկական դիրքը: Ես հոգնել եմ մերկ, ամոթահար և վախեցած լինելուց… Ես ետ եմ ցանկանում իմ հանդերձները: Շրջվում եմ ցանկասիրության և անօրինության կերպարներից ու կրկին ընդունում պատիվը, զորությունը, խորհրդավորությունը և ազնվականությունը, որոնք դրել ես կանացի կերպարի մեջ: Քո ճշմարտությունը դարձրո՛ւ ավելի իրական, քան իմ կյանքի որևէ գերության կամ մոլորության բնագավառ, որպեսզի ես լինեմ լիակատար ազատ և լիովին Քեզ պատկանեմ:

Սիրով՝ Քո դուստր

3 *Գնա՛ և այլևս մեղք մի՛ գործիր*

Նախորդ գլխում խոսեցինք այն վաղեմի պայքարի մասին, որն ընթանում է մեր հոգիների թշնամու՝ սատանայի, և Եվայի դուստրերի միջև: Սատանան հաստատ և համառ է եղել կանանց ամաչեցնելու, մերկացնելու և պատվազրկելու իր փորձերում՝ սկսած Եդեմի պարտեզից մինչև մեր ժամանակները: Ցավոք, նրա ամենաթշնամական հարձակումը հաճախ կատարվում է կրոնի քողի տակ: Աստվածաշնչում չկա մի տեղ, որտեղ այս պայքարն ավելի ակնհայտ լինի, քան այն կանանց մոտ, ովքեր բռնվում էին շնության մեջ: Դա մի անհավանական և խոսուն օրինակ է օրենքի ու կրոնի դաժանության, Աստծո ողորմության և սիրո գեղեցկության մասին: Ես ցանկանում եմ, որ միասին անդրադառնանք այդ տեսարանին և այն դիտենք բոլորովին այլ լույսի ներքո:

Ե՛կ միանանք մեծ բազմությանը, որն առավոտ կանուխ արդեն կիտվել էր տաճարի բակում և սպասում էր լսելու Հիսուս անունով մի երիտասարդ ռաբունու: Որպես կին՝ ամենահմաստուն քայլը մեր կողմից կլիներ այն, որ աննկատելի ներս սողոսկեինք այնտեղ՝ նախքան արևի պայծառությունը կբացահայտեր մեր ներկայությունը: Հիսուսն այնպե՞ս է տարբերվում օրենքի մյուս ուսուցիչներից: Սովորեցնելիս՝ Նա նույնիսկ բարեհաճում է նստել մարդկանց մեջ: Այս Մարդու մեջ նկատվում է ազնվաբարո զորություն և հզոր իմաստություն, որի նմանը ո՛չ տեսել են, ո՛չ լսել: Երբ Նա խոսում է, դու լսում ես մեկ ուրիշի ձայնը. Նրա խոսքերում դու լսում ես Հայր Աստծո խոսքերը:

Մինչդեռ ուր որ Նա գնում է, հանդիպում է հակառակության: Նա այնպես ազատ է խոսում Աստծո սիրո մասին, որ Նրանից բժշկություն է հոսում դեպի հիվանդներն ու տկարները: Կրոնական առաջ-

նորդներն ատում են Նրան, բայց հասարակ մարդիկ՝ ոչ. նրանք սիրում են Հիսուսին: Իսկ կանայք ընդհանրապես չպետք է խառնվեն վիճելի հարցերի մեջ: Մարդկանց զգուշացրել են հեռու մնալ Նրանից, բայց դա հնարավոր չէ: Այս առավոտ ինչ-որ անդիմադրելի ուժ քաշում է քեզ Նրա ներկայության մեջ: Դու փափագում ես կրկին լսել Նրա խոսքերը... դրանք այն քնարերգության հնչյուններն են, որոնք քո սիրտը փափագում է բարձրաձայն երգել: Դու սպասում ես Նրան այս անսովոր լուռ, բայց սպասումներով լի ամբոխի մեջ... Նա խոստացել է վերադառնալ այս առավոտ և սովորեցնել:

«Եվ առավոտյան դարձյալ եկավ տաճարը, և ամբողջ ժողովուրդը Նրա մոտ էր գալիս, և Նա նստած սովորեցնում էր նրանց» (Հովհ. 8.2):

Արևածագի առաջին շողերի հետ հայտնվում է Նա՝ Իր աշակերտների հետ, և Նրա ոտնաձայներից երկինքը վերածվում է կրակի փառավոր ստվերների: Արևածագի շողերի ներքո դժվար է նշմարել Նրա դիմագծերը: Մի քանիսին գրկաբաց ողջունելով՝ Նա նստում է սովորեցնելու: Ամբողջ սրտով լսում ես Նրան՝ կառչելով ամեն խոսքից: Բայց հորիզոնում խռովության նշաններ են երևում:

Հեռվից Հիսուսին է մոտենում մարդկանց մեկ ուրիշ խումբ: Այս բարկացկոտ ձայները և մութ կերպարանքները վիճում են ինչ-որ մեկի հետ, ով չի երևում: Երբ նրանք մտնում են տաճարի բակ, դու ճանաչում ես նրանց պատմուճանները և հասկանում, որ նրանք կրոնական առաջնորդներն են: Նրանց մեջտեղում գտնվող մարդը ծածուկ է մնում, մինչև նրանք հայտնվում են Հիսուսի և ամբոխի միջև, ապա հրելով՝ նրան նետում են Հիսուսի ոտքերի մոտ: Ահա զզգզված մազերով մի կին է, որը ճանկում է հագուստի կտորը՝ փորձելով ծածկել իր մերկությունը, բայց նրա ծածկոցը բավական չէ: Ակնհայտ է, որ նրան հանկարծակի բռնել են խայտառակության անկողնում և այնտեղից քարշ տալով բերել: Հետաքրքիր է՝ իսկ ո՞ւր է տղամարդը: Առաջնորդներին չի գոհացնում, որ կինը գետնին է կծկվում. նրանք կանգնեցնում են կնոջը, որ բոլորը տեսնեն:

«Դպիրները և փարիսեցիները մի կին բերին նրա մոտ՝ շնության մեջ

բռնված, և նրան մեջտեղը կանգնեցնելով՝ ասացին. «Վարդապե՛տ, այս կինը բռնվել է հայտնապես շնանալիս: Եվ օրենքում Մովսեսը պատվիրեց մեզ, որ այսպիսիները քարկոծվեն, հիմա դու ի՞նչ ես ասում»» (Հովհ. 8.3-5):

Ի՞նչ կասի Հիսուսը այսպիսի կնոջը: Ի՞նչ կլինի նրա ճակատագիրը: Իհարկե, այս առաջնորդներին նա ընդհանրապես չի հետաքրքրում: Նրանք Հիսուսից պատասխան են պահանջում, որովհետև.

«Այս բանն ասում էին՝ Նրան փորձելով, որ չարախոսեն Նրանից...» (Հովհ. 8.6):

Օ՜, բայց դու Նրա պատասխանն ես ուզում: Ինչպես այդ օրը ամբոխի մեջ գտնվող ցանկացած կին, դու կարիք ունես լսելու, թե ինչ կասի Նա: Ի՞նչ է Հիսուսն ասում ակնհայտ մեղավոր կանանց: Ի՞նչ դատավճիռ է Նա կայացնում այն մարդկանց, ում համար օրենքը մահ է պահանջում: Իհարկե, այս կնոջ դեպքը շատ ավելի մեծ դավադրության դժբախտ փորձ է: Դա Աստծուն ցածրացնելու հնագույն փորձ է, և իրական հարցը կրոնական առաջնորդների համար Հիսուսին որակազրկելու հնարավորությունն է: Նայե՛ք Նրան:

«...Հիսուսն էլ դեպի ցած ծռվելով՝ մատով գրում էր հողի վրա» (Հովհ. 8.6):

> *Ի՞նչ է Հիսուսն ասում ակնհայտ մեղավոր կանանց: Ի՞նչ դատավճիռ է Նա կայացնում այն մարդկանց, ում համար օրենքը մահ է պահանջում:*

Սկզբում Հիսուսը չի կամենում նայել կնոջը կամ պատասխանել նրանց: Նա գրում է հողի վրա: Աստծո մատը հողի վրա փորագրում է տառեր, որոնք արձանագրված չեն պատմության մեջ: Նա հրաժարվում է նայել կնոջ աչքերին՝ իմանալով, որ արդեն խայտառակված և վախեցած կինը Իր հայացքում, բացի արհամարհանքից, ոչինչ չի կարող տեսնել: Հիսուսը, ուրիշների պես, դատապարտության աչքերով չի նայի այդ կնոջը: Հավանաբար Իր հիշողության մեջ Նա տեսնում է մեկ ուրիշի, ով շատ վաղուց Պարտեզում փորձեց ծածկել իր մերկությունը:

«Բայց երբ որ ստիպում էին՝ հարցնելով Նրան, վեր նայեց և ասաց. «Ձեզնից ով անմեղ է, թող առաջ նա գցի նրա վրա: Եվ դարձյալ դեպի ցած ծռվելով՝ գրում էր հողի վրա» (Հովհ. 8.7,8):

Բարու և չարի գիտության մեղադրող ձայնը աղաղակում է՝ պահանջելով բավարարվածություն, մինչդեռ փառքի Թագավորը հանգիստ ինչ-որ բան է գրում հողի վրա: Միգուցե նրանց ձայնի մեջ Նա լսեց օձի մեղադրող ձայնը. «Դու միգուցե ծածկես նրան, բայց ես, միևնույն է, կմերկացնեմ նրան և կրկին խայտառակ կանեմ: Նա երբեք չի փոխվի: Նա պետք է մահանա Քո ոտքերի մոտ... սա՛ է օրենքը»: Այս անգամ Նա չի պատասխանում օձի մեղադրանքներին: Այդ ամենը շուտով կլուծվի: Նա հիմա միայն խոսում է Իր առջև կանգնած մեղադրողների հետ՝ առաջինը թող նա գցի քարը, ով մեղավոր չէ, և վերադառնում է հողի մեջ նկարած պատկերին: Իսկ դու, շունչդ պահած, սպասում ես:

«Նրանք էլ երբ որ սա լսեցին և իրենց խղճմտանքից հանդիմանվեցին, մեկը մեկի ետևից դուրս էին գնում՝ ծերերից սկսած, մինչև հետինները, և միայն Հիսուսը մնաց, և կինը՝ կանգնած մեջտեղը» (Հովհ. 8.9):

Առաջին քարը պետք է նետեր նրանցից մեկը, ապա բոլորը պետք է հետևեին նրան: Բայց չգտնվեց մեկը, որ կարողանար դա անել: Կամ, միգուցե, կա՞ մեկը: Այո՛, կա՛: Հիսուսն անմեղ է, բայց Նա հրաժարվեց քար նետել կնոջ վրա: Նա միակ արդար դատավորն է, բայց չի եկել նրան դատապարտելու, այլ՝ փրկելու:

> *Հիսուսն անմեղ է, բայց Նա հրաժարվեց քար նետել կնոջ վրա: Նա միակ արդար դատավորն է, բայց չի եկել նրան դատապարտելու, այլ՝ փրկելու:*

Նա լուռ մնում է, մինչև բոլոր մեղադրողները հեռանում են: Նրանք հավանաբար հեռանում են ամոթով, քանի որ հենց նոր ամբոխի առջև ընդունեցին, որ ցանկանում էին Հիսուսին ծուղակը գցել, և միաժամանակ բացահայտվեց իրենց ոչ անմեղ լինելը:

Հիսուսը սպասում է, մինչև անհետանա մեղադրանքի ամեն ձայն ու ներկայություն, և ապա դիմում է կնոջը.

«Հիսուսն էլ վեր նայեց, ոչ ոքի չտեսավ այն կնոջից բացի և ասաց նրան. «Ո՛վ կին, որտե՞ղ են [քեզ ամբաստանողները]. ոչ ոք քեզ չդատապարտե՞ց»:
Նա էլ ասաց. «Ո՛չ, ո՛վ Տեր»:
Եվ Հիսուսն ասաց նրան. «Ես էլ քեզ չեմ դատապարտում. գնա՛ և այսուհետև մեղք մի՛ գործիր»» (Հովհ. 8.10,11):

Ուշադրություն դարձրեք, որ կինը մնում է, մինչև Հիսուսը վեր է նայում և խոսում իր հետ: Նա ցանկանում է, որ Հիսուսը ոչ թե խոսի իր մասին, այլ՝ իր հետ: Նա կարող էր փախչել և թաքնվել, հենց որ վերջին մեղադրողը հեռանար, բայց սպասում է՝ լինելով մերկ և խայտառակված վիճակում: Նա հոգնել է թաքնված կյանքից: Նա սպասում է, որովհետև ցանկանում է ստանալ ներում և ազատություն: Հիմա՝ Հիսուսի խոսքերից հետո, կինը կարող է հեռանալ՝ բացահայտ ներված և մահից ազատված: Նա այլևս դատապարտության տակ չէ: Ստանալով այս ձրի շնորհները՝ նա զորություն ստացավ թողնելու մեղքի կյանքը:

Նա բարձրացնում է գլուխը և հանդիպում Հիսուսի հայացքին: Նրա աչքերում կինը տեսնում է ներում, ողորմություն, սեր ու ևս մեկ բան. արդյո՞ք դա ցավն է: Զգալով, թե ինչ է տեղի ունեցել, միգուցե ամբոխի միջից մի ուրիշ կին վեր կենա և իր թիկնոցը գցի այդ կնոջ ուսերին՝ ծածկելով նրա մերկությունը:

> *Նրա աչքերում կինը տեսնում է ներում, ողորմություն, սեր ու ևս մեկ բան. արդյո՞ք դա ցավն է:*

Միգուցե այն կինը, որ ծածկում է նրան, դու ես: Նա լռության մեջ անձայն քայլում է միևնույն փողոցով, որտեղով նրան քարշ էին տվել մի քանի րոպե առաջ: Արևը պայծառ փայլում է, որովհետև նրա համար նոր օր է բացվել՝ բերելով նորոգված հույս և խոստում: Հիսուսը սպասում է, մինչև կինը հեռանա:

«Արդ, Հիսուսը դարձյալ խոսեց նրանց հետ և ասաց. «Ես եմ աշխարհի լույսը. ով Իմ ետևից գա, խավարում չի գնա, այլ՝ կյանքի լույսը կընդունի»» (Հովհ. 8.12):

Նա այլևս մահվան և խավարի դուստրը չէ, այլ՝ կյանքի և լույսի: Նա Իսրայելի դուստրն էր, այլապես չէր ընկնի կրոնական առաջնորդ-

ների արդարադատության ձեռքը: Նա խախտել էր ուխտը և ընկել մեղքի գերության մեջ: Բայց այս անհավատարիմ դուստրը հանդիպեց ողորմած Արքայազնին, և այդ օրվանից նա այլևս նույնը չէր:

Նենգ թշնամին այս սերնդի մերկ և մեղավոր կանանց քարշ տալով՝ բերում է սուրբ Աստծո առջև: Նույնիսկ այսօր օձը ծաղրում է Արքայազնին՝ մատնացույց անելով մեր ամոթն ու խայտառակությունը. «Ի՞նչ պիտի անեի պոռնկության և շնության այս դուստրերի հետ: Մի՞թե նրանք Քեզ հետ ուխտի մեջ չեն: Ինչո՞ւ են նրանք այդքան հաճախ հայտնվում անկողնում՝ այս աշխարհի հետ: Քանի՞ անգամ ես Դու ներելու և ազատելու նրանց մահվան դատապարտությունից»: Սրանք ցավոտ հարցեր են սիրտը կոտրված Արքայազնի համար: Նա կարող է միայն մեկ պատասխան ունենալ. «Ես քեզ չեմ դատապարտում: Գնա՛ և այլևս մեղք մի՛ գործիր»: Մենք կարող ենք համոզված լինել, որ Նա նայում է մեր մեղքին և խայտառակությանը ու այսպես պատասխանում, որովհետև մենք ունենք Եբրայեցիների 13.8-ի խոստումը՝ Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան:

Նրա խոսքի և խոստմունքի շնորհիվ ժամանակն է, որ մենք՝ կանայքս, ոտքի կանգնենք ու ծածկենք մեր և ուրիշների մերկությունը, որպեսզի իսկապես գնանք և այլևս մեղք չգործենք: Ժամանակն է, որ այս խոստումն ու զորությունը հռչակենք այն դուստրերի կյանքում, որոնք դեռ խայտառակության և ամոթի գերին են:

> «Որովհետև Աստծո շնորհքը երևաց, որ փրկարար է բոլոր մարդկանց համար, որ խրատում է մեզ, որ ուրանանք ամբարշտությունը և աշխարհիկ ցանկությունները, և խոհեմությամբ, արդարությամբ և աստվածապաշտությամբ ապրենք այս աշխարհում՝ սպասելով այն երանելի հույսին և մեծ Աստծո ու մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի փառքի հայտնությանը, որ Իր անձը մեզ համար տվեց, որ մեզ ամեն անօրենությունից փրկի և սրբի, Իր համար հատուկ ժողովուրդ շինի բարի գործերի նախանձավոր» (Տիտոս 2.11-14):

Սա հիանալի է: Մեղքն այլևս իշխանություն չունի մեզ վրա: Մենք կարող ենք շրջվել նրանից և ասել՝ ո՛չ: Հիսուսը ավելացրեց ողորմությունը և մեզ լիազորեց Աստծո շնորհքով: Մենք չենք ստանում այն

դատաստանը, որին արժանի էինք: Մենք ներվել ենք և նորից ծնվել՝ մեղքից դեպի կյանք:

Սիրելի՛ դուստրեր, ձեր հոգիների թշնամին չի ցանկանում, որ իմանաք սա: Նա ցանկանում է, որ դուք մնաք ամոթի և խայտառակության մեջ և շարունակեք կապված լինել մեղքին: Նա ուզում է, որ դուք մտածեք, որ իշխանություն չունեք մեղքի վրա, բայց դա ճշմարտությունը չէ: Իհարկե, սեփական ուժերով մենք կփորձենք և կձախողվենք, բայց այլևս մենակ չենք մեր պայքարում. մենք Նրա մեջ ենք, և մեր զենքերը զորավոր են:

> *Մեղքն այլևս իշխանություն չունի մեզ վրա:*

Այժմ մեզ տրված է ազատություն և ապագայի փառավոր հույս: Մենք պատճառ չունենք վախենալու մեր Տիրոջ և Փրկչի վերադարձից, որովհետև Նա ազատել է մեզ անօրենությունից և դարձրել Իր սեփականությունը: Եթե նախկինում մենք ցանկություն ունեինք չար բան գործելու, հիմա ցանկանում ենք բարին անել: Երբ մենք վերստին ծնվում ենք, մեր բնական ցանկությունները փոխվում են: Նա ներում է մեզ, ապա փոխում մեր էությունը այս խոսքերով՝ գնա՛ և այլևս մեղք մի՛ գործիր: Դա ներման նախադրյալ չէ: Ներումը արդեն շնորհված է: Այն վստահության և հավատքի ձայն է՝ ավելի լավ բաների համար:

Նախքան վերստին ծնվելը շնությունը և հարբեցողությունը գրավում էին ինձ: Դրանք այն բաներն էին, որոնց ես ձգտում էի, երբ ազատ ժամանակ էի ունենում: Ես ցանկանում էի դրանց: Բայց երբ վերստին ծնվեցի, մեղքի հանդեպ իմ ցանկությունը հեռացավ:

Ինձ պես մեղավոր կանանց ուղղված Հիսուսի խոսքերը կարելի է արտահայտել հետևյալ կերպ. «Ես քեզ չեմ դատապարտում... Ես ներում և ազատում եմ քեզ մեղքի դատապարտությունից: Հիմա գնա՛ և այլևս մեղք մի՛ գործիր: Դու ազա՛տ ես»: Մենք երբեք չէինք կարողանա վաստակել այն ողորմությունը, որ ցուցաբերվել է մեզ: Առանց Աստծո շնորհքի երբեք չէինք կարողանա քայլել աստվածապաշտության մեջ և ասել՝ ո՛չ մեղքին ու աշխարհիկ ցանկություններին: Մեղքն այլևս օրինական պահանջ չունի մեր կյանքի նկատմամբ: Որովհետև...

«Արդ այն ազատությունով, որ Քրիստոսը ազատեց մեզ, հաստա՛տ

մնացեք և ծառայության լծի տակ մի՛ մտեք» (Գաղատ. 5.1):

Հաստա՛տ կանգնիր: Ուժե՛ղ կանգնիր ցանկացած դատապարտության դեմ, որը փորձում է քաշել քեզ մեղավոր ապրելակերպի մեջ: Հակառա՛կ կանգնիր անցյալի ամոթի ցանկացած ստվերի, որը մարտահրավեր է նետում անօրենությանը՝ ո՛չ ասելու քո իրավունքին: Միգուցե անցյալում քեզ համար դժվար է եղել մեղավորության և ամոթի զգացումի պատճառով, բայց դու ազատ ես արձակվել քո անցյալից, և անցյալը քո ապագան չէ. քո ապագան լուսավոր է և ազատ:

«Վե՛ր կաց, լուսավորվի՛ր, որովհետև լույսդ եկել է, և Տիրոջ փառքը ծագել է քեզ վրա: Որովհետև ահա խավարը ծածկել է երկիրը, և մառախուղը՝ ազգերը, բայց քեզ վրա ծագում է Տերը, և Նրա փառքը երևում է քեզ վրա» (Եսայի 60.1,2):

Ժամանակն է, որ դուրս գաս մեղքի ստվերից և մտնես Նրա լույսի մեջ: Մեզ մեղադրողները լուռ կհեռանան Նրա առջևից, նույնիսկ հիմա Նա գլուխը բարձրացնում է և ասում. «Ես քեզ չեմ դատապարտում: Հեռացի՛ր հիմա այդ խավարից: Ես եմ լույսը, որ դու փնտրում էիր, ուստի, այլևս մեղք մի՛ գործիր»: Բայց մենք վախենում ենք, որ դա անհնար է, որովհետև այնքան շատ խավար ենք տեսնում մեր շուրջը: Եվ Նա պատասխանում է. «Ես գիտեմ, դու տեսնում ես խավարը երկրի և մարդկանց վրա, բայց Ես եմ քո լույսի ծածկոցը»: Հիսուսը վերականգնեց փառքի ծածկոցը, որը մենք կորցրել էինք Եդեմի պարտեզում:

Կրոնը չի կարող ծածկել մեր մերկությունը: Տղամարդիկ չեն կարող ծածկել մեր մերկությունը: Միայն Նա՛ կարող է ծածկել մեր մերկությունը պայծառ, մաքուր և սպիտակ հագուստով:

«Այն ժամանակ կտեսնես և կզմայլվես, և սիրտդ ուրախությունից կդողա և կլայնանա....» (Եսայի 60.5):

Կրոնը չի կարող ծածկել մեր մերկությունը: Տղամարդիկ չեն կարող ծածկել մեր մերկությունը: Միայն Նա՛ կարող է:

Կրկին վերադառնանք այն անանուն կնոջը, որին բռնել էին շնության մեջ: Նա անանուն է, որովհետև նրա փոխարեն կարող էր լինել ցանկացած մեկը, քանի որ մեզնից ոչ մեկն անմեղ չէ, և

շատ հաճախ մենք անկողին ենք մտնում տղամարդկանց, կրոնի կամ աշխարհի հետ մեր իսկ ինքնահաստատման համար: Բայց դա միշտ կհիասթափեցնի մեզ:

Ի վերջո, մեղքն ու կրոնը կդավաճանեն քեզ: Հիսուսը տվեց արժանապատվություն, զորություն և պատիվ այս անանուն կնոջը, որին մատնացույց էին անում հանրության մեջ: Հիսուսը նայեց այդ կնոջ ակնհայտ և մերժված լինելուց այն կողմ՝ նրա ներկա վիճակն ընդունելով որպես ժամանակավոր հանգամանք: Ըստ էության, Նա ասում էր կնոջը. «Քո անցյալը քո ապագան չէ: Գնա՛ և այլևս մեղք մի՛ գործիր: Մեղքը քո անցյալն է, բայց աստվածապաշտությունը քո ապագան է: Գերությունը քո անցյալն է, բայց ազատությունը քո ապագան է: Ամոթը քո անցյալն է, բայց արժանապատվությունը քո ապագան է: Մերկությունը քո անցյալն է, բայց փառավոր հանդերձները քո ապագան են»:

> *Ի վերջո, մեղքն ու կրոնը կդավաճանեն քեզ:*

Հիսուսն ավելին է անում այս կնոջ համար, քան պարզապես նրան ներելը: Նա ազատ է արձակում կնոջը: Ներումը մեր ազատության սկիզբն է: Բայց, առանց մեղքի կապանքներից ազատ լինելու և առաջ շարժվելու զորության, մենք կրկին կհայտնվենք գերության մեջ: Սկզբում մեզ շռայլվում է ողորմություն և ապա տրվում է շնորհք՝ զորանալու համար:

«Որովհետև մեղքը չի տիրի ձեզ վրա, որովհետև օրենքի տակ չեք, այլ՝ շնորհքի տակ» (Հռոմ. 6.14):

Ես կարծում եմ, որ բավական երկար ժամանակ մեզ չեն սովորեցրել, որ շնորհքը զորություն է տալիս մեղքը հաղթահարելու համար: Մենք բավականաչափ համարձակ չենք եղել հավատալու, որ երբևէ կարող ենք իրականացնել Հիսուսի՝ այլևս մեղք չգործելու պատվիրանը: Մենք մոռացել ենք, որ անհնարին ոչինչ չկա Նրանում և Նրա հետ: Մենք անպատվել ենք Նրա ողորմությունը՝ քարոզելով այն մասին, որ շնորհքն ավելի շուտ թույլտվություն է՝ մեղք գործելու, քան հոգևոր սպառազինություն՝ մեղք չգործելու:

Նույնիսկ հիմա կենդանի Աստծո Հոգին, Որը Սրբության Հոգի է,

աղաղակում է այս երկրի դուստրերին.

> «Զարթնի՛ր, զարթնի՛ր, հագի՛ր զորությունդ, ո՛վ Սիոն, քո փառավոր հանդերձները հագի՛ր, ո՛վ Երուսաղեմ՝ սո՛ւրբ քաղաք, որովհետև այլևս, մյուս անգամ չպիտի մտնի քո մեջ անթլփատը և պիղծը» (Եսայի 52.1):

Դուստրե՛ր, արթնացե՛ք, որովհետև ժամանակն ավելի կարճ է, քան դուք գիտեք: Հագե՛ք Աստծո շնորհքը և Տիրոջ ուրախությունը, որովհետև դա՛ է ձեր զորությունը: Այդ զորության վրա հագե՛ք փառքի հույսը, փառավոր հանդերձները: Երազե՛ք երկնքի մասին և երկրի վրա քայլեք իբրև թագավորներ, համարձակությո՛ւն ունեցեք հուսալու, որովհետև դուք ուխտի մեջ եք, և նրանք, ովքեր ուխտից դուրս են, անթլփատը և պիղծը, այլևս չեն մտնի քո մեջ: Սեռական մեղքը և քո անցյալի ամոթը այլևս չեն որոշի, թե ով ես դու... դու ազա՛տ ես: Մեղքն ու ամոթը ծածուկ տեղերում այլևս չեն բռնանա քեզ վրա:

> «Քեզ թա՛փ տուր հողից, վե՛ր կաց, նստի՛ր, ո՛վ Երուսաղեմ, բա՛ց արա պարանոցիդ կապերը, ո՛վ Սիոնի գերի աղջիկ» (Եսայի 52.2):

Տերն ասում է. «Թա՛փ տուր քո անցյալի փոշին: Կանգնի՛ր առանց ամոթի և վերցրո՛ւ իշխանության քո թագավորական դիրքը: Ես քանդել եմ մեղքի շղթան: Դու այլևս շղթաների մեջ չես: Ես հանում եմ դրանք քո վզից և ազատում եմ քեզ, իմ թանկագի՛ն հարսնացու»:

Մենք ունենք Նրա շնորհքը: Այն զորություն է տալիս մեզ ազատվելու մեր վզին փաթաթված շղթաներից: Գերության զորությունը քանդված է: Մենք ավելի շատ հավատում էինք շղթաների ուժին, քան մեզ Ազատողի խոսքերին: Ես կոչ եմ անում քեզ նայել ոչ թե այն շղթաներին, որ դու տեսնում ես, այլ՝ չերևացող բաներին, որովհետև նույնիսկ հիմա Աստված քո ականջներին շշնջում է հրավերքի և խոստումի մասին. «Ազատվի՛ր անցյալի շղթաներից: Դրանք քեզ այնքան ուժեղ չեն պահում, որքան դու մտածում ես: Համարձակվի՛ր հավատալ Ինձ և դե՛ն գցիր դրանք քեզնից»:

> *Մենք ավելի շատ հավատում էինք շղթաների ուժին, քան մեզ Ազատողի խոսքերին:*

Եսայի 52-րդ գլուխն ինձ համար կենդանի Խոսք է: Գրեթե տասը տարի առաջ ես պարզապես դողացի նրա խոստումի առջև՝ լցվելով հավատքով և վախի նկատմամբ աննկարագրելի ազատությամբ: Այդ մասին գրել եմ իմ՝ «Ես ազատ եմ վերահսկողությունից, և դա ինձ դուր է գալիս» գրքում: Ես այն փոխանցում եմ որպես թանկագին խոստում և նվեր Բարձրյալի դուստրերին՝ սեռական ազատության բնագավառում:

Ժամանակն է, որ իմանանք ճշմարտությունը և թույլ տանք, որ այն մեզ ազատ արձակի: Մենք ավելի շատ մտերիմ պետք է լինենք ճշմարտության հետ, քան մտերիմ ենք եղել ստի հետ: Ստի զորությունը քանդելու համար ցանկանում եմ բացահայտել դրանցից մեկը, որը հզոր ձևով նշմարվում է կոտրված կանանց կյանքում:

Այս սուտը կանանց չափազանց երկար է պահել գերության մեջ: Դա է պատճառը, որ երիտասարդ կանայք, ովքեր մեկ անգամ սեռական զիջման են գնացել, զգում են, որ իրենք այլևս իրավունք չունեն «ոչ» ասելու: Դա է պատճառը, որ վերնաշապիկի վրայից կրծքին դիպչելը ճանապարհ է բացում մերկ կանանց շոշափելու համար. «Ես չպետք է թույլ տայի, որ նա ինձ դիպչեր, հիմա ինչպե՞ս «ոչ» ասեմ»: Եվ, իհարկե, պատճառաբանությունը դրանով չի ավարտվում, այլ շարունակվում է: Դա նույն սուտն է, որ խրախուսում է երիտասարդ աղջիկներին (հաճախ կույսերին) այնպիսի բաներ անել ճնշման տակ, որ հետագայում իրենց զգում են բռնության ենթարկված: Նրանք վերադառնում են տուն, նայում հայելուն և տեսնում, որ շպարը մաքրվել է, իսկ մի քանի ժամ առաջվա թարմությունն ու գեղեցկությունը՝ անհետացել:

> *Մենք ավելի շատ մտերիմ պետք է լինենք ճշմարտության հետ, քան մտերիմ ենք եղել ստի հետ:*

Միգուցե ոմանք լաց են լինում: Դուք հիշում եք, որ խայտառակ եք եղել և ձեզ անզոր զգացել: Մենակ եք եղել, և մեկը չի եղել, որ ձեզ համար կանգնի: Ոչ ոք չի գոչել. «Բավակա՛ն է, բա՛ց թողեք նրան»: Ոչ ոք չի պաշտպանել ձեզ:

Ես տեսել եմ, որ քրիստոնյա կանանց համար՝ երիտասարդ, թե տարեց, դժվար է «ոչ» ասել, որովհետև նրանք ավելի ծանր են տա-

նում նախորդ հանդիպումների մեղքի և ամոթի ծանրությունը, քան այլ կանայք: Նրանք հավատում են այն ստին, որ վատ աղջիկները չեն կարող «ոչ» ասել: Ի վերջո, նրանք պատճառաբանում են, որ իրենք կորցրել են մաքրության և արժանապատվության իրենց իրավունքները, ուստի միայն ամոթի են արժանի: Նրանց համար իսկական մտերմությունը՝ կորցրած երազանք է, և լավագույնը, ինչի համար կարող են հուսալ, խավարում խարխափելն է:

Բայց, անշուշտ, սա սուտ է: Եկեք հետևենք այն կնոջը, որին բռնեցին շնության մեջ: Նա մեղավո՞ր էր: Այո՛: Նա արժանի՞ էր դատապարտության: Այո՛: Նա Սիոնի գերի աղջի՞կն էր՝ բռնված անցյալի մեղքով: Այո՛: Բայց Հիսուսը եկավ գերիներին ազատ արձակելու: Այդ կինը հավատում էր, որ խայտառակությունը իր կյանքի ճակատագիրն էր, մինչև որ լսեց հետևյալ խոսքերը. «Գնա՛, հեռացի՛ր այս վայրից և այլևս մեղք մի՛ գործիր»:

Նա հեռանում է որպես այլ մարդ. նա երբեք նույնը չի լինի: Երբ անցնում էր այն փողոցով, որտեղ խայտառակվել էր, նրա դեմքի արտահայտությունը հանգիստ էր, կեցվածքը՝ վստահ: Երբ անցնում էր ուրիշների կողքով, նրանք զարմանքով նայում էին նրան: Նրանք երբեք չէին ակնկալում, որ այդ կնոջը կրկին կտեսնեն: Մարդիկ կանխատեսել էին նրա մահը՝ քարերի կույտի տակ: Դա էր օրենքը: Բայց մի հիանալի բան էր կատարվել. ողորմությունը հաղթել էր դատաստանին, և նա ներվել էր ու ազատվել նոր կյանք սկսելու համար: Իրականում, նա կորցրել էր իր կյանքը Հիսուսի ներկայության մեջ: Նրան քարկոծելու փոխարեն Հիսուսը վերցրել էր նրա քարե սիրտը: Սա չի լինի փոխվելու ևս մեկ ձախողված փորձ: Նա վերադարձավ տուն՝ լողանալու և հագուստները կրելու: Մեղքն ու ամոթը այլևս նրա բաժինը չէին, որովհետև նրան տրվել էր ողորմության և շնորհքի հաղթանշան:

Ես հրավիրում եմ ձեզ՝ որպես Բարձրյալ Աստծո դուստրեր, շրջվել ստից և ընդունել Նրա ճշմարտությունը. դու դատապարտված չե՛ս, դու ներվա՛ծ ես: Դու ազա՛տ ես՝ ետևում թողնելու մեղքը, ամոթը և այլևս մեղք չգործելու: Եկեք աղոթենք.

Սիրելի՛ երկնային Հայր,

Իմ սիրտը դողում է ինձ ուղղված զորությունից և Քո խոստումի ու Խոսքի գեղեցկությունից: Ես հավատում եմ, որ Քո Խոսքը մնում է հավիտյան: Հավատում եմ, որ Դու նույնն ես երեկ, այսօր և հավիտյան: Սա նշանակում է, որ Դու նայում ես իմ մեղքին ու խայտառակությանը նողկալիությամբ և հռչակում. «Ես Քեզ չե՛մ դատապարտում»: Ես գիտեմ, որ արժանի եմ դատաստանի, բայց Դու ինձ ողորմություն ես շնորհել: Շնորհակալություն, որ ներում ես ինձ և ազատում մեղքի ու խայտառակության հանդերձներից: Ես ապաշխարում եմ իմ անցյալի համար և հագնում Քո արդարությունը ու կրկին կանգնում Քո առջև մերկ և առանց ամոթի: Ես ընդունում եմ Աստծո շնորհքը և բարձրաձայն ասում՝ ո՛չ անբարեպաշտ կյանքին և աշխարհիկ ցանկություններին: Ես այս աշխարհում կապրեմ զուսպ, արդար և բարեպաշտ կյանքով: Այլևս չեմ վախենա Քո ներկայությունից կամ վերադարձից: Հիսո՛ւս, Դու շնորհեցիր Քո կյանքը ինձ սրբելու, ամեն անօրենությունից փրկագնելու և Քո սեփականությունը դարձնելու համար: Ես ցանկանում եմ բարին անել, որովհետև մեղքն այլևս իմ տերը չէ: Դո՛ւ ես իմ Փրկիչն ու Տերը: Երբ ես ժամանակ հատկացնեմ կարդալուն և ուսումնասիրելուն, քնքշորեն խոսի՛ր իմ սրտին: Ես արձակում եմ գերության ամեն շղթա և իմ ապագան վստահում եմ Քեզ:

Սիրով՝ Քո դուստր

4 *Երբ արթնանում է սերը*

Հուլիսյան մի գեղեցիկ, ուշ երեկո էր: Մեքենայով տուն էի վերադառնում ընկերուհուս տնից: Մենք միասին ճաշել էինք և հիանալի ժամանակ անցկացրել: Երկուսիս ամուսիններն էլ բացակայում էին քաղաքից, և մենք հավաքվել էինք ճաշի մեր վեց երեխաների հետ: Նրանք խաղում էին բակում, իսկ մենք դրսում՝ աստղալի երկնքի տակ նստած զրուցում էինք: Երբ փոքրիկներն արդեն քնել էին ուզում, ուղևորվեցինք տուն: Տուն վերադառնալիս իմ չորս որդիները հանգիստ նստած էին մեքենայի մեջ: Հետո տղաներից մեկն ընդհատեց լռությունը՝ գրպանից հանելով մի լսաժապավեն:

- Մայրի՛կ, ես ցանկանում եմ, որ դու լսես այս երգը:

Ետևի նստարանից անմիջապես լսվեցին տրտունջներ և առարկություններ.

- Միայն թե՝ ո՛չ այդ երգը:

- Նա արդեն քսան անգամ լսել է այդ երգը:

- Ես չեմ ուզում լսել այդ տաղտկալի երգը:

Ես հույս ունեի, որ չէի լսի բաս-կիթառի ծանր հնչյուններ կամ ինչ-որ քրիստոնեական ռեփ ոճի բարձր ճիչեր, քանի որ դրանք արդեն լսել էի ամառվա ընթացքում: Այս մեկը թվում էր՝ մեղմ էր լինելու, որը ես հաճույքով կլսեի այդ ուշ ժամին:

- Հե՛յ, տղանե՛ր, հանգստացե՛ք, ես այն դեռ չեմ լսել և ցանկանում եմ լսել,- ասացի:

Ի պատասխան՝ լսվեցին ևս մի քանի տրտունջներ, բայց երեխաներն այնքան հոգնած էին, որ չէին պատրաստվում կռիվ սարքել: Լսաժապավենը միացվեց, և ես լսեցի մի սիրատենչ ու սենտիմենտալ սիրո

երգ ինչ-որ ժամանակակից քրիստոնեական խմբի կատարմամբ:

Ես նկատեցի, որ որդիս գիտեր երգի յուրաքանչյուր բառը, նոտան և ելևէջը: Նա լավ ուսումնասիրել էր այն և այնպիսի քնքշությամբ ու զգացմունքայնությամբ էր ձայնակցում, որ ես մի փոքր անհարմար զգացի: Երգը մի նկարչի անմահ սիրո ուժի մասին էր. նա խոստանում էր իր կյանքը տալ իր սիրո համար: Այն երիտասարդ տղամարդու սիրո երդումն էր երիտասարդ աղջկան: Բայց ինչ-որ բան ճիշտ չէր հնչում. ինձ բավականին երկար ժամանակ էր անհրաժեշտ եղել, որպեսզի իմանայի, որ որքան էլ ազնվական լինեին այդ խոսքերը, դրանք հազվադեպ էին իրականություն դառնում: Ես հասկացա, որ իմ տղային շատ էր դուր եկել այդ երգը, ուստի պետք է իմաստուն և զգույշ լինեի իմ խոսքերի մեջ:

- Մի՞թե հիանալի երգ չէ,- հարցրեց նա երազկոտ ձայնով:

- Այո՛, շատ լավն է... բայց, քո կարծիքով, ի՞նչ է նա խոստանում անել: Ի՞նչ նա նկատի ունի,- հարցրի ես քննախույզ հայացքով:

- Նա խոստանում է ամեն բան անել հանուն աղջկա սիրո: Նա պատրաստ է նույնիսկ մահանալ,- պատասխանեց որդիս:

- Ի՞նչ ես կարծում, նա կկարողանա՞ պահել այդ խոստումը: Դա գեղեցիկ երգ է, բայց ի՞նչ տեղ է այդ աղջիկը զբաղեցնում նրա կյանքում: Աղջի՞կն է թելադրում նրա կյանքի ընթացքը, թե՞ Աստված:

Ես գիտեմ, որ դուք հավանաբար մտածում եք միևնույն բանը, ինչ մտածում էր իմ որդին այդ ժամանակ. դա ընդամենը սիրո մի երգ է: Դա այն ժամանակի մասին է, երբ տղաները ինչ-որ նվիրվածություն են խոստանում: Այո՛, ես համաձայն եմ, բայց այդ դեպքը ինձ մտածելու տեղիք է տալիս: Ահա իմ տղան երգում է այդ երգը շատ բուռն զգացումով, որովհետև իր հոգու խորքում նա փափագում է սիրել մեկին նույն ջերմությամբ, նվիրվածությամբ և ինքնազոհությամբ: Այդ երգը նրա ներսում արթնացրել էր մի ցանկություն, որը մինչ այդ քնած էր:

Ես ետադարձ հայացք գցեցի այդ երեկոյին: Մինչ մնացած երեխաները դրսում խաղում էին, նա շարունակ այդ երգն էր լսում: Երբ նրան խնդրում էին միանալ իրենց խաղին, նա միշտ մերժում էր: Նա այնպես էր գերվել սիրո գաղափարախոսությամբ և գեղեցկությամբ, որ կարող էր իր կյանքն անցկացնել այն որոնելով և հետագայում պահպանելով:

Ես տեսա, որ նրա մեջ սիրո զգացմունքն է արթնանում:

Ես տեսա մի հնարավորություն, մի բան, որն արթնանում է նրա մեջ:

- Դու այն տարիքում ես, երբ սերն արդեն արթնանում է: Դու պետք է ընտրություն կատարես: Դու կարող ես թույլ տալ, որ ռոմանտիկ սեր արթնանա և ապա հուսախաբ լինես հաջորդ հինգից ութ տարիները, մինչև գտնես այն աղջկան, ում հետ պետք է ամուսնանաս: Կամ՝ կարող ես քո առջև նպատակ դնել՝ արթնացնել մեկ այլ տեսակի սեր, որն է՝ Աստծո հանդեպ բուռն սերը: Դու պետք է ընտրես այս երկու սերերից մեկը, որովհետև եկել է ժամանակը, որ դրանցից մեկն արթնանա:

> *Ես տեսա մի հնարավորություն, մի բան, որն արթնանում է նրա մեջ:*

Սողոմոնը գիտեր և հասկանում էր սա: Նա հանձնարարական տվեց երիտասարդներին, որն արդիական է բոլոր ժամանակների համար:

> *Դու կարող ես թույլ տալ, որ ռոմանտիկ սեր արթնանա և ապա հուսախաբ լինես: Կամ՝ կարող ես քո առջև նպատակ դնել՝ արթնացնել մեկ այլ տեսակի սեր, որն է՝ Աստծո հանդեպ բուռն սերը:*

> «Եվ հիշի՛ր քո Ստեղծողին քո երիտասարդության օրերում, քանի որ չեն եկել թշվառության օրերը, և չեն հասել այն տարիները, որ ասես թե նրանց չեմ հավանում» (Ժողով. 12.1):

Ես այնպես պարզ կիսվեցի նրա հետ այդ գիշեր, ինչպես կիսվում եմ ձեզ հետ այսօր: Երիտասարդ տարիքում է, որ արթնանում է սերը և սկսում թելադրել մեր սրտերին: Այդպես էլ պետք է լինի: Բայց մենք պետք է վերահսկենք և որոշենք, թե ինչպիսի սեր է արթնանում և թելադրում մեր գործողությունները: Մենք պետք է թույլ տանք, որ ռոմանտիկ սերը մնա հանգիստ և երազային վիճակում, մինչև կգա արթնանալու ժամանակը: Բայց միևնույն ժամանակ մենք պետք է բուռն սեր արթնացնենք Աստծո հանդեպ: Արդյո՞ք կարող ենք ուժգնորեն սիրել մի բնագավառում և գիտակցաբար պասիվ մնալ մյուսում: Ես հավատում եմ, որ կարո՛ղ ենք: Դա իրականանում է

> *Երիտասարդ տարիքում է, որ արթնանում է սերը և սկսում թելադրել մեր սրտերին:*

միևնույն ձևով, ինչպես կարթնացնեինք բնական ռոմանտիկ սերը:

Բացատրելու համար, թե ինչպես է սա հնարավոր, կվերադառնամ անցյալ և օրինակ կբերեմ իմ առաջին ռոմանտիկ հանդիպումներից: Դրանք սկսվեցին մինչև բարձր դասարաններ փոխադրվելը: Բայց մինչև 5-րդ դասարանը ես իսկապես ոչ մի հետաքրքրություն չունեի տղաների նկատմամբ: Նրանք պարզապես ծանձրացնում էին ինձ և իմ լավագույն ընկերուհի Մարսիին, երբ մենք զրուցում էինք խաղահրապարակում կամ գնում դպրոց: Մենք հաճախ իրար ձեռք էինք բռնում, երբ կիսվում էինք մեր սրտի խորը գաղտնիքներով: Եվ հենց այդ ժամանակ, մի անկարգ տղա մոտենում էր մեզ, առանձնացնում մեր ձեռքերը և գողանում մեզնից մեկի գլխարկը (սովորաբար Մարսիինը, որովհետև նա ամենագեղեցիկն էր): Սա, իհարկե, մարտահրավեր էր: Մենք վազում էինք նրանց հետևից և պահանջում վերադարձնել գողացված իրը՝ սպառնալով նրանց և տալով ամենատարբեր անվանումներ: Մենք տղայի կեցվածք ունեցող աղջիկներ էինք, որոնք չէին հանդուրժում զայրացնող *տղաների* անհամ գործողությունները:

Այդ ընթացքում տղաները վերադառնում էին՝ գիտակցելով, որ մենք իրոք փափկասուն աղջիկներ չէինք, և վերադարձնում էին գլխարկը, իսկ մենք շարունակում էինք մեր ճանապարհը՝ ծիծաղելով և հաղթական աղաղակներ բարձրացնելով: Բայց 4-րդ դասարանից Մարսին տեղափոխվեց, և ես, տղաների հետ պայքարում, մնացի մենակ:

Հինգերորդ դասարանում ամեն բան փոխվեց: Ես տղաներից ստանում էի երկտողեր, որտեղ ինձ խնդրում էին տալ իմ «ցուցակը»: Եթե դուք տեղյակ չեք, թե ինչ «ցուցակ» էր դա, ապա կասեմ: Դա իմ նախընտրած տղաների անունների ցուցակն էր հերթականությամբ: Սկզբում ես այդքան էլ չէի ձգտում մասնակցել այդպիսի բաների: Բայց հետո լսեցի այնպիսի բաներ, որոնք հետաքրքրեցին ինձ: Օրինակ՝

- Լի՛զա, դու 3-րդ տեղում ես Ստյուարտի ցուցակում, իսկ Ռիկի ցուցակում՝ 2-րդ:

Ես միշտ պատասխանում էի. «Ես չեմ ուզում լինել նրանց հիմար ցուցակներում»:

Բայց հետո սկսեցի մտածել. «Եթե ես 2-րդն եմ կամ 3-րդը, ապա ո՞վ է 1-ը»: Չնայած որ նրանց չէի սիրում, սա չէր նշանակում, որ չէի

ցանկանում առաջինը լինել նրանց ցուցակում: Մի՞թե ես ամենաարագ վազողը չէի դասարանում: Դա հաստատ հաշվի կառնվեր: Ես պետք է առաջինը լինեի ինչ-որ մեկի ցուցակում, բայց ո՞ւմ:

Այնուհետև նկատեցի, որ ցուցակն ինչ-որ ուժ ուներ: Այն աղջիկները, ովքեր իմ կարծիքով ծանձրալի, բարբի տիկնիկներով խաղացողներ էին, ինձնից առաջ էին անցնում այն տղաների ցուցակում, որոնց հետ ես ֆուտբոլ էի խաղում, որովհետև նրանք իրենց ցուցակում բարձր էին գնահատել այդ գլխարկ գողացողներին: Միգուցե ես էլ պետք է իմ ցուցակը կազմեի կամ, միգուցե, սահմանափակվեի մեկ անունով:

Իրականում մի տղա ինձ դուր էր գալիս: Նա միակ տղան էր, որ իմ մտքով անցավ, երբ ինձնից պատասխան ուզեցին՝ տալով այս ծայրահեղ հարցը. «Մենք գիտենք, որ դու ոչ ոքի չես հավանում, բայց եթե ստիպված լինեիր ամուսնանալ ինչ-որ մեկի հետ, ո՞ւմ կընտրեիր»:

Այդ տղան հայտնի էր, խելացի և դուրեկան: Բոլոր աղջիկները սիրում էին նրան, ուստի ես երբեք չէի ցանկանում ասել նրա անունը, որովհետև համոզված էի, որ կծիծաղեին ինձ վրա (հիշե՛ք, ես հայտնի էի որպես ոչ կանացի կերպար): Ուստի միշտ ասում էի. «Ո՛չ, ես երբեք չեմ պատրաստվում ամուսնանալ»:

Բայց արշավների ժամանակ, քնապարկի մեջ, ես մտածում էի նրա մասին: Եվ մեր միջև փոխհարաբերությունները սկսեցին փոխվել: Նա ինձ շատ էր բարկացնում դպրոցի բակում և դասարանում: Բայց երբ կողք կողքի նստում էինք «հասարակական գիտությունների» դասին, նա միշտ խոսում էր ինձ հետ: Մենք նույնիսկ միմյանց էինք փոխանցում խորը և զգայուն երկտողեր, ինչպես, օրինակ. «Ի՞նչ ես կարծում, այս դասը հետաքրքի՞ր է, թե՞ տաղտկալի»:

Որոշ ժամանակ անց ես սկսեցի բամբասանքներ լսել, որ իմ անունը բարձրանում է նրա ցուցակում, բայց լռում էի: Եվ մի օր նա երկտող ուղարկեց: Նա լուրջ էր և ցանկանում էր իմանալ, թե ով է իմ ցուցակում առաջինը (իմ այն ցուցակում, որը դեռ գոյություն չուներ): Առանց պատասխանելու՝ ես երկտողի մյուս կողմում հարցրի, թե ով է առաջինը իր ցուցակում: Նա ճմռթեց թուղթը և մեկ այլ երկտող ուղարկեց, որտեղ գրված էր. «Չէ՞ որ առաջինը ես հարցրի»: Ես պատաս-

խան երկտող ուղարկեցի՝ մի փոքր արհամարհանքով. «Հետո՞ ինչ, ես էլ երկրորդը հարցրի»: Ես ոչ մի կերպ չէի պատրաստվում ասել, որ նա է առաջինը իմ ցուցակում, իսկ հետո իմանայի, որ ես նրա ցուցակում երկրորդն եմ: Ես որոշեցի, որ եթե նա ինձ դասի առաջին տեղում, ես էլ նրան կդասեմ առաջին տեղում, իսկ եթե երկրորդ տեղում դասի, ես էլ նույնկերպ կվարվեմ: Հանկարծ մտքերս ընդհատվեցին ուսուցչի ձայնից, որը երկուսիս էլ զգուշացնում էր դադարեցնել երկտողեր փոխանցելը, այլապես բարձրաձայն կկարդա դրանք: Մենք կարմրեցինք և երկար ժամանակ գլուխներս կախել էինք:

Հետո նա շշնջաց. «Գրի՛ր այդ մարդու անունը կոշիկիդ տակ, ես էլ կգրեմ իմ կոշիկի տակ, և երկուսով միաժամանակ ցույց կտանք այդ անունները»:

- Լա՛վ,- համաձայնեցի, բայց պատրաստվում էի խորամանկություն անել: Անունը գրելու փոխարեն ուրիշ բառ գրեցի: Ես չափազանց վախենում էի, որ հանկարծ իմ անունը չհայտնվեր նրա կոշիկի տակ:

- Ես կհաշվեմ երեքը, և մենք ցույց կտանք, եղա՞վ,- ասաց նա: Ես գլխով արեցի՝ ժպտալով և փորձելով հանգիստ պահել ինձ, երբ իմ տասը տարեկան սիրտը դուրս էր գալիս տեղից:

- Մեկ, երկու, երեք,- շշնջաց նա՝ ցույց տալով իր կոշիկի տակը: Այնտեղ գրված էր երկու տառ, որոնք իմ մականվան առաջին տառերն էին: Ես մի փոքր դանդաղ բարձրացրի իմ կոշիկը, որի տակ մեծատառերով գրված էր «ՎԱՌԵԼ» բառը: Անհիմաստ է ասել, որ դա նրան բոլորովին չերջանկացրեց, և ես անմիջապես կորցրի նրա բարեհաճությունը և դուրս եկա նրա ցուցակից: Երկուսս էլ կարմրեցինք, և ամբողջ դասի ընթացքում նա ո՛չ խոսեց, ո՛չ էլ նայեց ինձ: Այս ամենից հետո ես հասկացա, որ նա իրոք ինձ դուր է գալիս: Բայց նա այլևս չէր պատրաստվում ուշադրություն դարձնել ինձ:

Կար ևս մեկ խնդիր. մեր դպրոցում կար մի նոր տղա, որի անունը Ձոն էր (ոչ իմ ամուսինը), և նա բոլորին ասում էր, որ ես նրա ցուցակում առաջինն եմ: Բոլոր աղջիկները հավանում էին նրան, քանի որ նա նոր էր, բայց ինձ դուր չէր գալիս: Ես հավանում էի այն տղային, ում ինքս էի հեռացրել ինձնից:

Որքան շատ էի լսում, որ Ձոնին ես դուր էի գալիս, այնքան շատ

էի ընդդիմանում նրա ուշադրությանը: Ի վերջո, նա նույնիսկ իմ դասարանից չէր: Ես նրան տեսնում էի միայն բակում և միջանցքներում: Ես երեսս թեքում էի նրանից և հրաժարվում ընդունել որևէ երկտող, որ փորձում էր փոխանցել ինձ: Հետո մեկ օր նա չափն անցավ:

Ես ընկերներիս հետ տուն էի վերադառնում, իսկ Ջոնն ու նրա ընկեր էրիկը հեծանվով գալիս էին մեր ետևից՝ գրեթե երգելով հետևյալ բառերը. «Ջոնը սիրում է Լիզային»: Ես հուսահատորեն փորձեցի արհամարհել նրանց, բայց հետո իմ ընկերները սկսեցին հռհռալ և ձայնակցել նրանց: Իմ դեմքը հետզհետե շիկացավ: Ես շրջվեցի, որ ցույց տամ նրանց իմ ատող հայացքը և բարձրացնեմ ձեռքս, երբ Ջոնը արագ մոտեցավ ինձ, գողացավ իմ գլխարկը և հեծանվով արագ հեռացավ: Ես ամբողջ ուժով վազեցի նրա ետևից և բռնեցի նրան մի ծառի մոտ: Նա իջավ հեծանվից, թաքնվեց ծառի ետևում և գլխարկը թափահարելով՝ սկսեց զայրացնել ինձ:

- Ո՞վ է քեզ դուր գալիս: Ասա՛ ինձ, և ես կվերադարձնեմ քո գլխարկը,- պահանջեց նա:

Դա ինձ արդեն զզվեցնում էր: Ինչպե՞ս է նա համարձակվում վերցնել իմ գլխարկը և հրամաններ տալ: Ես մի մեծ փայտ գտա (իրականում դա մի փոքր գերան էր) և թափահարեցի նրա վրա՝ գոռալով.

- Վերադարձրո՛ւ գլխարկս, ապա թե ոչ, կկոտրեմ քո հեծանիվը:

Նա անվրդով էր.

- Գնա՛, կոտրի՛ր, ինձ համար միևնույն է, որովհետև ես քեզ սիրում եմ:

Ի՞նչ, նա ասաց «սիրո՞ւմ եմ»: Հիմա բոլորը ծիծաղում էին, իսկ ես կատաղած էի: Նա ամեն ինչ փչացրեց: Մինչ կգիտակցեի, թե ինչ է տեղի ունենում, ես մոտեցա նրան և պահանջեցի գլխարկս: Բայց փոխարենը նա կրկնեց իր սիրո խոստովանությունը: Արդեն բավական էր. ես այլևս չէի կարող տանել այդ նվաստացումը… վերցրի այդ մեծ փայտը և խփեցի նրա գլխին: Նա գցեց գլխարկը, իսկ ես գցեցի փայտը: Իմ ընկերներն ապշեցին, իսկ նրա ընկերը վազելով մոտեցավ նրան: Առանց ստուգելու՝ նրա մոտ ամեն ինչ կարգին է, թե ոչ, ես վերցրի գլխարկս, դրեցի գլխիս, բռնեցի ընկերներիս ձեռքը, և շարժվեցինք տուն:

> *Արդեն բավական էր. ես այլևս չէի կարող տանել այդ նվաստացումը… վերցրի այդ մեծ փայտը և խփեցի նրա գլխին:*

Դեմքս շառագունել էր: Ընկերներս չգիտեին՝ ինչ մտածեին: Արդյո՞ք Զոնը սիրո հերոս է: Արդյո՞ք ես սարսափելի չէի: Ես վճռականորեն ցանկանում էի պաշտպանել իմ վարքագիծը: Ես զգուշացրել էի նրան, իսկ նա չէր լսել: Հիմա միգուցե նա հանգիստ թողնի ինձ:

Ես մտա տուն և մայրիկին պատմեցի, որ մի հոգնեցնող տղա՝ Զոն անունով, վերցրել է իմ գլխարկը: Ես նույնիսկ երդվեցի երբեք չամուսնանալ Զոն անունով տղամարդու հետ (երբեք մի՛ ասա՝ երբեք): Իմ սենյակում հանգստանալով և ուժերս վերականգնելով՝ սկսեցի պատրաստել տնային աշխատանքս: Որոշ ժամանակ անց հնչեց դռան զանգը: Ննջասենյակի պատուհանից կարողացա տեսնել, որ Զոնի մայրիկն էր:

Ստամոքսս տակնուվրա եղավ, որովհետև ես հասկացա, որ անախորժության մեջ եմ: Աննկատ հասա միջանցք, որպեսզի դռան ետևից կարողանայի լսել, թե ինչ էին խոսում: Պատմությունը մոտավորապես այսպիսին էր. «Մեր որդին ձեր աղջկան ասել է, որ հավանում է նրան, իսկ նա փայտով հարվածել է տղայիս գլխին»: Ես հազիվ պահեցի ինձ, որ չգոռայի, իսկ մայրս ասաց. «Որքանով հասկացա, նա վերցրել էր աղջկաս գլխարկը»: Հետո նրա մայրը խեղդվող ձայնով խոսում էր արյան և սուր ցավերի մասին, իսկ մայրիկս ներողություն էր խնդրում: Ինչպե՞ս նա կարող էր այդպես վարվել: Լսվեցին ևս մի քանի խոսքեր, և մայրս հավաստիացրեց, որ կխոսի ինձ հետ, որից հետո «թշնամու» մայրը հեռացավ:

Դուռը փակելուց հետո մայրս գնաց հյուրասենյակ, որ հայրիկին պատմի ամբողջ պատմությունը: Ես լարված սպասում էի, որ նա հիմա կգոռա, բայց փոխարենը ծիծաղեց:

Նրանք քննարկում էին իմ վարքագիծը: Ես արագ անցա իմ սենյակ, որովհետև նրանք գալիս էին ինձ հետ խոսելու: Ծնողներս լավագույն ձևով բացատրեցին ինձ գլխին փայտով խփելու լրջությունը՝ անկախ նրանից՝ դու զգուշացրել ես նրան, թե ոչ: Նրանք ասացին, որ ես կարող էի սպանել նրան, բայց ընդամենը մի քանի վերք էի բացել նրա գլխի վրա և սուր ցավ պատճառել: Ես ինձ մի փոքր հիմար զգացի՝ պատկերացնելով, որ հաջորդ օրը բոլորը նրան տեսնելու էին գլուխը վիրակապերով փաթաթած, և պարզապես կիմանային, որ ես էի խփել նրան:

- Դու իրոք նրան դուր ես գալիս,- ասաց մայրիկս, դուռը իր ետևից փակելով:

Բայց ինձ հետաքրքիր էր՝ մի՞թե նա դեռ կարող էր սիրել ինձ: Միգուցե ուրիշ տղաներ դա համարեին որպես իմ կողմից նրան հավանելու խոստովանություն: Կամ, միգուցե, հիմա նա պարզապես կվախենա ինձնից: Ես պառկեցի քնելու՝ մտածելով, թե ինչ է լինելու վաղը: Ես մի փոքր հիմար և անհարմար էի զգում:

Հաջորդ առավոտյան դասարանում եռուզեռ էր տիրում, և երբ ներս մտա, ուսուցիչը քննախույզ հայացքով նայեց ինձ:

- Ճի՞շտ է, որ դու ծեծել ես Ջոնին և վնասել նրա գլուխը,- հարցրին շուրջս հավաքված համադասարանցիներս:

- Այո՛,- պատասխանեցի ես՝ փորձելով անտարբեր ձևանալ և հասկացնել նրանց, որ ճանճից փիղ չսարքեն:

Քմահաճ աղջիկներից մեկը նստարանից վեր կացավ և ասաց.

- Չեմ կարող հավատալ, որ դու դեռևս շարունակում ես առաջինը լինել նրա ցուցակում:

Ես չգիտեի, որ այդ տղան առաջինն էր այդ աղջկա ցուցակում: Այս փոքրիկ շիկահերը շատ ուժեղ հետաքրքրված էր նրանով: Չէի կարող հավատալ, որ ես նույնիսկ նրա ցուցակի մեջ կամ: Օ՜, մայրս չէր սխալվում. նա իսկապես սիրում էր ինձ:

Այդ օրը ես որոշեցի բամբասանք տարածել, որ ես հավանում եմ նրան և պատրաստվում եմ ավելացնել նրա անունը իմ ցուցակում (ի վերջո, դա ամենափոքր բանն էր, որ կարող էի անել նրան այդպես վիրավորելուց հետո): Ես նույնիսկ վերցրի այն երկտողը, որ նա այդ օրը փոխանցեց ինձ միջանցքում: Բայց, ճիշտն ասած, ինձ հետաքրքրում էր նրա համառությունը: Այդ անուշիկ 5-րդ դասարանցին՝ Ջոն անունով, ինձ հավատարիմ մնաց, մինչև որ հաջորդ ամառ տեղափոխվեց (մեկնելիս՝ նա լաց էր լինում): Գիշերով նա գալիս էր մեր տան մոտ, և մենք երկար զրուցում էինք: Ես այլևս նրան չէի խփում, ինչպես կռահում եք, մենք սկսեցինք ընկերություն անել: Ի վերջո, ինչպե՞ս կարող էի ընդդիմանալ այդպիսի ապահով և համառ սիրուն: Լավ հարց է: Ո՞վ կարող էր այդպես վարվել:

«Մենք սիրենք Նրան, որովհետև սկզբում Նա սիրեց մեզ» (Ա Հովհ. 4.19):

Մենք կարող ենք սիրել, որովհետև առաջինը Աստված սիրեց մեզ՝ տալով ապահովության զգացում: Նա հավատարիմ է, և մենք առաջինն ենք նրա ցուցակում:

Սա ինչ-որ անցողիկ, տարրական կամ միջին դասարանների դատարկ սեր չէ, որը տատանվում է յուրաքանչյուր կիսամյակի փոփոխության հետ կամ մի նոր աղջկա հայտնվելուն պես: Մենք ունենք Նրա սիրո երաշխիքը, որովհետև Նա սիրեց մեզ, նախքան մենք կնայեինք Նրա կողմը: Որպեսզի բոլորն իմանան Նրա սիրո մասին, Նա գրանցեց այն գրքի մեջ և ոչ թե տետրից պոկած ինչ-որ թղթի, որն ի վերջո դեն էր շպրտվելու: Նա հռչակեց, որ Իր սերը հավիտենական է, և այն կնքեց ուխտի խոստմունքով:

«…Հավիտենական սիրով սիրել եմ քեզ. դրա համար քաշեցի քեզ ողորմությունով» (Երեմիա 31.3):

Ուշադրություն դարձրեք, որ Աստված այստեղ օգտագործում է անցյալ ժամանակաձև. «Ես սիրել եմ քեզ», կարծես նկատի ունենալով հետևյալը. *«Ես վաղուց որոշել եմ սիրել քեզ, և դա երբեք չի փոխվի: Այդ պատճառով Ես ձեռքս մեկնել եմ և ամեն ինչ արել Իմ զորությունով, որ քեզ քաշեմ դեպի Ինձ, որպեսզի գրավեմ քո ուշադրությունը: Ես չեմ խնայել ոչ մի ողորմություն, որպեսզի իմանաս, որ դա Ես եմ որոշել»:*

> *Մենք ունենք Նրա սիրո երաշխիքը, որովհետև Նա սիրեց մեզ, նախքան մենք կնայեինք Նրա կողմը:*

Ուստի, Աստծո հանդեպ մեր սերն արթնացնելու առաջին քայլը մեր հանդեպ՝ Նրա սերը *գիտակցելն ու ճանաչելն է:* Մենք պետք է հայտնություն ունենանք այն մասին, որ չնայած մեր վարքագիծը անհրապույր էր ու գարշելի՝ Նա մոտեցավ մեր բարկացկոտ, տգեղ կերպարանքներին և շշնջաց. «Ես սիրո՛ւմ եմ քեզ»: Մենք կարծես վերցնում ենք երկտողը Նրա ձեռքից, կարդում այն՝ թույլ տալով, որ Նրա ճշմարտությունն ընկղմվի մեր սրտերի մեջ: Մենք փնտրում ենք մեր անունները Նրա կոշիկի տակ, բայց Նա մեր հայացքն ուղղում է այլ կողմ.

«Ո՛չ, ո՛չ այդտեղ, որդի՛ս, քո անունը գրված է Իմ ձեռքի ափի մեջ»: Եվ ապա Նա բացում է Իր ձեռքի ափը՝ ցույց տալով այն վերքը, որտեղ անջնջելի փորագրված են մեր անունները:

> «Կամ թե Նրա քաղցրության առատությունը և համբերությունը և երկայնամտությունը արհամարհո՞ւմ ես՝ չգիտենալով, որ Աստծո քաղցրությունը քեզ ապաշխարության է տանում» (Հռոմ. 2.4):

Բախվելով այս գեղեցիկ և հզոր ճշմարտությանը՝ մենք ունենք մեկ այլ ընտրություն՝ ինչպե՞ս կարծագանքենք դրա իրականացմանը: Արդյո՞ք կվազենք Նրա գիրկը, թե՞ կշրջվենք մի բանից, որը չի երևում, որպեսզի շփվենք նրանց հետ, ում կարողանում ենք տեսնել ու դիպչել:

Համաձայն եմ, որ սա այդքան էլ հեշտ երկընտրանք չէ, բայց բոլորս էլ կանգնում ենք դրա առջև՝ անկախ մեր տարիքից կամ հարաբերություններից: Որպես քրիստոնյաներ և Քրիստոսի աշակերտներ՝ մենք գիտենք, թե ո՞ր ճանապարհը պետք է ընտրենք: Բայց ոչ միշտ է անմիջապես պարզ լինում, թե ինչպես պետք է քայլենք այդ ճանապարհով: Որովհետև անմիջական բավականության խոստումը ավելի գրավիչ է, քան փայփայած հույսը, որը դեռ չի իրականացել:

> *Ո՛չ, ո՛չ այդտեղ, որդի՛ս, քո անունը գրված է Իմ ձեռքի ափի մեջ:*

Աստծո հանդեպ մեր սերն արթնացնելու երկրորդ քայլը Նրան հետևելն է: Մենք դեմքով շրջվում ենք դեպի Նա, որպեսզի ճանաչենք Նրան այնպես, ինչպես մենք ենք ճանաչված:

Բայց ինչպե՞ս ենք արձագանքում Մեկին, Ում չենք կարող տեսնել: Նա խոստմունքի Արքայորդին է, բայց Նրան հնարավոր չէ տեսնել կամ դիպչել: Դա նման է նրան, որ ջերմ արևի ճառագայթների ներքո քուն մտնենք ծաղիկներով լեցուն հովտում, հետո արթնանանք և գտնենք մի գեղեցիկ ձեռագիր երկտող, որտեղ գրված է տիեզերքի Արքայորդու անմար սիրո մասին: Նամակը ոչ միայն հռչակում է Նրա սերը, այլև առաջարկում մեզ ամուսնության ուխտ Նրա հետ: Մենք լցվում ենք անսահման ուրախությամբ, երբ նամակը պահում ենք մեր դողդողացող ձեռքերի մեջ և ուսումնասիրում Նրա անվան մոտ դրված

արքայական կնիքը: Մենք ոտքի ենք կանգնում սրտի արագ բաբախյունով՝ մտածելով, թե որտեղ է այդ փառավոր Արքայորդին, Ով սիրում է մեզ: Ես պետք է ճանաչեմ Նրան: Ես պետք է տեսնեմ Նրա երեսը: Մենք նայում ենք մեր շուրջը, բայց Նա չկա:

Ի՞նչ կանեիր դու: Կարծում եմ, որ կսկսեիր փնտրել Նրան: Ես կարծում եմ, որ դու նույնիսկ կհարցնեիր ուրիշներից Նրա մասին:

> «Իմ անկողնու մեջ գիշերը որոնեցի իմ հոգու սիրածին, ես որոնեցի նրան, բայց չգտա: Վեր կենամ, շուռ գամ քաղաքում, փողոցներում ու հրապարակներում որոնեմ իմ հոգու սիրածին. նրան որոնեցի, բայց չգտա» (Երգ երգոց 3.1,2):

Հանկարծ մեր աչքերը կբարձրացնենք մեր սեփական «ես»-ի փոքրիկ աշխարհից և մի նոր հայացք կնետենք մեր շուրջը: Մենք կնայենք յուրաքանչյուր արևածագին և մայրամուտին՝ փորձելով մի պահ տեսնել Նրա հայացքը: Այդ ժամանակ կնկատենք Նրա բարությունը, և այդ բարությունը կդառնա մերը: Մենք կլանված կնայենք երկնքի աստղերին՝ վայելելով Նրա մեծափառությունը, և այդ աստղերի փայլն իր հերթին կշողա մեզ վրա:

Նրա ստեղծագործության ճոխությունը նոր ձևով կզարմացնի մեզ, որովհետև մենք հիմա պարզապես շարժվող էակներ չենք երկրի վրա: Նրա սիրո դրսևորումը փոխում է ամեն բան: Այն հիմա դարձել է անձնական, որովհետև մենք Նրանն ենք, իսկ Նա՝ մերը: Յուրաքանչյուր օրը նվեր է դառնում, յուրաքանչյուր ծաղիկ մեզ համար է ստեղծվում: Յուրաքանչյուր բարի բան կստանանք Նրա ձեռքից, մենք այդ ամենը կսեղմենք մեր սրտին՝ թույլ տալով, որ դրանք պատեն մեզ իրենց սիրով և գեղեցկությամբ:

> «Որովհետև Նրա աներևույթ բաները աշխարհի սկզբից ստեղծվածներով իմացվելով տեսնվում են, որն է՝ Նրա մշտնջենավոր զորությունը և Աստվածությունը, այնպես, որ անպատասխան մնան» (Հռոմ. 1.20):

Այժմ մենք այլ կերպ ենք արձագանքում մեզ շրջապատող աշխարհին, որովհետև տեսանելի գեղեցկության մեջ տեսնում ենք Նրա

անտեսանելի բաները կամ էությունը: Մենք ուսումնասիրում ենք Նրա Անձ լինելը յուրաքանչյուր մանրուքի մեջ՝ մեծ թե փոքր:

Քանի որ մենք սիրված ենք, հիմա Նրան փնտրում ենք: Սա նման է այն բանին, որ փոխանակ ես դպրոցական միջանցքներում խուսափեի 5-րդ դասարանցի իմ երկրպագուից, նրա հետ հանդիպում էի փնտրում: Ես հուզված կարդում էի նրա գրած յուրաքանչյուր երկտողը և պահում դրանք իմ տան գաղտնի անկյուններում: Ես կրկին կարդում էի իմ սենյակում՝ սիրո երգերի ներքո: Դասերից հետո քայլերս դանդաղեցնում էի և ընկերներիցս ետ ընկնում, որպեսզի նա կարողանար հասնել ինձ և տուն ուղեկցեր: Ես հնարավորություններ էի փնտրում նրա հետ ժամանակ անցկացնելու համար: Առավել ևս հիմա, մենք պետք է հնարավորություններ փնտրենք մեր Արքայորդու հետ ժամանակ անցկացնելու համար:

Երաժշտությունն ապաստարան է դառնում ծաղկող սիրո համար: Սիրո և երաժշտության միջև կա գեղեցիկ ու աստվածային կապ: Նրանք ընդարձակվում և բացահայտում են միմյանց: Երաժշտությունն ունի ուժ մեզ տեղափոխելու համար: Սերը սավառնում է երաժշտության թևերով և երգ արթնացնում մեր սրտերում: Երաժշտության մեջ ընկղմված բառերը կարող են այնպես դիպչել մեր սրտերին, որ ուրիշ ոչինչ չի կարող դա անել: Մենք, ընկնելով երգի ազդեցության տակ, ընկղմվել ենք մեծ սիրո կամ խորը վշտի ապրումների մեջ:

Երաժշտությունը կարևոր բանալի է Աստծո հանդեպ մեր սերն արթնացնելու համար: Երաժշտությունն ունի զորություն մեզ տանելու ներկա իրականությունից դեպի Աստծո ներկայություն: Այն վեր է հանում մեր իրական և խորը հույզերը և մեզ ավելի մոտեցնում Աստծո սրտին: Երաժշտության ազդեցությունն ավելի է ուժգնանում պատանեկության հասակում: Այն կարող է խոսել մեր փոխարեն, երբ դժվար է լինում բառերով արտահայտվել, իսկ զգացմունքներն էլ խեղդում են մեզ: Լինելով երիտասարդ՝ Դավիթն օգտագործեց երաժշտության ուժը Աստծուն ավելի մոտենալու և միայնությունը ցրելու համար: Երբ

> *Սիրո և երաժշտության միջև կա գեղեցիկ ու աստվածային կապ: Նրանք ընդարձակվում և բացահայտում են միմյանց:*

նա երգում էր, զգում էր, որ Աստծո ներկայությունն իր հետ էր անապատում: Ավելի ուշ, երբ թագավոր դարձավ, նա այսպես էր նկարագրում Աստծո և երաժշտության միջև կապը.

> «Բայց Դու Սո՛ւրբ ես, ո՛վ Իսրայելի գովությունների մեջ բնակվողդ» (Սաղմ. 22.3):

Մեր փառաբանությունը բարձրացնում է Աստծո դիրքը, զորությունը և իշխանությունը մեր կյանքում: Կրկին արժե նշել, որ պատանեկան տարիքում մենք եղել ենք երաժշտության խորը ազդեցության ներքո: Այն մեզ անդիմադրելիորեն քաշում է այն ժամանակ, երբ մեր կյանքում արթնանում է սերը, երբ մենք հուզական խոցելի վիճակում ենք, որովհետև երաժշտությունն ունի ուժ՝ մխիթարելու կամ կրակը բորբոքելու:

Գիտե՞ք, որ երաժշտությունն ունի օծություն: Այդ պատճառով դուք պետք է իմաստուն լինեք ընտրություն կատարելու մեջ: Հին կտակարանում օծությունը ամենից հաճախ զուգակցվում էր թագավորի, քահանայի կամ մարգարեի վրա յուղ լցնելու հետ: Այն Աստծո Հոգու շոշափելի խորհրդապատկերն էր: Նոր կտակարանում օծությունը ներկայացնում է Սուրբ Հոգու ներկայությունն ու զորությունը Քրիստոսին հայտնելու համար: Այսպիսով՝ աստվածային, օծված երաժշտությունը լցված է Հոգու զորությամբ, որպեսզի մեզ ներքաշի Նրա ներկայության մեջ: Եղել են երկրպագության այնպիսի ժամանակներ, երբ ես բառացիորեն հեղեղվել եմ Նրա ներկայությամբ: Չնայած Նրան չէի տեսնում, բայց զգում էի, թե ինչպես է Նա պատում իմ ամբողջ էությունը: Այդպիսի ներկայության մեջ ինձ միանգամայն ապահով և սիրված էի զգում: Ժամանակը կանգ էր առնում, և ես տեսնում էի Երկինքը: Ես միշտ ունենում եմ այսպիսի հանդիպումներ, երբ ավելի մեծ սիրով ու ծարավով եմ լցված լինում Աստծո հանդեպ: Հոգուց ներշնչված, կենդանարար երաժշտությունն ունի զորություն բժշկելու, ոգեշնչելու և հանգստացնելու մեր հոգիները: Երբ ես կրկին լսում եմ նույն երգը օրեր կամ տարիներ հետո, Աստծո հետ

> *Մեր փառաբանությունը բարձրացնում է Աստծո դիրքը, զորությունը և իշխանությունը մեր կյանքում:*

հանդիպման հիշողությունը անցյալը դարձնում է ներկա:

Այդ պատճառով երաժշտությունն ունի հիշողություններ արթնացնելու զորություն: Երբ ես ու Ջոնը նոր էինք ամուսնացել, նա ինձ տարավ Սանտ-Մարտին: Այնտեղ մենք հանգստանում էինք, երկար նստում լուսնի լույսով լուսավորված պատշգամբում, ճաշի սեղանի շուրջ: Մեր հյուրանոցի ռեստորանում մենք անընդհատ լսում էինք մի գործիքային երաժշտություն, և հիմա՝ տասնութ տարի անց, երբ լսում եմ այդ երաժշտության առաջին նոտաները, մտովի վերադառնում եմ այդ ժամանակները: Մի ակնթարթում ես հայտնվում եմ մոմերով վառված ռեստորանում, նայում աստղազարդ երկնքի տակ շողացող օվկիանոսին և մեղմ խոսում ամուսնուս հետ:

Երաժշտությունն ունի զորություն ընկղմելու տարբեր հուզական վիճակների մեջ: Այդ պատճառով կարևոր է, որ մենք իմաստուն ձևով ընտրենք մեր նպատակակետը: Կա երաժշտություն, որը ստիպում է մեզ լաց լինել հայրենիքի նկատմամբ հպարտության զգացումից: Բոլորս էլ զգացել ենք սա, երբ երգել ենք մեր ազգային հիմնը. սովորաբար դրա ազդեցությունն ավելի խորն է ազգի դժվարությունների կամ հաղթանակների ժամանակ: Կա երաժշտություն, որը բերում է ծանրություն և հուսահատություն՝ ներշնչելով անհուսություն, մահ կամ, նույնիսկ, ինքնասպանություն: Մյուս երգերն առաջացնում են բարկություն, ատելություն և ապստամբություն: Ես չեմ հավատում, որ որևէ մեկը կվիճի այս բնագավառներում երաժշտության ուժի և ազդեցության մասին: Երաժշտությունն ունի նաև ռոմանտիկ զգացմունքներ արթնացնելու զորություն: Այն կարողություն ունի մարդկային մարմնի մեջ խթանել անգիտակցական սեռական արձագանքները: Տարբեր ռիթմեր կարող են բորբոքել և արթնացնել ֆիզիկական մարմինը: Երբ սա ուղեկցվում է սեռական բովանդակության բառերով, այս համադրման ազդեցությունն անժխտելի է:

Եթե դուք ցանկանում եք քայլել մաքրության մեջ, պետք է զերծ մնաք այսպիսի երաժշտության ազդեցությունից, որովհետև այն կանցնի ձեր պաշտպանության առաջին գիծը և կգրավի ձեր միտքը, նույնիսկ եթե դա չեք ցանկանում: Դուք, միգուցե, երբեք անձամբ չեք երգել այդ երգը, բայց նրա խոսքերը անընդհատ կրկնվում են ձեր

մտքում: Մենք լսել ենք, թե ինչպես են մարդիկ գանգատվում. «Այդ հիմար երգն անընդհատ մտքիս մեջ է»:

Այսպիսի երգերից ազատվելու լավագույն մեթոդը՝ դրանք ուրիշ երգերով փոխարինելն է (կա՛մ երգելով, կա՛մ լսելով): Կան երկրային երգեր, կան երկնային երգեր: Երկրային ոչ բոլոր երգերն են վատը, բայց դրանց մեծ մասը քեզ չեն մոտեցնի Աստծուն, իսկ երկնային երգերը հենց դա են անում: Երգելով այս երգերը՝ մենք հռչակում ենք Աստծո հանդեպ մեր սերն ու փափագը: Սա երկրպագության ձև է, երկրպագությունը երկրպագողին զինում է ավելի մեծ հայտնությամբ իր սիրո առարկայի մասին: Պատմության մեջ երբեք չի եղել այնքան շատ Հոգուց ներշնչված, վերափոխող երաժշտություն, որքան հիմա: Օգտագործե՛ք այն Աստծո ներկայության մեջ մտնելու համար: Այն կմոտեցնի ձեզ Աստծուն, որովհետև երաժշտությունը միշտ նախատեսված է եղել սիրահարներին միմյանց մոտեցնելու համար:

Որպես ամփոփում՝ ասեմ, որ Աստծո հանդեպ ձեր սերն արթնացնելու, ուժեղացնելու և զարգացնելու ձևերից մեկը այն նույն մոտեցումն օգտագործելն է, որը դուք օգտագործում եք ռոմանտիկ սերն արթնացնելիս: Այսինքն՝ ստեղծել համապատասխան մթնոլորտ երգի միջոցով: Դու մոտենում ես Աստծուն՝ լսելով և երգելով սիրո երգեր Նրան, ինչպես նաև Նրա մասին: Պողոսը հետևյալ կերպ է նկարագրում Հոգով լցված լինելը.

> *Երկրպագությունը երկրպագողին զինում է ավելի մեծ հայտնությամբ իր սիրո առարկայի մասին:*

«Եվ մի՛ արբեք գինով, որ դրանում անառակություն կա, այլ լցվե՛ք Հոգով՝ խոսելով ձեր մեջ սաղմոսներով, օրհնություններով և հոգևոր երգերով: Երգե՛ք և սաղմոսե՛ք ձեր սրտերում Տիրոջը» (Եփես. 5.18,19):

Այս խոսքում տեսնում ենք Հոգով լցվելու հորդոր: Մենք լցվում ենք, երբ բարձրաձայն երգում ենք և սաղմոս ասում մեր սրտերում, բայց աստվածաշնչյան այս խոսքը տալիս է նաև մեկ այլ բանալի, որն է՝ ուրիշների հետ Աստծո մասին մեր շփումը: Այստեղ չի խոսվում վկայություն տալու մասին, որովհետև շատ հաճախ կարող ենք կառչել

դրանից՝ որպես բարի գործ: Ո՛չ, սա սիրուց ծնված խոսակցություն է, որի ժամանակ խոսքերը բխում են լեցուն սրտից: Հիշե՛ք, հիասքանչ է սիրված լինել և կիսել դրա գեղեցկությունը ուրիշների հետ: Երբ դուք սիրում եք ինչ-որ մեկին, ուրիշներին պատմում եք նրա հատկություն-ների մասին: Դուք պարծենում եք, որ նրա հետ կապեր ունեք: Երբ ընկերները կիսվում են ընդհանուր սիրով, այդ ժամանակ նրանց մեջ կա ընդհանուր կապ: Այդ կապը կարելի է նմանեցնել մի խումբ ընկերների, ովքեր հավաքվել են խարույկի շուրջ և ազատ վայելում են դրա ջերմությունն ու գեղեցկությունը, մինչ նրա լույսը ցրում է շրջակա խավարը և հեռու պահում վայրի կենդանիներին: Կա մի կապ, որը յուրաքանչյուրին ստիպում է ուժեղացնել և ամրացնել միմյանց ճշմարտության մեջ: Աստծո հանդեպ սերն արթնացնելու և ուժեղացնելու մեկ այլ ճանապարհ է քեզ այնպիսի ընկերներով շրջապատելը, որոնք Նրա մասին միայն լավն են խոսում:

> *Աստծո հանդեպ սերն արթնացնելիս պետք է նաև ճիշտ ընկերներ ընտրեք:*

Համոզված եղեք, որ Աստծո հանդեպ սերն արթնացնելիս պետք է նաև ճիշտ ընկերներ ընտրեք: Դուք կարող եք շատ ավելի անհոգ լինել, եթե կյանքի այս բնագավառում հետապնդեք հասարակ երկրային սիրուն: Բայց եթե ընտրեք հետամուտ լինել Արքայորդու երազանքին, ապա պետք է ձեզ շրջապատեք այն աղջիկներով, ովքեր նույնպես սպասում են Նրան: Ես գիտեմ, որ սա ավելի հեշտ է ասել, քան այդպես վարվել, բայց այսպիսի կանայք կան: Քրիստոսի իրական ընկերները կլինեն նաև քո՛ իրական ընկերները: Նրանք լավ բաներ կխոսեն, որովհետև ճիշտ կյանքով են ապրում:

«Դուք Իմ բարեկամներն (ընկերներն) եք, եթե անեք՝ ինչ որ Ես պատվիրում եմ ձեզ» (Հովհ.15.14):

Հիսուսն այստեղ շատ պարզ է ասում: Հիսուսի ընկերները պահում են Նրա պատվիրանները և խրախուսում ուրիշներին անել նույնը: Իսկական ընկերները միշտ կբարձրացնեն քեզ և կդրդեն այնպես քայլել, որ հաճեցնես Տիրոջը: Երբ քո ընկերները հետևում են Հիսուսին, դուք գնում եք միևնույն ուղղությամբ և կիսում եք միևնույն ճանապարհը: Այս

սկզբունքը ճիշտ է՝ անկախ տարիքից. իսկական ընկերները դրդում են քեզ բարի գործեր անել:

> «Երկաթը երկաթով է սրվում, և մարդը սրում է իր ընկերոջ երեսը» (Առակ. 27.17):

Շատ կարևոր է շրջապատված լինես այնպիսի մարդկանցով, որոնք մեկ են հոգով և նպատակով: Սա չի նշանակում, որ դուք միշտ և ամեն ինչում համաձայնության կգաք, բայց քանի որ ունեք Հոգու միաբանություն, յուրաքանչյուրդ ընդունակ կլինեք սովորելու և պաշտպանելու մեկդ մյուսին:

> *Իսկական ընկերները միշտ կբարձրացնեն քեզ և կդրդեն այնպես քայլել, որ հաճեցնես Տիրոջը:*

> «Ամեն զգուշությունից առավել զգուշացի՛ր քո սրտից, որ նրանից է կյանքի ելքը» (Առակ. 4.23):

Մեր սրտին տրված է գլխավոր առաջնահերթությունը: Եթե գողը մտներ քո տուն և գողանար նյութական արժեք ունեցող բոլոր բաները, նա իրականում ոչինչ չէր ունենա, որովհետև չէր կարողացել դիպչել քո սրտին: Սիրտը կարելի է գողանալ միայն այն ժամանակ, երբ այն միացված է որևէ բանի: Այդ ժամանակ քո կորուստն իսկապես մեծ կլինի: Սա է պատճառը, որ Աստված պատվիրում է մեզ սիրել Իրեն ամբողջ սրտով, որովհետև Նրանում մեր սիրտն ապահով և անվտանգ է: Մեր սիրտը պետք է պահպանենք նաև այն պատճառով, որ նրանից է կյանքի ելքը: Մեկ այլ աստվածաշնչյան տարբերակ այսպես է ասում դրա վերաբերյալ.

> «Ամեն ինչից առավել զգուշացի՛ր քո կապվածություններից, որովհետև դրանք ազդում են քո կյանքի մնացած բաների վրա» (Առակ. 4.23):

Սրտի մեկ այլ նկարագրություն է մեր «կապվածությունները»: *Քո կապվածությունները կթելադրեն քո որոշումները:* Քո կապվածությունները կազդեն քո կյանքի ամեն բնագավառի վրա: Այս գլխում մենք խոսում ենք Աստծո հանդեպ մեր փափագն ու սերն արթնացնելու մասին, իսկ սա ներառում է այն, որ մեր սրտերն ուղղենք Նրան:

Կրկին հարց է ծագում. ինչպե՞ս իմ սիրտն ուղղեմ Աստծուն, Ում չեմ տեսնում:

Եթե ցանկանում ես իմանալ, թե ինչպես պետք է ինչ-որ բան անես, ապա դու խորհուրդ ես հարցնում նրանից, ով արդեն գիտի դա: Դավիթ թագավորը գիտեր, թե ինչպես փնտրեր Աստծուն և պահեր փափագն Աստծո հանդեպ: Նա փափագում էր Աստծուն այնպես, ինչպես ոչ ոք երբևէ չէր փափագել: Նա սկսեց այս որոնումները, երբ պատանի էր, և դեռ շարունակում էր փնտրել Աստծուն, երբ արդեն ծեր էր: Դավիթը երբեք չէր կասկածում Աստծո սիրուն կամ հավատարմությանը և ապրում էր՝ մշտապես Նրանից գոհանալով:

> *Քո կապվածությունները կազդեն քո կյանքի ամեն բնագավառի վրա:*

«Պահի՛ր ինձ, ո՛վ Աստված, որովհետև Քեզ եմ հուսացած: Ասացի Տիրոջը, թե՝ Դու ես իմ Տերը, բարիք չունեմ Քեզնից բացի: Ես Տիրոջը դրի իմ առջև ամեն ժամանակ, որովհետև Նա իմ աջ կողմն է. ես չեմ սասանվի: Սրա համար իմ սիրտն ուրախ է, և իմ փառքը ցնծում է, և մարմինս էլ հույսով կբնակվի» (Սաղմ. 16.1,2,8,9):

Ի՞նչ է անում Դավիթը: Նա Տիրոջը կանգնեցնում է իր առջև: Ինչպե՞ս է նրան հաջողվում դա. իր շուրթերով արտահայտելով սրտի ցանկությունները: Դու քո չերևացող սիրտը տալիս ես խոսքերի միջոցով, որովհետև մեր սրտերը միշտ արտահայտվում են մեր արտաբերած խոսքերի միջոցով: Նմանապես մեր սիրտը վերափոխվում է մեր արտաբերած խոսքերի միջոցով: Դավիթը ոչ միայն ասաց մեզ, թե ինչ էր ինքն անում, այլև տվեց մեզ այն խոսքերը, որ ինքն օգտագործում էր, որպեսզի մենք էլ հռչակենք դրանք: Այս Սաղմոսում Դավիթը մի քանի հզոր ճշմարտություններ է բացում, որոնք կարիք ունենք դարձնելու մերը.

1. Նույնիսկ թագավորները չեն կարող պաշտպանել իրենց… Աստծուն դարձրե՛ք ձեր ապավենը:
2. Նրան անվանե՛ք ձերը, ձեր Տերը... թող Նա անձամբ ձերը լինի:

3. Ասե՛ք Նրան, որ չկա մի բան, որ ավելի ցանկանաք, քան Նրան:
4. Միշտ պահե՛ք Նրան ձեր առջև:
5. Առավելագույնս պատվե՛ք Նրան Ձեր կյանքով:
6. Հետևե՛ք Նրան այն ամենում, ինչ անում եք:
7. Դուք կանգնած կմնաք, որովհետև ամեն բան Նրա հսկողության տակ է:
8. Քանի որ վերահսկողի դերում այլևս դուք չեք, ուրեմն հանգիստ և ուրախ եղեք:
9. Հանգստացե՛ք Նրա մեջ:

Երբ հռչակում եք Նրա սերն ու ուխտը, դուք ամրացնում եք միմյանց միջև կապը: Նա արդեն լիովին նվիրվել է ձեզ, բայց դուք կարող եք մեծացնել ձեր նվիրման չափը: Փրկության ընթացքը մեր կյանքում իրականանում է համաձայն նրա, թե ինչպես ենք շարունակում սիրերգը Աստծո հետ:

> «Որովհետև եթե բերանովդ Հիսուսին Տեր դավանես և սրտումդ հավատաս, թե Աստված հարություն տվեց Նրան մեռելներից, կապրես: Քանի որ սրտով հավատում ենք արդարանալու համար և բերանով դավանում ենք փրկվելու համար: Որովհետև Գիրքն ասում է՝ նա, ով հավատա Նրան, չի ամաչի» (Հռոմ. 10.9-11):

Մեր կյանքում մենք մտնում ենք փոխհարաբերության մեջ և այն զարգացնում խոսքերի և համապատասխան արարքների միջոցով: Դրանք կարող են լինել բառեր, որոնք հռչակում են այնպիսի նվիրվածություն, ինչպիսիք են երդումը, խոստումը կամ ուխտը: Կամ՝ դրանք կարող են ավելի քիչ պաշտոնական լինել, բայց զորավոր, ինչպես ընտանիքում և ընկերների միջև ասված խոսքերը: Միմյանց հայտնելով մեր երազանքներն ու վախերը սիրո միջավայրում, խոսքերն ավելի են մոտեցնում մեզ: Խոսքերը կարող են բժշկել և մաքրել մեր սրտի ծածուկ անկյունները, ինչպես նաև վիրավորել և աղտոտել մեր ներսը: Աստծո ներկայությունն ու բուռն

> *Երբ հռչակում եք Նրա սերն ու ուխտը, դուք ամրացնում եք միմյանց միջև կապը:*

սերը քո սրտում պահելու համար խոսքերդ այնպես ընտրիր, ինչպես ընկերներիդ, այսինքն՝ իմաստությունով: Իմացի՛ր, որ դրանք կարող են լինել քիչ, բայց՝ թանկարժեք:

Սա միգուցե հայտնություն չէ քեզ համար, բայց մեզնից շատերն անուղղելի եսասերներ են: Սա նշանակում է, որ մեր մարդկային էությամբ մենք չգիտենք ինչպես լավագույնս սիրել: Աստված խնդրում է մեր անկատար սերը՝ փոխարենը տալով Իր կատարյալ սերը: Նա նույնիսկ զորություն և կարողություն է տալիս մեզ՝ Իրեն սիրելու: Նա խոստանում է ափռել մեր սրտերի մեջ Իր սերը Սուրբ Հոգու միջոցով, որ տրվեց մեզ (տե՛ս Հռոմ. 5.5): Մեզ հարկավոր է միայն խնդրել Նրանից:

Սիրելի՛ երկնային Հայր,

Ես զգում եմ այս հուզմունքը: Խնդրում եմ, որ Քո հանդեպ իմ սերն արթնանա՝ ի պատասխան Քո սիրուն: Ես անհավատարիմ էի, բայց Դու միշտ հավատարիմ ես: Ցանկանում եմ ճանաչել Քեզ: Հայտնի՛ր Քեզ: Ես փափագում եմ Քեզ և աղոթում Դավթի խոսքերով, քանի որ իմ սիրտը վազում է Քո ետևից: Պահի՛ր ինձ, Աստվա՛ծ, որովհետև Դու ես իմ ապավենը, իմ Տերը, և ես ոչ մի բարիք չունեմ առանց Քեզ: Իմ սիրտը թաքցնում եմ Քո ապահով գանձարանում: Դու մշտապես իմ առջև ես: Դու գնում ես իմ աջ կողքով, այդ պատճառով ես երբեք չեմ սասանվի: Ես հավատում եմ, և իմ սիրտն ուրախ է: Ես բարձրաձայն կերգեմ և կփառաբանեմ Քեզ ամբողջ սրտով և հոգով: Ես ապահով կպառկեմ ու կհանգստանամ, քանի որ Քո ծածկոցի տակ եմ բնակվում և Քո թևերի ներքո թաքնվում:

Սիրով՝ Քո դուստր

5 *Քնած գեղեցկուհին*

«Երազանքը մի ցանկություն է, որ առաջանում է խորը քնած սրտում»:

– ՄԵՁԲԵՐՈՒՄ «ՄՈԽՐՈՏԻԿԻՑ

Մենք երգում ենք և մեր շուրթերով պատմություններ պատմում, որոնք բացահայտում են մեր սրտի ցանկությունները: Հավանաբար, այս գլխի վերնագիրը զարմացրեց քեզ, բայց իրականում առաջինն Աստված էր, որ տվեց այս գաղափարը: Ի վերջո, Նա է տիեզերքի միակ Թագավորը, իսկ Նրա Որդին՝ Հիսուսը՝ իրական Թագաժառանգը, բոլոր գերի գեղեցկուհիների վերջնական ազատողը: Սա Նրա բազում սիրո պատմություններից մեկն է, և լավագույն սիրո պատմություններն ունեն այգիներ և ամրոցներ, փշեր և պտուղներ, դարպասներ և աշտարակներ, անտառներ և դաշտեր, չար և բարի, փառահեղ արքայազներ և քնած գեղեցկուհիներ:

Նա է տիեզերքի միակ Թագավորը, իսկ Նրա Որդին՝ Հիսուսը՝ իրական Թագաժառանգը, բոլոր գերի գեղեցկուհիների վերջնական ազատողը:

Այս պատմությունը մի գերի աղջկա մասին է, ով սպասում է, որ արթնացնեն խորը քնից: Եթե խորամուխ լինես այս պատմության մեջ, ապա կտեսնես, որ այն պարունակում է զարմանալի խորություն և հույզեր, ներառյալ մեր վախերն ու ամենահուսահատ երազանքները: Այս հնագույն հեքիաթը վերաբերում է թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց, որովհետև այն մի հայացք է մեր սահմանափակ երկրային հեռանկարներից դեպի երկնային հարատև խոստմունքների խորհրդավորությունն ու ճոխությունը: Այն մանկական բառերի պարզության մեջ արտահայտում է յուրաքանչյուր կնոջ խորը և ամենասիրելի երազանքը, այն, որ նա կարթնանա մղձավանջից և հավիտյան կհայտնվի իր երազանքի գիրկը:

Այս հույսը բորբոքում է երիտասարդ աղջիկների և տարեց կանանց սրտերը: Պատկերացրեք, թե ինչպես կզգաք, եթե ձեզ տրվի այնպիսի սեր, որն ավելի մեծ է և ուժեղ: Մի սեր, որն ընդունակ է նավարկելու ձեր կյանքի յուրաքանչյուր հուզական ալիքի վրայով: Դա սեր է, որն ունի բավականաչափ խիզախություն դեմառդեմ կանգնելու ցանկացած վիշապի, որը սպառնում է ձեր սրտին: Այս փրկությունը կներառի փախուստ մեր իսկ կառուցած մութ ամրոցներից: Այն կքանդի մեկուսացման պատերը, որ ինքներս ենք կառուցել ուրիշներից հեռու մնալու համար: Որքան ուշագրավ է հայտնաբերել, որ մինչ մենք ծանր քնի մեջ սպասում էինք, մեր սիրեկանը՝ ամեն համեմատությունից վեր մի ազնվական, հաղթահարում էր յուրաքանչյուր արգելք՝ վառվելով մի համբույրով մեզ արթնացնելու ցանկությամբ: Խնդրում եմ՝ թույլ տվեք օգտագործել մի փոքր ստեղծագործական ազատություն և տեսնել մեր Արքայազնին այս պատմության մեջ:

Այն մանկական բառերի պարզության մեջ արտահայտում է յուրաքանչյուր կնոջ խորը և ամենասիրելի երազանքը, այն, որ նա կարթնանա մղձավանջից և հավիտյան կհայտնվի իր երազանքի գիրկը:

Այս հեքիաթը շատ տարբերակներ ունի, դրանց մեծ մասը սկսվում է հանդիսավոր երեկոյով, որտեղ թագավորը և թագուհին արքայական խնջույքին տոնում են իրենց միակ դստեր երկար սպասված ծննդյան օրը: Իրենց հուզվածության և շտապողականության պատճառով ծնողներն անզգուշորեն վիրավորում են չար փերիին՝ չհրավիրելով նրան խնջույքին: Չնայած արհամարհանքին՝ փերին, միևնույն է, գալիս է երեկոյին, և մինչ մյուս հյուրերը օրհնում են նորածնին իրենց նվերներով, նա անիծում է երեխային: Այս անեծքը անմիջապես չէր կատարվելու... այն սպասելու էր՝ թաքնվելով վաղվա ստվերներում, խոստանալով թակարդը գցել իրենց դստերը, երբ նա աղջկական հասակից անցներ կանացիության հասակին: Համաձայն անեծքի՝ իր տասնհինգերորդ տարեդարձին աղջիկը ձեռքը գցելու էր ճախարակի իլիկին, մատը ծակելու էր և մահանալու էր:

Երեկոյին ներկա գտնվող մեկ այլ փերի միջամտում է աղջկա օգտին և մահը փոխարինում է երկարատև քնով: Թագավորն ու թագու-

հին սարսափած անմիջապես օրենքներ են ստեղծում իրենց դստերը պաշտպանելու համար: Նրանք վառում են իրենց թագավորության մեջ գտնվող ամեն մի ճախարակ ու իլիկ և արգելում դրանց հետագա արտադրությունը:

Բայց հետաձգված անեծքները ամենավտանգավորն են, քանի որ, որքան ժամանակն անցնում է, դրանք կարծես ավելի քիչ սպառնալիք են ներկայացնում: Հեքիաթում տասնհինգ տարին անցնում է, և թագավորն ու թագուհին վստահ են, որ բոլոր իլիկները վերացնելուց հետո իրենց դստերը ոչինչ չի սպառնա:

Ինձ հետաքրքիր է, թե ինչ կպատահեր, եթե ճախարակներն արագությամբ ոչնչացնելու և դրանց օգտագործման դեմ օրենքներ ստեղծելու փոխարեն թագավորն ու թագուհին ժամանակ հատկացնեին և իրենց դստերը զգուշությամբ սովորեցնեին ճիշտ ձևով վարվել իլիկի և ճախարակի հետ: Ի վերջո, ճախարակը վատ բան չէ. այն օգտակար է: Ի՞նչ կլիներ, եթե նրանց դուստրը հմուտ մասնագետ դառնար այդ գործի մեջ: Այդ ժամանակ ոչ մի վախ չէր լինի, որովհետև նա կիմանար՝ ինչպիսի զգուշությամբ պետք է վարվեր դրա հետ:

> *Հետաձգված անեծքները ամենավտանգավորն են, քանի որ, որքան ժամանակն անցնում է, դրանք կարծես ավելի քիչ սպառնալիք են ներկայացնում:*

Եվ ի՞նչ: Իհարկե, ամեն ինչ այլ կերպ կընթանար, և այն, ինչ արգելված է եղել, կկորցներ գրավչությունն ու խարդավանքը: Բայց նրանք չարեցին սա, որովհետև, ինչպես շատ ծնողներ, նրանք լսեցին վախին, իսկ վախը երբեք իմաստուն կամ լավ խորհրդատու չէ: Երբ վախը թելադրում է մեր որոշումները, այն միշտ ծայրահեղության է հասցնում, ոչ թե բերում իմաստություն և զսպվածություն: Շատ հաճախ մենք նույն միջոցները ձեռնարկում ենք այսօր: Բայց վերադառնանք մեր պատմությանը:

Երեխան մեծացավ և դարձավ գեղեցիկ, խելացի և գրավիչ աղջիկ: Նրա ծնողները համոզված էին, որ նա նույնչափ հնազանդ կլինի իրենց բացակայության ժամանակ, որքան իրենց ներկայության ժամանակ է: Այս համոզվածությամբ նրանք անհոգ էին և ուշադրություն չդարձրին իրենց ամրոցի հեռու սենյակներին: Իրենց դստեր տասն-

հինգ ամյակին նրանք մեկ ուրիշ թագավորից հրավեր ստացան՝ հյուրընկալվելու նրանց: Խոստանալով շուտ վերադառնալ՝ նրանք դստերը թողեցին ամրոցում՝ պատվիրելով, որ իրեն լավ պահի և մնա ամրոցի տարածքում:

Բայց այս աղջիկը երբեք այսպիսի ազատություն չէր տեսել: Նա չէր կարող սպասել և ինքնուրույն չհետազոտել պալատը և չուսումնասիրել այն աշտարակը, որը աչքաթող էր արվել: Երբ ծնողների կառքը տեսադաշտից անհետացավ, նրա սիրտը հուզմունքից թրթռաց: Այսօր արկածային օր է լինելու, որովհետև նա հայտնաբերելու է, թե ինչ կա ամեն փակ սենյակի ներսում: Իհարկե, երկար չանցավ, մինչև նա բացեց սենյակներից մեկը, որտեղ գտավ մի ծեր կնոջ, որը ճախարակի վրա թել էր մանում: Արքայադուստրը լցվեց հետաքրքրությամբ. նա երբեք չէր տեսել այդպիսի գործիք: Նա նայում էր, թե ինչպես է անիվը պտտվում, և խավոտ բուրդը մանվում ու վերածվում ձիգ և ամուր թելի: Այն անդիմադրելիորեն գրավում է աղջկան, և ծեր կինը մոտ է կանչում արքայադստերը:

Նա ավելի է մոտենում և ապա առաջ տանում ձեռքը: Ծեր կինը գլխով համաձայնության նշան է անում և շշնջում. «Արի՛, ձեռքդ մեկնի՛ր, վերցրո՛ւ իլիկը»: Նա ձեռքը մեկնում է և մատը ծակում: Նա ձեռքը ետ է քաշում, բայց արդեն ուշ է լինում: Աղջիկն իրեն զարմանալիորեն թույլ է զգում: Ծեր կինը ժպտում է և նրան ցույց տալիս ստվերում թաքնված մահճակալը: Այն պարուրված էր մուգ ծածկոցով: Աղջիկը չափազանց հոգնած էր առարկելու համար: Նա ընկղմվում է անկողնու մեջ՝ խուսափելով հատակին ընկնելուց: Քունը ալիքի պես պարուրում է նրան, և նա հազիվ լսում է ծեր, արհամարհված կնոջ ծիծաղը: Խավարն ամբողջությամբ պատում է ամրոցը, և փշերն ու մասրենիներն արագորեն աճելով՝ ծածկում են այն անցորդների տեսադաշտից:

Շատ տարիներ են անցնում, և այս քնած գեղեցկուհու պատմությունը պատմվում է ամենավայելչակազմ, խիզախ և ազնվական արքայազներից մեկի պալատում: Աղջկա գերությունն այնքան վաղեմի էր դարձել, որ պատմությունը պատմողները նույնիսկ համոզված չէին՝ իրենց ասած խոսքերը ճշմարի՞տ են, թե՞ լեգենդ: Բայց իշխանը գիտեր: Աղջկա անհուսալի վիճակը այնպես շարժեց նրա սիրտը, որ նա

անմիջապես թողեց իր պալատի հաճույքները և պատրաստվեց գնալ ու փրկել արքայադստերը: Հաջորդ առավոտյան նա մեկնեց որոնումների: Հետաձգել չէր կարելի. աղջկան արթնացնելու ժամանակն էր:

Ճանապարհորդությունը նրան շատ հեռացրեց իր հայրենիքից, և շատ տարիներ հետո նա մտավ արքայադստեր երկրի սահմանները: Բայց նրան ոչ ոք չողջունեց այնտեղ: Ի վերջո, մի ծեր կին նրա հետ կիսվեց այն պատմությունով, որ լսել էր իր մորից երեխա ժամանակ: Դա լեգենդ էր միայնակ արքայադստեր մասին, որը կորել էր իրենց քաղաքը շրջապատող հսկայական, չոր անապատի մյուս կողմում գտնվող մութ անտառում: Արքայազնը շնորհակալություն հայտնեց նրան և սկսեց մենակ անցնել այդ անապատով:

Դա երկար ու դժվար ճամփորդություն էր, և նրա պաշարը չէր բավարարում: Հակառակորդն անընդհատ փորձում էր նրան՝ սկզբում առաջարկելով ուտելիք, ապա իր մութ թագավորության գահը: Նա ցանկանում էր, որ արքայազնը թողներ իր որոնումները, բայց վերջինս համառորեն առաջ էր գնում: Այն ամենը, ինչ առաջարկվում էր նրան, չէր կարող փոխել նրա ցանկությունը՝ կիսելու իր հոր թագավորության փառքը այս բանտարկված աղջկա հետ:

Նա հասավ անտառ, տեսավ, որ այն պատված է խիտ թփերով և ծառերով: Շատ օրեր հետո կոտրելով փշոտ պատնեշը՝ հասավ ամրոցին: Պողպատե լարերը, բարձրանալով պատնեշների վրայով, փաթաթվել էին աշտարակներին՝ աղավաղելով նրանց տեսքը և երբեմնի գեղեցկությունը վերածելով հրեշավորության: Միայն մեկ աշտարակ էր մնացել փշերից պաշտպանված: Արքայազնը գիտեր, որ աղջիկը սպասում էր իրեն այդ աշտարակում:

Նա չարագուշակ հանգստության մեջ լսում է մի ձայն, որ գալիս էր փշերի միջից. «Գնա՛, դու երբեք չես կարողանա հասնել նրան. նա ի՛մն է»: Բայց արքայազնը պատկերացնում էր, որ ուրիշ ձայն է լսում: Դա աղջկա մեղմ շշնջոցն էր, որը նրան օգնության էր կանչում: Նա աղջկա վերջին հույսն էր: Նորոգված ուժով արքայազնը հանում է իր սուրը և կտրում մուտքը ծածկող փշերը: Յուրաքանչյուր հարվածով նա ավելի էր մոտենում այն պահին, երբ պետք է արթնացներ աղջկան և նրան դարձներ իրենը: Նա ոտքով հարվածում և բացում է դուռը:

Ներսում օդը չոր էր և փոշոտ: Նա ճռճվող աստիճաններով մագլցում է դեպի աղջկա սենյակը, անցնում դռան միջով, բացում պատուհանը և մեկ շարժումով ցրում խավարը: Արևի ոսկե շողերը թափանցում են աղջկա քնած մարմնի մեջ: Տարիների ընթացքում նա ո՛չ կեղտոտվել էր, ո՛չ ծերացել. սպասելու ժամանակը նրա օգտին էր ծառայել, և նա իր հանգստության մեջ ավելի էր գեղեցկացել:

Արքայազնը ծանր շնչելով ավելի է մոտենում աղջկան: Բայց երբ նա մի պահ կանգ է առնում՝ աղջկան նայելու, տեսնում է, որ աղջիկը շնչում է: Արքայազնը այնպես է ազդվում, որ սկսում է արտասվել: Առաջ մղվելով այն ցանկությամբ, որը ճանապարհի ընթացքում ավելի էր խորացել, նա քնքշությամբ գրկում է աղջկան: Նրա ջերմ շրթունքներն ակնթարթորեն հպվում են աղջկա անկենդան շուրթերին, ապա սպասում նրա արձագանքին:

Արքայադստեր աչքերը սկսում են թրթռալ ծանր կոպերի տակից, հետո դանդաղ բացվում են, երբ գլուխը շրջում է տղայի կողմը: Նա տեսնում է իր արքայազնին և ժպտում քաղցր, քնկոտ ժպիտով՝ ձեռքը մեկնելով դեպի տղայի արցունքոտված այտը: Երբ նրա մատները դիպչում են տղայի արցունքներին, նա նույնպես սկսում է արտասվել. տղան կանգնել էր նրա առջև, ում այդքան երազել էր: Ում երբեք չէր տեսել, բայց միշտ իմացել էր, որ կա: Ի վերջո Նա հայտնվեց: Նրանցից ոչ մեկի համար ետադարձ չկար. արքայադուստրը գերել էր նրա սիրտը ընդամենը մեկ հայացքով: Նա մի կողմ է տանում աղջկա ձեռքը իր այտից և ջերմ համբուրում:

Ապա գրկում է աղջկան և հանում խավարի մութ բանտից դեպի պայծառ արևի լույսը. դրսում նրան էր սպասում սպիտակ ձին: Ոչ մի խոսք չեղավ չար կախարդանքի կամ հետզհետե մոռացվող պալատի մասին: Ինչ որ կար, անցյալում էր. անցյալը ոչինչ էր, բացի ստվերից, որն անհետանում էր Նրա սիրո լույսից:

Արքայազնը գտել էր նրան. ոսկր՝ իր ոսկրից, մարմին՝ իր մարմնից: Նա էր նրա ցանկությունը, և աղջիկը սիրում էր նրան այնպես, ինչպես կարող էր միայն երազել: Նա այլևս մենակ չէր լինելու, քանի որ նրանք այլևս երկու չէին, այլ՝ մեկ:

Նրանք հասան տղայի թագավորություն, որտեղ հարսնացուն ներ-

կայացավ թագավորական ընտանիքին: Նրանց միությունը օրհնվեց, և նրանք մտան հարսանեկան սենյակ: Այնտեղ պարեցին այն երաժշտության ներքո, որը երգում էին նրանց հոգիները: Հիմա նրանք մեկ ամբողջություն էին, և դուք գիտեք պատմության ավարտը. նրանք երջանիկ ապրեցին այդ ժամանակից ի վեր: Ամեն սխալ ուղղվեց. կույսը ազատվեց գիշերային մղձավանջից և ապահովությամբ հաստատվեց երազանքների և լույսի թագավորությունում:

Երկուսը գտան իրար: «Այդ ժամանակից ի վեր» նշանակում է այս պահից սկսած, այժմ և հավիտյան: Նույնիսկ մահվան վարագույրը չի կարող բաժանել այս սերը: Որովհետև Նա է կյանքի Տերը, և սիրահարների պարը միշտ շարունակվում է մեկ ուրիշ ժամանակ և մեկ ուրիշ տեղ, որտեղ ժամանակը վերջ չունի, որտեղ կա անպատմելի ուրախություն և աննկարագրելի գեղեցկություն:

Ամեն սխալ ուղղվեց. կույսը ազատվեց գիշերային մղձավանջից և ապահովությամբ հաստատվեց երազանքների և լույսի թագավորությունում:

Արդյոք սա՞ է քո երազանքը, քո ցանկությունը, քո պատմությունը: Ես հավատում եմ, որ այդպես է, քանի որ Հիսուսը քո Արքայազնն է, և քո հոգու խորքում դու փափագում ես Նրա սիրուն: Դա մի գեղեցիկ պատմություն է, որտեղ չկա ժամանակ: Այն մանրաթելի նման հյուսվել է յուրաքանչյուր կնոջ էության մեջ: Այն ունի այնպիսի հզոր և անդիմադրելի գրավչություն, որ ստիպում է յուրաքանչյուրիս Հոգու հետ միաբանված գոչել. *«Ե՛կ, Տե՛ր Հիսուս: Մոտեցրո՛ւ ինձ Քեզ»:*

Նա է կյանքի Տերը, և սիրահարների պարը միշտ շարունակվում է մեկ ուրիշ ժամանակ և մեկ ուրիշ տեղ:

Ոմանք միգուցե հարցնեն. «Ինչպե՞ս կարող է սա լինել իմ պատմությունը, իմ երազանքը և իմ Արքայազնը: Ես պալատում չեմ մեծացել: Ես հաճախ եմ ծակել իմ մատը և ցավից ետ քաշել, և ոչ ոք չի արթնացրել ինձ իմ մղձավանջից»: Պատճառը, որ դու կասկածում ես ճշմարտությանը, այն է, որ չափից շատ ժամանակ ես անցկացրել հուսահատության ստվերներում. դու մեծացել ես և մոռացել քո մանկության երազանքները: Ժամանակն է արթնանալ Նրա կանչից և սկսել

կրկին երազել: Նա սպասում է, թե երբ ես շրջվելու դեպի Իր ճանապարհը: Վերջը դեռ չի եկել, և մենք ունենք Նրա հաստատ խոստումը, որ կգա օրը, երբ յուրաքանչյուրս կհանդիպի հավատարիմ ու սիրող Արքայազնին:

> «Նրա համար էլ Աստված շա՛տ բարձրացրեց Նրան և մի անուն շնորհեց, որ ամեն անունից ավելի բարձր է: Որ Հիսուսի անունով կծալվի ամեն ծունկ երկնավորների և երկրավորների և երկրի տակ լինողների, և ամեն լեզու կդավանի, թե Հիսուս Քրիստոսը Տեր է Հոր Աստծո փառքի համար» (Փիլիպ. 2.9-11):

Նա է միակ փառահեղ, հավատարիմ և ճշմարիտ Արքայազնը, Ով թողեց Իր երկնային թագավորությունը, որպեսզի փնտրի Իր գերի հարսնացուին: Նա է մեր հոգիների սիրեկանը, Ով շարունակում է կանչել մեզ դարերի խորքից. *«Ե՛կ ինձ հետ, Իմ սե՛ր»:* Նա կոտրել է մեղքի կապանքները և հեռացրել մահվան քունը Իր սիրեկանից: Հիմա հրավիրում է նրան պարելու, ուրախանալու և պատրաստվելու Իր վերադարձին:

> *ժամանակն է արթնանալ Նրա կանչից և սկսել կրկին երազել:*

Այստեղ մնում է այն, թե ինչ պատասխան կտանք մենք: Արդյո՞ք կմեկնենք մեր ձեռքը և կգրկախառնվենք, թե՞ կանտեսենք այն ամենը, ինչ Նա արել է մեզ Իր սեփականը դարձնելու համար, և կվերադառնանք անհավատության չար նիրհին: Նրա գալուստի ժամանակ արդյո՞ք ծնկի կիջնենք՝ երկրպագելով և ուրախանալով Նրա փառավոր խոստման իրականացման համար, թե՞ կլինենք նրանց մեջ, ովքեր վախից կկծկվեն: Ես հավատում եմ, որ դուք կարթնանաք ճշմարտության համար և զարմանքից վեր կբարձրացնեք ձեր երեսը: Ես հավատում եմ, որ այս գիրքը ձեր ձեռքում է, որովհետև ձեր սիրտը փափագում է Արքայազնին:

Աստվածաշնչում կարելի է գտնել մեկ ուրիշ քնած գեղեցկուհու: Դա մի բնագավառ է, որտեղ մեզ խրախուսվում է պահպանել հանգստություն և մնալ երազային վիճակում, մինչև կգա արթնանալու ժամանակը. դա մեր սեռական ցանկության բնագավառն է: Այն պահանջում

է քնել և հասունանալ, մինչև կգա ճիշտ ժամանակը: Մենք չենք որոշում, թե երբ պետք է արթնանանք այս բնագավառում: Մարդիկ անհոգ են ժամանակի հարցում, բայց Աստված այդպես չէ: Մեզ հանձնարարված է չարթնացնել սերը, մինչև այն չցանկանա (տե՛ս Երգ երգոց 2.7): Այդ իսկ պատճառով մեր սեռական ոլորտը կամ սիրո հանդեպ սեռական արձագանքը կարելի է նմանեցնել *քնած գեղեցկուհուն:* Անշուշտ, այս գեղեցկությունը չի հանգստանում չար ժամանակաշրջանում, այլ երազում է՝ սպասելով ճիշտ պահին: Եթե մենք վստահում ենք, որ Նա կհանի մեզ գերությունից, ապա կարող ենք նաև վստահ լինել, որ Նա կարթնացնի մեզ ուրախության համար: Սա ավելի խորը հասկանալու համար անդրադառնանք այն իմաստությանը, որը գտնվում է Սողոմոնի գրքում:

> «Երդում եմ տալիս ձեզ, ո՛վ Երուսաղեմի աղջիկներ, դաշտի այծյամներով կամ եղնիկներով. մի՛ զարթեցրեք և մի՛ վեր կացրեք սիրուհուն (անգլ.՝ սերը), մինչև որ ինքը բարեհաճի» (Երգ երգոց 2.7):

Սրանք այնպիսի ցանկալի և բանաստեղծական խոսքեր են, որ ես գրեթե կարող եմ պատկերացնել այդ տեսարանը: Հեռվում երևում է այծյամների հոտը, որն արածում է նախալեռների արևոտ լանջերին հանդարտ հոսող վտակի կողքին: Օրորվող ճյուղերի տակ մի քանի երկչոտներ դանդաղ շարժվում են թավշե խոտի շուրջը՝ ժամանակ առ ժամանակ բարձրացնելով իրենց պարանոցները՝ ուսումնասիրելու ցանկացած մեկին, ով դիտում է իրենց անդորրը: Նրանց մեծ, պարզ աչքերը կարծես նայում են քո հոգու խորքը, հետո գլուխները կրկին կախում են՝ թարմ խոտ ուտելու համար:

Բայց ի՞նչ կապ ունեն դաշտի հեզ այծյամներն ու լայն բացած աչքերով անմեղ եղնիկները արթնացող սիրո հետ: Եվ եթե խոսքն էլ ուղղված է Երուսաղեմի աղջիկներին, արդյո՞ք դա ընդհանրապես վերաբերում է մեզ: Մենք նոր քննարկեցինք Արքայազնի միջոցով մեկ օր արթնանալու գեղեցկության և հույսի մասին, իսկ այստեղ մեզ հանձնարարվում է, որ ինքներս չարթնացնենք բնական սերը, այլ սպասենք: Երգ երգոցում այս մասին մեզ զգուշացվում է ոչ թե մեկ, երկու, այլ երեք անգամ: Աստվածաշնչի «Նոր կենդանի թարգմա-

նության» մեջ այս հրահանգը պահանջում է խոստում.

> «Երդում եմ տալիս, ձեզ, ո՛վ Երուսաղեմի աղջիկներ, այծյամներով կամ դաշտի եղնիկներով, մի՛ զարթնեցրեք սերը, մինչև որ ճիշտ ժամանակը չգա» (Երգ երգոց 3.5):

Այստեղ կոնկրետ ասվում է, որ չպետք է արթնացել սերը, «...մինչև ճիշտ ժամանակը չգա»: Ավելի շատ ուժ կա այս հորդորի մեջ, քան մյուսների: Գրեթե կարելի է տեսնել այծյամի հոտը, որն արագ անցնում է դաշտով և բարձրանում բլուրները՝ հետզհետե անհետանալով տեսադաշտից: Այս խոսքում եղնիկներն այլևս խաղաղ չեն. նրանք վայրի եղնիկների նման անհանգիստ են, որոնք ճեղքում են մացառուտները: Գլուխները բարձր և եղջյուրները վեր՝ նրանք ուշադրությամբ հետևում են՝ որսալու ամենաանշան ձայնը. մի փոքրիկ ճյուղի խշշոցից նրանք կսլանան և կանհետանան: Չգիտեմ, թե ինչու, բայց այս խոսքից ես այն տպավորությունն ունեմ, որ մեր չորքոտանի ընկերները փախչում են ինչ-որ բանից: Երրորդ զգուշացումը 8-րդ գլխում է.

> «Երդում եմ տալիս ձեզ, ո՛վ Երուսաղեմի աղջիկներ, մի՛ զարթնեցրեք և մի՛ վեր կացրեք սիրուհուն (անգլ.՝ սերը), մինչև որ ինքը բարեհաճի» (Երգ երգոց 8.4):

Կրկին ուշադրություն դարձրեք, որ աղջիկներին կամ կանանց է հաձնարարվում չարթնացնել սերը իր քնից: Նրան արթնացնողը Արքայազնն է: Ես հավատում եմ, որ երբ մենք արթնացնենք սերը ժամանակից շուտ, նրա գեղեցկությունը այնպես կհեռանա, ինչպես դաշտի եղնիկները: Այն մի պահ կերևա և հաջորդ պահին կանհետանա մեր տեսադաշտից: Սեռական լիարժեքության խոստումը ստանալու համար պահանջվում է համբերություն:

> «Բոլորովին ուրախություն համարեք, եղբայրնե՛րս, երբ որ կերպկերպ փորձանքների մեջ ընկնեք՝ գիտենալով, որ ձեր հավատքի փորձառությունը համբերություն է գործում, իսկ համբերությունը թող կատարյալ գործ ունենա, որ կատարյալ և ամբողջ լինեք և ոչ մի բանի պակասություն չունենաք» (Հակոբ. 1.2-4):

Աստված ցանկանում է, որ սա կատարյալ լինի մեզ համար: Նա ցանկանում է, որ ժամանակը կատարյալ լինի: Նա ցանկանում է, որ մենք պատրաստ և կատարելապես ճիշտ դիրքում լինենք ուխտի մեջ, երբ սերն արթնանա: Նա ցանկանում է, որ մենք ազատ վայելենք հաճույքի պարտեզը, որը մեղք կամ ամոթ չի համարվում: Սպասելու ժամանակահատվածը ավելի մեծ փափագ և ցանկություն է առաջացնում յուրաքանչյուր սիրահարի մեջ, և որքան մեծ է ցանկությունը, այնքան ուժեղ են սիրո զգացումն ու բավարարվածությունը: Կյանքում ամենաթանկ բաները հաճախ ստանում ենք սպասելու գնով: Բայց դրանք միանգամայն արժանի են դրան, որովհետև կատարված փափագը կենաց ծառ է (տե՛ս Առակ. 13.12): Աստծո խոստումն իր հետ միշտ կյանք է բերում:

Որպեսզի ավելի խորը հասկանանք, եկեք քննենք, թե ինչպես առաջին անգամ սեր արթնացավ կնոջ և տղամարդու մեջ: Մենք կրկին պետք է վերադառնանք Եդեմի պարտեզ, որտեղ տեսնում ենք, որ Ադամը կենդանիների մեջ հուսահատ փնտրում էր իր կողակցին: Բայց, անշուշտ, գազանների կամ պարտեզի գեղեցկության մեջ նրան ընկեր չգտնվեց: Ապարդյուն որոնումներից հետո, երբ Ադամը հոգնեց և մնաց մենակ, Աստված առաջարկեց նրան հանգստանալ:

> *Սպասելու ժամանակահատվածը ավելի մեծ փափագ և ցանկություն է առաջացնում յուրաքանչյուր սիրահարի մեջ, և որքան մեծ է ցանկությունը, այնքան ուժեղ են սիրո զգացումն ու բավարարվածությունը:*

Մենք տեսնում ենք, որ Աստված Ադամին խորը քուն տվեց, և մինչ նա հանգստանում էր, հայտնվեց Եվան: Ադամը երազեց, և նրա երազանքը կյանքի կոչվեց: Մինչ այդ նա չգիտեր՝ ինչ է սերը, բայց գիտեր, որ երբ տեսնի իր սիրուն, կճանաչի նրան: Աստված մխիթարեց Ադամին՝ ասելով. *«Հանգստացի՛ր, որովհետև հուսահատ փնտրտուքներով դու երբեք չես գտնի այն, ինչ որոնում ես: Քնի՛ր, երազի՛ր, հանգստացի՛ր և վստահի՛ր Ինձ, և Ես կիրականացնեմ քո ամենախորը փափագը՝ այն դուրս բերելով հենց քո կողից»:*

Ադամը պառկեց և երազեց այն, ինչ պետք է լիներ, երազեց այն, ինչը գիտեր, որ միայն հույս է իր համար, որովհետև սերը միշտ

սկսվում է երազանքից: Որպեսզի երազանքները գիշերվա մշուշից տեղափոխվեն ցերեկվա լույսի մեջ, նախ և առաջ պետք է դրանք հանձնենք Աստծուն: Մենք իրականացնում ենք մեր երազանքները, երբ նրանք հանգիստ դնում ենք Նրա զոհասեղանին: Մահն ու հիասթափությունը հաճախ նախորդում են մեր ամենախորը ցանկությունների իրականացմանը:

Ադամը խոնարհեցրեց գլուխը՝ միաժամանակ դադարեցնելով իր փնտրտուքները: Ադամը հավատում էր, որ կյանքը դնելով՝ կարթնանա և իր առջև կտեսնի իր երազանքը: Չնայած որ սերը միշտ մեր ցանկությունն ու երազանքն է, այն պետք է հանգստության մեջ լինի, մինչև սիրո Արքայազնը կարթնացնի նրան: Ինչո՞ւ Նա պետք է մերժի մեր երազանքների վերջնական իրականացումը, եթե Նա է դրանք դրել մեր մեջ:

«Դու տվիր նրան իր սրտի ուզածը և նրա շրթունքների խնդիրքը չարգելեցիր նրանից» (Սաղմ. 21.2):

Ժամանակն է հանգստանալ և երազել Աստծո երազանքի մասին մեր սեռական բնագավառի համար: Աստված հավատարիմ է իրականացնելու Իր խոստումը, և Նա խնդրում է միայն վստահել Իր սիրուն և Իր երազանքին, որ ունի մեզ համար: Մենք պետք է արթնանանք ցանկացած անհույս, ճնշող նիրհից և հանգստություն գտնենք Նրա խոստումների մեջ: Մենք ունենք Նրա այն խոստումը, որ ամեն բան Նրա հսկողության տակ է:

«Որովհետև Ես գիտեմ այն խորհուրդները, որ խորհում եմ ձեր մասին,- ասում է Տերը,- խաղաղության խորհուրդները և ոչ թե չարության, որ ձեզ տամ ապագան և հույսը» (Երեմիա 29.11):

Նա է մեր ապահովությունը, որովհետև Նա չի կարող ստել: Այժմ աղոթքով Նրա առջև բերենք այս խնդրանքը.

Սիրելի՛ երկնային Հայր,

Շնորհակալություն, որ ուղարկեցիր Քո Որդուն՝ քանդելու բոլոր կապանքներն ու պատերը, որպեսզի ես կարողանամ արթնանալ իմ մղձավանջից և տեղափոխվեմ Քո երազանքի մեջ: Ես արթնանում եմ արդարության համար և ընդունում ճշմարտության լույսը: Ես թողնում եմ, որ բուռն ցանկությունների այս ոլորտը հանգստանա, մինչև Ինքդ կարթնացնես այն: Ես անջատում եմ ամեն զարթուցիչ, որը կարող է արթնացնել ինձ ժամանակից շուտ, և իմ անձը հանգստացնում եմ Քո խոստումներով: Ես հավատում եմ, որ Քո ծրագրերը ինձ վնասելու համար չեն: Դու ցնծում ես՝ տալով ինձ հույս և ապագա: Ես հավատում եմ, որ Դու ինձ ավելի լավ ես ճանաչում, քան՝ ինքս ինձ, ուստի Քո զոհասեղանին եմ դնում ամեն չիրականացած երազանք: Քեզ եմ հանձնում իմ բոլոր վախերն ու հիասթափությունները: Ես կհանգստանամ և կերազեմ Քո ապահով ձեռքերում:

Սիրով՝ Քո դուստր

6 *Իսկական Մոխրոտիկը*

Ինչպե՞ս է Արքայազնը ընտրում Իր հարսնացուին: Գեղեցկության հանդեսի ժամանա՞կ: Այնտեղ հավաքված են լինում երկրագնդի ամենագեղեցիկ աղջիկները: Յուրաքանչյուրը կատարյալ է իր գեղեցկությամբ և կեցվածքով, տաղանդավոր է, շնորհալի, հարուստ, կրթված, երիտասարդ և ուժեղ: Երբ նրանք կանգնում են Արքայազնի առջև, փայլում են իրենց գրավչությամբ: Յուրաքանչյուրը համոզիչ է, երբ ներկայացնում է, թե ինչու հենց ինքը պետք է լինի Նրանը: Արքայազնը ուշադիր լսում է՝ համաձայնելով, որ բոլորն էլ իսկապես հիանալի են: Այս կանայք ազնվական ծագում ունեն և ներկայացնում են վերնախավը. մենք հիանում ենք նրանցով և ցանկանում նմանվել նրանց: Նրանք այս աշխարհի հայտնի կանանցից են: Մինչդեռ իրենց ամբողջ գեղեցկությամբ կարծես արժանի չեն Նրա մեծությանը: Ոչ մեկը:

Բայց և այնպես, Նա խոստացել է ընտրել նրանցից մեկին որպես Իր հարսնացու: Երբ վերջին թեկնածուն ներկայացնում է իրեն, Արքայազնը կանչում է հաջորդին, բայց այլևս աղջիկներ չկան: Արքայազնը վեր է կենում Իր գահից, անցնում այս գեղեցկության ծովի միջով և փնտրում ուրիշ աղջիկների, ովքեր մնացել են ստվերում, ովքեր չեն համարձակվել գալ Իր առջև: Նա զգուշությամբ և մեղմորեն անցնում է տգեղ ամբոխի միջով և ավելի խորը գնալով՝ ի վերջո գտնում է նրան, ում փնտրում էր: Վերջինիս մեջ ոչ մի գեղեցիկ բան չկար. նա սոսկալի էր, մարմինը՝ խեղաթյուրված, և գտնվում էր մահվան շեմին: Նրանում չկար ոչ մի ազնվականություն, ամբողջ կյանքը պատված էր մեղքով, և մերժված էր բոլորի կողմից: Արքայազնը կանգնում է նրա կծկված

կերպարանքի առջև և հռչակում նրան որպես Իր հարսնացու:

Մեր Արքայազնը չի հետապնդում այս աշխարհի ազնվական աղջիկներին... Նա այդպիսին չէ: Նա փնտրում է նրանց, ովքեր անտեսված են ուրիշների կողմից: Նա փնտրում է նրանց, որովհետև նրանք հաճախ թաքնվում են ամենաթշվառ տեղերում, և պարզվում է, որ գտնվում են ողբալի իրավիճակներում: Արքայազնի առաքելությունն է գտնել այս մերժված և լքված աղջիկներին, որովհետև Նա բուռն ցանկությամբ սիրում է անհուսալի և սոսկալի իրավիճակներում լինողներին:

«Կորածին որոնելու եմ և մոլորվածին ետ եմ բերելու և կոտրվածին պիտի կապեմ և հիվանդին պիտի զորացնեմ…» (Եզեկիել 34.16):

Մեկ ուրիշ խոսքում ասվում է.

«Որովհետև մարդու Որդին եկավ, որ որոնի և ապրեցնի կորածին» (Ղուկ. 19.10):

Եկեք հետևենք Նրան այդ որոնումներում: Սա պատուհան է մի աղջկա կյանքի մեջ, որը շատ է տարբերվում նրանցից, ում դուք միգուցե ճանաչում եք: Նրա ծնունդը ծրագրված չէր, ո՛չ էլ՝ ջերմ ընդունված: Նա չհայտնվեց լուսավոր և ջերմ տանը, այլ արագորեն քողարկվեց ցուրտ, ստվերոտ մթության մեջ: Ի՞նչ են դառնում այս աղջիկները: Նրանց համար ոչ ոք երբևէ հույս չի ունեցել կամ աղոթել, նրանցով հղիանալը տեղի է ունեցել հախուռն կրքերի կամ, նույնիսկ, ավելի վատ՝ բռնության պահին: Նրանք ձևավորվել են արգելված հարաբերությունների կամ որոշակի գումարի փոխանակման արդյունքում: Ի՞նչ դուրս կգա այս ամենից:

Այդ փոքրիկները գաղտնի ծնվում են, ապա դեն շպրտվում: Նրանք լքվում են՝ առանց իմանալու մոր քնքուշ ջերմությունը կամ հոր դեմքի դիմագծերը: Աղջիկներ, որոնց հայրերը երբեք չեն մտածել նրանց ճակատագրի մասին, իսկ մայրերը երբեք երգ չեն երգել նրանց համար, չեն սրբել նրանց արցունքները կամ քնքշությամբ չեն շոյել նրանց: Փոխարենը թողել են մերկ, ցրտի և մահվան մատնել՝ առանց հետադարձ

հայացք գցելու նրանց վրա:

Նայենք նրանցից մեկին... մի փոքրիկ աղջկա: Նրան նետել են դաշտի մեջ, որը ծգվում է փոշոտ ճանապարհի երկայնքով: Նա մահվան կմատնվի, եթե ոչ ոք չխղճա նրան: Բայց ո՞վ է խնամում այս երեխաներին, որոնք մերժված են ծննդյան օրվանից: Արդյո՞ք Աստված երես է թեքում մեղքի ժառանգից և թողնում նրան, որպեսզի ամբողջ կյանքն ապրի խայտառակության և ամոթի մեջ:

> «Եվ ծնունդդ՝ դու ծնված օրդ պորտդ չկտրվեց, և ջրով չլվացվեցիր մաքրվելու համար, և աղով չաղվեցիր և խանձարուրով չփաթաթվեցիր: Մի աչք քեզ չխնայեց, որ սրանցից մեկը աներ քեզ համար՝ քեզ ողորմելով, այլ դաշտի երեսը գցվեցիր քո անձի զզվանքով քո ծնված օրը» (Եզեկիել 16.4,5):

Տեսարանը նողկալի է և սրտաճմլիկ. մի նորածին աղջիկ փաթաթված է չորացած ընկերքից կախված պորտալարով: Այն, ինչը պահել էր նրա կյանքը, այժմ օձի նման ընկած է նրա վրա: Այն կոշտանում է շոգ արևից և փոքրիկի յուրաքանչյուր շարժումից ավելի փաթաթվում նրա վրա: Փոքրիկը ծածկված է ետծննդյան մնացորդներով և ջրի հետքերով: Գլուխը ծածկված է մոր արյամբ, իսկ պորտի վրայի արյունը չորացել է և, խառնվելով փոշու հետ, վերածվել ժանգոտ կեղտի:

> *Արդյո՞ք Աստված երես է թեքում մեղքի ժառանգից և թողնում նրան, որպեսզի ամբողջ կյանքն ապրի խայտառակության և ամոթի մեջ:*

Եկեք բարձրացնենք մեր աչքերը նրանից. այս պատմության մեջ կա մեկ այլ կերպար: Դաշտերով քայլում է Արքայազնը: Միգուցե, մինչ օրը սկսելը, Նա դուրս էր եկել խորհելու: Եկեք հետևենք այս Ազնվականին և Նրա աչքերով նայենք այս տեսարանին: Ահա Նրա հայացքն ընկավ այս լքված աղջկա վրա, կամ, միգուցե, Նա հենց փնտրում էր նրան: Նա լսում է ոսկե դաշտերի միջից եկող լացի ձայնն ու հասկերի խշխշոցը: Արքայազնը կանգ է առնում և նայում շուրջբոլորը: Նա կրկին լսում է այդ ձայնը. միգուցե դա վիրավորված կենդանու ձա՞յն է: Ո՛չ, դա մեռնող մանուկի աղերսանք է: Բայց նա չի տեսնում ոչ մի աշխա-

տողի, ո՛չ էլ երեխայի մորը: Նա կրկին լսում է այդ ձայնը, որը մերթընդմերթ անհետանում էր: Նա շրջվում է և զգուշությամբ քայլում դաշտի միջով: Հասկերը խշխշում են Նրա քայլերից՝ խանգարելով Նրան որոշել, թե որտեղից է ձայնը գալիս: Ի վերջո Արքայազնը տեսնում է նրան:

«Եվ ես անցա մոտովդ ու տեսա քեզ արյանդ մեջ կոխ տալիս և ասացի քեզ քո արյան մեջ, թե՝ ապրի՛ր...» (Եզեկիել 16.6):

Աղջիկը ոտքերով ու ձեռքերով թավալվում է արյան ցեխոտ փոսի և մարդկային կեղտի մեջ: Տեսարանն այնքան անհուսալի է թվում, որ Արքայազնը հայացքը թեքում է և մտածում՝ արդյոք ուշ չէ՞ այս փոքրիկին օգնելու համար: Նա գրեթե համոզված է, որ աղջիկը քաղաքի մարմնավաճառներից մեկի դուստրն է, ով իր կյանքը ստվերում է անցկացնում: Այսպիսի հուսահատ կնոջ համար մանուկը ոչ մի արժեք չունի: Նա գիտի, որ երեխան չի կարող լինել իր դաշտում աշխատողներից որևէ մեկինը, որովհետև նրանք երբեք այդպես չէին նետի երեխային: Նա կանգ է առնում. «Միգուցե նրա համար ավելի լավ է, որ ծնվի և մահանա բոլորից գաղտնի»: Նա կրկին նայում է կեղտոտ և պայքարող փոքրիկին: Նա տեսնում է, որ ինչ-որ բան է գրված երեխայի ճակատին. դա մահվան դատավճիռն է՝ մայրիկի հրաժեշտի խոսքը՝ մեռի՛ր:

Նա տեսնում է, որ ինչ-որ բան է գրված երեխայի ճակատին. դա մահվան դատավճիռն է:

Արքայազնի հովանու տակ նա գտնում է իր ապրելու պատճառը:

Հանկարծ երեխայի աչքերը հառում են Արքայազնին: Նրա ներսում ամեն բան տակնուվրա է լինում: Նա բարձրացնում է փոքրիկին կեղտից և հրամայում, որ ապրի: Այս աղաղակը բարձրանում է Նրա հոգու խորքից, և Թագավորը մեկ բառով չեղյալ է հայտարարում մահվան դատավճիռը կյանքի զորությամբ: Նորածինը ցնցվում է Նրա ձայնից՝ հայացքը հառելով Նրա դեմքին: Արքայազնի հովանու տակ նա գտնում է իր ապրելու պատճառը:

Արքայազնը Իր արյունոտ ձեռքերով արագ արձակում է աղջկա

պորտալարը՝ դադարեցնելով արյունահոսությունը: Հետո հանում է թիկնոցը և փաթաթում Իր թագավորական հանդերձով: Նա վերադառնում է Իր պալատ, որտեղ երեխային հանձնում են այն դայակի հոգատարությանը, ով խնամել է հենց Արքայազնին: Երբ Նրան հարցնում են, թե ով է երեխան և որքան պետք է մնա այնտեղ, Նա առանց երկմտելու պատասխանում է. «Այս փոքրիկը Իմն է. նշանակություն չունի, թե ումն է եղել: Նրանից հրաժարվել են և թողել, որ անանուն մահանա: Ես փրկել եմ նրա կյանքը: Ես եմ նրա բարերարն ու պաշտպանը»:

Երեխային լողացնում են և աղով շփում, մինչև որ մաքրվում է իր խայտառակ ծննդի ամեն կեղտից: Նրան խնամում և դաստիարակում են արքայական տան ծառաները: Երբ նա կրծքից կտրվում է և ուժեղանում, Արքայազնը նրան տեղավորում է դաշտերի ու այգիների պահապանի տանը: Այնտեղ նա մեծանում է, սկսում է վազել և խաղալ դաշտերում՝ երբեք չիմանալով, որ իր արյունը թափվել է հենց այդտեղ: Նրան միայն ասել են, որ Արքայազնը գտել է իրեն և բերել Իր մոտ: Արքայազնը հաճախ այցելում է նրան և հոգում բոլոր կարիքները:

«Դաշտի բույսի պես քեզ բյուրավոր շինեցի, և դու շատացար ու մեծացար և հասար գեղեցկության կատարելության. ստինքներդ ելան, ու մազերդ բուսան, բայց դու մերկ ու տկլոր էիր» (Եզեկիել 16.7):

Շրջապատված գեղեցկությամբ և ապահովությամբ՝ աղջիկը ծաղկում է թագավորական դաշտերի ծաղիկների պես, որովհետև Արքայազնն է հնարավորություն տվել նրան այդպես ծաղկել: Նա ոչ մի բանի պակասություն չունի, նրա մանկությունն ուրախ է անցնում: Նայելով նրան՝ չես տեսնի ամոթի ոչ մի հետք: Նա ունի ազնվական տեսք, ինչպիսին ունեն թագավորական ծագում ունեցողները: Նա փայլուն, շողացող թանկարժեք զարդ է, որն արտացոլում և տարածում է այն սիրո լույսը, որը առատաձեռնությամբ թափվել է նրա վրա: Նրա կրծքերը մեծանում և ձևավորվում են, մազերը երկարում են՝ սքողելով ծաղկող կանացիությունը: Ներքուստ նա դեռ երեխա է, և սիրո ժամանակը դեռ չի հասել, բայց շուտով կգա. ժամանակն անցնում է:

«Եվ Ես անցա մոտովդ ու տեսա քեզ, և ահա ժամանակդ սիրո ժա-

մանակ էր, և Ես տարածեցի Իմ քղանցքը քեզ վրա և ծածկեցի քո մերկությունը և քեզ համար երդում անելով քեզ հետ ուխտ արի,- ասում է Տեր Եհովան,- և դու Իմը եղար» (Եզեկիել 16.8):

Արքայազնը կրկին գալիս է, և երբ աղջիկը վազում է Նրան ողջունելու, Արքայազնը տեսնում է, որ ժամանակը եկել է: Նրանում երեխայից ոչինչ չի մնացել: Փոխակերպումն ավարտված է. նա արդեն կին է: Նրա կրծքերը ձևավորվել են, շուրթերը կլորացել, ոտքերը՝ երկարել: Նա արդեն բավականին հասունացել է որպես կին՝ իր սերը տալու և տղամարդու սերը ստանալու համար: Նա բաց է և պատրաստ է մտնել նոր ուխտի մեջ:

Արքայազնը կրկին Իր հանդերձը գցում է աղջկա վրա և տանում նրան զբոսանքի: Նա աղջկան Իր կյանքն է խոստանում՝ ոչ միայն որպես բարերար, այլ նաև՝ ամուսին: Նա մերժում է արքայական ծնունդ ունեցող արքայադուստրերին, որպեսզի հավիտյան հոգ տանի դաշտում թողնված այս աղջկա մասին: Նա գիտի, որ աղջիկը սիրել է Իրեն որպես եղբայր, որպես փոքրիկ և որպես խնամակալ: Նա խնդրում է աղջկան, որ սիրի Իրեն ինչպես հարսնացու:

> *Նա մերժում է արքայական ծնունդ ունեցող արքայադուստրերին, որպեսզի հավիտյան հոգ տանի դաշտում թողնված այս աղջկա մասին:*

Աղջկա համար դժվար է հավատալ, որ իր ամենամեծ երազանքն իրականանում է: Նրան առաջարկվում է Արքայազնի սերը: Նա ի սրտե համաձայնում է և թողնելով իր տնակը՝ մտնում թագավորական պալատ, որպեսզի սկսի մաքրման և գեղեցկացման ընթացքը: Աղախինները բավարարում են նրա կարիքները, մինչ նա պատրաստում է իրեն Արքայազնի համար:

«Եվ Ես քեզ լվացի ջրով, արյունդ ողողեցի քո վրայից և քեզ յուղով օծեցի» (Եզեկիել 16.9):

Նրա գեղեցկանալը սկսվում է դաշտանային արյան ամենամսյա մաքրմամբ, սեռական ոլորտի սրբացմամբ, նրա աղբյուրը առանձնացնելով կյանքի Տիրոջ համար: Նրա հենց նոր լվացած մաշկը մեր-

սում են անուշահոտ յուղերով և քսուքներով՝ մարմնի վրա չթողնելով ոչ մի խոնավ կամ գրգռված տեղ: Նա նման է գինու տակառի, որը պատրաստվում է նոր գինու համար:

Հիմա նա հանգստանում է և երազում Արքայազնի հետ ապագա երջանկության մասին: Վերջինս միակ մարդն է, ով իրեն այդպես խորը սիրել է, միակը, ով իր հետ այդպես քնքշորեն խոսել է: Իր կյանքում նա տեսել է միայն Նրա սերը, խնամքը և բարությունը: Նա հանգստանում և բավականություն է ստանում այս ջերմ մտքերից:

Գալիս է հանդերձներ ընտրելու ժամանակը: Հիմա շատ հարսնացուներ իրենք են հոգ տանում իրենց հանդերձների մասին, բայց նրանը ընտրել և բերել է հենց Ինքը՝ Արքայազնը:

«Եվ քեզ նկարագործ հագուստ հագցրի և կոշիկներդ թեհաշի արի և քեզ բեհեզի գոտի կապեցի և քեզ մետաքսով ծածկեցի» (Եզեկիել 16.10):

Ոչ մի միջոց չի խնայվում նրա համար: Նրա հանդերձները փայլում են ինչպես Արքայազնի պարտեզի ծաղիկները: Նրան հագցնում են ամենաընտիրը, որն իր գեղեցկությամբ գերազանցում է Արքայազնի հանդերձին: Աղջիկը երբեք ավելի գեղեցիկ բան չի տեսել: Նա իր ձեռքը տանում է յուրաքանչյուր հանդերձին՝ գրեթե անկարող հասկանալու, որ դրանք իրենն են: Յուրաքանչյուր հանդերձ խոսում է Արքայազնի սիրո և աղջկա արքայական դիրքի մասին: Նա ուրախությամբ հագնում է հանդերձները՝ պատրաստվելով Արքայազնի հետ ընթրիքի: Նա փայլում է, բայց կա ավելին.

Հարսնացուն ուղղակի հիասքանչ է:

«Եվ քեզ զարդարեցի զարդով և ապարանջաններ դրի ձեռքերիդ, և մանյակ՝ պարանոցիդ: Եվ օղակ դրի քո քթին, և գինդեր՝ քո ականջներին, և փառավոր պսակ՝ քո գլխին» (Եզեկիել 16.11,12):

Յուրաքանչյուր օր նոր անակնկալ է բերում: Արքայազնը նրա թևերը ծածկում է թանկարժեք ապարանջաններով: Նրա արքայական

պարանոցը զարդարում է գեղեցիկ մանյակով, դեմքը՝ ականջօղերով և քթի օղերով: Եվ հետո նրա գլխին փառավոր պսակ է դնում: Արքայազնի հարսնացուն ուղղակի հիասքանչ է: Ոչ ոք երբևէ չի կռահի աղջկա իսկական ծագումը: Նա Արքայազնի քնքուշ հոգատարության և նվիրված սիրո փայլուն արծագանքն է:

«Եվ դու զարդարվեցիր ոսկիով և արծաթով, և քո հագուստները բեհեզ, մետաքս ու նկարագործ եղան...» (Եզեկիել 16.13):

Նա զարդարվում է արևի լույսի պես փայլող ոսկով և լուսնի լույսի պես փայլող արծաթով: Նրանք շողշողում են աղջկա մաշկի վրա: Նրա ներքնազգեստը ընտիր մետաքսից է և հյուսքե գործվածքով: Յուրաքանչյուրը պատրաստվել է հատուկ նրա համար: Այդպես պատվիրել է Արքայազնը: Ոչ ոք չի կարող համեմատվել նրա գեղեցկության հետ:

«...նաշիհ, մեղր ու յուղ կերար, շատ ու շատ գեղեցկացար և թագավորության հաջողեցիր» (Եզեկիել 16.13):

Նա կերակրում է աղջկան ընտիր հացով, ամենաքաղցր մեղրով և ամենաթանկարժեք յուղով: Աղջիկը վայելում է Նրա բարությունը և էլ ավելի գեղեցկանում: Հարսանեկան խնջույքի գիշերն արդեն որոշված է. հյուրերը հրավիրված են, և եկել է իրենց սերը տոնելու ժամանակը: Յուրաքանչյուրը շշնջում է և հետաքրքրվում Արքայազնի հարսնացուի ինքնության մասին: Որտեղի՞ց է նա, ինչպիսի՞ն է նա: Շատերը կասկածում են Արքայազնի իմաստության վրա. ինչո՞ւ արքայական ցեղից հարսնացու չընտրեց, Նրա ինչի՞ն է պետք այս մեկը: Հետո նրանք տեսնում են աղջկան և հասկանում: Նա Արքայազնի սիրո կատարյալ արտացոլումն է: Հարսնացուն նստում է Արքայազնի աջ կողմը, նրանց գլխավերևում ծածանվում է թագավորական դրոշը: Երբ հարսնացուն խնջույքից դուրս է գալիս, Արքայազնը նրան ձեռքերի վրա տանում է արքայական ննջասենյակ: Այնտեղ նա դառնում է Նրա արքայադուստրը: Նրանց սերը

Հնարավոր չէ, որ Արքայազնը մեկին սիրի, և դա գաղտնի մնա:

գեղեցիկ է, քնքուշ և ցանկալի: Արքայազնը գաղտնի էր սիրում նրան, իսկ հիմա դա բոլորին է հայտնի, քանի որ հնարավոր չէ, որ Արքայազնը մեկին սիրի, և դա գաղտնի մնա:

«Եվ քո գեղեցկության համբավը դուրս եկավ ազգերի մեջ, որովհետև նա կատարյալ եղավ Իմ՝ քեզ վրա դրած վայելչության համար,- ասում է Տեր Եհովան» (Եզեկիել 16.14):

Յուրաքանչյուր կնոջ փափագն է լինել կատարյալ և վայելել կատարյալ սեր: Դա մի բան չէր, որին կարելի էր հասնել միայնակ: Այո՛, նա գեղեցիկ էր, բայց Արքայազնը մեծացրեց նրա գեղեցկությունը՝ ավելացնելով մի բան, որը միայն Արքայազնը կարող է անել՝ շքեղություն: Շքեղությունը վերերկրային գաղափար է. այն երկնքից մի նշույլ է այստեղ՝ երկրի վրա: «Շքեղություն» բառը պարունակում է հոյակապ լինելը, որը վեր է մեր երկրային պատկերացումից: Մենք կարող ենք շնչահեղձ լինել նրա փայլից, մեծությունից և վեհությունից: Արդյո՞ք սա այն գեղեցկությունը չէր, որ ծածկում էր Եվային Եդեմի պարտեզում: Արդյո՞ք այս շքեղությունը, այս փայլը չէր, որ հեռացավ նրանից՝ թողնելով նրան մերկության և ամոթի զգացումով և ծածկոց ունենալու կարիքով. միգուցե:

Սա Մոխրոտիկի պատմությունն է՝ ավելի խորը իմաստով:

Սա Մոխրոտիկի պատմությունն է՝ ավելի խորը իմաստով: Այստեղ չկան մահացած ծնողներ, այլ կան այնպիսիք, ովքեր պարզապես հոգ չեն տարել երեխայի մասին: Չկա խորթ մայր, որն ուղղակի հանդուրժում է այս աղջկան՝ չթողնելով նրան նույնիսկ տաքանալ վառարանի մոտ: Չկա բարի կնքամայր, որը նրան այնպես կգեղեցկացնի, որ գրավի Արքայազնի ուշադրությունը: Նրան գտնում են ամենաանհուսալի վիճակում և սիրում առանց որևէ պատճառի: Չկա ուխտ, որ տևի մինչև կեսգիշեր, այլ կա հարատև ուխտ: Եվ փխրուն ապակե կոշիկների փոխարեն լույսի փառավոր հանդերձներ են, որոնք ցրում են ամեն հարց, թե ում է աղջիկը պատկանում:

Չնայած մեզնից շատերին չեն նետել դաշտի մեջ մեռնելու, բայց

և այնպես ինչ-որ չափով ամեն մեկիս էլ ծանոթ է այս երազանքը: Այդպես էլ պետք է լինի, որովհետև Աստված է դրել Իր երազանքը յուրաքանչյուր կնոջ սրտում: Այս պատմությունն ավելին է, քան լքված, մերժված աղջկա փրկությունը: Այն նույնիսկ ավելի մեծ է, քան նրա մարգարեական մեկնաբանությունը Իսրայելի և եկեղեցու համար: Այն այսօր ուղղված է մեզ՝ պատվիրելով ապրել Արքայազնի հետ և չմահանալ մեղքի մեջ: Նա դնում է մեր առջև կյանքն ու մահը, օրհնությունն ու անեծքը և գոչում. «Ընտրի՛ր կյանքը»: Այսպիսի մեծահոգի սիրո առաջարկի դեպքում ի՞նչ հարց կարող է լինել: Անշուշտ, այս լքված աղջիկը հասկանում է Նրա ողորմության և շնորհքի խորությունը: Նա և Թագաժառանգը մեկընդմիշտ կապրեն երջանիկ: Ես ատում եմ այս պատմության ավարտը, որովհետև այն ավելի սրտակեղեք է, քան նրա ծնունդը:

> «Բայց դու վստահեցիր քո գեղեցկությանը, շնացար քո անվան պատճառով և թափեցիր քո շնությունը ամեն անցնողի վրա, և նա նրանն էր լինում» (Եզեկիել 16.15):

Ինչ-որ սարսափելի բան է տեղի ունեցել: Ինչպե՞ս կարող է մեկը, որին այդպես կատարյալ սիրել են և քնքշորեն հոգ տարել, շրջվել այդպիսի մեծ, ազնվական և մաքուր սիրուց: Ինչո՞ւ պետք է նա վստահեր այն գեղեցկությանը, որը ձեռք էր բերել Արքայազնի շնորհիվ, երբ կարող էր վստահել հենց Արքայազնին: Ինչո՞ւ պետք է նա օգտագործեր իր պատիվն ու համբավը տղամարդկանց գրավելու և արքայադուստրից շնացող դառնալու համար: Ինչո՞ւ բարեհաճություն շռայլել նրանց, ովքեր ոչինչ չեն տվել նրան, նրանց, ովքեր անցել են նրա կողքով, երբ նա մեռնում էր, երբ նա կեղտոտ և մերկ էր:

Եթե անկեղծ լինենք, մեզնից շատերը կարող են քննել իրենց սրտերը, ստուգել իրենց արարքները և տեսնել, որ մեղավոր են մեր Արքայազնի հանդեպ անհավատարմության մեջ: Միգուցե մենք չենք վստահել մեր գեղեցկությանը կամ համբավին, բայց դանդաղ շրջվել ենք մեր առաջին և հավատարիմ սիրուց և փորձել հաստատություն գտնել այս անհավատարիմ աշխարհի կողմից:

Մեր Արքայազնը միշտ պատրաստ է մաքրել և գեղեցկացնել մերժված ու լքված կանանց: Նա յուրաքանչյուրիս ազատել է մեղքից և չեղյալ համարել մեր մահվան դատավճիռը: Նա խզել է անցյալի հետ մեր կապերը և ողորմածությամբ լուծել մեր հարցերը՝ կապված խառնաշփոթության, արհեստական վիժեցման և անապահովության հետ: Արդյո՞ք թույլ կտանք, որ Նրա սերը բավական լինի մեզ համար, թե՞ մեկ այլ տեղ կփնտրենք բավարարվածություն ստանալու համար: Արդյո՞ք Նրա բարեհաճության օրհնությունները կարող են ծռել մեր միտքը, ապա՝ սիրտը Նրանից, ով սրբացրեց մեզ և կատարյալ դարձրեց Իր շքեղությամբ: Ինչպե՞ս կարծագանքենք Նրա բարությանը և ողորմությանը: Արդյո՞ք մի կողմ կդնենք մերժվածության հանդերձները՝ թույլ տալով, որ որդեգրության հոգին գործի մեր կյանքում, թե՞ մեր բավարարվածությունը կփնտրենք բազմաթիվ սեռական կապերի մեջ, որոնք իբր թե հատատում են մեր գրավչությունը:

> *Մեր Արքայազնը միշտ պատրաստ է մաքրել և գեղեցկացնել մերժված ու լքված կանանց:*

Որքա՞ն ձեռքեր պիտի դիպչեն մեզ, մինչև վերջապես կասենք. «Բավակա՛ն է, ես կատարյա՛լ եմ»:

Եթե մենք վստահենք մեր գեղեցկությանը, շարունակ կարիք կունենանք նայել ուրիշներին՝ մեր արժեքը և ցանկալիությունը հաստատելու համար: Մեր արժանապատվությունը վտանգի տակ կհայտնվի, երբ գտնվենք այլ կանանց կողքին:

Կրկին նայեք, թե ինչ շնորհվեց այս լքված աղջկան՝ բազմաթիվ շռայլություններ: Մենք նրան հիմար ենք համարում այդպիսի մեծ սերն արհամարհելու համար, որին արժանի էլ չէր: Բայց մինչ առաջ կգնանք, նայենք այն դասին, որը յուրաքանչյուրս քաղում ենք այս պատմությունից:

Սա փրկագնման պատմություն է, և նրանում արժանի ոչ ոք չկա: Այն Արքայազնի փափագն է իր հարսնացուի համար, որին Նա շռայլում է Իր սերն ու հոգատարությունը. հարսնացուի, որը շնորհակալ է Նրա բարության համար և արձագանքում է Նրան ջերմ սիրով. հարսնացուի, որը, նայելով Նրա փայլուն դեմքին, այլևս չի ցանկա-

նում տեսնել մեկ ուրիշի դեմքը:

Այս պատմությունը մեր մասին է: Մենք առանց հույսի էինք և գտնվում էինք մահվան ճանապարհին՝ չնայած նրան, որ մեր կյանքը դեռ նոր էր սկսվել: Բայց Արքայազնը լսեց ցավի, տառապանքի և մեղքի միջից կանչող քո ձայնը: Նա տեսավ քեզ, երբ դու անօգնական և անհույս ընկած էիր մերժվածության կեղտի ու մեղքի արյան մեջ: Նա գթաց և չեղյալ համարեց մահվան դատավճիռը, հետո մաքրեց քեզ մեղքից և քո անցյալի կեղտից: Նա քնքշորեն խնամեց և հոգ տարավ յուրաքանչյուրիս մասին, և մենք ծաղկեցինք Նրա սիրո մեջ: Բայց երբեմն Նա այնքան հեռու է թվում, որ կարծես մի երազ լինի, որ դեռ պետք է իրականանա:

Այդ ժամանակ է, որ մենք գայթակղվում ենք և շրջվում ուրիշների կողմը: Մենք ավելի շատ ցանկանում ենք, որ մեզ դիպչեն այստեղ և հիմա, քան թե սպասենք: Մենք հանում ենք շքեղության հանդերձները և հագնում անճաշակ հագուստներ՝ հավաքելով այս աշխարհի սիրային կապերի մանր և էժանագին զարդերը՝ մոռանալով փառավոր զարդերի խոստումը: Շատ հաճախ ներկա աշխարհի հարստության խաբեությունները և այլ բաների հաճույքները աղավաղում են Արքայազնի խոստումները: Եվ մեզնից ոմանք մերկանում են այն տղամարդկանց ներկայությամբ, որոնց հետ ուխտի մեջ չեն՝ հույս ունենալով, որ նրանց մարմինները կբավարարեն իրենց: Բայց ընդհակառակը, նրանց ձեռքերը կրկին կեղտոտում են այն տեղերը, որոնք Արքայազնը այդպես զգուշորեն մաքրել է:

Բայց ես հավատում եմ, որ ձեր կյանքում այդպես չի լինի: Այս գիրքը ձեր ձեռքերում է, որովհետև Նրա անունը գրված է ձեր սրտերում:

Սիրելի՛ երկնային Հայր,

Ես ողողված եմ Քո ողորմության գեղեցկությամբ և ընկղմված եմ Քո սիրո մեջ: Դու ինձ փնտրեցիր և գտար այն ժամանակ, երբ մահանում էի մեղքի մեջ, և բերեցիր ինձ Քո տուն: Դու ծածկեցիր իմ մերկությունը և մաքրեցիր ինձ իմ կյանքի արյունահոսությունից ու մեղքից: Շնորհակալություն Քո ներման, ողորմության և քնքուշ սիրո համար: Նե-րի՛ր ինձ, որ վերցրել եմ Քո տված գեղեցկությունը և հաստատություն փնտրել երկրային որդիներից, երբ արդեն ունեմ շքեղության ուխտ: Ես հրաժարվում եմ իմ մյուս սիրեկաններից և միայն Քեզ եմ փափա-գում: Շնորհակալություն, որ սիրում ես ինձ ոչ միայն իմ գեղեցկության մեջ, այլև իմ թերություններով: Ես այն Մոխրոտիկն եմ, ում հանել ես մոխիրներից: Իմ սիրտը նվիրում եմ Քեզ, որովհետև Դու ես իմ միակ, Ճշմարիտ Արքայազնը:

Սիրով՝ Քո դուստր

7 Ի՞նչ անել, երբ արթնանում է սեռական ցանկությունը

Մենք խոսեցինք այն մասին, թե որքան առավելություններ կան, երբ մեր ռոմանտիկ և սեռական արձագանքներին հանգիստ ենք տալիս և մնում երազային վիճակում, մինչև որ դրանք արթնանում են Արքայազնի համբույրից: Բայց ի՞նչ անել, երբ դրանց մեկ ուրիշն է արթնացրել: Ի՞նչ անել, եթե սեռական ցանկությունն առանց պայքարի հրաժարվում է հանգստանալ: Եթե այսպիսի իրավիճակում ես, դու արդեն տեղյակ ես, թե որքան դժվար է ցանկությունը ետ մղել քնի վիճակի մեջ, երբ այն արդեն արթնացել է, հատկապես եթե դա եղել է հանկարծակի, կոպիտ կամ վաղաժամ: Այս ժամանակ մեր զգացմունքները դառնում են անկառավարելի:

Ավելացնենք այն փաստը, որ դժվար է քնի մեջ մնալ այն ժամանակ, երբ ամենուրեք տեսնում ես գայթակղություններ և ահազանգեր, որոնք ասում են քեզ արթուն մնալ, այլապես ինչ-որ բան կկորցնես: Երազային վիճակի մեջ վերադառնալու համար մեզ շրջապատող միջավայրը պետք է պարունակի մի միջանկյալ օղակ, որը կպահպանի խաղաղություն և հանգստություն: Արթնացած ցանկությունների հետ պետք է զգույշ վարվել, որպեսզի ստեղծվի միջավայր խաղաղ երազանքների համար, քանի որ եթե վախեր կամ ցանկություններ առաջացան, հետո դժվար է դրանք հանգստացնել: Եվ սրա համար կա պատճառ. մեր ցանկությունները երբեք չեն եղել նրա համար, որ արթնանան և հետո անտեսվեն: Սա ճշմարիտ է ցանկացած մարդկային ցանկության համար:

> *Մեր ցանկությունները երբեք չեն եղել նրա համար, որ արթնանան և հետո անտեսվեն:*

Ես հիշում եմ, որ իմ տղաներին առաջին վեց ամիսը միայն կրծքով եմ կերակրել, բայց երբ սկսեցի կերակուրներ պատրաստել նրանց համար, ամեն բան փոխվեց: Մինչ այդ, երբ մենք ռեստորանում էինք լինում, նրանք բավարարված նստում էին իմ գոգը և երբեք ուշադրություն չէին դարձնում այն ուտելիքներին, որոնք դրվում էին սեղանին: Նրանք պարզապես երանությամբ ժպտում էին մատուցողներին և մյուս հաճախորդներին, նրանք ծանոթանում էին տարբեր համեղ հոտերին, բայց դա չէր հետաքրքրում նրանց, որովհետև գաղափար չունեին, թե ինչ են բաց թողնում: Սա շարունակվեց մինչև այն օրը, երբ նրանք իմացան ուտելիքի համը, և այդ ժամանակվանից սկսվեց մի նոր պատմություն:

Ուտելիքի հոտը նրանց համար արդեն միևնույնը չէր: Հիմա նրանք այլևս հանգիստ չեն ժպտում մատուցողներին: Նրանց ուշքն ու միտքն ուտելիքն է: Եթե ես փորձում էի նրանց պահել իմ գրկում և միաժամանակ ուտել, նրանք հետևում էին իմ պատառաքաղին կամ գդալին՝ անկախ նրանից, թե ինչ կար այնտեղ, կա՛մ էլ քաշում էին սփռոցը, որպեսզի ուտելիքը հասանելի լիներ իրենց: Ես նրանց տեղավորում էի բարձր աթոռի վրա, բայց դրանով չէին դադարեցնում ուտելիքի ձեռքբերման փորձերը: Նրանք մի միտք ունեին նպատակին հասնելու համար: Նրանք փորձել էին և տեսել, որ ուտելիքը լավն է: Զարգացրել էին ուտելիքի նկատմամբ իրենց ճաշակը և չէին հանգստանա, մինչև չստանային այն:

Ուստի, ես միշտ ուշադիր եմ եղել, որ երբեք նոր ուտելիք չտամ և չարթնացնեմ այդ ախորժակը, քանի դեռ նրանք ֆիզիկապես պատրաստ չեն այն մարսելու, և քանի դեռ ես պատրաստ չեմ այն կանոնավոր ձևով տալու: Սա ոչ մի կապ չունի ուտելիքի ցանկության հետ. ես համոզված եմ, որ մինչև վեց ամսեկան հասակը նրանց էլի դուր կգար ուտելիքի համը, բայց նրանց զգայուն մարսողական համակարգը բավականաչափ հասուն չէր լինի ուտելիքը մարսելու համար: Ուտելիքն իհարկե և՛ լավ է, և՛ անհրաժեշտ մեր սնուցման, աճի և զարգացման համար, բայց այն կարող է ցան կամ այլ անցանկալի երևույթներ առաջացնել, եթե ժամանակից շուտ է տրվում: Եթե թույլ տանք, որ ուտելիքը կարևոր տեղ զբաղեցնի մեր կյանքում, ապա ախորժակը կամ

ուտելիքի նկատմամբ ցանկությունը կարող են վերահսկել մեզ կամ բերել ուտելիքի չարաշահման, չնայած որ այն կարող է համեղ և օգտակար լինել: Մեզ մոտ կարող է անառողջ ախորժակ ձևավորվել ուտելիքի որոշ տեսակների նկատմամբ, որոնք միայն գրգռում են մեր համի զգայարանները, բայց զուրկ են սննդարար լինելուց:

Այսպիսի ախորժակն ի վերջո տանում է ուտելիքի չարաշահման: Չարաշահումը՝ ինչ-որ բանի սխալ օգտագործումն է: Ուստի, ուտելիքն ինքնին վատ բան չէ, պարզապես այն չարաշահելն է վատ: Երբ մենք չարաշահում կամ սխալ ենք օգտագործում այն, ինչը ինքնին լավ բան է, ապա այն դառնում է կործանարար և իր ազդեցությունն է թողնում մեր կյանքում: Այս դեպքում մեր ցանկությունը կամ ախորժակը այլևս մեր ծառան չեն, այլ՝ տերը, որը բավարարվածություն է պահանջում:

> *Երբ մենք չարաշահում կամ սխալ ենք օգտագործում այն, ինչը ինքնին լավ բան է, ապա այն դառնում է կործանարար:*

Մեր սեռական հակումը նման է ուտելիքի նկատմամբ ախորժակին. այն նույնպես հանգիստ է մնում, մինչև չարթնանա արտաքին ազդակներից: Ինչպես որ չենք կարող ապրել առանց ուտելիքի, այդպես էլ չենք կարող վերարտադրել կամ ծնել կյանք՝ առանց սեռական միության: Սեռական ցանկությունը անհրաժեշտ և կենսական է կյանքի տարածման համար: Բայց ինչպես ուտելիքի նկատմամբ ախորժակն է մեզ ղեկավարում, այդպես էլ մեր արթնացած սեռական ցանկությունները կարող են մեզ ղեկավարել, եթե չկառավարենք և չհսկենք: Այս գխում կանդրադառնանք գլուխ բարձրացրած սեռական ցանկությունները կառավարելու թե՛ հոգևոր, թե՛ գործնական ձևերին:

Կրկին զուգահեռներ տանենք ուտելիքի հետ, որպեսզի կարողանանք ամենօրյա հարցերից անցնել ավելի նուրբ հարցերի: Մենք կսկսենք համի զգացողությունը զարգացնելուց կամ ախորժակը գրգռելուց: Ես կօգտագործեմ իմ օրինակը: Ինձ հետաքրքիր է՝ արդյո՞ք ես այդպես կփափագեի դառը շոկոլադը, եթե այն երբեք փորձած չլի-

> *Մեր սեռական հակումը նման է ուտելիքի նկատմամբ ախորժակին. այն նույնպես հանգիստ է մնում, մինչև չարթնանա արտաքին ազդակներից:*

նեի: Իսկ սո՞ւրճը: Եթե ես երբևէ իմ սուրճի մեջ լցրած չլինեի հարած սերուցք և վրան ցանած չլինեի դարչին՝ առավոտյան արագ արթնանալու համար, ապա միգուցե մինչև հիմա՝ տասներկու տարի անց, շարունակեի թույլ տեսակի սուրճ խմել: Իհարկե՝ ո՛չ: Եվ ես նույնիսկ չէի իմանա, թե ինչ եմ բաց թողնում: Ես չէի զարգացնի իմ ախորժակը այսպիսի համեղ բաների համար: Քանի դեռ գիտեի սուրճի մասին՝ որպես թանձր, սև, դառը հեղուկ, ես արհամարհում էի այն: Քանի դեռ շոկոլադը ինձ համար միայն սպիտակ կամ կաթնային սալիկ էր, ես առանց դժվարության հրաժարվում էի դրանից:

Ըստ էության, այստեղ ոչ մի պայքար չկա: Ես չեմ պայքարում շոկոլադի կամ առավոտյան համեղ սուրճի ցանկության դեմ: Ես տրվում եմ դրանց: Դրանցից կախվածություն չունեմ, բայց ինձ համար ինչ-որ հաճելի հանգստացնող մի բան են: Ես կարող եմ մեկ կամ երկու շաբաթ անցկացնել առանց դառը շոկոլադի, և դրանից ոչ ոք չի վնասվի: Ես մռայլ տեսք չեմ ընդունի, բայց հաճույք եմ ստանում, երբ ուտում եմ այն: Իսկ ինչ վերաբերում է սուրճին, ես այն խմում եմ, երբ ցանկանում եմ միանգամից արթնանալ և թարմանալ:

Միգուցե իմ օրինակներն այնքան էլ արդարացի չեն: Սրանք բոլորը համեղ, բայց ոչ այդքան սննդարար բաներ են, բայց խնդրում եմ, ներողամի՛տ եղեք իմ նկատմամբ: Ի՞նչ կլիներ, եթե դրանց նկատմամբ իմ հակվածությունը գերազանցեր առողջ սննդի նկատմամբ իմ ցանկությանը: Ի՞նչ կլիներ, եթե ես որոշեի, որ զգայական հաճույքը (որը տալիս է դառը շոկոլադը) և արթուն ու թարմ վիճակը (որը տալիս է սուրճը) ավելի կարևոր են, քան իմ կյանքի մյուս զգացողությունները: Այդ ժամանակ միգուցե թարմ աղցաններն այլևս ինձ չգրավեին, որովհետև դրանք ինձ մոտ չեն առաջացնում այնպիսի զգացողություններ, ինչպիսիք շոկոլադն է առաջացնում: Ի վերջո, աղցանը կոշտ է և սառը, իսկ դառը շոկոլադը՝ նուրբ և տաք: Հավանաբար, ջուրն էլ դադարեր ինձ համար գոյություն ունենալուց, որովհետև այն չի թարմացնում կամ ջերմացնում ինձ այնպես, ինչպես շոկոլադը:

Հետզհետե ինձ համար բոլոր կերակուրները ծանձրալի և սովորական կդառնային, քանի որ դրանք տարբերվում են շոկոլադից և սուրճից կամ չեն առաջացնում միևնույն զգացողությունները: Ի՞նչ կլիներ,

եթե ես հեռանայի իրականությունից և երկու շաբաթ միայն ապրեի շոկոլադով և սուրճով: Ես կլինեի երջանիկ, վտիտ և արթուն՝ միայն որոշ ժամանակ: Հետո ամեն բան դուրս կգար հավասարակշռությունից, և հարկ կլիներ վերանայել իմ հակումները:

Իմ ասածն այն է, որ մենք ենք ձևավորում մեր սեփական հակումներն ու ցանկությունները: Մենք կարող ենք ավելացնել կամ պակասեցնել դրանց ազդեցությունը՝ որոշելով դրանց կարևորությունը: Մենք կարող ենք վերահսկել դրանց ազդեցությունը՝ սահմանափակելով դրանց օգտագործումը:

Երբ աշխատում էի իմ առաջին գրքի վրա («Ես ազատ եմ վերահսկողությունից, և դա ինձ դուր է գալիս»), իմ չորրորդ որդին՝ Արդենը, նոր էր ծնվել, և այդ ժամանակ սուրճը դարձել էր ինձ համար լավ ընկեր: Տանը ունենալով երկու նախադպրոցական երեխաներ՝ ես հասկացա, որ գրելու լավագույն ժամանակը 22:00-02:00-ն է: Ես արթնանում էի, մեծ գավաթով սուրճ խմում, և երբ ցերեկային ժամերին քունս տանում էր, կրկնում էի միևնույն գործողությունը: Սա ինձ բավականաչափ էներգիա էր տալիս՝ արթուն մնալու և աշխատելու մինչև գիշերվա երկուսը, նույնիսկ՝ երեքը: Ես պառկում էի քնելու, հետո արթնանում առավոտյան ժամը 6:30-ին և կրկնում միևնույն գործողությունը: Ես հիշում եմ, որ ամենադժվար պահը սուրճ պատրաստելն էր: Մի փոքր խմելուց հետո ամեն բան հեշտանում էր: Սա շարունակվում էր շաբաթներ, ամիսներ: Նույնիսկ իմ դեմքը նույնը չէր լինում, եթե սուրճը չէր անցնում իմ երակներով:

> *Մենք ենք ձևավորում մեր սեփական հակումներն ու ցանկությունները:*

Հետո մի գիշեր ամեն բան փոխվեց: Իմ սովորական գրաֆիկի համաձայն՝ երեկոյան ժամը 10:00-ին ավարտել էի Արդենին կերակրելը: Ինձ հաջողվեց նրան քնեցնել (որովհետև լինում էին ժամանակներ, որ նա արթուն էր մնում, երբ ես հավաքում էի տեքստը): Հոգոց հանելով և աղոթելով՝ նստեցի գրասեղանի մոտ և սկսեցի հավաքել տեքստը: Բառերն արագությամբ գրվում էին: Հանկարծ, մոտավորապես ժամը 2:00-ին ես գիտակցեցի, որ իմ մարմինը կտրուկ թեքվում է մի կողմ: Ուղղվեցի և փորձեցի շարունակել գործս, բայց այս

անգամ մարմինս թեքվեց մյուս կողմ: Ես մտածեցի. *«Ի՞նչ է կատարվում»:* Ոտքի կանգնեցի և նկատեցի, որ սենյակը պտտվում է, չնայած իմ միտքը դեռ ճշտորեն գործում էր: Ես մտածեցի, որ միգուցե ավելի հոգնած եմ, քան պատկերացնում եմ, և դադարեցնելով աշխատանքը՝ աստիճաններով իջա սենյակ՝ քնելու: Ես զգացի, որ դժվարությամբ եմ իջնում: Հետո մտա ննջասենյակ և ընկա մահճակալին: Զգում էի, թե ինչպես է գլուխս պտտվում, իսկ միտքս անցնում մի թեմայից մյուսը: Մտածեցի. *«Ինչ-որ բան այն չէ»:* Ակնհայտ է, որ իմ մարմինը ուժասպառ էր եղել, բայց միտքս դեռ գործում էր: Ժամերով պառկել էի՝ չկարողանալով քնել կամ հանգստացնել միտքս: Ես հոգնած էի, բայց հենց աչքերս փակվում էին, միտքս սկսում էր աշխատել և արթնացնել ինձ: Առավոտյան լույսը թափանցեց իմ պատուհանից, ես արթնացա և հաստատ գիտեի, որ դրա պատճառը սուրճն էր:

Այդ օրվանից ես կտրուկ հրաժարվեցի այդ սովորությունից: Ամբողջ օրը կարծես մշուշի մեջ լինեի և մի փոքր էլ գրգռված էի: Իմ փոքրիկները խնդրում էին ինձ սուրճ խմել, բայց ես հրաժարվում էի: Երբեմն երեկոները սկսվում էին գլխացավերը, որոնք նախկինում չէի էլ հավատում, որ կարող են լինել: Ես չեմ տառապել գլխացավերից, և միշտ մտածում էի, որ դրանք ուշադրություն գրավող միջոցներ են հիպոխոնդրիայով հիվանդների համար: Ես շրջում էի սենյակներով՝ հուսահատորեն փորձելով գտնել գոնե գլխացավի մի հաբ, որը կարող է պահած լինեի նեղ օրվա համար: Բայց դեղը մի փոքր էր թեթևացնում այդ բութ ցավը: Քանի որ ես այլևս չէի ցանկանում կրկին կախվածության մեջ լինել կոֆեինից, հաջորդ երեք տարիներին հրաժարվեցի սուրճից: Այնուհետև, մի ցուրտ առավոտ, ես կրկին վերցրի գավաթը և սկսեցի այն ճիշտ ձևով ներմուծել կյանքիս մեջ՝ թույլ չտալով, որ այն փոխարինի իմ ամենօրյա քնին:

Հիմա ես ավելի կբացեմ միտքս և լուսաբանելու համար կկապակցեմ սեքսի, սուրճի և շոկոլադի գաղափարները: Ինչպես սուրճը, այնպես էլ սեքսը ստիպում են մեզ զգալ կենսականորեն առույգ և արթուն, ըստ էության, ավելի շատ, քան որևէ այլ բան մեր կյանքում: Սեքսը համեղ է, ինչպես շոկոլադը: Այն բարձրացնում է մեզ ավելի, քան որևէ այլ բան: Նրանում միանգամից խտանում են այնքան շատ զգացո-

ղություններ, որ էնդորֆինները հասնում են բարձր ակտիվության: Այն և՛ բուռն զգացողություն է, և՛ երկնային անցողիկ նշույլ: Առանց դրա դժվար է ապրել, եթե մեկ անգամ ճաշակել ենք համը:

Հասկանալի է, որ մենք ավելի շատ ցանկանում ենք հագեցնել մեր ցանկությունը, քան թողնել, որ այն հանգստանա, հատկապես, երբ այն այդքան շատ հաճույք է պատճառում և տալիս թարմության, ցանկալի լինելու և ժամանակավոր լիարժեքության զգացողություն: Բայց կա ևս մեկ բան, որը նույնպես պետք է քննենք. երբ չի եկել սիրո ճիշտ ժամանակը, սեռական ցանկությունը միշտ կլինի սխալ, որքան էլ այն հաճելի զգացողություններ բերի: Եթե ցանկությունը արթնանում է ոչ ճիշտ ժամանակին, այն դառնում է կիրք, իսկ կիրքը հանգիստ չունի և մշտապես պարուրվում է ամոթով:

Սերը կարիք ունի հանգստանալու, որպեսզի կարողանա հետագայում կրկին արթնանալ ոչ թե կրքի տեսքով, այլ՝ ավելի ճիշտ և ավելի գեղեցիկ վիճակում: Այս լրացուցիչ հանգիստը թույլ է տալիս, որ այն արթնանա համապատասխան ժամանակ՝ նորոգված և ավելի զորացած՝ հաճույքի և բուռն զգացողությունների համար: Այդ ժամանակ մենք չենք հիասթափվի կամ տանջվի: Մենք պետք է ցանկանանք, որ կիրքը մեռնի մեր մեջ, և փոխարենը հարություն առնի սերը՝ առանց մեղքի կամ ամոթի զգացողության: Ինչպե՞ս կարող է այս ամենը իրականանալ:

> *Եթե ցանկությունը արթնանում է ոչ ճիշտ ժամանակին, այն դառնում է կիրք, իսկ կիրքը հանգիստ չունի և մշտապես պարուրվում է ամոթով:*

Այս ընթացքը նման է նրան, թե ինչպես է մայրն օրորում անհանգիստ կամ վախեցած երեխային, որպեսզի նա քնի: Երբ իմ երեխաները վախեցած, հիվանդ կամ չափից շատ հուզված են լինում, հանգստացնելու համար ես ամեն բան անում եմ, որպեսզի նրանց ավելի մոտ գտնվեմ: Կարող եմ օրորել կամ պառկել նրանց կողքին: Անկախ նրանից, թե ինչ մեթոդ եմ օգտագործում, ես ցանկանում եմ, որ նրանք իմանան, որ ես մոտ եմ իրենց: Հենց նրանք հարմար տեղավորվում են, ես գրկում եմ նրանց և սկսում լսել նրանց բացատրությունները իրենց վախի վերաբերյալ: Ես լսում եմ նրանց պատմությունները

ինչ-որ սարսափելի երազի մասին և շոյում նրանց մազերը: Երբ նրանք թեթևանում են, կամ երբ զգում եմ, որ հետագա պատմությունները նրանց չեն օգնի, ես սկսում եմ շշուկով խոսել՝ հանգստացնելով նրանց հուզմունքը:

Ես կրկին ասում եմ նրանց Աստծո սիրո և իմ սիրո մասին և հիշեցնում, որ Աստված հավատարիմ է և կպաշտպանի նրանց: Ապա խոսում եմ ավելի մեծ զորություն ունեցող ճշմարտությունների մասին և նկարագրում ավելի մեծ գեղեցկություն ունեցող պատկերներ, քան ստի և վախի սարսափեցնող ստվերներն են: Ես օրորոցային եմ երգում նրանց համար, մինչև նրանց շնչառությունը հանդարտվում է, և նրանք խորը քուն են մտնում:

Վախեցած երեխաների նկատմամբ մոր քնքուշ վերաբերմունքը բխում է Աստծո սրտից: Դրանք մեր փոթորիկները հանդարտեցնելու և մեր վախերը քշելու Աստծո ցանկության ընդամենը մի փոքր արտացոլումն են: Երբ մենք վիրավորվում ենք, անհաջողություն ենք կրում և վախենում ենք, Աստված ցանկանում է, որ մոտենանք Իրեն, այլ ոչ թե հեռանանք: Որպես Իր զավակներ՝ Նա հրավիրում է մեզ մոտենալ Իրեն և Իր գրկում գտնել ապահովություն ու սեր: Այնտեղ Նա մեզ կտա գեղեցկության տեսիլքներ, որոնք մեզ կրկին կմտցնեն հանգստության և խաղաղության մեջ:

> *Երբ մենք վիրավորվում ենք, անհաջողություն ենք կրում և վախենում ենք, Աստված ցանկանում է, որ մոտենանք Իրեն, այլ ոչ թե հեռանանք:*

Ես այնպես եմ սիրում այն տեսարանը, երբ Հայրը մեղմ շոյելով քնեցնում է Իր աղջկան, որպեսզի նա կարողանա հանգստանալ և բժշկվել: Ես գիտեմ, միգուցե դուք վախենում եք, որ եթե թույլ տաք ցանկությանը քնել, այն կարող է երբեք չարթնանալ կամ կրկին չբավարարվել: Սրանք տանջող հարցեր են. «Եթե թույլ տամ, որ իմ կյանքի այս բնագավառը հանգստանա, արդյո՞ք ես երբևէ այն կրկին կտեսնեմ: Արդյո՞ք Աստված իսկապես կբավարարի իմ կյանքում այս կարիքները: Եթե ես հիմա այն հանձնեմ Աստծուն, արդյո՞ք Նա հավատարիմ կլինի իրականացնել ապագայի և հույսի Իր խոստումը»:

Ես ի սրտե հավատում եմ, որ քո Հայր Աստված Իր Հոգով և այս

գրքի միջոցով ցանկանում է հետևյալը.

- Մոտեցնել քեզ Իրեն,
- Լվանալ մեղքի և ամոթի զգացողության յուրաքանչյուր հետք,
- Հեռացնել քո վախերը՝ դրանք մերկացնելով ճշմարտության լույսի ներքո,
- Տալ քեզ հույս և ապագա,
- Օրորել քեզ, մինչև փոթորիկդ հանդարտվի,
- Վերադարձնել քեզ հանգստի մեջ,
- Վերականգնել քո սրտի երազանքը:

Մեկ անգամ, երբ խոսում էի այս հարցերից մի քանիսի վերաբերյալ, մի գեղեցիկ, երիտասարդ աղջիկ մոտեցավ ինձ և խնդրեց, որ աղոթեմ: Նա խոստովանեց, որ փոխզիջման է գնացել սրբության բնագավառում՝ տղաների ուշադրությունն ու մտերմությունը գրավելու համար: Եվ նա չգիտեր ինչպես վերականգնվել և վերադառնալ իր երազանքին: Ես գրկեցի նրան և աղոթեցի: Աղոթելիս լսեցի, թե ինչպես Աստված խոստմունքի խոսքեր շշնջաց նրա համար: Նա խոստացավ, որ երբ այդ աղջիկը մոտենա Աստծուն փառաբանության և երկրպագության երգերով, Աստված Իր հերթին օրորոցային կերգի նրա համար՝ հանգստացնելով այն, ինչը արթնացել է նրա ներսում:

Ինձ զարմացրեց Աստծո սերը, որ երևաց ծայնի երանգի մեջ: Նրա խոսքերում չկար ո՛չ ամոթ, ո՛չ դատապարտություն, այլ միայն խոստում այն մասին, որ երգելով կհեռանան աղջկա վախերը, մեղքի և ամոթի զգացողությունը: Երբ աղջիկը մոտենա Իրեն, Նա խոստանում է, որ Ինքն էլ կմոտենա աղջկան և ապահովությամբ կթաքցնի Իր թևերի հովանու ներքո: Այս խոսքը մեզ գեղեցիկ պատկերացում է տալիս Նրա քնքշության մասին.

Նա խոստացավ, որ երբ այդ աղջիկը մոտենա Աստծուն փառաբանության և երկրպագության երգերով, Աստված Իր հերթին օրորոցային կերգի նրա համար՝ հանգստացնելով այն, ինչը արթնացել է նրա ներսում:

«Քո Տեր Աստված քո մեջ զորավոր է, Նա փրկում է, Նա պիտի ուրախանա քեզ համար զվարճությամբ, Նա պիտի լռի Իր սիրով և պիտի ցնծա քեզ համար՝ խնդալով» (Սոփոնիա 3.17):

Այս պատկերը շատ բան է բովանդակում: Աստված հեռու և անհասանելի չէ, Նա անմիջապես գալիս է օգնելու և փրկելու Իր մեծ զորությամբ: Նա չի մերժում կամ դատապարտում մեզ, երբ աղաղակում ենք վախից կամ անօգնական լինելուց: Նա սիրում է հանգստացնել Իր զավակներին, ինչպես յուրաքանչյուր մայր սիրում է ուրախությամբ հանգստացնել իր երեխային: Բայց մայրական սփոփանքի մեջ կա սահմանափակում, իսկ Աստծո տված հանգստությունն անսահման է, այդպես է նաև Նրա սերը: Նրա սիրո խորությունը հանգստացնում է մեզ, որից հետո Նա օրորոցային է երգում մեզ համար: Այդ պատկերն այնքան պարտավորեցնող է, որ յուրաքանչյուրիս հրավիրում է մոտենալ Նրան և թույլ տալ, որ հանդարտեցնի այն փոթորիկները, որ ինքներս չենք կարող հանդարտեցնել: Աստված հանգիստ է տալիս մեզ, և շուտով հասկանում ենք, որ երգով Իրեն ենք միացել:

> «Այսպես կօրհնեմ Քեզ իմ կյանքում, Քո անունով կբարձրացնեմ իմ ձեռքերը: Իմ կյանքը կկշտանա՝ ինչպես ճարպով և պարարտությունով, և իմ բերանը կօրհնի Քեզ ուրախ շրթունքներով: Երբ որ Քեզ հիշում եմ անկողնումս գիշերվա պահերին, Քո մասին եմ մտածում: Որովհետև Դու ինձ օգնություն եղար, և ես Քո թևերի հովանավորության տակ կցնծամ: Իմ անձը պինդ Քո ետևից է ընկնում, Քո աջը հաստատ պահում է ինձ» (Սաղմ. 63.4-8):

Ես պարզապես չեմ կարող ավելի լավ ցույց տալ փառաբանության կարևորությունը: Երաժշտության մեջ զարմանալի ուժ կա: Այսօր մեզ հասանելի են այնքան շատ հզոր փառաբանության և երկրպագության երգեր, որքան երբևէ չեն եղել: Ինչպես արդեն քննարկեցինք, երաժշտությունը սրտի լեզուն է, որովհետև այն զորություն ունի շրջանցելու մեր միտքը: Երբ փառաբանում ենք Նրան, մենք ապավինում ենք Նրա հավատարմությանը: Նա պատրաստում է մի խնջույք, որտեղ կան թանկ ուտելիքներ մեզ զորացնելու և ամրացնելու համար: Երբ մեր անկողիններում հիշում ենք Նրան, Նա մնում է մեզ հետ՝ հսկելով մեր գիշերային քունը:

Հաճախ, երբ պառկում եմ իմ երեխաներից մեկի կողքին, նա անընդհատ արթնանում է, որպեսզի համոզված լինի, որ ես չեմ հեռացել: Ես

սպասում եմ, մինչև նա խորը քնի, հետո կամաց դուրս եմ գալիս նրա անկողնուց և գնում իմ սենյակ: Բայց Աստված այդպես չէ. Նա մնում է: Նա ծածկում է մեզ Իր փետուրների տակ, մինչ մենք երգում ենք: Նրան փառաբանելը ստիպում է մեր հոգիներին կառչել Նրանից, և հետո Նրա աջ ձեռքը պահում է մեզ: Տիրոջ ուրախությունը դառնում է մեր զորությունը, և Նրա զորությունը մի բան է, որի կարիքը դու ունես, երբ պայքարում ես հակումների և անդիմադրելի ցանկությունների դեմ:

Ինչպես Եսթերը, մենք կարիք ունենք ժամանակ նշանակել ծոմի համար, որպեսզի թողնենք մեր ցանկությունները և պատրաստվենք Նրա ցանկությամբ անցկացվող խնջույքին: Մենք նրա առջև ենք բերում մեր կամքը, ցանկությունները, և մեր հաճույքները փոխարինում Նրա կամքով: Մեր փառաբանությունն ու երկրպագությունը մի խնջույք է, որը պատվում է Նրան, և այնտեղ Նա սեղան է պատրաստում մեզ համար մեր թշնամիների առջև: Ինչպես Եսթերը, ես աղաղակում եմ այս սերնդի աղջիկների համար, որ նրանք զերծ մնան իրենց հոգիների թշնամու հարձակումներից, որը փնտրում է նրանց, որպեսզի վաճառի մահվան: Դու էլ կարող ես նույնը անել: Ժամանակն է, որ մենք՝ կանայք, մեր կյանքերը դնենք՝ պաշտպանելու շատ աղջիկների կյանքեր, որոնց դեռ չենք էլ ճանաչում:

> *Կա միայն մեկ ճանապարհ ցանկության կամ ախորժակի դեմ. պետք է քաղցի մատնվես:*

Կա միայն մեկ ճանապարհ ցանկության կամ ախորժակի դեմ. պետք է քաղցի մատնվես ընդհուպ մինչև մահ: Դու պետք է ոչնչացնես այն և դարձնես անզոր՝ կտրելով ուտելիքի մատակարարումը: Գիտե՞ք այս ասացվածքը. «Բանակը քայլում է ստամոքսով»: Ուրեմն, դուք պետք է թշնամու բանակը զրկեք ուտելիքի մատակարարումից: Դուք պետք է նայեք ձեր անձին երես առ երես և ասեք, թե ով է Տերը:

Սաղմոս 35.13-ում Դավիթ թագավորն ասում է, թե ինչպես նա խոնարհեցրեց իրեն ծոմապահության միջոցով: Երբ մեր մարմինն ու շունչը վերահսկողությունից դուրս են գալիս, մենք կարիք ունենք դնել իրենց տեղը՝ հիշեցնելով, որ Աստված է ղեկավարում: Մեր հակումները չեն կարող գերիշխել մեր կյանքում:

Ամեն անգամ, երբ հզոր ճեղքման կարիք եմ ունեցել, հատկա-

պես մարմնի դեմ պայքարում, ես միշտ դիմել եմ ծոմապահությանը: Իրականում չեմ կարող նույնիսկ պատկերացնել հոգևոր պատերազմ՝ առանց ծոմի, քանի որ վերջինս հզոր և արդյունավետ զենք է: Նույնիսկ Հիսուսը՝ Աստծո Որդին, ծոմ էր պահում: Ցավում եմ, բայց այսօր շատ քրիստոնյաներ ավելի շատ դիետա են պահում, քան ծոմ: Նրանք ներքուստ կապված մնալով՝ ցանկանում են փոխել իրենց արտաքին տեսքը: Այստեղ ես ցանկանում եմ կիսվել այնպիսի ճշմարտություններով, որոնք ազատ կարձակեն ձեզ.

> «Ահա սա է ծոմը, որը Ես հավանում եմ. լուծի՛ր անիրավության կապանքները, բա՛ց արա լուծի կոշկոռները և ջարդվածներին ազատ թող տուր, և ամեն տեսակ լուծ կոտրե՛ք» (Եսայի 58.6):

Աստծո ընտրած ծոմը իրականացնում է հետևյալը. այն քանդում է անիրավության շղթաները, արձակում լուծի կոշկոռները, ազատում ջարդվածներին և կոտրում ամեն տեսակի լուծ. ոչ միայն հեշտերը, այլև ամեն տեսակի: Ոչ մի լուծ չի կարող կանգնել ծոմի զորության առջև: Արդյո՞ք սեռական մեղքը լուծ չէ: Անշո՛ւշտ: Այն ուղղություն է տալիս և սահմանափակում իրեն կրողների գործողությունները: Այն ստիպում է նրանց գնալ այնտեղ, որտեղ իրենք չեն ցանկանում: Լուծը ուժասպառ է անում մեզ իր ծանրության տակ: Բայց երբ մենք հագնում ենք փառքի հանդերձները այս ծանրության փոխարեն, սկսում ենք զգալ թեթևություն, քանի որ Աստված տալիս է մեզ Իր զորությունը՝ դիմակայելու և դրանից ազատվելու համար:

Սուրճը չարաշահելու իմ օրինակում ես համոզված եմ, որ հիշում եք, թե ինչ կտրուկ միջոցների դիմեցի և ընդհանրապես դադարեցի սուրճ խմել: Եթե դուք ունեք սեռական հակումներ, առաջարկում եմ ձեզ դիմել նույն կտրուկ միջոցներին:

> «Եվ դանակ դիր կոկորդիդ, եթե մեծ ախորժակի տեր ես» (Առակ. 23.2):

Սա շատ լուրջ է հնչում ինձ համար: Ահա ևս մի քանի Խոսքեր.

> «Փախե՛ք պոռնկությունից. ամեն մեղք, որ մարդը գործի, իր մարմնից դուրս է, բայց պոռնկություն անողն իր մարմնի մեջ է մեղանչում» (Ա Կորնթ. 6.18):

«Երիտասարդական ցանկություններից փախի՛ր և հետևի՛ր արդարության, հավատքի, սիրո, խաղաղության: Տիրոջ անունը սուրբ սրտանց իրենց վրա կանչողների հետ» (Բ Տիմոթ. 2.22):

«Փախչել» բառը խիստ կարևոր է: Առաջին անգամ այն օգտագործվում է այն ժամանակ, երբ հրեշտակները Ղովտին ասում են՝ դուրս գա քաղաքից (տե՛ս Ծննդ. 19.17): Սա նշանակում է սարսափահար վազել ինչ-որ բանից: Այս հորդորը պատահական չէ: Փախչելու համար հարկավոր է ծոմ պահել:

Դու հաստատ չես ցանկանա Ղովտի նման ավարտ ունենալ՝ փախչելով անբարոյականության քաղաք, որը գտնվում էր Աստծո դատաստանի ներքո, և հարբած վիճակում սեռական հարաբերություններ ունենալ քո աղջիկների հետ: Երբ դու փախչում ես, պետք է վազես առանց ետ նայելու: Գնա Աստծո՛ ծածկոցի տակ, ոչ թե արբեցողության կամ այլ տեսակի գերության: Երբ փախչում ես, թո՛ղ ամեն բեռ:

«…դե՛ն գցենք ամեն ծանրություն և մեզ դյուրավ պաշարող մեղքը և համբերությամբ վազենք մեր առջև դրված ասպարեզի ընթացքը» (Եբր. 12.1):

Ծոմը՝ ծանրությունից ազատվելու վերջնական միջոցն է: Այն մարմնից և շնչից հեռացնում է այն բաները, որոնք մեզ իջեցնում են և կապում երկրային բաներին: Երբ ծոմ ենք պահում, մեր բեռը թեթևանում է, և մեր հոգին ազատվում է: Ծոմը՝ Աստծուն հնազանդվելու գերագույն օրինակն ու արտահայտությունն է, և երբ հնազանդվում ենք Աստծուն, այլևս սարսափահար չենք վազում, այլ վազում ենք նպատակով՝ թշնամուն փախուստի մատնելով:

«Ուրեմն, հնազանդվե՛ք Աստծուն, հակառա՛կ կանգնեք սատանային, և նա կփախչի ձեզնից» (Հակոբ. 4.7):

Երբ խոնարհվում և թաքնվում ենք Նրա թևերի տակ, թշնամին փնտրում է մեզ և տեսնում միայն Նրան, որովհետև մենք թաքնված ենք: Չկա իշխանության կամ զորության պակասություն Նրա թևերի հովանավորության տակ: Մենք ավելի քաղցած և ծարավ ենք դառնում Նրա հանդեպ, երբ դադարում ենք կերակրել մեր կյանքի մյուս

բնագավառները: Նա վերափոխում է մեր հակումները և կերակրում մեզ Իր բարությամբ ու ողորմությամբ, ինչը շատ ավելի լավ է մեզ համար, քան երկրային հաճույքները (նույնիսկ՝ սուրճն ու շոկոլադը):

Ահա իմ առաջարկները ծոմի վերաբերյալ: Առաջինը՝ հիշե՛ք, որ սա մարմի՛նը մերժելու ժամանակ է, այլ ոչ թե ինքնամերժման: Հիշե՛ք, որ հոգին հոժար է. մեր գործը մարմնին անհարմարության մեջ դնելն է: Այդ պատճառով սա տոնակատարության, խնջույքի և ուրախության ժամանակ է հոգևոր առումով: Հիշե՛ք, մինչ Եսթերը ծոմ էր պահում, նա թագավորի համար շքեղ հանդես էր պատրաստում: Դուք ուրախացնելու եք Թագավորին, այլ ոչ թե ձեր մարմինը: Երբ դուք պատվում եք Թագավորին, Նա էլ կպատվի ձեզ Իր ներկայությամբ: Ծոմին վերաբերվե՛ք ոչ թե որպես պատիժ, այլ՝ արտոնություն:

> *Դուք ուրախացնելու եք Թագավորին, այլ ոչ թե ձեր մարմինը:*

Հաջորդը՝ գիտակցե՛ք, որ սա կյանքի և մահվան հարց է, որովհետև այդպես էլ կա. դուք վերջ եք տալիս գերությանը:

«Որովհետև եթե մարմնավորապես ապրեք, կմեռնեք, բայց եթե Հոգով մարմնի գործերը սպանեք, կապրեք» (Հռոմ. 8.13):

Քանի որ ինչ-որ բաներ պետք է մահանան, ուրեմն թող դրանք լինեն մեղավոր բնությունը և մարմնի չար գործերը: Կրկին, Եսթերի պես լրջորե՛ն վերաբերվեք: Եթե հնարավոր է, սկսեք եռօրյա ուտելիքի ծոմից: Նույնիսկ եթե աշխատում եք, կարող եք սկսել հինգշաբթի երեկոյից և ավարտել կիրակի երեկոյան: Ես կառաջարկեի այս օրերին օգտագործել միայն հյութ կամ ջուր: Դուք կարող եք լրացուցիչ նյութեր գտնել ցանկացած առողջարար սննդի խանութում:

Այս գիրքը նպատակ չունի տալ ձեզ բժշկական խորհուրդներ կամ զբաղեցնել ձեր անձնական բժշկի տեղը: Ուստի, խորհուրդ եմ տալիս խորհրդակցել ձեր բժշկի կամ որևէ այլ մասնագետի հետ, եթե հարցեր կամ մտահոգություններ ունեք ծոմի վերաբերյալ: Եթե դուք տասնութ տարեկանից ցածր եք, ծոմ մի՛ պահեք առանց նախօրոք ձեր ծնողների հետ քննարկելու այդ մասին: Ես ծոմի ժամանակ խմում եմ ոչ թթվային հյութեր և թորած ջուր:

Անիմաստ է քեզ զրկես ուտելիքից, եթե անձնատուր չես լինում Աստծուն: Նախօրոք կարգավորիր ամեն բան, որպեսզի կարողանաս պարզապես հանգստանալ ծոմի ժամանակ: Անջատի՛ր հեռախոսը, հեռուստացույցը և մի կողմ դի՛ր ամսագրերը: Լսի՛ր միայն փառաբանության և երկրպագության երգեր: Հեռու մնա աշխարհիկ սիրո երգերից և այս ժամանակն անցկացրու Նրա հետ խորը մտերմության մեջ: Սա շաբաթի ժամանակ է, ուստի մի՛ զբաղվիր ուրիշ բաներով: Հանգստացի՛ր, քնի՛ր և մոտեցի՛ր Նրան: Կարդա՛ Խոսքը, ներառյալ Եսթերի գիրքը, նաև ծոմապահության մասին խոստումները կամ այլ քրիստոնեական ստեղծագործություններ:

Ծոմի ընթացքում դու պարզապես չես սնում քո մարմինը, այլ զորացնում ես քո հոգին: Այս ժամանակի համար ունեցի՛ր աղոթքի խնդրանքների ցուցակ: Այս աղաչանքները թող հայտնի լինեն Աստծուն: Ձրի նման սիրտդ թափի՛ր Տիրոջ առջև: Ասա՛ Նրան յուրաքանչյուր վախի և հույսի մասին, եղի՛ր ազնիվ և անկեղծ Նրա հետ: Գրանցի՛ր այն, ինչ Նա ցույց կտա քեզ Խոսքի և աղոթքի միջոցով:

Համարձակությա՛մբ եկ Նրա առջև: Եսթերի պես հագի՛ր քո թագավորական պատմուճանը (արդարության պատմուճանը Քրիստոսում) և կանգնի՛ր ներքին սենյակում՝ Թագավորի սրահի առջև (տե՛ս Եսթեր 5.1): Իմացի՛ր, որ Նրան հաճելի կլինի քեզ տեսնել, և Նա քեզ կմեկնի Իր բարեհաճության արքայական գավազանը: Երբ հարցնի, թե ինչ ես ցանկանում, ասա՛ Նրան, որ եկել ես Նրան հրավիրելու երկրպագության և մեծարման հանդեսին, և երբ միասին ուրախանաք, քո աղաչանքները հայտնի՛ դարձրու Նրան:

> *Անիմաստ է քեզ զրկես ուտելիքից, եթե անձնատուր չես լինում Աստծուն:*

Այս ընթացքում աչքի անցկացրու ամբողջ տունը և ազատվի՛ր բոլոր անմաքուր կամ Տիրոջը տհաճ բաներից: Սուրբ Հոգին ցույց կտա քեզ այդ բաները, ուստի զգայուն և հնազանդ եղիր Նրա առաջնորդությանը: Դրանք կարող են լինել ոչ տեղին լսաժապավեններ, գրքեր, նամակներ, երաժշտություն կամ, նույնիսկ, հին ընկերների նկարներ: Յուրաքանչյուր բան, որ անմաքրություն է պարունակում, հաստատ կասկածի տակ կդրվի: Երբ քո սեռական բնագավառը առաջարկես

Նրան որպես անուշահոտ երկրպագության զոհ, հարցրու՝ կա՞ն արդյոք այլ բնագավառներ, որ Նա կցանկանար՝ նույնպես բերեիր Նրա առջև: Թող սա լինի քո ամբողջ էությամբ Նրան սիրելու ժամանակը, և Նա կտա քեզ կենդանի ջուր և այնպիսի կերակուր, որը նախկինում չէիր էլ կարող պատկերացնել:

Ես ցանկանում եմ քեզ հետ աղոթել, նախքան կսկսես այս համարձակ ձեռնարկումը:

Սիրելի՛ երկնային Հայր,

Ես սրտանց համաձայնում եմ իմ քրոջ հետ, երբ նա գալիս է Քո առջև: Մոտեցրո՛ւ նրան Քեզ, լվա՛ ու հեռացրո՛ւ մեղքի և ամոթի յուրաքանչյուր հետք, ինչպես որ հեռացնում ես նրանից ամեն վախ՝ դրանց փախուստի մատնելով Քո ճշմարտության լույսի ներքո: Վերականգնի՛ր նրա հույսը և տո՛ւր նրան ապագա: Ամո՛ւր պահիր նրան Քո ձեռքերի մեջ, մինչև հանդարտվի ամեն փոթորիկ: Տո՛ւր նրան հանգիստ և վերադարձրո՛ւ Քո երազանքը նրա կյանքում: Ծածկի՛ր նրան Քո թևերի հովանու տակ և երգով լցրո՛ւ նրա սիրտը: Հանգստացրո՛ւ նրան Քո սիրով: Խայտառակության յուրաքանչյուր հանդերձ փոխարինի՛ր արդարության գեղեցիկ և փառավոր պատմուճանով: Հաճույքների այգի տնկի՛ր նրա համար, ու թող սա լինի մտերիմ փոխհարաբերության յուրահատուկ ժամանակի սկիզբ: Մինչ նա հանգստանում է Քո մեջ, վարի՛ր նրա պատերազմները: Մենք սիրում ենք Քեզ, Հա՛յր, և շնորհակալություն հայտնում մեզ ազատ արձակելու համար: Քանդի՛ր յուրաքանչյուր գերություն: Բարձրացրո՛ւ մեզ, որ լինենք փայլող փարոսներ այս սերնդի համար:

Սիրով՝ Քո դուստր

Ազա՛տ եղիր ավելացնելու քո խոսքերը այս աղոթքին, բայց իմացի՛ր, որ այս աղոթքով ես աղոթեցի քեզ հետ և քեզ համար: Մեր սրտերն արդեն միացել են այս երգի մեջ:

8 Պատվի՛ր քո Հորը

Վերջերս մի հեռախոսազանգ ստացա մի հուսահատ մորից: Նրա դուստրը խոստովանել էր, որ սեռական հարաբերության մեջ է մտել մի վտանգավոր երիտասարդի հետ: Մայրը սարսափահար էր եղել և ցանկանում էր պաշտպանել իր դստերը: Անցյալում նա անգիտակցաբար չարիքի մեջ էր ընկել և կորցրել իր կուսությունը: Հիմա դա կրկնվում էր: Մայրը հույս ուներ, որ ես կհանդիպեմ նրանց հետ և կաղոթեմ դստեր համար, որպեսզի կանխվի հետագա ողբերգությունը:

Բայց կասկածում էի: Ես վաղուց սովորել էի, որ երբ մարդիկ գիտեն ճիշտն ու սխալը, բայց շարունակում են ընտրել սխալը, դու կարող ես նրանց հետ խոսել, աղոթել ամբողջ սրտով ու եռանդով, բայց ոչինչ չի փոխվի, մինչև նրանց սրտերում փոփոխություն տեղի չունենա: Ուստի նրան ասացի.

> *Անիմաստ է քեզ զրկես ուտելիքից, եթե անձնատուր չես լինում Աստծուն:*

> *Ոչինչ չի փոխվի, մինչև նրանց սրտերում փոփոխություն տեղի չունենա:*

- Այդ տղան քրիստոնյա չէ, և ձեր դուստրը գիտի, որ սխալ հարաբերության մեջ է: Նրան անհրաժեշտ է հեռանալ այդ տղայից: Ես համոզված եմ, որ դուք ասել եք նրան այդ մասին: Ինձ հետ խոսելը ինչ-որ բան կփոխի՞: Եթե նա իսկապես ցանկանում է, որ հանդիպենք, ես կգամ, բայց եթե ոչ, դա պարզապես կլինի ժամանակի կորուստ:

Մոր ձայնից զգացվում էր, որ հուսահատված էր և կոտրված: Նա ինձ հավաստիացնում էր, որ դուստրն անկեղծ է, և նույնիսկ տանն է

մնացել՝ հուսալով, որ ես անպայման կհանդիպեմ իրեն: Ես համաձայնեցի հանդիպել այդ օրը քիչ ուշ:

Ես մի կերպ մտցրեցի այդ չծրագրավորված հանդիպումը իմ առավոտյան խիտ գրաֆիկի մեջ: Ցնցուղ ընդունելուց հետո արագ դուրս եկա տնից: Ճանապարհին աղոթում էի Աստծո իմաստության, առաջնորդության և օծության համար: Մայրն ու աղջիկը սպասում էին ինձ ռեստորանում: Ես նստեցի, և աղջիկը պատմեց, թե ինչպես է երկու շաբաթ առաջ հանդիպել այդ տղային լցակայանում և անմիջապես հասկացել, որ նա անախորժություններ պատճառող մարդ է: Այդ ժամանակ կարծես մի ձայն աղջկան ասել է. *«Նրանից հեռո՛ւ մնա»:* Բայց նա չի լսել: Տղան կարողացել է գայթակղել նրան և ձեռք բերել նրա բանկային հաշիվներից օգտվելու հնարավորությունը: Այդ տղային դպրոցից դուրս էին հանել: Նույնիսկ նրա հայրն էր աղջկան զգուշացրել, որ իր տղայից հեռու մնա: Բայց վերջինս չէր լսել: Նա ցանկացել էր տղային վերականգնել և օգնել ինչ-որ ձևով: Նա վախենում էր, որ տղան կարող է ինչ-որ անօրինական գործերի մեջ ներգրավված լինել և իրեն էլ խառնել դրանում: Սթրեսը անդիմադրելի էր դարձել, և նա պատմել էր մորը ամբողջ պատմությունը: Նա վախենում էր, որ չի կարողանա տղայից ազատվել, որովհետև վերջինս անընդհատ զանգահարում էր իրեն:

Ես ասացի.

- Գիտե՞ս, այդ տղայից հիանալի կավատ դուրս կգա: Գիտե՞ս, որ մարմնավաճառների մեծ մասը փորձում են փրկել և օգնել իրենց կավատներին: Դու տասնյոթ տարեկան ես, իսկ նա՝ քսանից մի քիչ ավելի: Մի՛ վիրավորվիր, բայց նա չի ցանկանում քո օգնությունն այնպես, ինչպես դու ես ցանկանում տալ նրան: Առաջին հերթին անհրաժեշտ է, որ թույլ տաս՝ Աստված բժշկի քեզ, և պարզես, թե ինչու է քո ճաշակն այդքան վատը տղամարդկանց հարցում:

Մայրն ու աղջիկը համաձայնության նշան արեցին, և ես շարունակեցի.

- Հարկավոր է փակել քո բանկային հաշիվը: Փոխի՛ր քո հեռախոսահամարը և ասա՛ նրան, որ այլևս չես հանդիպելու նրա հետ:

Աղջիկը կասկածանքով նայեց. «Ես չգիտեմ... երբ նրա հետ եմ լի-

նում, դժվարանում եմ նրան ո՛չ ասել»:

- Դու չպետք է նրա հետ լինես: Դու պետք է փախչես շնությունից: Եթե չես կարող անել դա հեռախոսով, ապա խնդրի՛ր, որ հայրիկդ քեզ օգնի: Ես համոզված եմ, որ նա խնդիր չի ունենա այդ երիտասարդին ասելու, որ նա այլևս չի տեսնելու քեզ: Հայրդ կարող է հանդիպել նրան դռների մոտ՝ ատրճանակը ձեռքին, և ասել այդ բանը: Թող հայրդ պաշտպանի քեզ: Հայրերը հենց դրա՛ համար են:

Մայր ու աղջիկ փոխանակեցին հայացքները, և ես հասկացա, որ հայրիկը միանգամայն անտեղյակ էր պատահածից:

- Ձեր ամուսինը դեռ չգիտի՞,- հարցրի մորը:

Նա բացատրեց, որ ինքն էլ է նոր իմացել: Հայրը տեղյակ է եղել առաջին երիտասարդից, իսկ այս մեկի մասին ոչինչ չգիտեր: Հենց սկզբից նրան դուր չէր եկել այդ երիտասարդը, և նրանք գիտեին, որ հայրիկը կվրդովվեր և կհուսահատվեր, եթե իմանար այս իրավիճակի մասին:

Ես խնդրեցի աղջկան երեք բան անել ինձ համար: Առաջինը՝ հայրիկին պատմել այդ կեղտոտ ճշմարտությունը, հաջորդը՝ խնդրել նրան, որ պաշտպանի դեր ստանձնի, հետո՝ գնել և կարդալ Աստվածաշունչ, մինչև որ Աստված կանցկացնի նրան այս ընթացքի միջով: Ես նրան ասացի, թե ինչպես այդ վատ, սարսափեցնող դժվարությունը կարող էր իր կյանքում դառնալ թանկարժեք մի իր, եթե նա դրանից դաս քաղեր: Հետո մենք մոտեցանք իմ մեքենային և աղոթեցինք:

Բայց ես որևէ թեթևություն չզգացի: Կարծես թե փորձում էի ինչ-որ մոգական ձևով նրա միջից քանդել մի բան, որը նա ցանկանում էր պահել, բայց վախենում էր, որ մի օր կարող է այն ձեռքից բաց թողնել: Ես հեռացա հուսախաբված, չնայած նա հավաստիացրել էր, որ կվարվի ճիշտ այնպես, ինչպես քննարկեցինք:

Նրանք ինձ այլևս չզանգահարեցին, բայց ես իմացա, որ հաջորդ շաբաթ այցելել էին իմ ընկերներից մեկին: Մայրը կրկին հուսահատության մեջ էր. մեր հանդիպումից հետո աղջիկը շաբաթ օրը գնացել էր այդ երիտասարդի հետ և ընդհանրապես տուն չէր եկել:

Արդյո՞ք դուք այնքան շփոթված եք, որքան ես: Իմը միայն տղաներ են: Եթե նրանք գան տուն ինչ-որ աղջկա հետ կապված այսպիսի

պատմությամբ, արդյո՞ք ես նրանց թույլ կտամ, որ կիրակի օրը հանդիպեն այդ աղջկա հետ:

Ես հավատում եմ, որ քանի դեռ նրանք ապրում են ձեր տանը, դուք պարտավորված եք պաշտպանել նրանց, հատկապես եթե նրանք անչափահաս են: Ես համոզված չեմ, թե ինչ էր կոնկրետ պատահել այդ աղջկան. չգիտեմ՝ նա տնից դուրս էր եկել առանց ծնողներին տեղյակ պահելո՞ւ, կամ միգուցե նրա հայրը ընդհանրապես ոչնչից տեղյա՞կ չէր, կամ էլ մեղքի զգացումն այնպես էր վերահսկել իրավիճակը, որ նրանք անզոր էին զգում իրենց, որովհետև անցյալում չէին կարողացել պաշտպանել իրենց դստերը:

Բայց երբեք ուշ չէ: Մենք պետք է աղաղակ բարձրացնենք: Ծնողնե՛ր, պաշտպանե՛ք ձեր երեխաներին: Կանա՛յք, ե՛տ վերցրեք ձեր զորությունը և քայլե՛ք սրբության ու աստվածապաշտության մեջ: Սա սկսվում է, երբ դիմում ես Աստծո իմաստությանը և խորհրդին: Մենք պետք է խոնարհվենք և ճանաչենք, որ Նրա ճանապարհներն ավելի բարձր են, քան մերը: Ի վերջո, մեր մտքերն ու իմաստությունը պարզապես հիմարություն են Նրա խորհրդի և հանճարի կողքին:

> *Ծնողնե՛ր, պաշտպանե՛ք ձեր երեխաներին: Կանա՛յք, ե՛տ վերցրեք ձեր զորությունը և քայլե՛ք սրբության ու աստվածապաշտության մեջ:*

Հայրերի սերունդը կարիք ունի սրտացավություն և բարկություն ցուցաբերել, երբ վաճառում, անհանգստացնում և բռնաբարում են իրենց աղջիկներին: Նրանք կարիք ունեն ապաշխարելու, որ թույլ են եղել, և ապա պետք է ոտքի կանգնեն, պաշտպանեն նրանց և բժշկություն բերեն այն տեղերում, որտեղ խոցել են: Կանայք պետք է ոչ թե բռնության ենթարկվեն, այլ պաշտպանված լինեն տղամարդկանց կողմից:

> *Հայրերի սերունդը կարիք ունի սրտացավություն և բարկություն ցուցաբերել, երբ վաճառում, անհանգստացնում և բռնաբարում են իրենց աղջիկներին:*

Հայրերը պետք է լինեն իրենց դուստրերի արժանապատվության պաշտպանները: Այն աղջիկները, ովքեր վայելում են առողջ, կենսախինդ փոխհարաբերություն իրենց հայրերի հետ, ավելի քիչ խո-

ցելի են բռնացող տղամարդկանց համար: Քանի որ նրանք տեսել են առողջ օրինակներ իրենց ընտանիքում, նրանք կարողանում են հեշտությամբ ճանաչել անառողջ փոխհարաբերությունը: Այն աղջիկները, ում հետ վարվել են ինչպես թագավորի աղջիկների, քիչ հավանական է, որ նրանք թույլ տան որևէ մեկին իրենց հետ վարվել ավելի պակաս ձևով: Այն հայրերը, ովքեր գովաբանում և բարձրացնում են իրենց աղջիկներին, այդպիսով պաշտպանում են նրանց ուրիշ տղամարդկանց մոտ այդ բաները փնտրելուց: Այն հայրերը, ովքեր հիշում են, թե ինչպիսին էին իրենք կամ իրենց ընկերները պատանեկության ժամանակ, քիչ հավանական է, որ թույլ տան իրենց դուստրերին հայտնվել այնպիսի դիրքում, որտեղ նրանք կարող են փոխզիջման գնալ: Այն հայրերը, ովքեր դաստիարակում և սովորեցնում են իրենց դուստրերին կին-տղամարդ փոխհարաբերությունների մասին, նրանց զինում են անհրաժեշտ գիտելիքներով, որ երբ գայթակղությունը գա, ճիշտ որոշումներ կայացնեն: Եվ, ընդհակառակը, այն աղջիկները, ովքեր ունեն բարկացկոտ հայրեր, ովքեր երբեք գոհ չեն եղել իրենց դուստրերից, միշտ կձգտեն հավանության արժանանալ այլ տղամարդկանց կողմից:

Հիշում եմ, երբ գնացի քոլեջ, ամեն բան փոխվեց: Ես երկար ճանապարհ էի անցել ցուրտ Ինդիանայի արևմտյան քաղաքից դեպի արևային Արիզոնա: Ես շատ ցնցված էի, քանի որ լիովին ազատ էի ծնողական հսկողությունից և հասակակիցների ակնկալիքներից: Ես կարող էի ետևում թողնել իմ բոլոր անհաջողությունները և ամեն ինչ սկսել նորից:

Ես մտա կանանց ուսանողական ակումբ դեռ առաջին կիսամյակը չսկսած: Սա հնարավորություն տվեց ինձ ձեռք բերել ընկերներ հենց ուսումնական տարվա սկզբից: Ես վայելում էի տղաների ուշադրությունը, որը չկար բարձր դասարաններում սովորելու ժամանակ. դա մի ժամանակ էր, երբ բոլորն անտեսում էին ինձ: Երբ մտնում էի դասարան կամ քայլում դպրոցի բակում, իմ կողքով պտտվում էին, սուլում կամ հրավիրում ժամադրության: Այդ ուշադրությունը ինձ համար չափազանց շատ էր, որովհետև մինչ այդ ես լսել էի միայն ծաղրանքներ և վիրավորանքներ:

Ես ձևացնում էի, թե դա ինձ համար միանշանակ է, բայց ներքուստ ինձ վատ և անվստահ էի զգում: Տղամարդկանց ուշադրությունը ինձ կարծես ուժ էր տալիս, չնայած ինչ-որ չափով այն վախեցնում էր ինձ: Վախենում էի, որ եթե նրանք չափից շատ մոտենային ինձ, կտեսնեին, որ ես իրականում անհաջողակի մեկն էի, չնայած ինձ անկախ մարդ էի ձևացնում: Այս պատճառով ես խաղալիքի պես էի վարվում շատ տղաների հետ: Եթե նրանք չափից շատ էին հավանում ինձ, ես նրանց թողնում էի: Ես պարծենում էի նրանով, որ տղամարդկանց պետք է փոխել այնպես, ինչպես ներքնաշորը. յուրաքանչյուր նոր օր՝ նոր տղամարդ: Մեկ կիսամյակում ժամադրության գնացի քառասունհինգ տղամարդու հետ: Սա միայն ցույց է տալիս այն, թե որքան էի վախենում մտերիմ փոխհարաբերություններից:

Բայց տարվա վերջում հանդիպեցի իմ զույգին: Ես տասնութ տարեկան էի, իսկ նա՝ քսանյոթ: Նա բարձրահասակ, թիկնեղ, աշխարհիկ տղամարդ էր: Ավելի ուշ իմացա, որ նա սեռական հարաբերությունների որսորդ է: Նա որսում էր առաջին կուրսի ուսանողուհիներին և հիմա էլ նշան էր բռնել ինձ: Նա ուսանող չէր, այլ մի երիտասարդ, որը շրջում էր ուսանողական գիշերային վայրերում: Ինչ-որ ձևով նա իմացել էր իմ խոցելիության մասին: Ցավոք, մինչև ես իմացա ամբողջ ճշմարտությունը նրա մասին, բավականին ուշ էր: Իմ ընկերուհիներից մի քանիսը զգուշացրել էին ինձ այդ մասին, երբ նկատել էին, որ այդ տղան ուշադրություն էր դարձնում ինձ, բայց ես չլսեցի, որովհետև ինձ համակրեց հետաքրքրությունը այդ արտասովոր երիտասարդի նկատմամբ: Նա ճանապարհորդել էր ամբողջ Եվրոպայով և հիանալի մարզիկ էր: Ուր գնում էր, գրավում էր կանանց ուշադրությունը:

Նա մի քանի անգամ ինձ ժամադրության էր հրավիրել, բայց ես մերժել էի, որը նրան ավելի համառ էր դարձրել: Ես վայելում էի նրա ուշադրությունը հեռավորությունից: Մի գիշեր զանգահարեցի մայրիկիս և կիսվեցի այդ երիտասարդի վերաբերյալ իմ հիացմունքով՝ ասելով, որ, իմ կարծիքով, նա շատ բարձր է ինձնից: Նա ավելի խելացի էր, ավելի մեծ և ավելի գրավիչ, քան ես: Մայրիկիս ասացի, որ նա ժամադրության է հրավիրել, բայց ես համոզված չէի՝ գնալ, թե ոչ: Ինչ-որ չափով սպասում էի, որ նա բացասական պատասխան կտար: Ես եր-

բեք մայրիկիցս թույլտվություն չէի խնդրել ինչ-որ տղայի հետ ժամադրության գնալու համար:

Նա մի պահ երկմտեց, ապա հավաստիացրեց, որ ես կկարողանամ ինձ ճիշտ պահել նրա կողքին: Ես զարմացա նրա պատասխանից: Կախեցի լսափողը՝ մտածելով, որ եթե մայրիկն ասում է՝ կարելի է, ուրեմն՝ կարելի է: Ես ընդունեցի հաջորդ հրավերը, որի համար ստիպված էի ամբողջ կյանքում զղջալ: Եթե ես խիզախ լինեի հարցնելու հայրիկիս, ապա գիտեմ, որ նրա պատասխանը «ոչ» կլիներ: Նա երբեք չէր համաձայնի, որովհետև անմիջապես գլխի կընկներ, որ ինչ-որ բան այն չէ: Եթե ես իմաստուն լինեի ու լսեի այն, ինչ հայրս կպատասխաներ, ես ապահով կլինեի, բայց այդպես չվարվեցի:

> *Եթե ես խիզախ լինեի հարցնելու հայրիկիս, ապա գիտեմ, որ նրա պատասխանը «ոչ» կլիներ:*

Այդ երիտասարդը գայթակղում էր ինձ հաջորդ մի քանի ամիսների ընթացքում, և իմ տասնիններորդ տարեդարձից շատ չանցած՝ ես կորցրի իմ կուսությունը: Ես ծրագրել էի ամռանը մնալ Արիզոնայում, բայց վերադարձա իմ ծնողների մոտ, որպեսզի փախչեմ նրա հսկողությունից: Ծնողներիս չպատմեցի, թե ինչ էր տեղի ունեցել: Երբ հայրս իմացավ, որ ժամադրվում էի մեկի հետ, ով ինը տարով մեծ էր ինձնից, նա խոժոռվեց, բայց արդեն ուշ էր: Այդ երիտասարդի իշխանությունն ինձ վրա չափազանց ուժեղ էր: Ես շնորհակալ եմ Աստծուց, որ ունեի տուն, որտեղ կարող էի փախչել, որովհետև շատ հաճախ իմ իրավիճակում գտնվող աղջիկները փախչելու որևէ տեղ չեն ունենում:

Այդ ժամանակ ես դեռ քրիստոնյա չէի, հայրս նույնպես քրիստոնյա չէր, բայց որոշ առումով նա գիտեր, որ այդ կապը վտանգավոր կլինի: Ես հավատում եմ, որ նույնիսկ ոչ քրիստոնյա հայրերը զինված են անհրաժեշտ կարողությունով՝ լինելու իրենց դուստրերի արժանապատվության պաշտպաններն ու պահապանները:

Բայց ինչ, եթե ծանր իրավիճակում եք, և ձեր հայրն էլ պաշտպան չի հանդիսանում: Միգուցե նա չկա, կամ, միգուցե, դաժան հայր է: Միգուցե նա ինքն է սեռական բռնություն գործադրել ձեր նկատմամբ և վերջին մարդն է, ում կողքին ձեզ ապահով կզգայիք: Եթե դուք այսպիսի վիճակում եք, ապա ժամանակն է, որ հավաքեք ձեր ուժերը: Եթե

ֆիզիկական աշխարհում չունեք առողջ հոր կերպար, միևնույն է, դուք ունեք երկնային Հայր:

Ձեր երկնային Հայրը երբեք չի ցանկանա տեսնել ձեզ բռնության ենթարկված. Նա կպաշտպանի և հոգ կտանի ձեր մասին: Սա նշանակում է, որ ցանկացած իրավիճակում դուք կարող եք հարց տալ. *«Կցանկանա՞ր արդյոք իմ երկնային Հայրը, որ ինձ հետ այդպես վարվեին: Նա թույլ կտա՞ր, որ այս բանը պատահեր ինձ հետ, եթե իմանար»:* Հաստատ իմացե՛ք, որ Նա չէր ցանկանա, որ ձեզ հետ վարվեին մարմնավաճառի պես: Ուրեմն, նույնքան համոզված եղեք, որ Նա կկանգնի ձեր թիկունքին, երբ որոշեք պահել ձեր դիրքը: Երբևէ մի՛ կարծեք, թե Նա այսպիսի մեկնաբանություններ կանի. «Դու ինքդ ես ցանկացել, եթե հասել ես դրան»: Նա երբեք այդպիսի բան չի ասի: Այլ՝ կասի. «Դո՛ւրս արի, գնա՛ տուն և եղի՛ր ապահով»:

> *Ձեր երկնային Հայրը երբեք չի ցանկանա տեսնել ձեզ բռնության ենթարկված. Նա կպաշտպանի և հոգ կտանի ձեր մասին:*

Եթե դու կապի մեջ ես ինչ-որ մեկի հետ, որը վերահսկում է քեզ, և համարում ես, որ չես կարող նրան դեմ կանգնել, ապա հրաժարվի՛ր հանդիպել նրա հետ:

Երբ սովորում էի քոլեջի ցածր կուրսերում, ես լուրջ կապի մեջ էի մեկ այլ երիտասարդի հետ, որն ավարտական դասարանի ուսանող էր: Նա ինձ մատների վրա խաղացնում էր: Դա շատ անառողջ փոխհարաբերություն էր: Բայց ես անձամբ մտածում էի, թե շահել եմ նրան: Իմ մայրն ու հայրը շատ մտահոգված էին, բայց ես Արիզոնայում էի, իսկ նրանք՝ Ինդիանայում: Քանի որ նրանք չէին սիրում այդ տղային, ես ավելի համառ էի դառնում մեր հարաբերությունների զարգացման հարցում:

Մայրս սկսեց սրտանց աղոթել, որ աչքերս բացվեն, և ես ինչ-որ ձևով խույս տամ այդ հարաբերություններից: Նրա անկեղծ աղոթքներից ու աղաչանքներից մի քանի շաբաթ հետո փոփոխություններ տեղի ունեցան: Փոխանակ խզելու մեր հարաբերությունները՝ մենք խոստումներ տվեցինք միմյանց: Չնայած դրան՝ ես մտածում էի, որ *ինչ-որ բան ճիշտ չէ:*

Մի քանի օր անց մենք միասին մասնակցեցինք մի երեկոյի, որն ինձ համար այդքան էլ զվարճալի չէր: Ամենուրեք մարդիկ շնորհավորում էին մեզ նշանվելու կապակցությամբ, իսկ ես հազիվ էի կարողանում ժպտալ: Հիշում եմ, որ այդ երեկո շատ խմեցի, բայց ոչ մի կերպ չկարողացա արբել: Բայց ընկերոջս մոտ հակառակն էր, չնայած նա հազվադեպ էր արբում: Նա միշտ կարողանում էր տիրապետել իրեն (իհարկե, դեմ չէր, երբ ես էի արբում): Այդ երեկո մի գեր աղջիկ մոտեցավ նրան և համբուրեց՝ ի նշան շնորհավորանքի: Ընկերս չկարողացավ իրեն պահել և ընկավ, նրա վրա էլ՝ այդ աղջիկը, և ես մտածեցի. *«Ի՞նչ եմ անում այս անհաջողակի հետ»:*

Ընկերս չկարողացավ իրեն պահել և ընկավ, նրա վրա էլ՝ այդ աղջիկը, և ես մտածեցի. «Ի՞նչ եմ անում այս անհաջողակի հետ»:

Ես շարունակում էի նայել նրանց, թե ինչպես էին փորձում վեր կենալ: Ես մտածում էի. *«Ի՞նչ էի ընդհանրապես գտել այս երիտասարդի մեջ»:*

Ես ցանկանում էի անմիջապես հեռանալ: Ուզում էի, որքան հնարավոր էր, հեռու գնալ նրանից: Ցավոք, մեր վեցհոգանոց խմբում բոլորը արբել էին, բացի ինձնից, ուստի ստիպված էի բոլորին մեքենայով տուն տանել: Երբ հասանք ընկերոջս տան մոտ, ես նայեցի նրան և ասացի՝ դո՛ւրս արի:

Նա ապշեց. «Չե՞ս գալիս՝ գիշերը միասին անցկացնելու»:

Ես նրան հստակ ասացի «ոչ» և հեռացա:

Կես ժամ չանցած՝ եկավ և թակում էր իմ հանրակացարանի դուռը՝ աղաչելով տեսնել ինձ: Իր գրավչության պատճառով նա կարողացավ համոզել հանրակացարանի աղջիկներից մեկին գալ իմ սենյակ և խոսել ինձ հետ: Նա ասաց նրան, թե որքան շատ է ինձ սիրում և չի ցանկանում, որ որևէ հապճեպ որոշում կայացնեմ և հետագայում զղջամ: Այդ աղջիկը բարձրացավ ինձ մոտ և փորձեց համոզել, որ իջնեմ, բայց ինձ ոչինչ չէր հետաքրքրում: Ես նրան ասացի, որ երիտասարդին տուն ուղարկի: Մեկ ուրիշ աղջիկ, որը սրահում էր եղել և լսել էր ամբողջ պատմությունը, եկավ իմ սենյակ:

Նա ասաց. «Լի՛զա, այդ տղան անհաջողակի մեկն է: Ես քեզ երջանիկ չեմ տեսել նրա հետ հանդիպելու օրվանից: Թո՛ղ նրան»:

Ես ապշեցի, որ նա գիտեր իմ մտքերը:

Ես համաձայնեցի. «Ես երջանիկ չեմ եղել: Ի՞նչ եմ անում այդ տղայի հետ: Ես նրա կրծքանշանը կվերադարձնեմ (սա իրենց հանրակացարանում ընդունված մի նշան էր, որ երբ տղան ընկերություն էր անում աղջկա հետ, իր կրծքանշանը տալիս էր՝ որպես նշան, որ այդ աղջիկն իր ընկերուհին է), կգա՞ս ինձ հետ»:

Նա գրկախառնվեց և համաձայնեց գալ:

Մենք սպասեցինք այնքան, մինչև համոզված եղանք, որ նա գնացել է, և ապա ինքներս ուղևորվեցինք նրա տուն: Ես փաթաթեցի նրա կրծքանշանը մի թղթի մեջ, որտեղ գրված էր՝ ամեն ինչ ավարտված է, այնուհետև այն նետեցի փոստարկղը: Հետո մենք վերադարձանք հանրակացարան:

Հաջորդ առավոտ, երբ արթնացա, բոլորովին այլ մարդ էի: Ես ինձ ազատ էի զգում: Սկզբում զարմացա, թե ինչու էի այդպես զգում, ապա հիշեցի, թե ինչպես էի վարվել նախորդ գիշեր: Չկար ոչ մի զղջում: Ես վազեցի և գտա իմ հավատարիմ ընկերոջը, գրկախառնվեցի և ասացի. «Ես ազա՛տ եմ»:

Առավոտյան թեթև քայլերով գնացի նախաճաշի: Ուտելու ժամանակ հեռախոսազանգ ստացա: Ես գիտեի, որ նա է, ուստի չխոսեցի: Այդ պահին ինձ ավելի ուժեղ էի զգում: Ես լոգանք ընդունեցի և պատրաստվեցի հարցազրույցի կանանց ուսանողական ակումբում խորհրդատու ընտրվելու համար: Ինձ անմիջապես ընտրեցին: Բայց երբ վերադարձա տուն, հանրակացարանի աղջիկներից մեկը կանգնեցրեց ինձ.

- Լի՛զա, ես տեսա նրան գրադարանում: Նա այնքա՛ն տխուր էր… և խնդրեց ինձ տալ քեզ այս երկտողը:

Երկտողում նա ասում էր, որ չէր հասկանում, թե ինչ էր անում նախորդ գիշեր, և քանի որ նա շատ մտահոգված էր, պատրաստ չէր խզել մեր հարաբերությունները: Ցանկանում էր, որ մենք այդ երեկո հանդիպեինք և խոսեինք: Նա ծրագրում էր զանգել ինձ ավելի ուշ և պայմանավորվել հանդիպման համար: Բայց ես նրա հետ ոչ մի տեղ չէի գնա: Նա սովորաբար կարողանում էր ամեն ինչ այնպես տակնուվրա անել, մինչև որ ես խառնվում էի ու տեղի տալիս նրա ցանկությանը:

Ինը ամսվա մեջ սա առաջին անգամն էր, որ ես կարողանում էի ինքս ինձ որոշել, և բոլորովին չէի կամենում հրաժարվել դրանից: Ես որոշել էի չպատասխանել նրա զանգերին:

Հետո նա սկսեց հետապնդել ինձ քոլեջի բակում: Նա մե՛կ աղաչում էր, մե՛կ գոռում, մե՛կ սպառնում, մե՛կ էլ ներողություն խնդրում և կրկին աղաչում, որ ուշադրություն դարձնեմ իրեն: Ես մտնում էի դասարան, իսկ նա սպասում էր, մինչև դասը կավարտվեր, և կրկին հետապնդում էր ինձ: Բայց իմ դասարանում կար մի հիասքանչ, խելացի և բարձրահասակ ֆուտբոլիստ: Այս երիտասարդը հետևել էր իմ իրավիճակին և որոշել էր միջամտել: Մինչև ուսումնական տարվա վերջ նա ուղեկցում էր ինձ դասարան և դասարանից՝ տուն: Իմ նախկին ընկերը մի հայացքով հասկացավ, որ իր հասակով հազիվ հավասար լինի նրա ոտքերին: Ի վերջո, նա հանգիստ թողեց ինձ, մինչև որ ես տուն գնացի ամառային արձակուրդներին և անհասանելի դարձա նրա համար:

Բռնացող, վերահսկող տղաները հարգում են միայն իրենցից ավելի ուժեղներին: Եվ, հավատացե՛ք ինձ, ինչպես բոլոր բռնացողները, նրանք վախկոտ են: Բռնացող վախկոտներին չպետք է բացատրություններ տալ: Եթե որոշել եք, որ ամեն բան ավարտված է, ուրեմն ավարտված է:

Երբ այդ ամառ տուն գնացի, մայրս ինձ հետ կիսվեց, թե ինչպես էր աղոթել, որ ազատ լինեի: Երկու ամիս անց ես փրկվեցի և հանդիպեցի Ջոնին, բայց շատ էի վախենում դպրոց վերադառնալ, որովհետև իմ պահապանն ավարտել էր ուսումը և աշխատանք էր փնտրում: Ո՞վ էր պաշտպանելու ինձ: Ես անկեղծ աղոթեցի այս բանի համար: Ինչպես որ վախենում էի, այդպես էլ եղավ, և ես դպրոց վերադառնալու առաջին շաբաթը հանդիպեցի իմ նախկին ընկերոջը, բայց այլևս նրա ազդեցության տակ չէի: Նրան ասացի, որ այդ ամառ ես դարձել եմ քրիստոնյա: Նա զարմացած ինձ նայեց և ասաց, որ երազում տեսել է այդ ամենը: Հետո նույնիսկ հարցրեց, թե արդյո՞ք չէի ուզի նրա հետ Աստվածաշունչ ուսումնասիրել: Ես շնորհակալություն հայտնեցի, բայց մերժեցի առաջարկը:

Նրան ասացի, որ երկուսիս համար էլ լավագույն բանը միմյանցից հեռու լինելն է: Նա չհամաձայնեց և շարունակեց հետապնդել ինձ

ևս մի քանի շաբաթ, մինչև որ վերջնականապես ինձ հանգիստ թողեց: Աստված դարձավ իմ պահապանը, և նույնիսկ այդ երիտասարդին երազը տվեց: Ես գիտեմ, որ դա Աստծուց էր, որովհետև մինչև փրկվելը ես շատ հեռու էի քրիստոնեությունից:

Քո երկնային Հայրը ցանկանում է քո փոխարեն վարել այդ պայքարները: Նա կծածկի և կպաշտպանի քեզ ամեն վնասից... ուստի թո՛ւյլ տուր Նրան անել դա:

Սիրելի՛ երկնային Հայր,

Ես շնորհակա՛լ եմ, որ Դու իսկապես իմ Հայրն ես և իմ արժանապատվության գերագույն պաշտպանն ու պահապանը: Ես հավատում եմ, որ Դու միշտ շահագրգռված ես, որ ինձ համար լավ լինի: Ես հավատում եմ, որ երբեք մենակ չեմ որևէ իրավիճակում: Քո հրեշտակները պաշտպանում են ինձ, և Քո Խոսքը պահում է ինձ: Դու այն Հայրն ես, Ում մոտ ես կարող եմ վազել իմ խորը, ծածուկ գաղտնիքներով ու վախերով, որովհետև Դու քննում և ճանաչում ես ինձ: Թո՛ւյլ տուր ճանաչել Քեզ որպես Թագավոր, Ով պահպանում և խնամում է ինձ: Ես կապավինեմ Քո խորհրդին: Ծածկի՛ր ինձ Քո թևերի տակ:

Սիրով՝ Քո դուստր

9 *Կենդանի զոհեր*

Ես հիշում եմ այն օրը, երբ ստացա հայտնություն այն մասին, որ իմ սեռական բնագավառը Աստծո համար մեծ հետաքրքրություն է առաջացնում: Չգիտես ինչու, մինչ այդ ես այդ բնագավառը համարում էի վատ բնագավառ վատ աղջիկների համար: Իմ կյանքի մի քանի տարիների ընթացքում ես եղել էի իսկապես շատ «վատ աղջիկ», ուստի ենթադրում էի, որ իմ սեռական բնագավառը պետք է մնար ետևում՝ համարվելով «մինչքրիստոնեական» կյանքի մի մաս: Ես երբեք չէի ցանկանում քննարկել այն և աշխատում էի անտեսել ու երբեք չխոսել այդ մասին ուրիշների հետ, հատկապես Աստծո: Ի վերջո, ես մտածում էի, որ լավ քրիստոնյա աղջիկները երբեք չեն տրվում կրքերի բնագավառին: Ես չէի գիտակցում իմ մտքերի վտանգավոր և տգետ լինելը: *Այն բնագավառները, որոնց չեք դիմակայում, երբեք ձեզ հանգիստ չեն թողնում:* Դրանք պետք է բերել Խաչի մոտ և այնտեղ լուծել հարցերը:

> *Այն բնագավառները, որոնց չեք դիմակայում, երբեք ձեզ հանգիստ չեն թողնում:*

Այն ժամանակ, երբ ես մտածում էի «քրիստոնյա աղջիկների» մասին, իմ մտքում ծագում էին սրբերի պատկերներ, որոնք նայում էին երկնքին և կրում պայծառ լուսե օղակներ: Ես փափագում էի չլինել այս աշխարհից, բայց շարունակում էի պայքարել մտքերի հետ, որոնք շատ երկրային էին: Ես քայլում էի քոլեջի տարածքով, և ինձ համար այնքան անսովոր էր անցնել նրանց կողքով, ում հետ մեղք էի գործել տարբեր իրավիճակներում: Իհարկե, նրանք դեռ կարծում էին, որ մեր հանդիպումները ոչ միայն հիանալի էին, այլև արժեր, որ կրկնվեին: Կարծես նրանց իսկ ներկայությունը խայթում էր ինձ. «Ող-

ջո՛ւյն, հիշո՞ւմ ես ինձ: Լսել եմ՝ քրիստոնյա ես դարձել: Ես գիտեմ, թե քեզ ինչն է իրականում ավելի դուր գալիս: Ինձ չես խաբի: Դադարի՛ր ձևացնել և միացի՛ր մեզ: Այնպես դու ինձ ավելի էիր դուր գալիս: Քեզ հետ այլևս հետաքրքիր չէ»:

Դպրոց վերադառնալու առաջին շաբաթը, ավագ խմբի դասախոսություններից մեկի ժամանակ, որին ներկա էին հարյուրավոր ուսանողներ, նախքան պրոֆեսորի ներս մտնելը ուսանողական խորհրդի նախագահը ոտքի կանգնեց և առջևի շարքից դիմեց ինձ. «Հե՛յ, Լի՛զա, ճի՞շտ է, որ հիմա դու թռչկոտում ես Հիսուսի համար: Մենք կողմ չենք դրան: Մենք քեզ կառևանգենք այդտեղից, և դու կմիանաս մեզ ու կրկին կդիմես սեքսին, թմրադեղերին և ալկոհոլին»:

Սենյակում յուրաքանչյուր աչք կա՛մ արդեն հառել էր ինձ վրա, կա՛մ փնտրում էր ինձ: Ոմանք նույնիսկ ծիծաղում էին և գլխով անում, որովհետև գիտեին, թե ինչպիսին եմ եղել: Դեմքս կարմրել էր: Ես հուսահատորեն փորձեցի պահել իմ ներքին դողը: Բայց սրտումս արձագանքեցին Հիսուսի խոսքերը.

> «Արդ, նա, ով Ինձ մարդկանց առջև դավանի, Ես էլ նրան կդավանեմ Իմ Հոր առջև, որ Երկնքում է: Եվ ով ուրանա Ինձ մարդկանց առջև, Ես էլ կուրանամ նրան Իմ Հոր առջև, որ Երկնքում է» (Մատթ. 10.32,33):

Ես վեր կացա իմ տեղից և ուղիղ նայելով ուսանողական խորհրդի նախագահի աչքերին՝ պատասխանեցի. «Այո՛, դա ճիշտ է»: Ապա թռչկոտեցի՝ դա ապացուցելու համար:

Նախագահը և ամբողջ լսարանը սկսեցին ծիծաղել: Հետո ես նստեցի: Պրոֆեսորը եկավ, և իմ փորձությունն ավարտվեց: Ամբողջ դասի ընթացքում մտածում էի լսարանից փախչելու մասին: Ես գիտեի, որ ինքս էի ընկել այդ իրավիճակի մեջ, բայց նաև գիտեի, որ դա էր միակ ապահով վայրը ինձ համար:

Ես գիտակցում էի, որ հեռու գնալով կհայտնվեի շրջապատի ուշադրության կենտրոնում: Ես զգում էի այդ հայացքները, երբ մտնում և դուրս էի գալիս լսարանից: Նախկինում քոլեջի տարածքն ինձ համար ընկերների, զվարճությունների և սիրեկանների ապաստարան էր:

Այժմ այն դարձել էր անցյալի ամոթի և ներկա քննարկումների վայր: Ես փրկվել էի դպրոց վերադառնալուց ընդամենը երկու շաբաթ առաջ և անկեղծորեն չգիտեի՝ ինչպես վարվել:

Միաժամանակ, ես շատ շփոթված էի այն ընդունելությունից, որ ստացա հանրակացարանի մյուս քրիստոնյաներից: Նրանք կարծես անընդհատ նույն բանն էին կրկնում. *«Հանգստացի՛ր, այդքան շատ մի՛ խոսիր Հիսուսի մասին և «նորմալ» քրիստոնյա եղի՛ր, որովհետև բոլորին անհարմար դրության մեջ ես դնում»:* Նրանք, ովքեր պետք է ինձ խրախուսեին Աստծուն հետևելու մեջ, ասում էին, որ հանգիստ մնամ՝ չառաջարկելով ոչ մի աջակցություն: Իսկ անհավատներն էլ, անշուշտ, խրախուսում էին փոխզիջման գնալ իմ համոզմունքների մեջ:

Ես փորձեցի ինչ-որ ձևով լռեցնել իմ հավատքը: Աստիճանաբար սկսեցի զիջումների գնալ, բայց զգում էի, որ ամեն անգամ կամաց-կամաց մահանում էի: Ես սկսեցի մտածել, որ փոխզիջումը համարվում է միակ այլընտրանքը երիտասարդների համար: Քրիստոնյաների մեծ մասը, ում հանդիպում էի, դեռևս լսում էր միևնույն երաժշտությունը, ինչ ես էի լսում նախքան քրիստոնյա դառնալը, և հաճախում նույն երեկոներին, որտեղ ես էի հաճախում: Մյուս կողմից ես նետել էի իմ «մինչքրիստոնեական» ձայներիզների մեծ մասը՝ իմանալով, թե դրանք ինչ էին արթնացնում իմ ներսում: Քրիստոնյա դառնալուց հետո ես փորձեցի հաճախել նույն երեկոներին, որպեսզի ամեն մեկն իմանար, որ քրիստոնյաները ծանծրալի մարդիկ չեն: Սակայն հիմա, զգոն վիճակում, ես անհարմար էի զգում ինձ այնտեղ: Առանց ալկոհոլի ազդեցության դրանք ինձ հիմարություն էին թվում: Այդ խաղերն այլևս ինձ զվարճություն չէին պատճառում:

> *Ես սկսեցի մտածել, որ փոխզիջումը համարվում է միակ այլընտրանքը երիտասարդների համար:*

Այսպիսով, ես սկսեցի քրիստոնյաների հետ փոխհարաբերություններ փնտրել իմ հանրակացարանից դուրս և միացա «Ուսումնական տարածքի հավաքույթներ» կազմակերպությանը: Այս կազմակերպության միջոցով մի սիրելի քույրիկ, որը մի քանի տարի առաջ ընտրվել էր երեկոյի թագուհի, ընդգրկեց ինձ իր հովանավորության ներքո: Մենք

միասին ուսումնասիրում էինք Աստվածաշունչը և երբեմն միասին ճաշում: Մենք միասին աղոթում էինք, ապա մոտենում անհատների կամ խմբերի: Դա սովորելու հիասքանչ ժամանակ էր:

Բայց հիշում եմ, որ մի օր, մի տարօրինակ բան պատահեց, երբ մոտեցանք մի աղջկա, որը արևի շողերի տակ ինչ-որ բան էր կարդում: Երբ ավելի մոտեցանք նրան, հասկացանք, որ նա Աստվածաշունչ էր կարդում: Մենք կանգնեցինք և մի պահ խոսեցինք նրա հետ: Երբ շրջվեցինք, որ գնանք, նա յուրաքանչյուրիս աստվածաշնչյան խոսք տվեց: Իմ խոսքը հետևյալն էր.

> «Իմ սիրեկանը պատասխանեց և ասաց ինձ. «Վե՛ր կաց, ո՛վ ընկերուհիս, ո՛վ գեղեցիկս, ու արի, ե՛կ: Որովհետև ահա ձմեռն անցել է, անձրևն անցել-գնացել է» (Երգ երգոց 2.10,11):

Հիշում եմ, թե ինչպես նրան շփոթված շնորհակալություն ասացի, և գնացինք: Սիրտս վառվում էր, ի՞նչ էին նշանակում այս խոսքերը: Ես որոշեցի այդ շաբաթ ժամանակ հատկացնել Աստվածաշունչ կարդալու և այդ խոսքը պարզելու համար: Կիրակի օրը, ջերմ և արևոտ մի առավոտ, ես սովորականից ավելի վաղ արթնացա: Անցա խոհանոց, որտեղ նախաճաշի համար արդեն պատրաստի բուլկիներ էին դրված: Կիրակի օրերը մենք ինքներս էինք հոգ տանում ուտելիքի մասին, բացի նախաճաշից: Ես վերցրի մի բուլկի և պատրաստվում էի ուտել, երբ Սուրբ Հոգին շշնջաց. «Սպասի՛ր»: Ես շրջվեցի՝ տեսնելու, թե ով մտավ խոհանոց իմ ետևից… բայց ես մենակ էի: Ես բուլկին փաթաթեցի անձեռոցիկի մեջ՝ մտածելով, որ հետո կուտեմ, երբ հավանաբար շատ ավելի քաղցած լինեմ, և գնացի իմ սենյակ:

Բայց երբ բարձրանում էի աստիճաններով, զգացի, որ Սուրբ Հոգին շարունակում է առաջնորդել ինձ. ես պետք է բուլկին պահեի, գնայի խանութ և մի քիչ խաղողի հյութ գնեի: Աստված հրավիրում էր ինձ Իր հետ հաղորդության: Իմ հուզմունքն ավելանում էր յուրաքանչյուր քայլափոխի: Աստվածաշնչյան Խոսքի նշանակությունն արդեն բացվում էր: Նա կանչում էր ինձ և հրավիրում առանձնանալ Իր հետ: Ես վերցրի Աստվածաշունչը, նոթատետրը և բուլկիների ու մի քիչ գումարի հետ դրեցի պայուսակիս մեջ: Վազեցի խանութ, խաղողի հյութ

գնեցի և առանձնացա քոլեջի տարածքի իմ սիրած վայրերից մեկում: Այնտեղ՝ հին ծառերի տակ, թաքնված մի նստարան կար: Հանեցի իմ աստվածային ընթրիքի բոլոր բաղադրամասերը և բացեցի Աստվածաշունչը: Ես մեծացել էի մի եկեղեցում, որտեղ յուրաքանչյուր շաբաթ հաղորդություն էինք ընդունում, բայց փրկվելուց ի վեր երբեք հաղորդություն չէի ընդունել: Ես նույնիսկ համոզված չէի՝ կարո՞ղ եմ այն մենակ ընդունել՝ եկեղեցուց առանձին, ուստի թերթեցի Աստվածաշունչը՝ կարդալով այն տեղերը, որոնք վերաբերում են հաղորդությանը. «Եվ գոհանալուց հետո կտրեց և ասաց.

> ««....Առե՛ք, կերե՛ք. այս է Իմ մարմինը, որ ձեզ համար կոտրվում է. այս արեք Իմ հիշատակի համար»: Այնպես էլ, ընթրիքն ուտելուց հետո բաժակն առավ և ասաց. «Այս բաժակը Նոր ուխտն է Իմ արյունով. այս արեք՝ քանի անգամ որ խմեք, Իմ հիշատակի համար»» (Ա Կորնթ. 11.24,25):

Հանկարծ մի սուրբ վախ իջավ ինձ վրա, և ես առաջին անգամ գիտակցեցի Հիսուսի խոսքերի նշանակությունը: Այս հրավերքը տրվել է դարեր շարունակ, և հիմա Նա խոսում է ուղիղ ինձ հետ՝ ասելով. «Սա Իմ մարմինն է, որը քեզ համար է»: Ես հաղորդությունը չէի ընդունում որպես մի անհետաքրքիր արարողության մասնիկ, այլ, ավելի շուտ, որպես հարություն առած Տիրոջ և իմ հոգու Փրկչի հետ մտերիմ փոխհարաբերության նշան: Նա անձամբ հրավիրել էր ինձ մասնակցելու խաչի վրա Իր կոտրված մարմնի զոհաբերությանը՝ այն հիշելով հացը կտրելու միջոցով: Նա հոժարությամբ զոհվեց, որ ես ապրեմ: Սա փոքր բան չէր: Նա ինձ առաջարկեց նաև Իր արյունով գնված Նոր ուխտի բաժակը, որը լցված էր խաղողի հյութով: Իմ առջև դրված հացն ու խաղողի հյութը հեռավոր գիշերվա և մի զոհասեղանի խորհրդանշան էին, որին մոտեցել էի հավատքով: Ես դողացի խոսքերի նշանակությունից, երբ շարունակեցի կարդալ.

> *Ես հաղորդությունը չէի ընդունում որպես մի անհետաքրքիր արարողության մասնիկ, այլ, ավելի շուտ, որպես հարություն առած Տիրոջ և իմ հոգու Փրկչի հետ մտերիմ փոխհարաբերության նշան:*

> «Ուրեմն, ով որ այս հացն ուտի կամ
> Տիրոջ բաժակը խմի անարժանությամբ, նա պարտական կլինի

Տիրոջ մարմնին և արյանը: Ուրեմն, թող մարդը փորձի իր անձը և ապա այն հացից ուտի և այն բաժակից խմի, որովհետև անարժանությամբ ուտողը և խմողը իր անձի համար դատաստան է ուտում և խմում, որ չի որոշում Տիրոջ մարմինը» (Ա Կորնթ. 11.27-29):

Աչքերս արցունքներով լցվեցին, երբ հիշեցի, թե քանի անգամ եմ այդպես վարվել: Ես պարզապես այդպես էի վարվել առանց երբևէ ուշադրություն դարձնելու Տիրոջ մարմնին կամ առանց քննելու իմ սիրտը: Նա դրել էր Իր կյանքը ինձ համար, իսկ ես երբեք ոչ մի անգամ կանգ չէի առել ինքս ինձ դատելու համար: Եկեղեցում հաղորդության ժամանակ նայում էի շուրջս՝ զննելով, թե ով կա և ով չկա, բայց երբեք աչքերս չէի ուղղում իմ ներսը: Ես նույնիսկ հիշում եմ, որ նայում էի արձաններին՝ տեսնելու, թե արդյո՞ք դրանցից արյուն էր հոսում: Ես անտեսում էի ինձ համար Նրա թափած արյունը:

> *Հիսուսը խնդրում էր ինձ, որ Իրեն հանձնեմ իմ ամբողջ կյանքը, իսկ դա նշանակում էր՝ նաև իմ մարմինը:*

«Որովհետև եթե մեր անձերը դատեինք, չէինք դատապարտվի» (Ա Կորնթ. 11.31):

Ես փակեցի աչքերս և աղոթեցի, որ լուսավորվեն իմ հոգու աչքերը և տեսնեմ իմ կյանքի յուրաքանչյուր բնագավառը: Հետո հրավիրեցի Սուրբ Հոգուն, որ քննի ինձ՝ թույլ տալով, որ Աստծո Խոսքը դառնա իմ գործողությունների և շարժառիթների դատավորը: Հաղորդության այդ անժամանակ վայրում էր, որ վեր բարձրացավ մաքրության հարցը: Ես աղոթում էի տարբեր հարցերի շուրջ, խոստովանում իմ մեղքը և զգում, թե ինչպես էր սիրտս մաքրվում ու թեթևանում: Հիսուսը խնդրում էր ինձ, որ Իրեն հանձնեմ իմ ամբողջ կյանքը, իսկ դա նշանակում էր՝ նաև իմ մարմինը.

«Արդ աղաչո՛ւմ եմ ձեզ, եղբայրնե՛ր, Աստծո ողորմությունով, որ ձեր մարմինները ներկայացնեք կենդանի, սուրբ և Աստծո ընդունելի պատարագ, որն է՝ ձեր բանավոր պաշտոնը» (Հռոմ. 12.1):

Առաքյալը աղաչում է, որ մենք մաքուր լինենք Աստծո ողորմությունով: Նա չի աղաչում վախի միջոցով, այլ այն ողորմության համեմատ,

որ մեզ արդեն ցույց է տրվել: Մեզ աղաչում են միայն այն ժամանակ, երբ կա մեծ պատճառ կամ նպատակ: Ես ցանկանում էի ըմբռնել այս խոսքի իմաստը, ուստի խորը քննեցի և գտա այն: Իմ մարմինը պետք է ներկայացվեր Աստծուն՝ որպես կենդանի զոհ: Որպես քրիստոնյա՝ իմ կյանքն այլևս իմը չէ, որովհետև ես գնվել եմ մեծ գնով:

Այս խոսքը նաև խոստանում է, որ Աստված կընդունի մեր կյանքի այս զոհը՝ որպես սուրբ և ընդունելի՝ անկախ նրանից, թե որքան կեղտոտված կարող ենք լինել աշխարհի կողմից: Սա հզոր հայտնություն դարձավ ինձ համար: Ես երբեք չէի մտածել, որ իմ ֆիզիկական մարմինը կարող է դառնալ սուրբ Աստծուն երկրպագող, և համարվել սուրբ և ընդունելի Նրա առջև:

Ես ցանկանում էի թաքնվել իմ ֆիզիկական «ես»-ից և փախչել նրա ծուղակներից, իսկ Աստված ասում էր ինձ, թե ինչպես դա իրականացնեմ: Եթե իմ մարմինը ներկայացնեի Նրան, որ Նա պահեր, և ընդունեի խաչը՝ որպես կենդանի զոհ, Նա իմ զոհն արդար կհամարեր Իր Որդու շնորհիվ:

Ես հասկացա, որ մաքրությունը պարզապես մի հրաման չէ մեր բարօրության համար, որը հետո դառնում է անհնարին մի բան, երբ անցնում ես պատանեկությունից հասունություն: Փոխարենը՝ այն հոգևոր երկրպագության գործողություն է: Մաքրությունը համարվում է իմ անձը ուրանալու, իմ կյանքը ամեն օր Նրա տնօրինությանը հանձնելու և իմ խաչը վերցնելու կարևոր մասը: Ես ցանկացա լինել ոսկոր՝ Նրա ոսկրից, և մարմին՝ Նրա մարմնից, որպեսզի Նրա Խոսքը մարմին դառնար իմ կյանքում:

Մեթյու Հենրիի մեկնաբանությունը Հռոմեացիների 12-րդ գլխի վերաբերյալ խոսում է այն մասին, որ մեր մարմինները կենդանի պատարագ ներկայացնելը աստվածապաշտության գործնական նկարագիրն է. «Մեր անձերը և գործողությունները Քրիստոսի՝ մեր Քահանայապետի միջոցով Աստծուն ներկայացնելը զոհ է՝ ի նշան Աստծուն պատվելու»:

Աստծո առջև զոհաբերությունը կատարվում է մեր հոժար կամքով: Մեր արձագանքը Նրա ողորմության հանդեպ՝ մեր կյանքում ողորմած Աստծուն պատվելն է: Սրանով մենք ընդունում ենք մեզ շրջապա-

տողների առջև, որ ինքներս մեզ չենք պատկանում, այլ գնվել ենք մեկ ուրիշի կողմից: Մեկնաբանությունը շարունակվում է. «Աստված ցանկանում է ձեր մարմինները, ոչ թե ձեր անասուններին»:

Ինձ դուր է գալիս այս արտահայտությունը. «Աստված ցանկանում է ձեր մարմինները, ոչ թե ձեր անասուններին»: Նա չի ցանկանում կենդանիների մահացած և արյունոտված մարմինները: Նա ցանկանում է սիրով և գոհությունով լցված սրտեր և Իր նպատակներին ու հաճությանը նվիրված մարմիններ: Դավիթը գիտեր սա, և չնայած նա Տիրոջ առջև կենդանիների զոհեր էր բերում, նա մշտապես գիտեր, թե ինչ էր Աստված իրականում ցանկանում:

> «Որովհետև Դու պատարագ չես ուզում. եթե ոչ, ես կտայի Քեզ, և ողջակեզները չես հավանում: Աստծո ընդունելի պատարագները կոտրված հոգին է. կոտրված և փշրված սիրտը Դու չես անարգի, ո՛վ Աստված» (Սաղմ. 51.16,17):

Աստված միշտ փափագել է այնպիսի մարդկանց, ովքեր կարողանում են տեսնել կրոնի վարագույրից և մարմնի գործերից այն կողմ. մարդիկ, ովքեր կմոտենան հավատքով և կերկրպագեն Իրեն Հոգով ու ճշմարտությամբ: Նա փափագում է այնպիսի մարդկանց, ովքեր ավելին են ուզում, քան պարզապես լավ մարդ լինելն է. Նա ցանկանում է այնպիսիների, ովքեր ցանկանում են Իրենը լինել: Ոմանք միգուցե վիճեն՝ ասելով, որ մենք կարիք չունենք որևէ այլ բան անել: Հիսուսը վերջնական զոհն էր, ուստի գործն ավարտված է: Բայց մենք չենք խոսում մեղքի պատարագի մասին: Ոչ մի զոհաբերություն չի կարող բավարարել մեր դեմ գրված օրենքները: Հիսուսն այն Գառն էր, որ հեռացրեց մեր մեղքերը, բայց Նա նաև մեր Քահանայապետն է և մեր օրինակը ամեն ինչում: Միասին նայենք այս փոխհարաբերությունը.

> *Աստված միշտ փափագել է այնպիսի մարդկանց, ովքեր կարողանում են տեսնել կրոնի վարագույրից և մարմնի գործերից այն կողմ:*

> «Եվ եթե Քրիստոսի հետ մեռանք, հավատում ենք, որ Նրա հետ էլ կապրենք: Գիտենալով, որ Քրիստոսը, մեռելների միջից հարություն առած լինելով, այլևս չի մեռնում, և մահը Նրա վրա այլևս չի տի-

> ում: Որովհետև այն, որ մեռավ, մեղքին մեռավ մեկ անգամ, և այն, որ կենդանի է, Աստծուն է կենդանի» (Հռոմ. 6. 8-10):

Քրիստոսի հետ մեռնելով՝ մենք կարող ենք ապրել Նրա հարության շնորհիվ: Հիսուսը քանդեց մեղքի և մահվան զորությունը: Նույնիսկ այժմ Նա, որ կենդանի է, կենդանի է Աստծո համար, ոչ թե Իր: Եթե կա մեկը, որ կարող է ասել, թե ավարտել է ընթացքը և վազել Իր ասպարեզը, ապա՝ Հիսուսն է: Բայց Նա չի ասում. «Հիանալի է, ես ուրախ եմ, որ այդ ամենն ավարտվեց: Հիմա ես կարող եմ ապրել այնպես, ինչպես ցանկանում եմ, որովհետև գործն ավարտված է»: Նրա կյանքը ծածկված է Աստծո մեջ, իսկ մերը պետք է ծածկված լինի Նրա մեջ:

> «Նույնպես էլ դուք ձեր անձերը մեղքին մեռած համարե՛ք և Աստծուն՝ կենդանի, մեր Տեր Քրիստոս Հիսուսի ձեռքով: Սրա համար թող մեղքը չթագավորի ձեր մահկանացու մարմնի մեջ, որ հնազանդվեք նրա ցանկություններին: Եվ ձեր անդամները անիրավության գործիք մի՛ ներկայացրեք մեղքին. այլ ձեր անձերը ներկայացրեք Աստծուն՝ ինչպես մեռելներից կենդանացածներ, և ձեր անդամներն արդարության գործիք՝ Աստծուն: Որովհետև մեղքը չի տիրի ձեզ վրա, որովհետև օրենքի տակ չեք, այլ՝ շնորհքի տակ» (Հռոմ. 6.11-14):

«Նույնպես էլ» արտահայտությունը նշանակում է հենց նույնպես: Մեզ հարկավոր չէ թափել մեր արյունը, որովհետև Նա արդեն թափել է Իրենը: Բայց մեր մարմինները պետք է դառնան կենդանի զոհեր: Մենք պետք է ապրենք Նրա նման՝ մեռած մեղքին, բայց կենդանի՝ Աստծուն: Մեղքը չպետք է թագավորի մեր մարմիններում... Աստվա՛ծ պետք է թագավորի: Մենք այլևս չենք հնազանդվում մեր մարմիններին, այլ՝ Աստծուն: Հնազանդությունն այստեղ կարևոր գաղափար է: Պողոսը հորդորում է մեզ, որ մեր անդամները չներկայացնենք անիրավության գործիքներ, այլ ներկայացնենք Աստծուն՝ որպես արդարության գործիքներ: Ուշադրություն դարձրեք, որ մենք զոհեր ենք բերում նրան,

> *Մենք զոհեր ենք բերում նրան, ինչին հնազանդվում ենք, և ինչին հնազանդվում ենք, այն դառնում է մեր տերը:*

ինչին հնազանդվում ենք, և ինչին հնազանդվում ենք, այն դառնում է մեր տերը: Հնազանդությունը արդարության զոհն է, իսկ անհնազանդությունը՝ անիրավության: Պողոսն ավարտում է հետևյալ արտահայտությամբ. «…մեղքն այլևս չի տիրի ձեզ վրա»: Մեղքն այլևս չպետք է ընդունի մեր զոհերը, մեր երկրպագությունը, որովհետև մենք օրենքի տակ չենք, այլ՝ շնորհքի:

Հիշեք, որ Հռոմեացիների 12-րդ գլխի սկզբում, Աստծո ողորմությամբ, առաքյալը մեզ աղաչում էր մեր մարմինները կենդանի պատարագ ներկայացնել: Ողորմությունը դնում է մեզ շնորհքի տակ, ոչ թե օրենքի, և ի պատասխան այս պարգևի՝ մենք հետևում ենք Քրիստոսի խաչի օրինակին: Մենք ամեն օր հնազանդվում ենք Աստծուն և արդարությանը և ոչ թե մարմնին ու անիրավությանը: Մեր կամքով մենք դնում ենք մեր անձերը և ներկայացնում մեր մարմինները: Հետո հավատքով մոտենում ենք Աստծուն և փնտրում Նրա սրտի ուզածը: Սա խաչը վերցնելու կարևոր մաս է.

Խաչը մեր ամենօրյա զոհն է:

> «Եվ ամենքին ասում էր. «Եթե մեկը կամենում է Իմ ետևից գալ, թող իր անձն ուրանա և ամեն օր իր խաչն առնի և Իմ ետևից գա: Որովհետև, ով որ կամենա իր անձն ապրեցնել, կկորցնի այն, և ով իր անձը կորցնի Ինձ համար, նա կապրեցնի այն»» (Ղուկ. 9.23,24):

Ուշադրություն դարձրեք, որ խաչը մի բան է, որ մենք վերցնում ենք ամեն օր: Դա այն չէ, որ մեկ անգամ վերցնում ենք և հետո մոռանում: Դա մեր պարանոցին կամ թևին գցելու զարդ չէ: Այն պետք է ամեն օր տպվի մեր սրտում: Քահանաները պետք է ամեն օր ողջակեզներ մատուցեին Տիրոջը:

> «Այն ժամանակ Սողոմոնը Տիրոջը ողջակեզներ մատուցեց Տիրոջ սեղանի վրա, որ շինել էր սրահի առջև, որ յուրաքանչյուր օրվա համար ողջակեզ մատուցվի Մովսեսի պատվիրածի համեմատ…» (Բ Մնաց. 8.12,13):

Խաչը մեր ամենօրյա զոհն է: Այն Մովսեսի կողմից տրված հրահանգ չէ, այլ՝ կյանքի Տիրոջից տրված պատվիրան: Ցավում եմ, բայց

մենք չափազանց թեթևամտորեն ենք վերաբերվում Նրա խոսքերին, բայց եթե հավատանք և ընդունենք, նրանք կենդանի ու զորավոր կլինեն ազատելու և փրկելու համար:

Վերադառնանք հաղորդության հրավերին: Ինչ է նշանակում հրավիրվել Քրիստոսի հաղորդության սեղանին: Պատասխանելու համար պետք է իմանանք հաղորդություն բառի իմաստը: Այն սահմանվում է որպես միաբանություն, հոգևոր միություն, ապրումակցում, մտերիմ ընկերակցություն և, ի վերջո, փոխհարաբերություն:

> «Որովհետև հիմա հայելու մեջ օրինակով ենք տեսնում, բայց այն ժամանակ՝ դեմառդեմ. հիմա փոքրիշատե եմ տեղյակ, բայց այն ժամանակ այնպես կգիտենամ, ինչպես գիտեցված եմ» (Ա Կորնթ. 13.12):

Լիովին գիտենալ նշանակում է լիարժեք և խորը հայտնություն ունենալ յուրաքանչյուր թերության և անհաջողության, յուրաքանչյուր երազանքի ու փափագի, յուրաքանչյուր վախի և հույսի մասին: Այն նայում է գործողությունից այն կողմ և ընկալում սրտի ծածուկ շարժառիթները: Այն տեսնում է այն բաները, որ ինքներս կույր ենք տեսնելու: Բայց և այնպես սերը մնում է ճշմարիտ և անփոփոխ, նույնիսկ երբ թերություններն ակնհայտ են: Սերը տեսնում է ամեն բան, որովհետև սերը ճշմարիտ զանազանության ետևում գտնվող ուժն է:

Հաղորդության հրավերը առաջարկ է մասնակից լինելու այնպիսի կյանքի ուժի, որը շատ ավելի մեծ է, քան ինքներս: Այն հնարավորություն է այլ աղբյուրից ուտելու, խմելու և կյանքի ուժ ստանալու: Մեզ առաջարկվում է խմել կենդանի ջրից, որը հագեցնում է մեր ծարավը: Եվ է՛լ ավելի, մենք հրավիրված ենք ոչ միայն ընթրելու, այլև բնակվելու, մնալու Նրա մեջ:

> «Ես որթն եմ, դուք՝ ճյուղերը. նա, որ Ինձանում մնում է, և Ես՝ նրանում, շատ պտուղ է բերում, որովհետև առանց Ինձ չեք կարող ոչինչ անել… Ինչպես Իմ Հայրն Ինձ սիրեց, Ես էլ ձեզ սիրեցի. մնացե՛ք Իմ սիրո մեջ: Եթե Իմ պատվիրանները պահեք, Իմ սիրո մեջ կմնաք. ինչպես Ես Իմ Հոր պատվիրանները պահեցի և մնում եմ Նրա սիրո մեջ» (Հովհ. 15.5,9,10):

Ահա պարզ և գեղեցիկ նկարագրություն Քրիստոսի և իրենների միջև փոխհարաբերության մասին: Նա է խաղողի որթը, որից մենք քաղում ենք կյանք, սնունդ և ուժ: Եթե մենք մնանք Նրանում, շատ պտուղ կբերենք: Ի՞նչ է այդ պտուղը:

«Բայց Հոգու պտուղն է՝ սեր, ուրախություն, խաղաղություն, երկայնամտություն, քաղցրություն, բարություն, հավատք, հեզություն, ժուժկալություն…» (Գաղատ. 5.22,23):

Ինչպե՞ս ենք մնում Նրանում: Հովհաննեսի 15.9-ը ասում է մեզ, որ եթե հնազանդվենք, կմնանք Նրանում: Քրիստոսի պատվիրաններին հնազանդվելը մեզ ապահով է պահում, ինչպես որ Նա էր ապահով, երբ հնազանդվեց Իր Հոր պատվիրաններին: Ուստի հնազանդությունը ստեղծում է մթնոլորտ սիրո հաղորդության համար:

«Որովհետև սա է Աստծո սերը, որ Նրա պատվիրանները պահենք, և Նրա պատվիրանները ծանր չեն» (Ա Հովհ. 5.3):

Այս գլխում շատ ուժեղ շեշտադրում արեցի հնազանդության վրա, բայց ես հավատում եմ, որ այն մի արժեք է, որի մասին բավականաչափ չենք խոսում: Հիսուսն այդ մասին խոսում էր շարունակ: Միայն Նոր կտակարանում հնազանդության մասին խոսվում է վաթսունյոթ անգամ: Մենք բոլորս ինչ-որ ժամանակ անհնազանդ ենք եղել և գիտենք, թե ինչպես է դա հեռացնում մեզ արդարության գիտակցումից դեպի մեղքի գիտակցումը, որը բաժանում է մեզ Նրանից: Ես ցանկանում եմ քեզ հրավիրել՝ ճեղքելով անցնել մարմնի վարագույրի միջով և դեն նետել այն ստվերը, որն ընկած է քո և քո Իշխանի միջև: Մեզ առաջարկվում է.

«…դե՛ն գցենք ամեն ծանրություն և մեզ դյուրավ պաշարող մեղքը և համբերությամբ վազենք մեր առջև դրված ասպարեզի ընթացքը: Նայենք հավատքի Զորագլխին և Կատարողին՝ Հիսուսին…» (Եբր. 12.1,2):

Աստված գրել է քո սիրո պատմությունը և խոստացել քայլել քեզ հետ այդ ընթացքի միջով՝ կերակրելով և պահելով քեզ ամբողջ ճամ-

փորդության ժամանակ: Ես ցանկանում եմ, որ հիմա դու Նրան միանաս հաղորդության միջոցով: Երբ սկսես Նրա խոսքով սնվելու և Նրա հավատարմությանը ապավինելու այս ճամփորդությունը, թո՛ւյլ տուր, որ Նա լինի քո կյանքի և զորության աղբյուրը:

Սիրելի՛ երկնային Հայր,

Ես գալիս եմ Քեզ մոտ Հիսուսի անունով: Ես ընդունում եմ Քո հրավերը՝ ուտելու Քո սեղանից, բավականություն ստանալու Քո սիրուց և հավատարմությունից: Ինչպես Հիսուսը ներկայացրեց Իրեն մեղքի զոհ Վերջին ընթրիքին, հիմա ես ընդունում եմ Աստծո ողորմությունը և հետևում Նրա օրինակին: Ես ներկայացնում եմ իմ մարմինը՝ որպես կենդանի պատարագ, սուրբ և ընդունելի Քո առջև, որովհետև ես լվացվել եմ Քո թանկագին Որդու արյունով: Իմ մարմինն այլևս չեմ ներկայացնի անհնազանդությանը և մեղքին: Ես այն նոր ձևով եմ ներկայացնում Քեզ: Շնորհակա՛լ եմ, որ Քրիստոսի կյանքը հոսում է իմ երակներով:

Հիսո՛ւս, Դու ես Կենդանի Որթը, իսկ ես՝ ճյուղը: Ես շնորհակա՛լ եմ, որ տալիս ես ինձ կարողություն մնալու Քո մեջ և պտուղ բերելու: Դու ես իմ կյանքը և զորությունը, և հիմա ես քաշում եմ այդ ջրհորից, որը երբեք չի չորանում: Ես մի կողմ եմ դնում ամեն ծանրություն և մեղք, որ կարող է փորձել ետ պահել ինձ: Թո՛ւյլ տուր ճանաչել Քո սերն այնպես, ինչպես երբեք չեմ ճանաչել: Օգնի՛ր ինձ սիրել Քեզ իմ ամբողջ էությամբ: Ես ընդունում եմ Հոգու կյանքը, որն է՝ ամեն օր ուրանալ իմ անձը, վերցնել իմ խաչը և հետևել Քեզ:

Սիրով՝ Քո դուստր

10 *Քանդել անեծքը*

Ես հանկարծակի արթնացա: Սիրտս արագ բաբախում էր, իսկ շնչառությունս ծանրացել էր: Ստիպված էի ինքս ինձ արթնացնել հերթական սարսափելի մղձավանջից դուրս գալու համար: Դանդաղ բացեցի աչքերս և նայեցի առաստաղին, որտեղ վաղ առավոտյան արևի լույսն էր: Ես տեսա, որ Զոնը կողքիս չէր: Լսողությունս լարեցի, որ լսեի, թե բնակարանի որ մասում նա կլիներ, բայց ոչինչ չլսեցի: Այնուամենայնիվ, ես կանչեցի Զոնին:

Զայնս՝ իմ ականջներին վախեցած և մանկական հնչեց: Այն հիշեցրեց իմ մանկությունը, երբ սարսափելի երազից հետո կանչում էի մայրիկիս... սկզբում՝ շշուկով, ապա, երբ համոզվում էի, որ սենյակում ամեն բան նորմալ էր, կանչում էի ավելի ու ավելի բարձր, մինչև որ սկսում էի աղաղակել, և մայրիկը վազելով գալիս էր ինձ մոտ: Բայց այս անգամ ոչ մի պատասխան չկար:

Ես կրկին կանչեցի Զոնի անունը, նայեցի ժամացույցին և նկատեցի, որ քրտինքի մեջ կորած եմ: Այս անգամ ձայնս ավելի ցածր էր, ավելի հանգիստ, գրեթե հարց տալու պես, որովհետև ժամին նայելով՝ արդեն հասկացա, որ Զոնը գնացել է: Ինչպե՞ս էի կարողացել քնել ամբողջ առավոտ և տեսնել այդ անհանգիստ և խռովիչ երազը, մինչ նա տնից դուրս էր եկել:

Ես փորձեցի հեռացնել ինձնից այդ մղձավանջի ստվերոտ ծածկոցը, որ այն ինձ չհետապնդեր օրվա ընթացքում: Անցած մի քանի ամիսներին ես ունենում էի կրկնվող մղձավանջներ: Այս մեկին ծանոթ էի դեռ մանկուց: Տարին մեկ անգամ այն պատում էր ինձ իր ճանկերով, իսկ հետո՝ անհետանում: Բայց այժմ այն ուժգնորեն հաճախանում էր՝

տարեկան հարձակումներից անցնելով ամսական հարձակումների, ապա՝ շաբաթական տանջանքների: Ի վերջո հասավ նրան, որ այն սկսեց տանջել ինձ ամեն գիշեր՝ խանգարելով իմ հանգիստը:

Վերջին մի քանի շաբաթներին ես վախենում էի քնել, վախենում էի աչքերս փակել, որովհետև գիշերվա մթին ես միայնակ կռվում էի երազիս դեմ: Զոնն ու ես նոր էինք ամուսնացել, և ամեն գիշեր նա ինձ հետ աղոթում էր, որ երազն այլևս չայցելեր ինձ: Ամեն գիշեր Զոնը ամուր գրկում էր ինձ՝ փորձելով պահպանել իմ քունը, բայց երբ Զոնի մարմինը թուլանում էր, և նա քուն էր մտնում, զգում էի, թե ինչպես էին վախի շշուկները մոտենում ինձ: Ես կրկնում էի Սաղմոս 91-ը այնքան, մինչև որ, ի վերջո, քունը պատում էր ինձ:

Այս քունը սկսվում էր երջանիկ երազով, ապա հաջորդում էին ուրիշ երազներ, ինչպես հեռուստացույցի ալիքներն են փոխվում: Հետո սկսվում էր սարսափելի երազը, որից չէի կարողանում ազատվել: Ամեն անգամ այն մի փոքր փոփոխվում էր, չնայած թեման անփոփոխ էր մնում: Ես միշտ գիտեի նրա սյուժեն, հենց որ սկսվում էր: Նույնիսկ իմ քնի մեջ առարկում էի. *«Ո՛չ այս երազը: Ես ատո՛ւմ եմ սա»:*

Երազը միշտ սկսվում էր ծնողներիս տնից: Ես երջանիկ և հուզված հեռանում էի իմ մանկության տնից և ուղևորվում ընկերոջ տուն, դպրոց կամ խանութ (միևնույն է, թե ուր էի գնում): Հետո հանկարծ ամեն բան փոխվում էր: Ես փողոցի անկյունից թեքվում էի, և երկինքն իմ առջև մոխրագույն էր դառնում: Քայլ անելով մթության մեջ՝ տեսնում էի գիշերվա մշուշը: Իմ ետևում՝ ընդամենը մի քանի քայլ այն կողմ, արևը դեռ փայլում էր: Հայտնվելով գիշերվա և ցերեկվա միջև՝ ես գիտակցում էի, որ մթությունը օրվա պահ չէր, այլ խավարի կամ չարի ներկայություն: Ես շրջվում էի և վազում դեպի արևի լույսը և դեպի մեր տուն: Բայց թվում էր, որ ընկել եմ մոխրագույն ու հետզհետե մթնող աղջամուղջի թակարդը: Ես ամբողջ ուժով վազում էի, բայց շատ քիչ էի առաջ գնում, որովհետև արևի լույսը ինձնից շատ հեռու էր մնում: Մարմինս շատ դանդաղ էր տեղաշարժվում, կարծես ինչ-որ խիտ բանի միջով էի անցնում: Վազելիս ետ էի նայում և տեսնում խորը ստվերոտ մթությունը:

> *Հայտնվելով գիշերվա և ցերեկվա միջև՝ ես գիտակցում էի, որ մթությունը օրվա պահ չէր, այլ խավարի կամ չարի ներկայություն:*

Այդտեղ էր, որ ես տեսնում էի, թե ինչպես էին նրանք քայլում... միշտ քայլում: Երեք ստվերի նման կերպարանքներ հեշտությամբ մոտենում էին ինձ: Յուրաքանչյուր քայլափոխի նրանք կրճատում էին մեր միջև տարածությունը՝ չնայած իմ ամբողջ ուժով վազելուն: Ես սարսափով երեսս թեքում էի նրանցից ու ավելի ջանք գործադրում՝ ճեղքելու մշուշը: Բայց իմ առաջ գնալու հուսահատ փորձերը ոչինչ էին՝ համեմատած նրանց հաստատուն քայլերի: Ես հեռվից տեսնում էի իմ տունը, բայց կարծես այն հարյուրավոր մղոններ հեռու լիներ: Ինձ ոչ մի կերպ չէր հաջողվում անցնել տարածությունը:

Ես ետ էի նայում և տեսնում, թե ինչպես էին կերպարանքները հետևում ինձ: Շուտով նրանք այնքան մոտեցան, որ ես կարողացա ավելին տեսնել, քան պարզապես նրանց ուրվագծերն էին: Դրանք երեք տղամարդ էին, քայլող մեռելներ՝ տարբեր աստիճանի նեխած վիճակում: Մեկը հենց նոր էր մահացել, մյուսը մասամբ էր նեխած, իսկ վերջինը ոչ ավել էր, քան կմախք՝ գլխին մի փունջ մազ: Նրանց հագուստները նույնպես արտացոլում էին նեխածության աստիճանը. մեկը ամբողջովին հագնված էր, երկրորդը կրում էր պատռված հանդերձներ, իսկ կմախքի հագուստը նման էր քրջերի, որոնք կախված էին ոսկորներից: Նրանք քայլում էին ուս-ուսի տված՝ միանգամայն ուղիղ գծով, առանց մեկը մյուսի հետ բառ կամ հայացք փոխանակելու: Նրանք շարժվում էին մեկ նպատակով՝ հասնել ինձ:

Երբ ավելի էին մոտենում, իմ շարժումներն ավելի անհամաչափ էին դառնում, քանի որ ինձ համակում էին վախն ու խուճապը: Ես սայթաքում կամ ընկնում էի այն նույն մայթին, որտեղով երեխա ժամանակ վազել եմ ամեն օր: Ի վերջո, ես բղավում էի նրանց վրա, որովհետև հասկանում էի, որ չեմ կարող նրանցից փախչել:

- Ովքե՞ր եք, հեռացե՛ք: Դուք մեռած եք: Թողե՛ք ինձ:

Նրանք երբեք ինձ չէին պատասխանում, ոչ էլ կանգ էին առնում: Կարծես ինձ չէին լսում: Նրանք շարժվում էին ինչ-որ անտեսանելի ուժի հրամանով: Ես շարունակում էի վազել, իսկ նրանք շարունակում էին քայլել՝ ամեն անգամ ավելի մոտենալով ինձ: Հետո հանկարծ այնքան էին մոտենում, որ սարսափում էի նայել նրանց և սկսում էի քարեր կամ փայտեր նետել նրանց վրա, բայց ոչինչ նրանց չէր կանգնեցնում: Ի վեր-

ջո, ինչո՞ւ պետք է որևէ բան նրանց վնասեր, չէ՞ որ նրանք արդեն մեռած են: Իմ քրտնաջան փորձերը միայն դանդաղեցնում էին իմ առաջընթացը:

Հետո տեղի էր ունենում սարսափելին: Նրանք հասնում էին ինձ՝ փորձելով բռնել: Սարսափն այնքան ուժեղ էր լինում, որ ես կտրուկ արթնանում էի:

Ես դուրս եկա ննջասենյակից և սկսեցի շրջել մեր փոքրիկ բնակարանի խոհանոցով: Իմ մտքում այնքան շատ հարցեր ծագեցին, որ չէի կարող բոլորին պատասխանել:

Ինչո՞ւ էր դա պատահում այն ժամանակ, երբ ես դավանում էի Խոսքը և աղոթում: Մի՞թե Աստված ավելի զորավոր չէր, քան այդ երազը: Ինչո՞ւ Նա չէր կանգնեցնում դա: Որպես քրիստոնյա՝ ինչպե՞ս կարող էի ունենալ այդքան փոքր զորություն և պաշտպանվածություն:

Հեռախոսը զանգեց, և ես, տեղիցս ցատկելով, վերցրի լսափողը:

- Ալո՛, - մի փոքր գրգռված պատասխանեցի:

- Ողջո՛ւյն, սիրելի՛ս: Ես չէի ուզում արթնացնել քեզ, երբ տնից դուրս եկա: Դու այնքան լավ էիր քնած: Ես գիտեմ, որ մի քանի անհանգիստ գիշերներ ես ունեցել, ուստի, ցանկացա, որ լավ քնես,- ասաց Զոնը:

- Կուզեի, որ արթնացրած լինեիր: Ես կրկին երազ էի տեսնում:

- Կներես, կարթնացնեի, եթե իմանայի:

- Զո՛ն, ինչո՞ւ դա չի ավարտվում: Մենք աղոթեցինք անցած գիշեր,- հարցրի ես:

- Ես չգիտեմ,- ազնվորեն պատասխանեց Զոնը:

Նրա ձայնից երևաց, որ նա նույնպես անհանգիստ էր:

Մենք մի քիչ էլ խոսեցինք, հետո ես կախեցի լսափողը և գնացի հյուրասենյակ՝ կարդալու Աստվածաշունչը, բայց զգում էի, որ միտքս կարծես մշուշի մեջ էր: Ես պայքարում էի, որ արթուն մնամ և կենտրոնանամ կարդացածս խոսքերի նշանակության վրա: Ինձ թվում էր, որ կրկին փորձում էի փախչել իմ երազից: Հետզհետե քունը պատում էր ինձ, իսկ ես աշխատում էի անհարմար դիրքեր գրավել, որպեսզի արթուն մնայի, բայց ուղեղս աստիճանաբար մթագնում էր:

Ես աղոթեցի. «Աստվա՛ծ, խնդրո՛ւմ եմ, ցո՛ւյց տուր ինձ մի բան կամ մեկին, ով կարող է օգնել»:

Գրեթե անմիջապես, ինչպես պատասխան, ես մտածեցի մի մար-

դու մասին, ով որդեգրել էր ինձ՝ որպես իր դուստր, երբ տեղափոխվել էի Դալլաս: Ես վեր կացա բազմոցից և զանգեցի նրան: Ինձ հաջողվեց միանալ նրան, և արտասվելով պատմեցի ամբողջ պատմությունը՝ ավարտելով հետևյալ դժգոհությամբ. «Որպես քրիստոնյա՝ ես չեմ հավատում, որ սա է ավելցուկով կյանքը»:

Նա ասաց, որ համաձայն է ինձ հետ, և բացատրեց, որ ինձ կուղարկի երեք լսաժապավեն, որոնք պետք է լսեմ, երբ մենակ լինեմ, և դրանք լսելուց հետո զանգեմ նրան, որպեսզի խոսենք: Ես ստիպեցի նրան խոստանալ, որ դրանք շուտ կուղարկի, և կախեցի լսափողը: Առաջին անգամ ես հույսի նշույլ զգացի: Բացեցի վարագույրները՝ ներս հրավիրելով տեխասյան արևի ճառագայթներին, և մտա լոգարան:

Գիշերվա սարսափելի երազը շարունակվեց ևս մի քանի օր, մինչև որ ստացա լսաժապավենների փաթեթը: Ես այնքան հուզված էի, որ կարծես դրանք ծննդյան նվեր լինեին: Մտա ճաշասենյակ, պատրաստեցի նոթատետրը, Աստվածաշունչը, հաստ թանաքով գրիչը և ձայնարկիչը: Ես աղոթեցի.

- Հա՛յր, թո՛ւյլ տուր իմանալ ճշմարտությունը, և թող այն ազատի ինձ: Բացի՛ր աչքերս՝ տեսնելու, ականջներս՝ լսելու, և սիրտս՝ հավատալու համար: Հիսուսի՛ անունով: Ամե՛ն:

Միացրի առաջին լսաժապավենը: Ձայնագրությունն այնքան էլ լավը չէր, և ես լարված փորձում էի ընկալել բառերը: Մի ծեր մարդ էր, որը սովորեցնում էր այնպիսի բաներ, որ երբևէ չէի լսել, բայց միևնույն ժամանակ կարծես գիտեր, թե ինչի դեմ էի պայքարում: Նա սկսեց՝ բացատրելով, որ շատ քրիստոնյաներ վախենում են քննարկել հոգևոր պատերազմի թեման, որովհետև հավատում են, որ այդպես անելով ավելի կուժեղացնեն չար ուժերին: Որպես արդյունք՝ մենք հաստատ չենք կանգնում չարի դեմ պայքարում, այլ՝ վախից նահանջում ենք: Նա բացատրեց, որ սատանան արդեն գործում է ամբողջ ուժով, և մերկացնելով խավարի գործերը՝ մենք թուլացնում ենք նրա զորությունը, այլ ոչ

> *Շատ քրիստոնյաներ վախենում են քննարկել հոգևոր պատերազմի թեման, որովհետև հավատում են, որ այդպես անելով ավելի կուժեղացնեն չար ուժերին:*

թե ավելացնում: Նա բացատրեց, որ սատանայի գործն է եղբայրներին մեղադրելը: Նրան պետք է հակառակ կանգնել հաստատուն հավատքով և Աստծո Խոսքով: Հետո քարոզիչը խոսեց ժառանգական մեղքերից և անեծքներից: Առաջին երկու լսաժապավենները կազմված էին ուսմունքներից, իսկ երրորդը աղոթքին ժամանակ տրամադրելու մասին էր: Ես զուգահեռ կարդում էի Աստվածաշունչը և տեսնում ճշմարտություններ, որոնք նախկինում երբեք այդպես ակնհայտ չէին եղել ինձ համար:

> *Անկախ Աստծո խոստմունքների քանակից կամ մեծությունից՝ Նրա պատասխանը միշտ «այո» է Քրիստոսում:*

Այժմ միգուցե այս ճշմարտությունները ձեզ համար նոր չլինեն, բայց այն ժամանակ՝ 1982 թվականին, դրանք բավականին արմատական հասկացողություններ էին: Ամենաուժեղ և դինամիկ ճշմարտություններից մեկը, որ այդ օրը ես սովորեցի և ուզում եմ ձեզ հետ կիսել, մեր կյանքում Աստծո խոստումները սեփականացնելու սկզբունքն է:

> «Որովհետև որքան Աստծո խոստմունքներ որ կան, նրանում է «այո»-ն, և նրանում է «ամեն»-ը Աստծո փառքի համար՝ մեզանով» (Բ Կորնթ. 1.20):

Սա ահռելի խոստում է: Անկախ Աստծո խոստմունքների քանակից կամ մեծությունից՝ Նրա պատասխանը միշտ «այո» է Քրիստոսում: Թո՛ւյլ տուր լուսաբանել սա Հին կտակարանի օրինակով: Աստված Մովսեսի և Իսրայելի որդիների առջև դրեց օրհնություններ և անեծքներ: Ժողովուրդը «ամեն» ասելով՝ հաստատում էր օրհնությունների ցուցակը: «Ամեն» բառը նշանակում է՝ «թող լինի այդպես»: Սրա օրինակը կարելի է գտնել Երկրորդ Օրինաց գրքում:

> «Ահա Ես այսօր ձեր առջև դնում եմ օրհնություն և անեծք. օրհնությունը, եթե լսեք ձեր Եհովա Աստծո պատվիրաններին, որոնք Ես այսօր ձեզ պատվիրում եմ, և անեծքը, եթե չլսեք ձեր Եհովա Աստծո պատվիրաններին...» (Երկր. Օր. 11.26-28):

Օրենքի տակ, եթե Տիրոջ պատվիրանը խախտվեր, յուրաքանչ-

յուր օրհնությանը կպած էր անեծք: Բայց Քրիստոսը քանդեց օրենքի զորությունը:

> «Քրիստոսը գնեց մեզ օրենքի անեծքից՝ մեզ համար անեծք լինելով (որովհետև գրված է, թե անիծյալ լինի ամեն փայտից կախվածը), որ Աբրահամի օրհնությունը հեթանոսների մեջ լինի Քրիստոս Հիսուսով, որ մենք Սուրբ Հոգու խոստմունքն ընդունենք հավատքով» (Գաղատ. 3.13,14):

Քրիստոսում մենք ժառանգում ենք Աբրահամի օրհնությունները: Մովսեսի օրհնությունը ստանալու համար, մենք պետք է լինեինք Իսրայելի սերնդից, բայց Աբրահամի օրհնությունը տարածվում է հեթանոսների վրա: Քրիստոսում նրանք, ովքեր օրենքից դուրս էին, հավատքի միջոցով մտան նոր և կենդանի ուխտի մեջ: Ուստի, Քրիստոսում մենք լսում ենք՝ «այո», և ոչ թե՝ «եթե պահես օրենքը, այո՛»: Կրկին ուշադրություն դարձրեք Կորնթացիների երկրորդ թղթի 1.20-րդ խոսքին.

«Որովհետև որքան Աստծո խոստմունքներ որ կան, նրանում է «այո»-ն, և նրանում է «ամեն»-ը Աստծո փառքի համար՝ մեզանում»:

Մենք ասում ենք «ամեն» կամ՝ «թող լինի այդպես»: Մենք նայում ենք Խոսքին և հետո հավատքով մոտենում, որ Խոսքը կարողանա մարմին դառնալ մեր կյանքում: Կյանքում մենք Խոսքը յուրացնում ենք հավատքի միջոցով: Մենք հնազանդեցնում ենք մեր կամքը և կյանքը Նրա ճշմարտությանը՝ ասելով. «Ես ընդունում եմ Քո գրավոր Խոսքը իմ սրտի մեջ: Թող այն իր գործն անի իմ կյանքում»:

Երբ Խոսքը հանդիմանում է մեզ, մենք ապաշխարում ենք և հնազանդվում Նրան: Երբ Խոսքը մարտահրավեր է նետում մեզ, մենք ասում ենք. «Ես հավատում եմ, Տե՛ր, օգնի՛ր իմ անհավատությանը»: Մենք հռչակում ենք. «Թող Տիրոջ Խոսքը մնա հավիտյան և փառավորվի իմ կյանքում»:

Այդ օրը, երբ լսում էի այդ լսաժապավենները, Խոսքի հայելու միջով ես շատ հստակ տեսա իմ կյանքի այն բնագավառները, որտեղ կարիք ունեի հրաժարվել խավարի հետ կապված իմ նախկին գործերից և խոստովանել հայրերի մեղքը: Ես կարողացա տեսնել իմ, ծնողներիս

և ծնողներիս ծնողների կյանքում գոյություն ունեցող անեծքների մուգ ստվերը: Միևնույն ժամանակ ես տեսնում էի Քրիստոսի օրհնությունը, որը սավառնում էր իմ և իմ ապագա սերունդների վրա՝ սպասելով մեկին, ով կկանգներ և կասեր՝ այո՛: Ես այնպիսի ահռելի պատասխանատվություն զգացի, որ ծնկի իջա Տիրոջ առջև, խոստովանեցի և հրաժարվեցի իմ և իմ ընտանիքի ժառանգական մեղքերից: Ես զգում էի, թե ինչպես էին արձագանքում Եզեկիայի խոսքերը.

> «Հիմա իմ սրտինը սա է, որ ուխտ անենք Իսրայելի Տեր Աստծո հետ, որ Նրա բարկության բորբոքումը ետ դառնա մեզնից» (Բ Մնաց. 29.10):

Եզեկիան խոստովանեց իր հայրերի հանցանքը և հռչակեց իր ուխտը Աստծո հետ: Ես գիտեի, որ իմ ցեղը կազմված էր հեթանոսների մի երկար շղթայից՝ մեղքերի երկար ցուցակով: Իհարկե, ես ի վիճակի չէի առանձին-առանձին խոստովանել նրանց մեղքերը: Աստծո առջև ինձ մեղավոր ճանաչելով՝ տեսա, որ իմ կյանքում կային որոշ կոնկրետ բաներ, որոնց մեջ ես մեղավոր էի:

> *Ես տեսնում էի Քրիստոսի օրհնությունը, որը սավառնում էր իմ և իմ ապագա սերունդների վրա՝ սպասելով մեկին, ով կկանգներ և կասեր՝ այո՛:*

- Ես ներգրավված էի եղել կախարդության, աստղագուշակության, ինչպես նաև այլ կասկածելի գրքերի, խաղալիքների և կինոնկարների մեջ:
- Օգտագործել էի թմրադեղեր և ալկոհոլ:
- Սեռական մեղքի մեջ էի եղել:

Նույնիսկ չէի գիտակցել, որ պատահական մասնակցությունը այսպիսի բաներին կարող է մահացու լինել: Ես հիշում եմ, թե ինչպես էի կարդում իմ ծնողների գիրքը աստղագուշակության նշանների մասին: Ես նաև սովորություն ունեի կարդալ իմ հորոսկոպը, նույնիսկ եթե դա պարզապես ծիծաղելու համար էր: Մի անգամ՝ Ծննդյան տոներին, ինձ նվիրել էին ապագան գուշակելու տախտակ: Ես դրանով այնքան շատ խաղացի, մինչև որ վախեցա՝ տեսնելով, թե ինչպես է այն շարժվում:

Նախքան քրիստոնյա դառնալը ես սիրում էի կարդալ սարսափելի

պատմություններ և հիանում էի գերբնական բաներով: Իհարկե, հիմա հավատում եմ, որ դա ծարավ էր աստվածայինի նկատմամբ, որը ես փորձում էի բավարարել ոչ ճիշտ ճանապարհով, այնուամենայնիվ, այն ինձ դրեց ոչ թե օրհնության, այլ անեծքի տակ:

Իմ տատիկն ու պապիկը հարբեցողներ են եղել, և ես ինքս սկսել եմ խմել տասնչորս տարեկան հասակից և այդպես շարունակել մինչև քսանմեկ տարեկան: Մի քանի անգամ մարիխուանա եմ փորձել, իսկ քոլեջում օգտագործել եմ կոկային: Այս ամենը դուռ են բացել ավելի շուտ անեծքի, քան օրհնության:

Ինձնից առաջ եղած սերունդներին նայելով՝ ես նկատեցի, որ կան նաև այլ բաներ: Իմ տատիկը քաղցկեղով հիվանդ է եղել: Մայրիկս քաղցկեղով հիվանդ է եղել, ես՝ նույնպես: Երեք սերունդ: Տատիկիս մայրը երկու անգամ է ամուսնացել: Տատիկս ամուսնալուծվել է և կրկին ամուսնացել առաջին ամուսնու հետ: Ապա կրկին ամուսնալուծվել է և ամուսնացել երկրորդ ամուսնու հետ, այնուհետև կրկին ամուսնալուծվել է և ամուսնացել երրորդի հետ, որն էլ մահացել է սրտի կաթվածից, բուռն վիճաբանության ժամանակ: Հայրիկիս մայրը ամուսնացել է երկու անգամ: Իմ հայրն ու մայրը ամուսնալուծվել են, կրկին ամուսնացել, հետո նորից ամուսնալուծվել, և հայրս ի վերջո գնացել է ուրիշ կնոջ մոտ, որի հետ երբեք չի ամուսնացել: Իմ տատիկը մեկ անգամ վիժել է և մահից փրկվել մյուսին ծննդաբերելու ժամանակ: Մայրս վիժել է երեք անգամ: Ինչո՞ւ է այս ամենը տեղի ունեցել և դեռևս շարունակվում է:

> «Եվ Եհովան նրա առջևից անցավ և կանչեց. «Եհո՛վա, Եհո՛վա, Աստված ողորմած և գթած՝ երկայնամիտ և առատ ողորմությունով և ճշմարտությունով, որ հազարների ողորմություն ես անում, որ անօրենություն՝ հանցանք և մեղք ես ներում, բայց հանցավորին բնավ անպարտ չես թողնում, որ հայրերի անօրենությունը հատուցում ես որդիներին և որդիների որդիներին՝ մինչև երրորդ և չորրորդ ազգը»» (Ելից 34.6,7):

Ես զգում էի, որ եթե ոչինչ չարվեր, այս բաները կշարունակվեին իմ կյանքում, իմ ամուսնության մեջ, և եթե թույլ տրվեր, նաև իմ՝ դեռ

չծնված երեխաների կյանքում: Աստված ցույց էր տալիս, թե ինչպես պետք է դադարեցնել այս անեծքների ընթացքը: Երբ նայեցի այս խոսքին, տեսա և՛ խոստում, և՛ պատճառ: Ես երրորդ և երբեմն չորրորդ սերունդն էի այս մեղքերի շղթայում: Դա հստակ պատճառներից էր, բայց մեկ ուրիշ տարբերակում ես գտա իմ խոստումը:

> «Նրանց երկրպագություն չանես և նրանց չպաշտես, որովհետև Ես՝ քո Եհովա Աստված, նախանձոտ Աստված եմ, որ կհատուցեմ հայրերի անօրենությունը որդիներին մինչև երրորդ ու չորրորդ ազգը, որ ատում են Ինձ: Եվ կողորմեմ նրանց մինչև հազար ազգը, որ սիրում են Ինձ և Իմ պատվիրանները պահում» (Ելից 20.5,6):

Ես ուզում էի լինել հազար ազգի, հազար սերնդի սկիզբը, ով սիրում է Աստծուն և պահում Նրա պատվիրանները: Սա իմ հնարավորությունն էր՝ ապաշխարել նախորդ սերունդների մեղքերից և ուխտ կնքել ողորմած Աստծո հետ: Նա պարզապես սպասում էր ինձ, որ կանչեի Իր անունը, որպեսզի կարողանար Իր սերը ցուցաբերել հազար սերունդների: Ես հուզմունքից դողում էի, երբ գիտակցում էի՝ ինչպես կանդրադառնար իմ ընտրությունը և հնազանդությունը իմ և ինձնից հետո եկողների կյանքում:

Ժապավենների միջոցով ես տեսա մեկ այլ գերություն ևս, որի մասին մինչ այդ տեղյակ չէի: Դա շնչավոր կապանքների սկզբունքն էր, և ես իրականում ունեի որոշ անառողջ կապանքներ, որոնք պետք է քանդվեին: Ես հավատում եմ, որ մենք կարող ենք քանդել գերության շղթաները առանց մանրամասն խորանալու դրանց մեջ: Հիսուսը քշում էր դևերին և մարդկանց ազատ էր արձակում՝ առանց սեմինար անցկացնելու դևերի մասին: Երբ տեսնում էր շղթաներ, Նա քանդում էր դրանք, երբ տեսնում էր դևեր, քշում էր նրանց, երբ տեսնում էր հիվանդություններ և ցավեր, բժշկում էր, երբ տեսնում էր մեղքով բռնվածներ, ներում էր և իրավունք տալիս գնալու և այլևս մեղք չգործելու:

> *Ես հուզմունքից դողում էի, երբ գիտակցում էի՝ ինչպես կանդրադառնար իմ ընտրությունը և հնազանդությունը իմ և ինձնից հետո եկողների կյանքում:*

Ես սիրում եմ Հիսուսին, որովհետև Նա այնքան իրական է, այն-

քան գործնական և այնպես տեղին ու ժամանակին է գործում: Նա գիտեր, որ ես կապված էի, և իմ ձեռքերի մեջ դրեց ճշմարտություններ, որոնք ի զորու էին ինձ ազատ արձակելու: Հիմա, իմ հերթին, ես այս ճշմարտությունները դնում եմ ձեր ձեռքերի մեջ: Նրանց զորությունը չի պակասում, որովհետև ճշմարտությունը խտրականություն չի դնում մարդկանց միջև, այլ ազատում է նրան, ով դիմում և պատվում է Աստծուն:

Այսպիսով, որն է շնչավոր կապանքը: Սա տեղի է ունենում այն ժամանակ, երբ մեր շունչը կամ մեր անձը կապվում են մեկ ուրիշի հետ: Սա կարող է լինել թե՛ լավ, թե՛ վատ բան: Մոր անձը կապված է նորածին երեխայի հետ, բայց երբ նա մեծանում է և դառնում տղամարդ, մոր հետ փոխհարաբերությունը պետք է փոխվի, որպեսզի նա կարողանա իր սիրտը տալ իր կնոջը: Ամուսնու շունչը (անձը) պետք է կապվի հարսնացուի հետ, որպեսզի երկուսը մեկ մարմին դառնան: Նա թողնում է իր մորն ու հորը և հարում կնոջը: Սրանք լավ և առողջ կապեր են, որ միացնում են մեր սրտերը սիրո մեջ: Նման առողջ կապեր կարող են լինել նաև ընկերության մեջ: Դավիթն ու Հովնաթանը հենց այսպիսի փոխհարաբերություն ունեին: Մենք դա տեսնում ենք հետևյալ տողերում.

> «Եվ երբ որ Սավուղի հետ խոսեց և վերջացրեց, Հովնաթանի սիրտը կապվեց Դավթի սրտի հետ, և Հովնաթանը նրան իր անձի պես սիրեց… Եվ Հովնաթանն ու Դավիթը ուխտ արին, որովհետև նա իր անձի պես սիրում էր նրան» (Ա Թագ. 18.1-3):

> «Եվ Հովնաթանը Դավթին ասաց. «Գնա՛ խաղաղությամբ, ինչպես որ մենք երկուսս Տիրոջ անունով երդում արինք և ասացինք, թե Տերը իմ ու քո մեջ և իմ սերնդի ու քո սերնդի մեջ վկա լինի հավիտյան»» (Ա Թագ. 20.42):

Այս դաշինքը և միությունը պահպանեցին Դավթի կյանքը, իսկ հետագայում՝ Հովնաթանի հետնորդների կյանքը: Այս երկու մարդիկ կապվեցին ուխտով՝ զոհելով նույնիսկ իրենց սեփական հարմարավետությունը կամ դիրքը: Հովնաթանը զիջեց իր թագավորական իրավունքը այն պատճառով, որ սիրում էր Դավթին և գիտեր, որ Աստծո

ձեռքը նրա կյանքի վրա է: Ես համոզված եմ, որ դու էլ ունես այսպիսի ընկերություն քո կյանքում: Դա կարող է լինել քո քրոջ կամ մտերիմ ընկերոջ հետ: Դուք առանց խոսքի իրար հասկանում եք: Իմ և տղաներիս միջև լինում են ժամանակներ, երբ ես ոչ միայն գիտեմ, թե ինչ են նրանք մտածում, այլև՝ ինչ են նրանք զգում:

Մինչ այժմ մենք քննարկեցինք ընկերների և ծնողների միջև գոյություն ունեցող առողջ կապերի մասին: Բայց ավելի խորը գնանք և նայենք ամուսինների միջև կապին: Այդ կապը սկսվեց Ադամից և Եվայից: Սա երկուսը մեկ դառնալու առեղծվածն է. մեկ տղամարդ, մեկ կին, մեկ մարմին: Հիսուսը դա նկարագրեց այսպես.

> «Բայց ստեղծագործության սկզբից Աստված նրանց արու և էգ ստեղծեց և ասաց. «Սրա համար մարդը իր հորը և մորը կթողնի և կնոջը կհարի, և երկուսը մեկ մարմին կլինեն. այնպես որ, այլևս երկու չեն, բայց մեկ մարմին: Ուրեմն, ինչ որ Աստված միավորեց, թող մարդը չբաժանի» (Մարկ. 10.6-9):

Սա ակնհայտորեն վերաբերում է Ծննդոց գրքում նշված սկզբնական ծրագրին: Ամուսինն ու կինն այլևս երկու չեն, այլ՝ մեկ: Այս միաձուլումը զորավոր է և կյանք տվող: Առաջինը՝ հոգիները միացած են սիրով: Հետո նրանց սերը վերածվում է ուխտի, երբ նրանք Աստծո առջև միմյանց խոստումներ և երդումներ են տալիս: Սա գագաթնակետին է հասնում սեռական միության մեջ, երբ նրանց մարմինները ձուլվում են: Ի վերջո, տղամարդու սերմը տնկվում է կնոջ արգանդի մեջ, և ծնվում է մի նոր կյանք:

Սեռական միության միջոցով կատարյալ է դառնում նրանց մտավոր, ֆիզիկական և հոգևոր միությունը: Սա միաբանության բարձրագույն մակարդակն է, որովհետև այն առաջանում է մտերմության երեք մակարդակներում: Մինչ այս միությունը, յուրաքանչյուր անհատ ամբողջական է ինքն իրենով, բայց երբ միացումը տեղի է ունենում, երկուսը մեկ են դառնում: Նրանք երկուսով հիմա ավելի ուժեղ են, քան առանձին-առանձին: Սա ոչ թե նվազեցնում է, այլ՝ լրացնում: Սա նաև բացատրում է այն, թե ինչու է այդքան կործանարար, երբ երկուսը, լինելով մեկ, անցնում են դավաճանության կամ ամուսնալուծության

միջով: Դա վիրավորում և պատռում է նրանց հոգիները: Միայն ամուսիններն ու կանայք պետք է միացած լինեն այս երեք մակարդակներում: Անձերի այս միացումը կարող է տեղի ունենալ սեռական մակարդակում ինչպես ամուսնության մեջ, այնպես էլ ամուսնությունից դուրս: Երբ տղամարդն ու կինն ունենում են սեռական հարաբերություն, նրանց միջև սեռական շնչավոր կապ է ստեղծվում: Այլ խոսքով՝ իրականում չկա «ուղղակի, պատահական սեռական հարաբերություն»: Կապը երկու կողմերին էլ անփոփոխ չի թողնում՝ թե՛ շնչավոր, թե՛ ֆիզիկական առումով:

> *Իրականում չկա «ուղղակի, պատահական սեռական հարաբերություն»: Կապը երկու կողմերին էլ անփոփոխ չի թողնում:*

Վերջերս հեռուստատեսությամբ մի հետաքրքիր փաստ լսեցի ՁԻԱՀ-ի մասին: Երբ սեռական հարաբերություն ես ունենում ինչ-որ մեկի հետ, դու իրականում կենսաբանորեն սեռական կապի մեջ ես մտնում տվյալ մարդու և այն բոլորի հետ, ում հետ նա կենակցել է վերջին յոթ տարիներին: Այս կապերի ֆիզիկական հետևանքը պահպանվում է յոթ տարի:

> *Հետագայում աղջկա հետ ամուսնանալու նրա ցանկությունը չվերացրեց նախկին բռնությունը: Ամուսնությունից դուրս սեռական հարաբերությունը միշտ կլինի բռնություն (պղծություն), նույնիսկ եթե դուք նշանված եք:*

Ծննդոցում տեսնում ենք այսպիսի մի հանդիպում Դինայի (Լիայի ու Հակոբի դստեր) և իշխան Սյուքեմի միջև:

> «Եվ այն երկրի իշխան խևացի Եմովրի որդի Սյուքեմը տեսավ նրան, առավ ու պառկեց նրա հետ և պղծեց նրան: Եվ նրա հոգին Հակոբի Դինա աղջկան հարեց և սիրեց այդ աղջկան և աղջկա հետ քաղցրությամբ խոսեց: Եվ Սյուքեմը խոսեց իր հայր Եմովրի հետ՝ ասելով. «Այս դստերը ինձ համար կին առ»» (Ծնն. 34.2-4):

Սրանից հետո Սյուքեմի հոգին կապվեց Դինայի հետ, և նա ցանկացավ, որ Դինան դառնա իր կինը: Ուշադրություն դարձրեք, այստեղ ասվում է, որ նա «պղծեց (անգլ.՝ բռնության ենթարկեց) նրան»: Հետագայում աղջկա հետ ամուսնանալու նրա ցանկությունը չվե-

ռացրեց նախկին բռնությունը: Ամուսնությունից դուրս սեռական հարաբերությունը միշտ կլինի բռնություն (պղծություն), նույնիսկ եթե դուք նշանված եք: Եթե նա աղջկան իրեն կին առներ սկզբից, հետո պառկեր նրա հետ, ապա այսպիսի պղծություն չէր լինի, ամեն ինչ այլ կերպ կընթանար:

Քննենք, թե ինչպիսի հաջորդականությամբ դա տեղի ունեցավ. նա տեսավ աղջկան, հրապուրվեց նրանով, պառկեց նրա հետ, պղծեց նրան, հետո նրա հոգին կապվեց աղջկա հետ: Նա սիրեց աղջկան, քաղցրությամբ խոսեց նրա հետ, հետո խնդրեց իր հորը, որ նրան կնության վերցնի: Նա կարծես ամեն ինչ հակառակն արեց:

Եթե Սյուքեմը սկզբում խոսեր իր հոր հետ և խնդրեր, որ այդ աղջկան իր համար կին առներ, ամեն ինչ այլ կերպ կընթանար: Ինձ հետաքրքիր է, երբ նա Դինայի հետ քաղցրությամբ խոսեց, արդո՞ք այսպես ասաց. «Մի՛ անհանգստացիր: Ամեն ինչ լավ կլինի, ես կամուսնանամ քեզ հետ և կուղղեմ այս սխալը»: Հետաքրքիր է նաև այն, որ մեզ ոչինչ չի ասվում Դինայի զգացմունքների մասին: Նա գայթակղվե՞ց, թե՞ բռնաբարվեց: Արդյո՞ք նա ընդհանրապես ցանկանում էր նրա կինը դառնալ: Նայելով դեպքերի ընթացքին՝ մենք տեսնում ենք, որ աղջիկը պարզապես զոհ էր, և ինչ որ կատարվեց, կատարվեց նրա կամքից դուրս:

Երբ ձևավորվում են անառողջ հոգեկան կապեր, առկա են վախն ու վերահսկողությունը և ոչ թե միաբանությունն ու ընկերությունը: Եվ անառողջ կապերում ավելի հաճախ կանայք են դառնում զոհեր: Իհարկե, այս պատմությունը երջանիկ վախճան չունի, իշխանը սպանվում է, և Դինան մնում է միայնակ:

Կատարյալն այն է, երբ դու սեռականորեն միանում ես միայն մեկ մարդու հետ, որովհետև սեռական մերձեցումը պահված է երկուսի միության համար՝ ամուսնության ուխտի ներքո: Այստեղ սեռական մերձեցումը պղծություն չէ, այլ հակառակը: Երբ մենք պղծում ենք ինչ-որ բան, մենք անարգում և ապականում ենք այն:

Արտամուսնական սեռական հարաբերությունը անարգում է ամուսնությունը, յուրաքանչյուր մասնակցին և Աստծուն, բայց սեռական հարաբերությունն ամուսնական ուխտի ներքո պատվում է Աստ-

ծուն, ամուսնուն և կնոջը: Այդ պատճառով մեզ հորդորվում է սուրբ պահել ամուսնական անկողինը:

> «Ամուսնությունը ամեն կողմից պատվական է, և անկողինը՝ սուրբ, բայց շնացողներին և պոռնիկներին Աստված կդատի» (Եբր. 13.4):

Մենք պատվում ենք մեր ամուսնությունը՝ սուրբ պահվելով մեր ապագա ամուսինների համար: Մենք պատվում ենք մեր ամուսնական անկողինը նաև ամուսնությունից հետո՝ երբեք թույլ չտալով ուրիշներին կամ որևէ այլ բան՝ նսեմացնելու սեռական մերձեցման գեղեցկությունը (ինչպիսք են, օրինակ, պոռնոգրաֆիան, մաստուրբացիան (ձեռնաշարժություն), այլասեռությունը կամ պղծությունը):

> *Երբ ես պետք է լիակատար անկաշկանդությամբ տրվեի իմ ամուսնուն, զգացի, որ շղթայված էի անցյալով:*

Այս ամենը ինձ համար նորություն էր: Ես ունեի բավականին գունագեղ անցյալ, և հիմա, ամուսնացած լինելով, իմ խայտաբղետ անցյալի տգեղ դեմքերն ու հիշողությունները գլուխ էին բարձրացնում: Երբ ես և Զոնը մենակ էինք լինում, հանկարծ վերապրում էի ինչ-որ արգելված ֆիլմից մի սարսափելի պատկեր, որը տեսել էի հինգ տարի առաջ քոլեջում: Կամ էլ սկսում էի ամոթից քարանալ՝ հիշելով նախկին ընկերոջ հետ ունեցած անցյալի սեռական կապերը: Դա սարսափելի էր: Իհարկե, այսպիսի բաներն ինձ չէին անհանգստացնում, երբ հեթանոս էի, բայց հիմա, լինելով ամուսնացած քրիստոնյա, դա կարծես սեռական ռումբ լիներ ժամանակի հաճախականությամբ:

Երբ ես պետք է լիակատար անկաշկանդությամբ տրվեի իմ ամուսնուն, զգացի, որ շղթայված էի անցյալով: Ամուսնության մեջ ես կապված էի, իսկ շնության մեջ ոչ մի կաշկանդվածություն չունեի: Ի՜նչ սարսափելի է: Զոնը արժանի էր ինձ ամբողջությամբ, իսկ ես այլևս ընդունակ չէի սեռական ազատության իմ անցյալի պղծությունների պատճառով: Ես պայքարում էի պիղծ մտքերի, պատկերների, համեմատությունների և ամոթի հետ: Ես պատերազմում էի դրանց դեմ, բայց կարծես անօգուտ, մինչև որ իմացա հոգեկան կապերը քանդելու զորության և ժառանգական մեղքերից հրաժարվելու մասին: Նայենք

Նոր կտակարանի այն խոսքերին, որոնք վերաբերում են դրան.

> «Չգիտե՞ք, որ ձեր մարմինները Քրիստոսի անդամներ են. ապա Քրիստոսի անդամներն առնեմ պոռնիկի անդա՞մ շինեմ. քա՛վ լիցի: Կամ թե չգիտե՞ք, որ նա, ով պոռնիկին հարում է, մեկ մարմին է նրա հետ, որովհետև «երկուսը, - ասում է, - մեկ մարմին կլինեն»» (Ա Կորնթ. 6.15,16):

Ես չեմ անվանում իմ նախկին ընկերներին պոռնիկներ, բայց սկզբունքն այստեղ նույնն է: Ես նրանց հետ մեկ եմ եղել, իսկ հիմա ուխտի մեջ եմ մեկ ուրիշի հետ: Յուրաքանչյուր միացումով և անջատումով իմ հոգին կտոր-կտոր էր եղել, մինչև որ ես սեռական առումով դարձա կոտրված մարդ: Եթե դու սեռական ոլորտում կոտրված ես, ապա քեզ անհավատալիորեն դժվար է լիովին տրվել քո ամուսնուն, որովհետև դու այլևս լիարժեք չես:

Այս նույն սկզբունքը շատ դժվար է դարձնում սեռականորեն կոտրված կամ պղծված կանանց՝ հզոր ձևով կանգնել գայթակղության առջև: Նրանց համար դժվար է ոչ ասել նույնիսկ այն ժամանակ, երբ իրենք դա չեն ցանկանում: Նրանք լցված են լինում կա՛մ կրքով, կա՛մ մեղքի զգացումով, իսկ հաճախ երկուսը միաժամանակ, որը նրանց գրեթե անհնար է դարձնում դիմադրել սեռական ոտնձգություններին: Նրանք դառնում են սեռական բռնության և տարբեր սեռական կապերի զոհեր: Նրանք մագնիսի պես քաշում են տղամարդկանց, և վերջիններս վարվում են նրանց հետ այնպես, ինչպես ցանկանում են: Երբեմն էլ հենց իրենք են վառվում կրքով այլ տղամարդկանց հետ ունեցած նախկին հանդիպումների պատճառով: Բայց այն, ինչ անհնար է առանց Աստծո, հնարավոր է դառնում Աստծո հետ:

> *Եթե դու սեռական ոլորտում կոտրված ես, ապա քեզ անհավատալիորեն դժվար է լիովին տրվել քո ամուսնուն, որովհետև դու այլևս լիարժեք չես:*

Մաքրության մեջ քայլելու համար պետք է լիարժեք լինենք, և միայն Աստված կարող է վերականգնել մեր լիարժեքությունը, եթե մենք կոտրված ենք: Միայն Աստված կարող է վերականգնել մեր պատիվը, երբ մեր կյանքում եղել է բռնություն և անպատվություն: Միայն

Աստված կարող է վերցնել պիղծը և ապականվածը և կրկին դարձնել սուրբ ու մաքուր: Միայն Աստված կարող է տալ մեզ գեղեցկություն այն մոխիրների փոխարեն, որ մենք բերում ենք Նրա առջև:

Այդ օրը ես որոշեցի որոշ ժամանակ առանձնացնել և հավաքել իմ բոլոր ողջակեզները սեռական մեղքի և ամոթի համար: Հաջորդ երեկո ես հնարավորություն ունեի դրանք ներկայացնել Տիրոջը: Ձոնը տանը չէր լինելու, և ես ազատ էի աղոթելու և Տիրոջ հետ մենակ մնալու համար: Ես հավատում եմ, որ Աստված մեր ուշադրությունը կհրավիրի այս հարցերին, երբ մենք պատրաստ լինենք դեմ կանգնել դրանց. ես պատրաստ էի դրան: Միգուցե այս գիրքը կարդալով դու էլ ես զգում Նրա հրավերը՝ անելու միևնույն բանը:

Մենք ունենք հավատարիմ և սրտացավ Քահայանապետ, Ով անձամբ գիտի մեզ: Նա կամենում է օգտագործել Իր սուրը՝ կտրելու ցանկացած բան, որը մեզ հեռու է պահում Նրանից: Նա ցանկանում է կտրել ամեն անառողջ հոգեկան կապ, որ մնա միայն այն, ինչը առողջ է: Նա կուղարկի Իր Խոսքը, որպեսզի բժշկի և վերականգնի մեր հոգին: Նրա հրեշտակները կգնան այնտեղ, որտեղ դու հիմա վախենում ես ոտք դնել և քեզ կվերադարձնեն քո հոգու յուրաքանչյուր կոտրված մասնիկը:

> *Նա կհանի քեզ ցեխից և ոտքերդ կդնի ամուր ժայռի վրա: Բայց դու պետք է սիրտդ դարձնես Նրան:*

«Չէ՞ որ բոլորը սպասավոր հոգիներ են՝ ուղարկված սպասավորություն անելու նրանց, որ փրկությունը պիտի ժառանգեն» (Եբր. 1.14):

Հրեշտակները մեր հոգիների պահապաններն են: Նրանց չպետք է երկրպագել, նրանք ծառայում են նրանց, ովքեր ժառանգում են փրկությունը: Պատճառ չկա վախենալու նրանց միջամտությունից, որովհետև դա հանձնարարված է հենց Աստծո կողմից:

Ես ցանկանում եմ, որ դու որոշ ժամանակ տրամադրես աղոթքին և թույլ տաս Աստծուն, որ իրականացնի քո կյանքի սրբագործման աշխատանքը: Հավատարիմ է Խոստացողը: Նա կհանի քեզ ցեխից և ոտքերդ կդնի ամուր ժայռի վրա: Բայց դու պետք է սիրտդ դարձնես Նրան, որ Նա իրականացնի այս ամենը քո կյանքում: Սրան չի կարելի

անփույթ վերաբերվել: Դու միգուցե ցանկանաս ծոմ վերցնել և որոշ ժամանակ անցկացնել երկրպագության մեջ: Ես ցանկանում եմ, որ իսկապես զգայուն լինես Սուրբ Հոգու առաջնորդությանը, երբ Նա տանի քեզ այս ընթացքի միջով և օգնի հրաժարվել թշնամու ամեն խավար և ստվերոտ ամրությունից:

Իսկ ի՞նչ եղան իմ գիշերային մղձավանջները: Ես այլևս չունեցա դրանք այն բանից հետո, երբ աղոթքի մեջ հրաժարվեցի այս բաներից:

Խնդրում եմ մի պահ կա՛նգ առ և ժամանակ հատկացրու նախքան սկսելը: Միգուցե հիմա է ժամանակը: Եթե այդպես է, ապա այնպես արա, որ մենակ լինես կամ աղոթքի ընկերոջ հետ, որովհետև քեզ հարկ կլինի բարձրաձայն ասել քո աղաչանքները, այն բաները, ինչից հրաժարվում ես, և քո պատասխանը՝ «այո՛ և ամե՛ն»:

Ես փորձել եմ այնպես կազմել այս աղոթքը, որ նրանում զետեղեմ Աստծո Խոսքը, որովհետև Խոսքը սուր է և զորավոր, այն Հոգու երկսայրի սուրն է: Այս գլխի վերջում ներառել եմ համապատասխան Խոսքեր ձեր հետագա ուսումնասիրության համար:

Սիրելի՛ երկնային Հայր,

Ես գալիս եմ Քո առջև Քո թանկագին Որդու՝ Հիսուսի անունով: Ես մտնում եմ Քո սրահները գոհությունով և փառաբանությունով: Ես ողողված եմ Քո շնորհաշատ ողորմությամբ և սիրով: Նախապես շնորհակալություն եմ հայտնում Քեզ այն հզոր փրկագնման աշխատանքի համար, որ իրականացրել ես իմ կյանքում:

Հիմա ես մտադիր եմ ուխտ կնքել Տիրոջ՝ Իսրայելի Աստծո հետ: Դու ես Տերը, երկնքի ու երկրի Աստվածը, մեծ և ահեղ Աստվածը, Ով պահում է Իր սիրո ուխտը նրանց հետ, ովքեր սիրում են Իրեն և հնազանդվում Իր պատվիրաններին: Խնդրում եմ, լսի՛ր Քո ծառայի աղոթքը:

Ես խոստովանում եմ իմ և իմ հոր տան մեղքերը, յուրաքանչյուր հանցանք, որ գործել ենք Քո դեմ: Ների՛ր մեզ, որովհետև Քո առջև մենք չարությամբ ենք վարվել: Մենք ծածկվել ենք ամոթով, որով-

հետև մեղանչել ենք Քո դեմ: Բայց Դու՝ Տե՛ր, մեր Աստված, ողորմած և ներող ես, չնայած մենք ապստամբել ենք Քո դեմ և չենք հնազանդվել Քեզ ու չենք պահել այն օրենքները, որոնք տվել ես մեզ Քո ծառաների՝ մարգարեների միջոցով: Մենք խնդրում ենք, որ թլփատես մեր սրտերը և հեռացնես մեղքը, ամոթը և Եգիպտոսում գտնվելու մեր նախատինքը:

Ես խոստովանում և հրաժարվում եմ իմ մեղքից և իմ հայրերի մեղքից և կախարդության, մոգության կամ հմայության մեջ մասնակցություն ունենալուց (Այստեղ կանգ առեք և զգայուն եղեք, որ ավելացնեք ցանկացած բան, որ Սուրբ Հոգին կիրավիրի ձեր ուշադրությանը: Սա կարող է ներառել աստղագուշակությունը, սեանսները, սարսափ ֆիլմերը, խաղերը, գրքերը և այլն): Ես հրաժարվում եմ այս բաների մեջ իմ մասնակցությունից և քանդում դրանց անեծքը իմ կյանքի, իմ երեխաների և նրանց սերունդների կյանքից: Խոստովանում և հրաժարվում եմ իմ և իմ հայրերի մեղքերից՝ թմրամոլության ու ալկոհոլի մեջ ներգրավվելու պատճառով:

Հա՛յր, փակիր ցանկացած դուռ, որ այս բաները կարող էին բացել հոգևոր աշխարհում մեղքի, գերության կամ ճնշվածության համար: Ես հրաժարվում եմ իմ կապվածությունից (անունով նշեք թմրադեղերը) և քանդում եմ դրանց անեծքը իմ կյանքի, իմ երեխաների և նրանց սերունդների կյանքից:

Հա՛յր, ես խոստովանում և հրաժարվում եմ իմ և իմ հայրերի սեռական մեղքերից, ամեն տեսակի պղծության, այլասերվածության, արյունապղծության և տարբեր սեռական հարաբերությունների մեջ մասնակցությունից (Եղեք զգայուն՝ կոնկրետ անվանելու այն մեղքերը, որոնցից հրաժարվում եք: Դրանք բարձրաձայն ասեք Նրա առջև առանց ամոթի: Ոչինչ ծածուկ չի մնում. Նա արդեն գիտի յուրաքանչյուրը և ցանկանում է հեռացնել մեղքի ծանրությունը և ամոթը: Այնուհետև, երբ ավարտեք, շարունակեք):

Հա՛յր, վերցրո՛ւ Քո Հոգու սուրը և կտրի՛ր ամեն անաստվածային սեռական շնչավոր կապ իմ և ..... միջև (լսե՛ք Սուրբ Հոգուն և բարձրաձայն ասե՛ք յուրաքանչյուրի անունը: Հավանական է, որ դրանք լինեն անուններ, որոնց հետ դուք հարաբերություն չեք ունեցել, բայց նրանց հետ սեռական կամ հուզական այնպիսի շփում է եղել, որը կարող էր լինել միայն ձեր ամուսնու կամ Փրկչի հետ: Յուրաքանչյուր անուն բարձրաձայն ասելուց հետո աղոթե՛ք այսպես). Հա՛յր, բա՛ց թող

Քո հրեշտակներին, որ վերադարձնեն իմ հոգու կտորները այդ մարդկանցից: Վերականգնի՛ր դրանք Քո Հոգով, որպեսզի ես լինեմ լիակատար, սուրբ և առանձնացված Քո հաճության համար:

Հա՛յր, ես հրաժարվում եմ ամեն այլասերված և պիղծ պատկերից: Ների՛ր ինձ, որ պիղծ պատկերներ եմ դրել իմ աչքերի առջև: Ես ուխտ եմ կնքում Սաղմոս 101.3-ի համաձայն, և ես կպահպանեմ իմ սիրտը իմ աչքերի դարպասների միջոցով: Ես թույլ չեմ տա, որ իմ աչքերի առջև որևէ նողկալի բան դնեմ: Ես հրաժարվում եմ ամեն պիղծ ոգուց և հրամայում, որ այն հեռանա իմ կյանքից:

Հա՛յր, լվա՛ ինձ Հիսուսի մաքրող արյունով, որովհետև միայն այն ունի զորություն մաքրելու և քավելու: Ես նվիրում եմ ինձ՝ որպես Քո տաճար. Քո Սուրբ Հոգու զորությամբ հեռացրո՛ւ այս տաճարից հոգու, շնչի և մարմնի ամեն պղծություն: Լցրո՛ւ ինձ Սուրբ Հոգով: Բացի՛ր իմ աչքերը, որ տեսնեմ, իմ ականջները, որ լսեմ, և իմ սիրտը, որ ընդունեմ այն, ինչ Դու ունես ինձ համար: Ես Քոնն եմ: Իմ կյանքը Քո տրամադրության տակ է:

Սիրով՝ Քո դուստր

Աստվածաշնչյան Խոսքեր. Սաղմոս 100.4, Բ Մնացորդաց 29.10,11, Նեեմիա 1.5-7, Դանիել 9.8-10, Հեսու 5.9, Մատթեոս 10.34, Եբրայեցիների 4.12, Բ Մնացորդաց 29.5,6

11 *Ընտրված՝ սիրատենչ և սուրբ Աստծո կողմից*

Դու հասկանո՞ւմ ես, որ սիրող, սուրբ Աստված անդադար ձգտում է քեզ: Նա սպասում և հետևում է, որ հայացքդ ուղղես Իր կողմը: Նա փափագում է, որ կարդաս սիրո գրառումները, որ գրել է քեզ համար: Նա աղոթում է, որ արձագանքես Իրեն: Նա ցանկանում է քեզ հանել խավարի աշխարհից և տեղափոխել Իր լույսի փառավոր աշխարհը: Նա փափագում է քեզ խլել անհավատարիմ սիրեկանների ձեռքերից և բերել Իր հավատարիմ, հավիտենական ձեռքերի մեջ: Նա ազատում է քեզ Եգիպտոսի դաժան վերակացուներից ու ծանր գերությունից և փոխարենը ցուցաբերում Իր քնքուշ սերն ու ողորմությունը:

> *Նա փափագում է քեզ խլել անհավատարիմ սիրեկանների ձեռքերից և բերել Իր հավատարիմ, հավիտենական ձեռքերի մեջ:*

Նա չի ազատում մեզ Եգիպտոսից՝ պարզապես խոստմունքի երկիր բերելու համար: Նրա վերջնական նպատակը մեզ Իր մոտ բերելն է: Հին կտակարանի խոստմունքները գալիք բաների երկրային շուքն են: Շատ հաճախ մենք մտածում ենք Իսրայելի որդիների նման: Մենք այնքան թեթևացած ենք զգում՝ փրկվելով և դատաստանից ազատվելով, որ մոռանում ենք, որ Նրա վերջնական նպատակը փրկության մեջ մեր հարաբերություններն Իր հետ վերականգնելն է: Սիրելինե՛ր, փրկագնումը ավելին է, քան կյանքի դժբախտ պատահարներից ապահովագրումը:

Ինչևէ, ես հասկանում եմ, թե ինչու եք դուք փրկագնմանը այսպես նայել: Քանի՞սն են լսել այս հարցը. «Եթե այս գիշեր մահանաս, գիտե՞ս, թե ուր ես գնալու»: Այս հարցի նպատակն է լսարանին ստիպել, որ ինքն իրեն հարցնի. «Արդյո՞ք հստակ գիտեմ, որ գնալու եմ

Երկինք»: Եթե չգիտեն, ապա ունեն հնարավորություն աղոթելու և հաստատելու իրենց հավիտենական կացարանը: Բայց փրկությունը միայն Երկինք գնալու ճանապարհ չէ մահվանից հետո. այն ապրելակերպ է, այն կյանք է ավելցուկով: Լսե՛ք Աստծո մեծագույն ցանկությունը և նպատակը Իսրայելին Եգիպտոսից ազատելու համար:

> «Դուք տեսաք, ինչ որ արի եգիպտացիներին և ձեզ արծվի թևերի վրայով տարա և Ինձ մոտ բերի» (Ելից 19.4):

Ես սիրում եմ այս խոսքի գեղեցկությունը և ուժը: Երկնքի հզոր Թագավորը իջնում է, որպեսզի քաջասրտությամբ ազատի Իր զավակներին չորս հարյուր տարվա գերությունից: Այս ընթացքում Նա զարկում է Եգիպտոսին՝ աշխարհի ամենաուժեղ երկրին, և վերածում այն բեկորների: Իսրայելցի ստրուկները եգիպտացիներից կողոպտում են նրանց արծաթն ու ոսկին:

Ո՞վ չի ցանկանում դուրս գալ աշխարհի ծանր գերությունից և բարձրանալ Աստծո սարը, որտեղ կա ապահովություն և մտերիմ փոխհարաբերություն: Ցավում եմ, բայց ավելի շատ մարդիկ, քան դու կարող ես պատկերացնել, իրականում չունեն այս փափագն իրենց սրտում: Չնայած շատերն են սիրով ընդունում փախուստը գերությունից և դատաստանից, բայց նրանք իրականում չեն հասկանում օրինաչափությունը. այդ ամենը Նրանը դառնալու համար է: Եթե մենք այլևս չենք պատկանում այս ներկա աշխարհին, ապա ո՞ւմ ենք պատկանում:

> *Սրբությունը պարզապես աշխատանքի պարտադիր պայման չէ ծառայողների համար, կամ էլ այլընտրանքային ապրելակերպ. այն հրաման է նրանց համար, ովքեր ժողովվում են սուրբ Աստծո առջև:*

> «... Խոսի՛ր Իսրայելի որդիների ամբողջ *ժողովի* հետ և ասա՛ նրանց. «Դուք սո՛ւրբ եղեք, որովհետև Ես՝ ձեր Եհովա Աստվածը, սուրբ եմ»» (Ղևտ.19.2):

Սրբությունը պարզապես աշխատանքի պարտադիր պայման չէ ծառայողների համար, կամ էլ այլընտրանքային ապրելակերպ. այն հրաման է նրանց համար, ովքեր ժողովվում են սուրբ Աստծո

առջև: Մենք պետք է սուրբ լինենք, որովհետև Նա սուրբ է: Մեզնից չի խնդրվում ուղղակի սուրբ երևալ, այլ՝ լինել սուրբ: Լինել ինչ-որ բան՝ նշանակում է, որ այն դառնում է քո էության մասնիկը կամ կյանքի մղիչ ուժը: Մեր հոգին թելադրում է մեր ապրելակերպը, ուստի մենք պետք է լցվենք և առաջնորդվենք Հոգով, Որը Սուրբ Հոգին է:

Սա ներառում է ինչպես մեր անձնական կյանքը, այնպես էլ վարքագիծը: Բայց ես ուզում եմ կենտրոնանալ նեղ անձնային և չերևացող ոլորտի վրա: Լինել ինչ-որ բան՝ նշանակում է, որ այն բնորոշում է քո իսկական էությունը, գոյությունը: Մենք կարող ենք մեզ սուրբ պահել, բայց չլինել սուրբ, մենք կարող ենք սուրբ տեսք ունենալ, բայց չլինել սուրբ: Սա պարզապես հնառճ հինկտակարանյան հրահանգ չէ: Մեզ կրկին կոչ է արվում նույնպես սուրբ լինել՝ գտնվելով Նոր կտակարանի շնորհքի ուխտի ներքո:

> «Այլ՝ ձեզ կանչող Սուրբի պես դուք էլ սուրբ եղեք ձեր բոլոր վարքերում, որովհետև գրված է. «Սո՛ւրբ եղեք, որ Ես սուրբ եմ»» (Ա Պետր. 1.15,16):

Եթե ավելի ուշադիր նայեք Նոր կտակարանի այս խոսքին և համեմատեք Ղևտացիներում գրվածի հետ, կտեսնեք, որ այն, ըստ էության, ավելի հստակ է՝ կոչ անելով սուրբ լինել մեր ամեն վարքում, որովհետև Աստված Սուրբ է Իր ամբողջ էությամբ: Ի՞նչ է նշանակում սուրբ լինել: Հաջորդ տեղը մեզ լրացուցիչ պատկերացում է տալիս այդ մասին.

> «Եվ դուք սուրբ պիտի լինեք Ինձ համար, որովհետև Ես՝ Եհովաս, սուրբ եմ և ձեզ որոշեցի ազգերից, որ Իմը լինեք» (Ղևտ. 20.26):

Աստված Իսրայելին ասաց, որ սուրբ լինեն, որովհետև նրանք առանձնացվել էին բոլոր ազգերից, որ Իրենը լինեն: Ըստ էության, Աստված ասում է նրանց. «Առանձնացե՛ք Ինձ համար, որովհետև Ես ձեզ ընտրել եմ, որ Իմը լինեք: Ընտրե՛ք Ինձ, որովհետև Ես արդեն ընտրել եմ ձեզ»: Իսրայելը ընտրվեց բազում ազգերից, որ Նրանը լինի: Իսկ որտե՞ղ են հեթանոսները: Ե՞րբ մենք ընտրվեցինք:

> «Ինչպես որ ընտրեց մեզ Նրանով աշխարհը ստեղծելուց առաջ, որ մենք սուրբ և անարատ լինենք Նրա առջև՝ սիրով» (Եփես. 1.4):

Նույնիսկ մինչև մեզ տեսնելը մենք ընտրվեցինք Նրանով: Մենք ընտրվեցինք Քրիստոսով ոչ թե ազգերից, այլ մինչև աշխարհը ստեղծվելը: Կարծես մենք արդեն Նրա մտքում կայինք նախքան աշխարհը ստեղծելը: Մենք ընտրվել ենք Աստծուց Քրիստոսով, Գառան միջոցով, Որը մորթվեց նախքան երկրի ստեղծվելը: Մենք նախատեսված էինք սուրբ և անարատ լինելու Քրիստոսում:

Ի՞նչ է նշանակում սուրբ լինել Նրա առջև: Քրիստոսում մենք սուրբ դարձանք կամ առանձնացանք Նրա համար, Նրա հաճության, նպատակի և փառքի համար: Մինչ այդ մենք օտար էինք խոստումների համար, որովհետև Իսրայելի ազգից դուրս գտնվողները չէին կարող սուրբ կամ առանձնացված լինել: Հեթանոսները պետք է պահեին բոլոր օրենքներն ու հրահանգները ուխտի մեջ մտնելու համար:

Բայց այսօր վարագույրը երկու մասի է բաժանվել: Այն կանոնները, որ մեր դեմ էին, գամվեցին Քրիստոսի խաչին, և մենք այլևս բաժանված չենք Աստծուց (տե՛ս Կողոս. 2.14): Սրբությունը Աստծո խնդրանքը չէ, որ մենք «լավը» լինենք. այլ Իրենը լինելու հրավեր է: Ես չամուսնացա Զոնի հետ, որ փախչեի մենակությունից և երեխաներ ունենայի: Ես ամուսնացա Զոնի հետ, որ նրանը լինեի: Մեր ուխտի հարաբերությունների շնորհիվ մենք միասին շատ բան ենք կիսում: Մենք կիսում ենք գաղտնիքներ, մեր երեխաներին, ֆինանսները, մեքենաները, ընկերությունը, տունը, անկողինը և այլն: Բայց իմ կյանքում կան տեղեր, որ Զոնը երբեք չի կարող դիպչել, որովհետև դրանք պահված են Աստծո համար, ինչպես որ կան տեղեր և կարիքներ Զոնի կյանքում, որոնք ես երբեք չեմ կարող բավարարել, որովհետև դրանք միայն Աստծո համար են: Յուրաքանչյուր կին սահմանված է պատկանելու իր Իշխանին, և նրա կյանքում կան տեղեր, որոնք պահված են միայն Նրա համար:

> *Սրբությունը Աստծո խնդրանքը չէ, որ մենք «լավը» լինենք. այլ Իրենը լինելու հրավեր է:*

Լինել սուրբ՝ նշանակում է առանձնացված լինել Նրա համար հոգով, շնչով և մարմնով: Մենք մեզ առանձնացնում ենք՝ առաջինը արձագանքելով Նրա կանչին, ապա մեր կամքը հնազանդեցնելով Նրա Խոսքին և խնդրելով Սուրբ Հոգուն՝ առաջնորդի մեզ:

«Բայց դուք ընտիր ազգ եք, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ, որ քարոզեք Նրա առաքինություններ, որ ձեզ խավարից կանչեց Իր զարմանալի լույսի մեջ» (Ա Պետր. 2.9):

Մենք ընտրված ենք որպես Նրա սուրբ ժողովրդի թագավորական քահանաներ: Մենք պատկանում ենք Աստծուն և դրա համար քարոզում ենք Նրա առաքինությունները այս աշխարհին, մեր գոհությունն ու սերը արտահայտում Նրա մահվան համար, որով Նա ազատեց մեզ խավարի աշխարհից և կանչեց Իր փառահեղ լույսի մեջ:

Հիշում եմ, քոլեջում, մտնելով կանանց ակումբ, աղջիկների սիրտը թրթռում էր նրանից, որ իրենք պատկանելու են մի բանի, որն ավելի մեծ է, քան իրենք, և դպրոցի բոլոր միջոցառումներին նրանք երգում էին իրենց ակումբի հիմնը: Եթե մենք այդքան երջանիկ էինք հասարակական ակումբի համար, որքան ավելի շատ պետք է փառք տանք Աստծուն, Ով ընդունեց մեզ Իր արքայության մեջ: Պետրոսի առաջին թուղթն ասում է, թե ինչպիսին է մեր դիրքը Քրիստոսում. մենք ընտրված, թագավորական և սուրբ քահանաներ ենք:

Հին կտակարանում քահանաներին վստահված էր զոհեր մատուցելու պարտականությունը, և թագավորական քահանաներն իրենց զոհն էին բերում իրենց թագավորի առջև: Որպես քահանա՝ ո՞րն է մեր զոհը: Դա կյանք է, որը փառաբանում է Նրան խոսքերով և գործերով: Սա ավելի խորը հասկանալու համար նայենք Ահարոնին.

«Եվ սուրբ պսակի թիթեղը մաքուր ոսկուց շինեցին և նրա վրա փորագրեցին կնիք քանդակողի պես՝ Գոդեշ Լէ Եհովա: Եվ նրան անցկացրին մի կապուտակ ժապավենի վրա, որ վերևից խույրի վրա դրվի, ինչպես որ Եհովան Մովսեսին պատվիրել էր: Եվ վերջացավ խորանի, այսինքն՝ ժողովքի վրանի ամբողջ գործը...» (Ելից 39.30-32):

Ահարոնը զարդարված էր գեղեցիկ քահայանական հանդերձով: Յուրաքանչյուր կտորը ուներ հատուկ նշանակություն, բայց ուշադրություն դարձրեք, որ վերջին կտորը մաքուր ոսկուց պատրաստված սուրբ պսակն էր, որի վրա փորագրված էր «Գոդեշ Լէ Եհովա», որը

նշանակում էր «ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՏԻՐՈՋԸ»: Նա պսակված էր սրբությամբ: Բոլոր քահանայական հանդերձներն ու գեղեցիկ շքեղությունը նրա համար էին, որ հռչակեին, թե Ահարոնն Աստծունն է: Ուշադրություն դարձրեք, որ կնիքով մատանիները կարող էին հետք թողնել իրերի վրա: Երբ օրենք էր հաստատվում, այն կնքվում էր կնիքի մատանիով՝ խորհրդանշելով, թե ով էր իրականում կանգնած օրենքի ետևում:

> *Մենք պետք է տպավորություն թողնենք նրանց վրա, ում հանդիպում ենք՝ հայտնելով նրանց, թե ում ենք պատկանում և ինչ արքայություն ենք ներկայացնում:*

Մի պահ նայենք սրա բնական օրինակին: Ազգային և միջազգային գեղեցկության մրցույթներին հաղթողների գլխին պսակ են դնում և ուսին գցում այն երկրի դրոշը հիշեցնող ժապավենը, որի ներկայացուցիչն են նրանք: Ի՞նչ կպատահի, եթե «Միսս Տիեզերք» միջոցառման կեսից, «Միսս Ամերիկան» որոշի, որ ցանկանում է ներկայացնել Ճապոնիան: Արդյո՞ք թույլ կտան նրան այդպես վարվել: Իհարկե՝ ոչ: Նա ընտրվել է որպես Ամերիկայի դեսպան, ոչ թե Ճապոնիայի, նա պետք է ներկայացնի և ոգեշնչի Ամերիկայի մշակույթը և ժողովրդին: Որպես քահանաներ՝ մենք ոչնչով չենք տարբերվում նրանցից: Մենք պետք է տպավորություն թողնենք նրանց վրա, ում հանդիպում ենք՝ հայտնելով նրանց, թե ում ենք պատկանում և ինչ արքայություն ենք ներկայացնում: Պետրոսը շարունակում է բացատրել, թե ինչպես պետք է անել սա.

> «Որ դուք ժամանակով ժողովուրդ չէիք, բայց հիմա Աստծո ժողովուրդ եք, որ ողորմած չէիք, բայց հիմա ողորմածներ: Սիրելիներ՛ր, աղաչում եմ ձեզ, ինչպես պանդուխտներ և օտարականներ, հեռո՛ւ մնացեք մարմնավոր ցանկություններից, որ կռվում են հոգու դեմ: Ձեր վարքը հեթանոսների մեջ բարի՛ պահեք, որ ինչ բանով ձեզ չարագործների պես բամբասում են, ձեր բարի գործերը տեսնելով՝ փառավորեն Աստծուն այցելության օրը» (Ա Պետր. 2.10-12):

Մի ժամանակ մենք Աստծունը չէինք, իսկ հիմա Նրանն ենք: Մի ժամանակ մենք Աստծո դատաստանի տակ էինք, բայց հիմա վերապրում ենք Նրա ողորմությունը: Այլ խոսքով՝ մենք այս աշխարհում էինք

և դատաստանի ենթակա, բայց հիմա այս աշխարհից չենք, այլ՝ Աստծո արքայությունից: Սա մեզ պանդուխտներ և օտարականներ է դարձնում այս աշխարհում, որի քաղաքացիներն էինք մի ժամանակ: Որպես քահանաներ՝ մենք Աստծո ներկայացուցիչներն ու դեսպաններն ենք այս երկրի վրա:

Մենք արքայական ողորմությանը արժանի զոհեր ենք բերում, որն է՝ մեր փառաբանությունը և մեր կյանքը:

Սրբությունը կապ ունի սեփականության հետ. մեր կյանքն այլևս մերը չէ, այլ՝ Նրանը: Դու միգուցե ասես. «Ինձ դուր չի գալիս այն գաղափարը, որ ես ինչ-որ մեկինն եմ»: Տեղյակ ես, թե ոչ, դու երբեք էլ ազատ չես եղել: Դու ծնվել ես խավարի թագավորության իշխանության ներքո և ապրել որպես Աստծո թշնամի և բարկության որդի: Բայց սիրող Իշխանը փրկագնել է քեզ: Դու գնվել ես մեծ գնով, և քո փառաբանությունը պետք է բարձրանա Նրան Երկնքի սրբերի հետ, որոնք երգում են Գառան երգը:

> «Եվ նոր երգ են երգում և ասում. «Արժանի ես առնելու այդ Գիրքը և դրա կնիքները բանալու, որովհետև մորթվեցիր և Քո արյունով մեզ գնեցիր Աստծո համար ամեն ցեղից, լեզվից, ժողովրդից և ազգից: Եվ մեր Աստծո համար մեզ թագավորներ և քահանաներ արիր, և երկրի վրա թագավորություն կանենք»» (Հայտն. 5.9,10):

Ուշադրություն դարձրեք, այստեղ ասվում է, որ Նրա արյունը մեզ գնեց Աստծո համար, ոչ թե երկնքի: Փեսան փրկագնեց Իր հարսնացուին Իր իսկ կյանքով: Բայց այս փառահեղ սիրավեպի խորությունները հասկանալու համար պետք է վերադառնանք վաղեմի ժամանակներ և ճանապարհորդենք այն երկրով, որտեղ գոյություն ունեին մեզ համար օտար սովորույթներ: Միասին գնանք դեպի հին Իսրայել և ուսումնասիրենք ամուսնական ծեսերն ու ավանդույթները: Այդ ժամանակ չկար ընկերություն հասկացողությունը, կային միայն հարսնացուներ և փեսացուներ: Զույգերը ժամանակավոր չէին հանդիպում միմյանց հետ, իսկ հետո որոշում բաժանվել:

> *Դու գնվել ես մեծ գնով, և քո փառաբանությունը պետք է բարձրանա Նրան:*

Նախքան ամուսնական արարողությունը սկսելը նրանց միջև արդեն կայուն նվիրվածություն և վստահություն էր հաստատված լինում:

Երբ որդին հասնում էր ամուսնության տարիքի, նա խնդրում էր հորը, որ իր համար հարսնացու ընտրի: Որդին միգուցե մեկին ունենար իր մտքում, բայց սովորաբար հայրն էր, որ նախօրոք պետք է մտածեր այդ մասին: Նրանք միասին կարող էին քննարկել այս կամ այն աղջկա արժանիքները, բայց վերջին հաշվով հայրն էր ընտրում այն աղջկան, ում պետք է նշաներ իր որդու հետ: Եթե նրանց նախնական առաջարկը ողջունելի էր լինում, երիտասարդ տղան ուղևորվում էր աղջկա տուն և հանդիպում նրա հոր հետ, որպեսզի քննարկեին մանրամասները և հնարավորությունները: Աղջիկը նույնիսկ չէր խառնվում նախնական բանակցություններին: Ես համոզված եմ, որ նա թաթերի վրա սպասում էր՝ ցանկանալով տեսնել և լսել, թե ինչ է տեղի ունենում կողքի սենյակում: Հավանաբար նրա ականջին հասնում էին շշուկներ և խոսակցության որոշ մասեր: Աղջիկը մտածում էր. «Ուրեմն, նա պատրաստ է ինձ համար այդ բանը տալու»:

> *Զույգերը ժամանակավոր չէին հանդիպում միմյանց հետ, իսկ հետո որոշում բաժանվել:*

Բայց նրա հայրն իր մտքում արդեն ուներ որոշակի գին: Աղջիկները գրեթե միշտ փոխանակվում էին փողով, որովհետև նրանք ֆինանսական կորուստ էին համարվում իրենց ընտանիքի համար. նրանք չէին աշխատում դաշտում՝ ինչպես տղաները, և այդ պատճառով չէին բերում եկամուտ ընտանիքի համար: Եթե հոր ակնկալիքները նշանադրության հարցում չէին բավարարվում, նույնիսկ ամուսնության առաջարկը չէր քննարկվում, և բանակցություններն ավարտվում էին: Չնայած սա կարող է շահամոլություն թվալ մեզ այսօր, դա իրականում աղջկան պաշտպանելու ձև էր: Հայրը ցանկանում էր համոզվել, որ ոչ միայն իր ուզած գինը կտրվի, այլև իր աղջկա մասին լավ հոգ կտանեն: Այն ժամանակ հայրերը հենց այնպես չէին տալիս իրենց աղջիկներին. նրանց, նախ, պետք է գնեին, ապա տանեին: Բանակցությունները տևում էին ժամեր, որոնց ընթացքում տրվում էին հարցեր, խոստումներ, երդումներ, ինչպես նաև լինում էին վիճաբանություններ:

Երբ ամեն բան հարթվում էր հարսնացուի հոր և փեսայի միջև,

նրանք դա գրանցում էին փաստաթղթի կամ ամուսնական պայմանագրի մեջ, որը բաղկացած էր հարսնացուի համար նշանակված գնից, փեսացուի երդումներից ու խոստումներից և հարսնացուի իրավունքներից: Սա նշանադրության փաստաթուղթ էր, և երբ այն ավարտում էին, մեկ գավաթ գինի էին լցնում և ներս բերում հարսնացուին:

Ժամերով տևած բանակցություններն ու բոլոր մանրամասների գրանցումը զուր կլինեին առանց հարսնացուի համաձայնության: Նրան տեղեկացնում էին առաջարկի մասին: Նրա առջև սպասում էր գինու սկահակը, որը խորհրդանշում էր ամուսնության ուխտը: Նա ուներ երկու ընտրություն. կարող էր հրաժարվել գինուց, շրջվել և հեռանալ սենյակից: Եվ եթե այդպես աներ, ամուսնությունը տեղի չէր ունենա, եթե նույնիսկ նրա հոր պայմանները բավարարված էին: Կամ նա կարող էր ասել. «Ես համաձա՛յն եմ»: Այդ դեպքում գավաթը փոխանցվում էր փեսացուին, նա խմում էր, ապա փոխանցում հարսնացուին, երբ նա խմում էր ուխտի գավաթից, պայմանագիրը կնքվում էր:

Նա հեռանում էր հարսնացուից հետևյալ խոսքերով. «Ես գնում եմ քեզ համար տեղ պատրաստելու. եթե գնամ, կրկին կվերադառնամ քո ետևից»:

Հետո փեսացուն հարսնացուին ինչ-որ արժեքավոր բան էր տալիս իր անկեղծությունն արտահայտելու համար: Նա որոշ ժամանակ մնում էր աղջկա հետ, որպեսզի կարողանային ճանաչել միմյանց, բայց դա միշտ կատարվում էր ընտանիքի զննող աչքերի ներքո: Մեր մշակույթի մեջ այսօր այս նվերը խորհրդանշում է նշանադրության մատանին: Երկուսը օրինական նշանվում էին կամ կապվում ամուսնությամբ, չնայած դեռ միասին չէին ապրում:

Հետո հարսնացուն ընդունում էր ջրի մկրտություն: Սա մաքրվելու և սրբվելու արարողություն էր: Այն նշանակում էր բաժանվել կամ հեռանալ հին ապրելակերպից, մաքրվել՝ պատրաստվելով նոր կյանքի, որը պետք է անցկացներ իր ամուսնու հետ: Այն համարվում էր հոգևոր վերածնունդի նշան: Աղջիկն այլևս մենակ չէր. այսուհետև նա փեսացուինն էր:

Որոշ ժամանակ անց փեսացուն հեռանում էր այնտեղից և վերադառնում հոր տուն: Նա սկսում էր իր հարսանիքի նախապատրաստական աշխատանքները: Նա հեռանում էր հարսնացուից հետևյալ

խոսքերով. «Ես գնում եմ քեզ համար տեղ պատրաստելու. եթե գնամ, կրկին կվերադառնամ քո ետևից»: Սրանք նույն Հիսուսի խոսքերն են Հովհաննեսի 14-րդ գլխից: Չնայած դժվար էր բաժանվելը, բայց նրանք հասկանում էին, որ իրենք երբեք չէին կարող լիակատար միասին լինել, մինչև փեսան չգնար և տեղ չպատրաստեր:

Հարսնացուի մոտ էր մնում ուխտի բաժակը, ամբողջովին վճարված գինը և նվերը, որը երաշխիք էր փեսացուի վերադարձի մասին: Նա մնում էր հոր տանը և իրեն էր պատրաստում: Եթե հարսնացուն դուրս էր գալիս հանրության մեջ, պետք է կրեր շղարշ, որը նշան էր, որ նա արդեն պատկանում է ուրիշին: Շղարշով կանանց անվանում էին *առանձնացված, սրբված, նվիրված կամ գնված* (ծանոթ է, այնպես չէ՞): Նրա կյանքը ուխտով կապված էր մեկ ուրիշի հետ: Նրա գեղեցկությունը պահված էր այդ մեկի համար: Նա փափագելով սպասում էր փեսացուի վերադարձին և իր ժամանակն անցկացնում էր՝ նախապատրաստվելով իրենց համատեղ կյանքին: Իր օժիտը պատրաստելու ընթացքում հարսնացուն հաճախ էր մտածում փեսացուի մասին, և որքան ժամանակն անցնում էր, նա գիտեր, որ ավելի էր մոտենում միմյանց հանդիպման օրը: Նա չէր ցանկանում բաց թողնել փեսացուի վերադարձը. նա ուզում էր պատրաստ լինել:

Նախքան առաջ գնալը, կանգ առնենք այստեղ և քննենք, թե ինչպես են այս հնագույն ամուսնական ծեսերն արտացոլում մեր փոխհարաբերությունը Քրիստոսի հետ, որովհետև ամուսնությունը շարունակաբար օգտագործվում է որպես Քրիստոսի հետ մեր փոխհարաբերության օրինակ:

> «Այս խորհուրդը մեծ է, բայց ես Քրիստոսի և եկեղեցու համար եմ ասում» (Եփես. 5.32):

Հիսուսը թողեց Իր երկնային տունը՝ հետևելով այն հարսնացուին, որին Իր Հայրը ընտրել էր Իր համար: Նա բավարարեց պահանջվող գինը հարսնացուին գնելու և Իրենը դարձնելու համար: Այս դեպքում դա արժեցավ Իր իսկ կյանքը: Նա կնքեց այս պայմանագիրը, երբ վերջին Ընթրիքին խմեց գինու գավաթից և հետո փոխանցեց Իր աշակերտներին: Գեթսեմանի պարտեզում Նա լիովին վճարեց պահանջվող գինը

խաչի վրա: Հետո Նա ներկայացրեց Իր արյունը՝ որպես մեղքի զոհ, և լվաց Իր հարսնացուին Խոսքի ջրով: Սա մտքի, հոգու և շնչի վերանորոգման գործընթաց է, որը տեղափոխում է մեզ խավարի թագավորությունից դեպի լույսի թագավորություն:

> «Մարդի՛կ, սիրե՛ք ձեր կանանց, ինչպես Քրիստոսն էլ սիրեց եկեղեցուն և Իր անձը մատնեց նրա համար, որ նրան սրբացնի՝ մաքրելով ջրի ավազանով՝ Խոսքով. որ Իր առջև փառավոր կանգնեցնի եկեղեցին, որ չունենա մի արատ կամ խորշոմություն կամ ուրիշ բաներ, որ սուրբ և անարատ լինի» (Եփես. 5.25-27):

Ուշադրություն դարձրեք, որ Քրիստոսը միակն է, որ մեզ սրբացնում է: Նա փրկագնում է մեզ, որ Իրենը լինենք: Մենք չենք կարող փրկագնել կամ էլ սրբացնել մեզ: Բայց կարող ենք պատրաստել մեզ, մինչ Նա տեղ է պատրաստում մեզ համար:

> «… որ եկավ Գառի հարսանիքը, և Նրա կինը պատրաստեց իրեն» (Հայտն. 19.7):

Հարսնացուն պատասխանատու էր պատրաստակամության մթնոլորտի և ճիշտ վերաբերմունքի ստեղծման համար: Որպես Քրիստոսի հարսնացու՝ մենք պետք է այնպիսի զգեստապահարան հավաքենք, որով պատրաստ կլինենք Նրա գալստյանը: «Եվ տրվեց նրան, որ սպիտակ, սուրբ և լուսափայլ բեհեզ հագնի (բեհեզը սրբերի արդարությունն է)» (Հայտն. 19.8):

Այժմ վերադառնանք մեր զույգին: Հարսնացուն սպասողական վիճակում է, իսկ փեսան քրտնաջան աշխատում է՝ իր հոր տան կողքին հարսանեկան սենյակ պատրաստելով: Սա շատ ժամանակ և պատրաստություն էր պահանջելու, որովհետև այդ ժամանակ չկային պատրաստի շինանյութեր: Նա պետք է փնտրեր ու գներ անտառանյութ, կամ ինքը ծառեր կտրեր և պատրաստեր այդ ամենը: Ինչ էլ լիներ, նա ուրախությամբ աշխատում էր՝ իմանալով, որ իր աշխատանքը իրեն ավելի կմոտեցներ աղջկան: Նրա հայրը ուշադիր հետևում էր որդու առաջընթացին, խրախուսում և ուղղություն էր տալիս նրան: Հայրն էր այն մարդը, ով պետք է նայեր կացարանին և ասեր, թե

երբ է այն պատրաստ լինելու հարսնացուի համար: Հարսնացուի ընտանիքն իր հերթին նույնպես պատվիրակներ էր ուղարկում, որպեսզի համոզված լիներ, որ փեսան պահում է հարսնացուին տված իր խոսքը: Եվ նրանք հարսնացուին ծանուցում էին՝ ասելով. «Քիչ է մնացել, պատրաստվի՛ր»:

Ի վերջո հայրը նայում էր ավարտված աշխատանքին, և շրջվելով որդուն՝ ասում էր. «Գնա՛ քո հարսնացուի ետևից»: Փեսան համախմբում էր իր ընկերներին, և մեծ ուրախությամբ գնում էին հարսնացուին բերելու: Նրանք այնպես էին ծրագրում իրենց ճանապարհը, որ կարողանային աղջկա մոտ հասնել գիշերը: Մոտենալով քաղաքին՝ հնչեցնում էին շեփորը, որպեսզի զգուշացնեին հարսնացուին, որ սիրեկանը շատ մոտ է: Իհարկե, այս ձայնն արթնացնում էր յուրաքանչյուր նշանված հարսնացուի, և բոլորն էլ արթնանում էին՝ դողալով հուզմունքից: Նրանք պատրաստում էին իրենց լապտերը՝ թարմացնելով յուղը և կտրելով պատրույգները (կարծում եմ, որ նրանք մաքրում էին նաև ատամները և գեղեցիկ հագնվում էին): Այնուհետև նրանք ուշադիր լսում էին փեսայի ընկերների հայտարարությունը: Այս ընկերները պատրաստում էին նրա ճանապարհը դեպի հարսնացուի տուն և կանչում հարսնացուին. «... Ահա՛ փեսան գալիս է. դո՛ւրս եկեք նրան դիմավորելու» (Մատթ. 25.6):

> *Հարսնացուն վառվող լապտերով վազում էր իր սիրեկանի մոտ, իսկ ետևից գնում էին աղախինները: Փեսան վերցնում էր նրան և անմիջապես վերադառնում հոր տուն:*

Աղջկա հայրն ու եղբայրները դուրս էին գալիս ստուգելու՝ արդյո՞ք իրենց փեսան է: Նրանք, իհարկե, չէին ցանկանա աղջկան սխալ փեսայի հետ ուղարկել: Հարսնացուն վառվող լապտերով վազում էր իր սիրեկանի մոտ, իսկ ետևից գնում էին աղախինները: Փեսան վերցնում էր նրան և անմիջապես վերադառնում հոր տուն և միասին մտնում էին հարսանեկան սենյակ: Հաջորդ յոթ օրերին նրանք վայելում էին իրենց սերը:

Փեսայի ընկերները մնում էին դրսում և սպասում այն ուրախության պահին, երբ ամուսնությունը փաստացի պետք է կայանար: Երբ նրանք լսում էին փեսայի ձայնը, իրենց ուրախությունը հաղորդում էին մնացած ներկա գտնվողներին, և տոնակատարությունը սկսվում էր:

Պատուհանից դուրս էր ուղարկվում անկողնու սավանը: Այն տրվում էր հարսնացուի հորը՝ որպես իր դստեր արժանապատվության ապացույց: Նրա կուսաթաղանթի թափված արյունը ներկայացնում էր ուխտի վերջնական կնիքը: Յոթ օրից նա հանում էր շղարշը՝ փեսայի հետ սենյակից դուրս գալիս, և սկսվում էր ամուսնական խնջույքը: Գինին և ուտելիքը լեփլեցուն դրվում էին սեղաններին: Նորապսակներին օրհնում էին և նվերներ տալիս:

Սա Հիսուսի և Նրա հարսնացուի փառավոր ու ռոմանտիկ փոխհարաբերության արտացոլումն է: Նա իսկապես գնացել է մեզ համար տեղ պատրաստելու: Նա շուտով գալու է, և Նրա վարձքն Իր հետ է: Մենք պետք է պատրաստենք մեզ Նրա վերադարձի համար:

«Ուրեմն, արթո՛ւն կացեք, որովհետև չգիտեք ո՛չ օրը, և ո՛չ ժամը» (Մատթ. 25.13):

Սիրելի՛ երկնային Հայր,

Քո Հոգով հայտնի՛ր ցանկացած բնագավառ, որը ես դեռ չեմ առանձնացրել Քեզ համար: Ես ուզում եմ լինել սուրբ և լիովին Քոնը: Սովորեցրո՛ւ ինձ հարսնացուի ճանապարհները, որպեսզի իմ սիրտը ուրախ լինի՝ լինելով միշտ պատրաստ վիճակում: Թող իմ լապտերը միշտ պատրաստ լինի և յուղով լեցուն: Բացի՛ր իմ սրտի աչքերը, որպեսզի կարողանամ հստակ տեսնել այդ ժամանակը: Ես ուզում եմ ապրել որպես հավատարիմ հարսնացու, ոչ թե որպես չար ծառա, որը շշնջում է իր սրտում. «Իմ Տերն ուշանում է»: Ես ուզում եմ, որ իմ կյանքի առանձնացումը և նվիրումը տպավորություն թողնեն ուրիշների վրա: Թող նրանք իմանան, որ ես Քոնն եմ, և Դու՝ իմը: Ծածկի՛ր ինձ Քո Հոգով, մինչև ես կուրախանամ ու կտեսնեմ Քեզ երես առ երես:

Սիրով՝ Քո դուստր

12 *Մաքրության ուժը*

Վարո՞ղ են արդյոք երիտասարդները ուժեղ և ազատ լինել: Պողոսը համոզված էր, որ կարող են:

«Ոչ ոք քո մանկությունը չանարգի, այլ օրինա՛կ եղիր հավատացյալներին խոսքով, վարքով, սիրով, հավատքով, սրբությունով (անգլ.՝ մաքրությունով)» (Ա Տիմոթ. 4.12):

Այս խոսքը չի համապատասխանում այսօրվա իրականությանը: Պողոսը երիտասարդին հանձնարարում է օրինակ լինել հավատացյալներին: Այսօր մենք հազիվ թե մտածենք չամուսնացած երիտասարդների մասին՝ որպես հավատքի և մաքրության փայլուն օրինակներ: Մինչդեռ Պողոսը կոչ է անում Տիմոթեոսին՝ գլուխը բարձր պահել և թույլ չտալ, որ իր երիտասարդությունը դառնա երկչոտության պատճառ: Եթե երիտասարդից պահանջվում է լինել օրինակ խոսքով, վարքով, սիրով, հավատքով և մաքրությամբ, որքան ավելի մենք՝ հասուն մարդիկս, պետք է ապրենք սուրբ կյանքով:

Դու ունես Աստծո շնորհքը և Նրա զորությունը՝ քայլելու այս պատվիրանի մեջ: Անկախ տարիքից՝ դու կարող ես ապրել այնպիսի կյանքով, որը մաքրության օրինակ կլինի քեզ հետևողների համար:

Առաջին հայացքից մաքրությունը կարող է թվալ նույնը, ինչ սրբությունը, բայց այդպես չէ: Հիշե՛ք, սուրբ լինել՝ նշանակում է առանձնացված լինել, իսկ մաքուր լինել՝ նշանակում է, թե ինչպես ես քեզ պահում առանձնացված լինե-

> *Դու կարող ես ապրել այնպիսի կյանքով, որը մաքրության օրինակ կլինի քեզ հետևողների համար:*

լով հանդերձ: Մաքրությունը զուգընթաց է սրբության հետ: Այս գլխում մենք կնայենք որոշ հարցեր, որոնք հաճախ շրջանցվում են կրոնական շրջանակներում, բայց բացահայտ քննարկվում են աշխարհիկ միջավայրերում: Ես խորհուրդներ կտամ՝ հենվելով Աստծո Խոսքի իմաստության և զգուշացումների, ինչպես նաև ծառայության մեջ իմ տարիների փորձի վրա: Ես ցանկանում եմ օգնել ձեզ կառուցել այնպիսի հիմք, որը չի կարող խարխլվել: Ուստի, պատրաստվե՛ք. մենք դուրս կբերենք մի շարք աստվածաշնչյան տեղեր: Աստված ցանկանում է լինել մեր կյանքի աղբյուրը: Եթե դու իսկապես համարձակ ես, հրավիրի՛ր Սուրբ Հոգուն քննել քո սիրտը և շարժառիթները Աստծո սուր և թափանցող Խոսքի միջոցով: Սա թուլասիրտների համար չէ:

> «Որովհետև Աստծո Խոսքը կենդանի է և զորավոր և ամեն երկսայրի սրից ավելի կտրուկ է և թափանցում է մինչև շնչի, հոգու, հոդվածների և ծուծի բաժանվելը և քննող է սրտի մտքերն ու խորհուրդները: Եվ չկա մի արարած աներևույթ Նրա երեսից. բայց ամենն էլ մերկ և բաց է Նրա աչքերի առջև, որի հետ է մեր բանը» (Եբր. 4.12,13):

Աստծո Խոսքը պարզապես թղթի վրա գրված տառեր չեն: Այն կենդանի է: Հավատա՛ և մոտեցի՛ր, որովհետև այն փափագում է մտնել քո սրտի մեջ և գիշերվա մթին շշնջալ քո ականջներին: Այն այնքա՛ն սուր է, որ կարող է բաժանել հոգին շնչից և բացահայտել մեր թաքնված մտքերն ու վերաբերմունքը:

Հիշե՛ք, որ ոչինչ ծածկված չէ Աստծուց: Նա ամեն բան տեսնում է, բայց մենք՝ ոչ: Հաճախ հենց մեր սրտերն են խաբում մեզ, բայց եթե մենք խնդրենք ճշմարտությունը, Աստված կտա մեզ Իր իմաստությունը Իր Խոսքի միջոցով: Ես չեմ ուզում մարդկանց խորհուրդը... Ես ցանկանում եմ Աստծո իմաստությունն ու հասկացողությունը: Մարդու խորհրդի վրա միշտ ներգործում են այս աշխարհի մշակույթն ու չափանիշները: Դա հիմա-

> *Աստծո Խոսքը պարզապես թղթի վրա գրված տառեր չեն: Այն կենդանի է: Հավատա՛ և մոտեցի՛ր, որովհետև այն փափագում է մտնել քո սրտի մեջ և գիշերվա մթին շշնջալ քո ականջներին:*

րություն է, որը փոխվում է տասնամյակից տասնամյակ՝ արտացոլելով հասարակության բարոյական մթնոլորտը: Բայց Աստծո Խոսքը մնում է հավիտյան:

Այս գլխում կբախվեք այնպիսի ճշմարտությունների, որոնք կարող են անհնարին կամ անիրական թվալ: Սուտ է այն, որ Նա անկարող է պահել Իր խոստումները: Նա խոստացել է մեզ պահել ընկնելուց և անարատ կանգնեցնել գահի առջև: Մենք կճանաչենք ճշմարտությունը, և այն ազատ կարձակի մեզ:

Առաջինը՝ կնայենք մի քանի խոսքեր, ապա ճշմարտության լույսի ներքո կպատասխանենք որոշ հարցերի: Մենք ցանկանում ենք արթուն լինել, որպեսզի չշեղվենք կանոններից, որովհետև Աստծո կանչը դեպի սրբություն նույնն է, ինչ դառնալ Նրանը:

> «Բայց պոռնկություն և ամեն պղծություն կամ ագահություն թող չանվանվի ձեզանում, ինչպես սուրբերին է վայել» (Եփես. 5.3):

Որքան ուժեղ է այս Խոսքը: Անգլերենում ասվում է, որ մեզ չի թույլատրվում պոռնկության, պղծության կամ ագահության նույնիսկ մի ակնարկ: Ինչո՞ւ: Ի՞նչ վատ բան կա մի փոքր ակնարկի մեջ, եթե ես իրականում ինչ-որ մեծ բան չեմ անում: Ո՞րն է ակնարկի նպատակը, եթե ոչ՝ տալ գաղափար, որ կա ավելին, քան այն, ինչ անմիջապես երևում է: Այսպիսի վարքագիծը (կամ դրա ակնարկը) ընդունելի չէ նրանց համար, ովքեր Տիրոջն են: *«Անվայել»* բառը, ըստ բացատրական բառարանի, նշանակում է «կոպիտ, ապշեցնող, անպատշաճ, անհարմար, վիրավորական» և, ի վերջո, «մի բան, որը չարժե անել»:

Այսպիսի վարքագիծը շփոթություն է առաջացնում: Օրինակ՝ լայն բացվածքով նեղ շապիկը *ակնարկող* տպավորություն է թողնում: Ի՞նչ է այն *ակնարկում:* Այն, որ կա ավելին, քան դու տեսնում ես և կարող ես ավելի մոտիկից նայել, քանի որ արդեն այդքանն առաջարկվել է (Մենք սրա մասին ավելի ուշ կքննարկենք): Լինելով Աստծունը՝ մենք պետք է պատվենք Նրան այն ամենով, ինչ ասում և անում ենք: Սա նշանակում է, որ թե՛ մեր խոսքերը, թե՛ մեր վարքը պետք է կրեն Նրա պատկերը: Մենք ավելին ենք, քան պարզապես ներված. մենք սուրբ ենք Նրա համար: Մենք պետք է լինենք լույս այնտեղ, որտեղ մի ժամանակ խավար

ենք եղել: Շարունակենք կարդալ Եփեսացիների 5-րդ գլուխը:

> «Եվ գարշություն կամ հիմար խոսքեր կամ խեղկատակություն, որ չեն վայելում, այլ մանավանդ գոհություն» (Եփես. 5.4):

Անվայել վարքագծի ցանկին ավելանում են գարշությունը, հիմար խոսքերը կամ խեղկատակությունը: Ես ենթադրում եմ, որ նրանք կեղտոտ կատակներ էլ են արել, որովհետև արեգակի տակ ոչ մի նոր բան չկա (տե՛ս Ժողով. 1.9): Շատ հաճախ մենք չենք գիտակցում մեր խոսքերի ուժը՝ ուրիշներին օրհնելիս կամ չարախոսելիս: Եկեք մասնատենք այս դասակարգումներից յուրաքանչյուրը, որպեսզի ոչ մի հարց չմնա դրանց նշանակության վերաբերյալ.

- **Գարշությունը** անպարկեշտ կամ պիղծ խոսքն է, որն արտահայտվում է խոսքերի, ժեստերի կամ նկարների միջոցով:
- **Հիմար** խոսքը չար, մեղավոր խոսքն է՝ առանց ուշադրություն դարձնելու աստվածային օրենքին, Աստծո փառքին կամ որևէ մեկի հավիտենական երջանկությանը:
- **Խեղկատակությունը** կոպիտ, պիղծ, կոշտ, լկտի, անտաշ կամ խղճուկ խոսքն է:

Այսպիսի խոսքերի փոխարեն մեզնից պետք է գոհություն բխի: Մենք պետք է գոհության վերաբերմունք ունենանք այն շնորհների ու ողորմության համար, որ Աստված արդեն ցուցաբերել է: Միայն սա պետք է բավական լինի, որ թողնենք դատարկ խոսքերը: Մենք չպետք է կոպիտ, նվնվացող և տրտնջացող լինենք: Մենք պետք է վարվենք Աստծո նման, մեր խոսքերի միջոցով օրհնություն և կյանք բաց թողնենք, հոգով ապրենք և ունենանք շնորհակալ սիրտ:

> «Որովհետև սա գիտեք, որ ոչ մի պոռնիկ կամ պիղծ կամ ագահ, որ կռապաշտ է, ժառանգություն չունի Քրիստոսի և Աստծո արքայությունում: Ոչ ոք թող չխաբի ձեզ դատարկ խոսքերով, որովհետև այս պատճառով էլ Աստծո բարկությունը գալիս է անհնազանդության որդիների վրա: Ուրեմն մասնակից մի՛ եղեք նրանց» (Եփես. 5.5-7):

Առաջին անգամից պարզ չլինելու դեպքում առաքյալը ցանկանում

է հստակեցնել այս զգուշացման և հորդորի իմաստը՝ «ոչ ոք թող չխաբի ձեզ դատարկ խոսքերով»: Դատարկ խոսքերը զուրկ են կյանքից: Նրանք չունեն իրական զորություն, որ փոխեն մարդուն, բայց ունեն զորություն խաբելու մարդուն: Հիշե՛ք, Աստծո Խոսքը սուր է և կենդանի և մղում է մեզ ապաշխարության: Դատարկ խոսքերը տաղտկալի են, մեռած և տանում են մեզ ինքնաբավարարման քնի մեջ՝ խաբելով նրանց, ովքեր չեն օգտագործում Աստծո Խոսքի սուրը՝ ճշմարտությունը ստից բաժանելու համար: Կարևոր չէ, թե որքան գեղեցիկ, բայց դատարկ խոսքեր կարող են հնչել, ի վերջո նրանք քեզ չեն առաջնորդի դեպի կյանք: Այս դատարկ խոսքերի օրինակներից միգուցե լսած կլինեք.

> *«Ոչ ոք թող չխաբի ձեզ դատարկ խոսքերով»: Դատարկ խոսքերը զուրկ են կյանքից:*

«Ոչի՛նչ, մենք աճման ընթացքի մեջ ենք»,

«Աստված գիտի քո սիրտը»,

«Ոչ ոք կատարյալ չէ»,

«Բոլորն էլ այդպես են անում»,

«Դու ավելի ճիշտ ես վարվում, քան շատերը»:

Սրանք փոխզիջման խոսքեր են և, չնայած նրան, որ կարող են ճիշտ լինել, միևնույն է, ճշմարտության կենդանի խոսքեր չեն: Ճշմարտությունը դրդում է մեզ փոխվել, թողնել մեր ճանապարհները և ձգտել հասնելու Աստծո չափանիշներին: Նրա մտածելակերպը միանգամայն տարբեր է մեր մտածելակերպից: Դատարկ խոսքերը միայն քաջալերում են մեզ մնալ նույնը՝ առաջարկելով արդարացնել մեր վարքագիծը ներկա մշակութային չափանիշների պատճառով: Բայց մեր փոխհարաբերությունը ոչ թե մեր մշակույթի, այլ Աստծո հետ է:

«Չգիտե՞ք, որ աշխարհի սերը (աշխարհի հետ ընկերությունը) թշնամություն է Աստծո դեմ...» (Հակոբ. 4.4):

Մենք խորհուրդ ենք ստանում ոչ թե այս ներկա աշխարհի պատմությունից և իմաստությունից, այլ Աստծո Խոսքից: Քրիստոնյաները կանչված են խրախուսելու միմյանց: Սա նշանակում է, որ մենք խիզախություն ենք բերում մեկս մյուսին՝ խոսելով Աստծո խոստումները: Այս

դատարկ խոսքերի դեմ մենք ունենք Աստծո խորհուրդը.

«Ոչինչ, մենք բոլորս աճման ընթացքի մեջ ենք»: Մենք ընթացքի մե՞ջ ենք: Այո՛: Բայց մեր նպատակը ընթացքը չէ, այլ կերպարանափոխումը, և մեզ խոստացված է, որ Նա, Ով սկսեց բարի աշխատանքը մեզանում, ավարտին կհասցնի (տե՛ս Փիլիպ. 1.6):

«Աստված գիտի քո սիրտը»: Քո սրտի ավելցուկից քո բերանը կխոսի: Բարի մարդը բարի բաներ է հանում իր սրտի բարի գանձից, իսկ չար մարդը չար բաներ է հանում իր սրտի չար գանձից (տե՛ս Մատթ. 12.34,35): Այն, ինչ ասում ես, բացահայտում է քո սիրտը:

«Ոչ ոք կատարյալ չէ»: «Արդ, դուք կատարյալ եղեք, ինչպես ձեր Հայրը, որ Երկնքում է, կատարյալ է» (Մատթ. 5.48): «Որովհետև յոթ անգամ վայր կընկնի արդարը և կկանգնի...» (Առակ. 24.16):

«Բոլորն էլ այդպես են անում»: «Արդ, սա եմ ասում և վկայում Տիրոջով, որ դուք այլևս չգնաք, ինչպես ուրիշ հեթանոսներն են գնում իրենց մտքի ունայնությունով» (Եփես. 4.17):

«Դու ավելի ճիշտ ես վարվում, քան շատերը»: «Որովհետև չենք համարձակվում մեր անձը կշռել և բաղդատել ոմանց հետ, որ իրենց անձերը գովելով հանձնարարում են. այլ նրանք, իրենցով իրենց անձերը չափելով և իրենց անձերը իրենց հետ բաղդատելով, չեն հասկանում» (Բ Կորնթ. 10.12): Ինչո՞ւ հիմար լինել, եթե կարող ենք իմաստուն լինել: Դադարե՛ք նայել ուրիշներին և նայե՛ք ազատության կատարյալ օրենքին:

> *Տիրոջ Խոսքը չի կարելի փափկեցնել այնքան, որ խառնվի մարդկային իմաստությանը կամ «Նյու էյջի» գաղափարներին:*

Մենք պետք է հաստատ լինենք հետևյալ բանի մեջ. Աստված և Նրա Խոսքը ճշմարտություն են, իսկ մարդու խորհուրդը սուտ է: Տիրոջ Խոսքը չի կարելի փափկեցնել այնքան, որ խառնվի մարդկային իմաստությանը կամ «Նյու էյջի» գաղափարներին: Աստծո Խոսքը միշտ միայնակ է կանգնել և միայնակ էլ անցել է ժամանակի քննությունը: Այն հասել է մեզ որպես իմաստության և առաջնորդության գանձարան: Այդ պատճառով եկեք լինենք ճշմարտության հավատարիմ վկաներ, հորդորենք միմյանց և առաջ մղենք դեպի նպատակը:

Տասը տարի առաջ Զոնը և ես այցելեցինք Իսրայել: Ես մինչև հիմա հիշում եմ, թե ինչ պատմեց մեզ մեր արաբ էքսկուրսավարը հռոմեացիների մասին: Նա պնդում էր, որ նրանք բարյացակամ նվաճողներ են եղել և նույնիսկ թույլ են տվել հրեա ժողովրդին պահպանել իրենց կրոնական համոզմունքները. նրանք պարզապես ցանկացել են, որ հրեաներն ընդունեն հռոմեական մշակույթը: Նրանք ցանկանում էին, որ հրեաները ապրեին, վարվեին հռոմեացիների պես: Ես համոզված չեմ, որ այն ժամանակվանից ի վեր փոխված լինի նվաճողական մարտավարությունը:

Մենք լսում ենք ներկա աշխարհի խորհուրդը. «Դու կարող ես ունենալ քո կրոնը, բայց, խնդրում եմ, այս աշխարհը նույնպես վայելիր: Հանգստացի՛ր: Խառնվի՛ր բոլորի հետ: Ինչո՞ւ պայքարել այս աշխարհի ուժերի դեմ: Դու կարող ես հավատալ՝ ինչին, որ ուզում ես… պարզապես վարվի՛ր մեզ նման»: Բայց, իհարկե, սա մեզ համար չէ: Աստված երբեք չի կանչել մեզ, որ խառնվենք բոլորի հետ: Կրկին նայենք Հակոբոսի թուղթը.

> «Շնացողնե՛ր, չգիտե՞ք, որ աշխարհի սերը թշնամություն է Աստծո դեմ. արդ, ով որ կարողանա աշխարհին բարեկամ լինել, իր անձն Աստծո թշնամի կանի» (Հակոբ. 4.4):

Երբ քայլում ենք և՛ աշխարհի մեջ, և՛ Աստծո, մենք պայքարի մեջ ենք լինում, որովհետև մեր սրտերը բաժանված են: Դավիթը և Եզեկիել մարգարեն՝ երկուսն էլ հասկանում էին չմասնատված, մեկ սիրտ ունենալու կարիքը.

> «Տե՛ր, ցո՛ւյց տուր ինձ Քո ճանապարհը, որ գնամ Քո ճշմարտության մեջ. *միացրո՛ւ իմ սիրտը,* որ Քո անունից վախենա» (Սաղմ. 86.11):

> «Եվ նրանց պիտի մեկ սիրտ տամ և նոր հոգի պիտի դնեմ ձեր ներսում և պիտի հեռացնեմ քարե սիրտը նրանց մարմնից և նրանց մի մսե սիրտ տամ: Որպեսզի Իմ օրենքներով գնան և Իմ իրավունքները պահեն և կատարեն, որ նրանք Ինձ համար ժողովուրդ լինեն, և Ես նրանց համար Աստված լինեմ» (Եզեկ. 11.19,20):

Ես հավատում եմ, որ այս գիրքը քո ձեռքում է այն պատճառով, որ դու ցանկանում ես Աստծուն ծառայել ամբողջ սրտով: Սա նշանակում է, որ քո մարմինը կհետևի քո սրտին: Երբեք մաքրության կոչը այդքան հրատապ, ճնշող կամ դժվար չի եղել:

> *Սա Հոգու մեջ հրատապ կանչ է՝ զարթնել արդարության համար:*

«Եվ այս արեք՝ իմանալով ժամանակը, որ ժամն է արդեն քնից զարթնելու, որովհետև հիմա մեզ ավելի մոտ է փրկությունը, քան թե այն ժամանակ, որ հավատացինք: Գիշերն անցավ, գնաց, և ցերեկը մոտեցել է...» (Հռոմ. 13.11,12):

Սա Հոգու մեջ հրատապ կանչ է՝ զարթնել արդարության համար: Ինչպե՞ս ենք դա անում: Մենք օգտագործում ենք Հոգու սուրը՝ Աստծո Խոսքը, կտրելու յուրաքանչյուր բան, որ կապում է մեր սիրտը այս ընկած աշխարհի հետ: Նա ցանկանում է, որ մեր մտերմության համար պայքար չլինի: Նա հրավիրում է մեզ մեր սրտերը դնելու Իր ապահով հոգատարության ներքո, ապա կռիվ մղելու մեր հոգու թշնամիների դեմ:

«Ուրեմն, սպանե՛ք ձեր անդամները, որ երկրի վրա են, պոռնկությունը, պղծությունը, կիրքը, չար ցանկությունը և ագահությունը, որ կռապաշտություն է: Որոնց համար Աստծո բարկությունը գալիս է անհնազանդության որդիների վրա» (Կողոս. 3.5,6):

Ահա կրկին Աստծո բարկության խոստումը պոռնկության, պղծության և ագահության համար: Աստված կոչ է անում մեզ խզել կապերը այն բաների հետ, որոնց վրա գալու է Իր բարկությունը: Որպեսզի հավատարմութամբ օգտագործենք սուրը, մենք պետք է հասկանանք և հնազանդվենք նրա զորությանը: Աստծո Խոսքը զորություն ունի հեռացնելու մեզ մեղքի զորությունից:

Ես ենթադրում եմ, որ եթե վերցրել եք այս գիրքը, ուրեմն փնտրում եք որոշ հարցերի պատասխաններ: Ես անելու եմ լավագույնը՝ ուղիղ պատասխաններ տալու համար: Իհարկե, դուք ազատ եք իմ տեսակետներին չհամաձայնելու հարցում, որովհետև ես չեմ ընտրել ոսկե միջինը: Բայց հավատում եմ, որ դրանք առողջ են աստվածաշնչյան

տեսանկյունից: Այս գլխում կնայենք մաքրությանը՝ խոսքերի և գործերի առումով: Հաջորդ գլխում կխոսենք մաքրության մասին՝ մեր տեսքի և հագուստի առումով:

Հիշե՛ք այն հարցերից մի քանիսը, որոնք բարձրացրինք գլուխ 1-ում: Եկեք սկսենք «Որքա՞ն կարելի է խորանալ» հարցից: Դուք հավանաբար հիշում եք իմ պատասխանը: Դու կարող ես այնքան հեռու գնալ քո ընկերոջ հետ փոխհարաբերություններում, որքան նույն արարքը առանց անհարմար զգալու կանեիր քո հոր ներկայությամբ: Սա իմ փորձն էր հանելու այս հարցը քո կանոնների գրքից և մտցնելու փոխհարաբերությունների մակարդակի մեջ:

Ավելի խորը քննենք այս հարցը. ե՞րբ է սեռական շփումը ամուսնությունից դուրս համարվում մեղք: Արդյո՞ք դա սկսվում է առաջին կրքոտ համբույրից, հագուստի վրայից կրծքերը շոյելուց, թե՞ երբ բարձրացնում ենք բլուզը և հանում ներքնազգեստը: Միգուցե գոտկատեղից վերև ամեն բան թույլատրելի է, բայց հենց այդ սահմանն անցավ, դու մեծ անախորժության մեջ ես: Միգուցե գոտկատեղից ներքև հագուստի վրայից շոշափելը թույլատրելի է, բայց հենց այդ հագուստն էլ հանվեց, դու հայտնվում ես վտանգավոր ճանապարհին: Երբ այս ֆիզիկական սահմանները խախտվում են, և անձնական ամեն բան բացահայտվում է աչքերի և ձեռքերի համար, արդյո՞ք մենք դեռ մաքուր ենք, քանի որ չկա սեռական մերձեցում: Կամ կարելի՞ է նաև այս ամենին ավելացնել բերանի միջոցով գրգռումը, քանի որ դեռևս չկա ուղղակի սեռական հարաբերություն: Այսքան հեռու գնալով՝ արդյո՞ք անգութ չի լինի չապահովել սեռական բավարարման ինչ-որ ձև այդպես գրգռվելուց հետո: Սա արդեն կտանի դեպի օրալ սեքսը: Եվ, որքան էլ զարմանալի է, այս ամենը կարող է կատարվել առանց կորցնելու ֆիզիկական անմեղությունը: Չնայած նրան, որ այսպիսի սեռական վարքագիծ ունեցող զույգը կարող է ֆիզիկապես կույս մնալ, մի՞թե նրանք մաքուր են համարվում:

Երբ դուք սկսում եք այս ճանապարհով գնալ, յուրաքանչյուր արարք իր հետ բերում է նոր պատճառաբանություն և փաստարկ, որպեսզի համոզի ձեզ առաջ գնալ ձեր ցանկությունների և գործողությունների մեջ: Դուք զգում եք, որ մի դուռ է բացվել, և հիմա պետք է

դեմ կանգնեք ջրի մի հզոր հոսանքի, որն ավելի ուժեղ է, քան երկուսդ միասին: Դա ահռելի, անժամանակ և կրքոտ հեղեղ է, որը վարարել է ժամանակների սկզբից:

Վերադառնանք մեր սկզբնական հարցին: Ո՞ր պահից են արարքները դառնում մեղք. համբուրվելո՞ւց, շոշափելո՞ւց, մերկանալո՞ւց, թե՞ սեռական բավարարվածությունից: Ի զարմանս մեզ՝ այն չի սկսվում սրանցից և ոչ մեկով: Մեղքը չի սկսվում ֆիզիկական ոլորտում, այն սկսվում է ցանկությունից: Սա է պատճառը, որ Հիսուսն ասաց, թե կնոջը ցանկությամբ նայողը մեղավոր է շնության մեջ:

> *Մեղքը չի սկսվում ֆիզիկական ոլորտում, այն սկսվում է ցանկությունից:*

«Բայց ամեն մեկը փորձվում է բուն իր ցանկությունից հրապուրված և խաբված: Եվ այնուհետև, որ ցանկությունը հղացած է, ծնվում է մեղքը, և մեղքն էլ երբ որ կատարվում է, մահ կծնի» (Հակոբ. 1.14,15):

Ուշադրություն դարձրեք, այստեղ ասվում է «հրապուրված և խաբված»: Ո՞վ է դա անում: Տղամա՞րդը, որ հրապուրում և խաբում է աղջկան, թե՞ կինը, որ գայթակղում է տղամարդուն: Ո՛չ: Մեր իսկ ցանկություններն են հանում մեզ ճշմարտության լույսից, հեռացնում իմաստությունից և միաժամանակ պահանջում բավարարում: Տրվելով նրան՝ հղիանում է մեղքը: Հղիությունը մի բան է, երբ ինչ-որ բան է ապրում և մեծանում մեր ներսում, չնայած այն դեռ լույս աշխարհ չի եկել: Նա ներկա է այնտեղ, յուրաքանչյուր օր ավելի է մեծանում և, ի վերջո, ինչ կա ներսում, այլևս չի կարող ծածուկ մնալ և մութ արգանդից դուրս է գալիս լույս աշխարհ:

Եկեք համարձակությամբ անդրադառնանք մեկ այլ կարևոր հարցի, որը հաճախ շրջանցվում է քրիստոնեական շրջանակներում: Խոսքը մաստուրբացիայի (ձեռնաշարժության) մասին է: Կարելի՞ է դա, քանի որ այն կոնկրետ չի արգելվում Աստվածաշնչում:

Լավ, չնայած այն հնարավոր է և բառացի նշված չէ Սուրբ գրքում, ես հավատում եմ, որ Աստվածաշունչը անդրադառնում է դրան: Սա մի բան է, որ մենք կարող ենք դատել նրա պտղից: Մաստուրբացիան կարող է բնույթով կախվածություն առաջացնել, կերակրել և ուժեղացնել

ցանկությունը: Այն կարող է սկսվել ուղղակի ֆիզիկական բավարարվածությամբ կամ կարիքով, բայց հազվադեպ է մնում այդ մակարդակի վրա: Ժամանակի ընթացքում այն միահյուսվում է երևակայության և հաճախ պոռնոգրաֆիայի հետ: Դրանք կարող են լինել անցյալի կամ ներկայի պատկերները ֆիլմերից, նկարներից կամ, նույնիսկ, անցյալի սեռական փորձից: Այն սովորեցնում է ինքնաբավարարում և հակառակ է մերձ փոխհարաբերություններին, որովհետև այն կենտրոնացած է միայն սեփական «ես»-ի վրա: Մեզ պատվիրվել է սպանել մեր անդամները, որ երկրի վրա են, և հետևել Խաչին, որը ինքդ քեզ ուրանալու ամենօրյա կյանքն է:

«Որ անզգայացած՝ իրենց անձերը մատնեցին անառակության ամեն պղծության գործերի մեջ ագահությունով» (Եփես. 4.19):

«Իրենց անձերը մատնեցին» բառերը խոսում են հանձնվելու, մեր կամքը ուրիշի ցանկություններին հանձնելու մասին: Երբ մենք տրվում ենք զգացողություններին, դա նման է կրքի հրդեհի մեջ փայտ ավելացնելուն, որից հետո բոցը սպառնում է դուրս գալ սահմաններից: Սկզբում մենք բթացնում ենք զգայարանները, հետո կորցնում ամբողջ զգայունակությունը Հոգու բաների նկատմամբ: Մենք սկսում ենք շարժվել ոչ թե Սուրբ Հոգով, այլ՝ զգայությունների քմահաճույքով կամ ֆիզիկական զգացողություններով: Բավարարվածության յուրաքանչյուր գործողություն ուժեղացնում է կիրքը և զորացնում սովորույթի ամրությունը. սա պաշտպանում և խորացնում է կրքի ուժը: Տասնհինը տարվա ծառայության ընթացքում ես երբեք չեմ խոսել սեռական խնդիրներ ունեցող որևէ զույգի կամ սեռական կախվածություն ունեցող որևէ մարդու հետ, որոնց համար մաստուրբացիան խոշոր խնդիր չի եղել, նույնիսկ ամուսնանալուց հետո:

> *Երբ մենք տրվում ենք զգացողություններին, դա նման է կրքի հրդեհի մեջ փայտ ավելացնելուն, որից հետո բոցը սպառնում է դուրս գալ սահմաններից:*

Ես լսել եմ, թե ինչպես են մաստուրբացիան արդարացրել մի փաստարկով, թե սրտով մաքուրների համար ամեն ինչ մաքուր է: Բայց մենք չենք կարող «մաքուր» անվանել այն, ինչը տանում է պղծության՝ անկախ նրանից, թե որքան մաքուր կարող է լինել մեր սիրտը: Ոչ էլ

կարող ենք օրինական համարել այն, ինչը Աստծո իմաստությունը հակառակն է համարում: Ես հավատում եմ, որ մաստուրբացիան հոգու պտուղ համարվող *ժուժկալության* (տե՛ս Գաղատ. 5.23, Բ Պետր. 1.6) և մտքի մաքրության (տե՛ս Փիլիպ. 4.8) խախտում է:

> «Եվ ձեզնից ամեն մեկը գիտենա իր անոթը պահել սրբությամբ և պատվով» (Ա Թեսաղ. 4.4):

Հետաձգված բավականության պտուղը առաջ է բերում համբերություն, դիմացկունություն և զսպվածություն: Սրանք իրենց հերթին ծնում են ֆիզիկական, հուզական և հոգևոր փափագ: Եթե թույլ տրվի, որ այս փափագը իր գործն անի մեր ներսում, այն կստեղծի բուռն ցանկություն՝ այդ փափագը կիսելու մեկ ուրիշի հետ: Երբ հրաժարվում ենք այն բավարարել ինքներս մեզանով, մենք ընկալում ենք փափագի և խորը մտերմության (մերձ փոխհարաբերության) էությունը, որովհետև մտերմիկ, մերձ փոխհարաբերությունը պետք է կիսել մեկ ուրիշի հետ: Ինքնաբավականությունը և մաստուրբացիան, ստանալով բավարարում, կերակրում են եսասիրությունը: Սա իր հերթին նպաստում է կրքի ուժեղացմանը, և քեզ մոտ ձևավորվում է այնպիսի գաղափար, որ ուրիշները գոյություն ունեն միայն քո ցանկությունները հագեցնելու համար:

> *Հետաձգված բավականության պտուղը առաջ է բերում համբերություն, դիմացկունություն և զսպվածություն: Սրանք իրենց հերթին ծնում են ֆիզիկական, հուզական և հոգևոր փափագ:*

Երկար ժամանակ կարծել են, որ բոլոր տղաները զբաղվում են մաստուրբացիայով: Այս մտածելակերպը մեծ մասամբ կապված է պոռնոգրաֆիայի հետ, բայց ենթադրվում է, որ հիմա աղջիկները նույնպես մտել են այս շրջանակների մեջ: Կանայք սկսում են մտածել, որ իրենց մոտ ինչ-որ բան այն չէ, եթե չզբաղվեն այսպիսի սեռական ակտիվությամբ: Շատ կանացի ամսագրեր ոչ միայն խրախուսում են մաստուրբացիան, այլև հաճախ սովորեցնում են իրենց ընթերցողներին, թե ինչպես դա անել: Ո՞ւր ենք այսպես գնում: Մենք այնքա՛ն գեղեցկություն ենք կորցրել: Իհարկե, եթե շարունակենք այս ճանապարհով, որոշ կանայք կհանգեն այն եզրակացության, որ տղամարդու կարիք

ունեն միայն այն ժամանակ, երբ ցանկանում են հղիանալ:

Որպես վերջնական մեկնաբանություն՝ ես չեմ հավատում, որ մաստուրբացիան նպաստում է մաքրությանը: Այն չի օգնում սուրբ Աստծո առջև մաքուր քայլելու առողջ ցանկության առաջացմանը: Այն փորձ է անում բավարարել օրինական մարդկային կարիքները անօրինական ձևով, որը տանում է եսասիրության: Խաչը վերցնել՝ նշանակում է մերժել մարմինը և ոչ թե հագեցնել այն: Եթե դուք ամուսնացած չեք, ձեր ներսի փափագը, կիրքը դրեք Աստծո հետ փոխհարաբերությունների կամ ուրիշներին օգնելու մեջ: Եթե ամուսնացած եք, կանանցից պահանջվում է ունենալ մաքրաբարո վարքագիծ նույնիսկ ամուսնության մեջ: Մաքրությունը շարունակում է մնալ կարևոր հարց ամուսնության մեջ: Մենք պետք է մաքուր պահենք մեր ամուսնական անկողինը:

> *Խաչը վերցնել՝ նշանակում է մերժել մարմինը և ոչ թե հագեցնել այն:*

> «Ամուսնությունը ամեն կողմից պատվական է, և անկողինը՝ սուրբ, բայց շնացողներին և պոռնիկներին Աստված կդատի» (Եբր. 13.4):

Այս խոսքը չի նշանակում, որ ամուսնական անկողնում ամեն ինչ թույլատրելի է: Այն ասում է, որ ամուսնական անկողինը պետք է պատվել, պահել շնությունից և սեռական անբարոյականությունից: Սա ներառում է նաև սեռական երևակայությունները և պոռնոգրաֆիան: Մի կին խոստովանեց ինձ, որ հաճույք չի ստանում իր ամուսնու հետ սեռական հարաբերություններից, մինչև չի պատկերացնում, որ դրանք տեղի են ունենում նախքան իրենց ամուսնանալը: Նրանք ունեցել են արտամուսնական սեռական հարաբերություններ, և գրեթե քսան տարի անց նա շարունակում է վերադառնալ մեղքի անկողնուն՝ ոգեշնչում ստանալու համար: Մենք աղոթեցինք, և նա հրաժարվեց դրանից ու խնդրեց Աստծուն, որ իրենց ամուսնական անկողինը դարձնի մաքուր և կրքոտ:

Մեկ այլ խոշոր հարց է օրալ սեքսը: Իհարկե, դա մեղք կհամարվեր, եթե ամուսնությունից դուրս կատարվեր, իսկ ինչ կասեք, եթե այն ամուսնության ներսում է կատարվում: Արդյո՞ք դա նորմալ է: Ես գիտեմ, որ ուրիշները չեն համաձայնի ինձ հետ, բայց ես անձամբ չեմ

հավատում, որ կնոջ բերանը նախատեսված է տղամարդու սերմի համար: Սեռական մերձեցումն այն է, երբ երկուսը մեկ են դառնում, և նրանց միությունից կարող է նոր կյանք ծնվել: Դա յուրահատուկ է տղամարդու և կնոջ փոխհարաբերության համար: Օրալ սեքսը այդպիսին չէ: Մյուս կողմից օրալ գրգռումը՝ որպես սիրային խաղի ձև տղամարդու և կնոջ միջև, պետք է լինի մի բան, որը հարմար է երկու կողմերի համար էլ: Ադամը իմացավ իր կնոջը: Նա մտավ նրա արգանդը և իր սերմը տնկեց այնտեղ:

Ինչ վերաբերում է համասեռամոլությանը (արվամոլությանը), ես հավատում եմ, որ Աստված տղամարդկանց ստեղծել է որպես տղամարդ, իսկ կանանց՝ որպես կին, այլ խոսքով՝ հետերոսեռներ: Նա չորոշեց հետո ստեղծել մարդկային երկրորդ ռասա և անվանել նրանց համասեռամոլներ: Այդպիսի բան չկա: Կան միայն տղամարդիկ և կանայք, որոնք պայքարում են համասեռամոլության ցանկությունների դեմ, բայց նրանք մարդկային նոր տեսակ կամ ռասա չեն: Սուտ է թույլ տալ նրանց մտածել, որ նրանք ընտրություն չունեն: Աստված շատ ուժեղ է համասեռամոլության վարքագծի նկատմամբ Իր դիրքորոշման մեջ:

> «Եվ եթե մի մարդ կնոջ հետ պառկելու պես մի արուի հետ պառկի, երկուսն էլ պղծություն արին. անպատճառ պիտի մեռցվեն. նրանց արյունը իրենց վրա լինի» (Ղևտ. 20.13):

Այս խոսքը կարող է բավականին ուժեղ հնչել, բայց մի՛ մոռացեք, որ օրենքի տակ Աստված մահվան պատիժ է սահմանում թե՛ շնացողներին, թե՛ արվամոլներին: Դա մաքրության հարց է: Արվամոլությունը և շնությունը խախտում են Ծննդոցի ծրագիրը մեկ տղամարդու և մեկ կնոջ համար, որոնք մեկ են դառնում Աստծո առջև: Հին կտակարանում կան մի քանի տեղեր համասեռամոլության վերաբերյալ, այն երբեք չի ընդունվում որպես այլընտրանքային ապրելակերպ: Երբ Պողոսը խոսում է վերջին օրերի մասին, մենք տեսնում ենք, որ գոյություն ունի այդպիսի մտածելակերպ:

> *Արվամոլությունը և շնությունը խախտում են Ծննդոցի ծրագիրը մեկ տղամարդու և մեկ կնոջ համար, որոնք մեկ են դառնում Աստծո առջև:*

«Նրա համար Աստված մատնեց նրանց անարգ կրքերի, և նրանց էգերը բնական գործածությունը փոխեցին անբնականի հետ: Այնպես էլ արուները, կնոջ բնական գործածությունը թողնելով, իրենց ցանկություններով իրար հետ բորբոքվեցին, արուներն արուների հետ խայտառակություն էին գործում, և այն փոխարենը, որ արժանի էր իրենց մոլության, իրենց անձերում ընդունում էին» (Հռոմ. 1.26,27):

Անբնական ցանկություններն ու խայտառակությունները այն քաղաքակրթության արդյունքն են, որն Աստծո ճշմարտությունը փոխում է մարդկային ստի հետ: Եթե Աստված մի բան անվանում է անբնական, ամոթալի և խայտառակ, ուրեմն դա երբեք չի եղել Նրա սկզբնական ծրագրի մեջ: Աստված չի շփոթվում այս հարցում նույնպես. մե՛նք ենք շփոթվում: Նա փափագում է ազատ արձակել նրանց, ովքեր կապված են ցանկասիրությանը, լինի շնության, պոռնկության, պոռնոգրաֆիայի, թե համասեռամոլության կամ տարբեր հարաբերությունների տեսքով: Ես չեմ ասում, որ համասեռամոլության կապանքներից ազատվելը հեշտ է, բայց հնարավոր է:

Պոռնոգրաֆիկ պատկերներն, իհարկե, մաքրության խախտում են: Երբ նայում ես, դու կիսում ես ինչ-որ մեկի խայտառակությունը: Դու մասնակից ես դառնում դրան, և այն սկսում է վերահսկել քեզ: Դու կարող ես ջանք թափել ֆիլմից պատկերներ վերհիշելու համար, բայց հեշտությամբ կհիշես նրանք, որոնք սեռական մերկություն են պարունակում: Դրանք տեղավորվում են քո ուղեղի մեջ և սպասում, թե երբ ես իրենց անդրադառնալու: Դրանք կպչուն պատկերներ են, որովհետև մեղք են ներկայացնում: Հիշո՞ւմ եք Նոյի երկու որդիներին, որոնք հրաժարվեցին նայել իրենց հոր մերկությանը և թիկնոցը վերցրին ու վերադարձան նրան ծածկելու համար: Սա մեծ արարք է: Ձեզ երբևէ հարկավոր չէ նայել ուրիշների խայտառակությանը:

> *Ձեզ երբևէ հարկավոր չէ նայել ուրիշների խայտառակությանը:*

«Իմ աչքի առջև չար բան չեմ դնի...» (Սաղմ. 101.3):

Եվ կրկին.

«…Մի՞թե դուք ձեր հայրերի ճանապարհով պղծվեք և նրանց գարշություններին հետևելով պոռնկանաք» (Եզեկ. 20.30):

> *Մենք պետք է ընտրենք, թե ում խոսքին լսենք՝ մեր Փրկչի՞, թե՞ գայթակղիչի, որը որոնում է մեր կյանքը:*

Պոռնոգրաֆիան կտանջի քո խիղճը և կպատերազմի քո ամուսնական անկողնու դեմ: Եթե դու մասնակից ես եղել դրան, ապաշխարի՛ր և հետո խնդրի՛ր Աստծուն, որ օգնի քեզ հեռացնել այդ պատկերները: Աղոթի՛ր, Նրա հետ ժամանակ անցկացրո՛ւ Խոսքի և փառաբանության միջոցով:

Մենք կանչված չենք խայտառակության համար, այլ՝ մաքրության համար: Քանի որ ցանկացել ենք ամեն գնով խուսափել ամոթի, խայտառակության զգացումներից, ընդունել ենք ամոթալին: Մենք ավելի շուտ փոխզիջման ենք գնացել, քան համառորեն պայքարել ենք: Ես տենչում եմ տեսնել մաքրության ուժը յուրաքանչյուր կնոջ կյանքում, լինի նա ամուսնացած, երիտասարդ, թե ծեր: Լսե՛ք Պողոսի նախանձավորությունը, հորդորը և դարձրե՛ք այն ձերը.

«Որովհետև ձեզ համար նախանձավոր եմ Աստծո նախանձով, որովհետև ձեզ մի մարդու նշանեցի, որ մի սուրբ կույս կանգնեցնեմ Քրիստոսի առջև: Բայց վախենում եմ, միգուցե, ինչպես օձն իր խորամանկությամբ խաբեց Եվային, այնպես էլ ձեր միտքն ապականվի այն միամտությունից, որ Քրիստոսում է» (Բ Կորնթ. 11.2,3):

Մեղքը միշտ վերադառնում է օձի նման՝ փորձելով մեզ հեռացնել մաքուր նվիրվածությունից, որ ունենք Քրիստոսի հանդեպ: Մենք պետք է ընտրենք, թե ում խոսքին լսենք՝ մեր Փրկչի՞, թե՞ գայթակղիչի, որը որոնում է մեր կյանքը: Մեր վերջնական հեղինակությունը ոչ թե քարոզչի, խորհրդատուի կամ ուսուցչի խոսքն է, այլ՝ Աստծո Խոսքը: Եթե դուք խնդրեք Աստծուն, Նա կվերցնի Հոգու սուրը և ձեր կյանքից կհեռացնի ամեն ստություն:

Չնայած այս բոլոր արտաքին ձևերին՝ մենք պետք է վերադառնանք գլխավոր հարցին. մտքերի մաքրությունը բերում է արարքների, տեսքի և խոսքի մաքրության: Անկախ նրանից, թե որքան ենք պայքարում, եթե մեզ վրա գործադրվի բավականաչափ ճնշում, մենք տանուլ

կտանք, եթե նախօրոք չենք հաղթահարել ներսի պայքարը:

Ես փորձեցի տալ ձեզ այն, ինչը, իմ համոզմամբ, համապատասխանում է Աստծո Խոսքի ամբողջ Ճշմարտությանը: Ես գիտեմ, որ այս ուսմունքը կարող է ծանր Ճշմարտություն թվալ, ուստի ցանկանում եմ եզրափակել ևս մի քանի լրացուցիչ տեղերով ձեր ուսումնասիրության համար: Ցանկանում եմ, որ երբեք չքարոզեք մարդկային իմաստությունը և փոխզիջումը ու այն անվանեք Աստծո իմաստություն:

«Չգիտե՞ք, որ ձեր մարմինները Քրիստոսի անդամներ են. ապա Քրիստոսի անդամներն առնեմ, պոռնիկի անդա՞մ շինեմ, քա՛վ լիցի: Կամ թե չգիտե՞ք, որ նա, ով պոռնիկին հարում է, մեկ մարմին է նրա հետ, որովհետև՝ «երկուսն,- ասում է,- մեկ մարմին կլինեն, և նա, ով Տիրոջն է հարում, մեկ հոգի է Նրա հետ»: Փախե՛ք պոռնկությունից. ամեն մեղք, որ մարդ գործի, իր մարմնից դուրս է, բայց պոռնկություն անողն իր մարմնի մեջ է մեղանչում: Կամ թե չգիտե՞ք, որ ձեր մարմինները Սուրբ Հոգու տաճար են, որ ձեզանում է, որ Նրան Աստծուց ունեք և ձերը չեք: Որովհետև մեծ գնով գնվեցիք, ուստի փառավորե՛ք Աստծուն ձեր մարմնում և ձեր հոգում, որ Աստծունն են» (Ա Կորնթ. 6.15-20):

«Եվ հայտնի են մարմնի գործերը, որոնք են՝ շնություն, պոռնկություն, պղծություն, գիճություն… որ առաջուց ասում եմ ձեզ, ինչպես էլ առաջուց ասում էի, թե այսպիսի բաներ գործողներն Աստծո արքայությունը չեն ժառանգի» (Գաղատ. 5.19-21):

«Որովհետև սա է Աստծո կամքը՝ ձեր սրբությունը. որ դուք ետ կենաք պոռնկությունից, և ձեզնից ամեն մեկը գիտենա իր անոթը պահել սրբությամբ և պատվով, ոչ թե ցանկության կրքով, ինչպես հեթանոսներն էլ, որ Աստծուն չգիտեն» (Ա Թեսաղ. 4.3-5):

Սիրելի՛ երկնային Հայր,

Ես ցանկանում եմ ճանաչել Քեզ իմ կյանքի ամեն բնագավառում: Դու ես բուն ճշմարտությունը, լույսը, սերը, մաքրությունը և սրբությունը: Ես Քոնն եմ և ուզում եմ դողալ Քո Խոսքից: Ես թույլ կտամ, որ այն մեծարվի և դառնա իմ կյանքի հեղինակությունը: Թող Քո Խոսքի սուրը իմ կյանքի ամեն բնագավառի մեջ լինի, և խնդրում եմ, որ գործես որպես մեծագույն Բժիշկ՝ հեռացնելով թանկարժեքը՝ պիղծից: Քո վիրահատական գործիքով հեռացրո՛ւ իմ սրտից ամեն հանգույց և ամեն պղծություն իմ սեռական կյանքից, որպեսզի կարողանամ լիովին Քոնը լինել՝ առանձնացված Քո հաճույքի և նպատակի համար: Ես ընդունում եմ Քո Խոսքի ճշմարտությունը և շրջվում այս աշխարհի չափանիշներից: Հիսուսի անունով: Ամե՛ն:

Սիրով՝ Քո դուստր

13 *Հագնվել շշմեցնելու համար*

Մենք միշտ ինչ-որ բան ենք հաղորդում, լինի միտումնավոր, թե ոչ: Մեր ուղերձը հաղորդվում է երեք ճանապարհով. ինչ ենք ասում (մեր խոսքերը և ձայնի տոնը), ինչ ենք անում (մեր շարժուձևը և գործողությունները) և ինչպիսի տեսք ունենք (մեր արտաքինը կամ կեցվածքը): Նախորդ գլխում քննարկեցինք մեր խոսքը և գործողությունները, բայց մեր տեսքի ազդեցությունը ճշմարտությանը հավասար կշիռ ունի, որը չենք կարող անտեսել: Սա խիստ կարևոր հարց է, որովհետև մարդկանց վրա հաճախ ավելի շատ ազդեցություն է թողնում այն, ինչ նրանք տեսնում են, քան այն, ինչ լսում են: Սա ավելի շատ վերաբերում է տղամարդկանց, որովհետև նրանց մոտ ավելի ուժեղ է տեսողական կենտրոնացումը:

Երբ մենք հասկանանք սա, կարող ենք օգտագործել այս ուժը մեր օգտին և արդյունավետ ձևով հաղորդել մեր մտադրությունները: Ես համոզված եմ, որ դուք լսել եք այս հին ասացվածքը. «Դու երբեք երկրորդ հնարավորությունը չես ստանա առաջին հայացքից լավ տպավորություն թողնելու համար»: Միգուցե այն հին է, բայց երբեք ու երբեք ճշմարիտ չէ: Մեր քաղաքակրթության մեջ պատկերը՝ տեսքը, ամեն ինչ է. արտաքին տեսքը դարձել է շատ որոշակի և ծայրահեղ, իսկ ինքնաարտահայտումը երբեք այդպիսի մեծ ծավալի չի հասել: Օրինակ՝ մազերի գույնը կարող է լինել ցանկացած երանգի՝ կանաչից մինչև մանուշակագույն: Շրթունքներն այլևս չեն սահմանափակվում վարդագույնի կամ կարմիրի բնական երանգներով. այժմ սևը նորաձևության առաջարկներից է: Մեր զգեստապահարանում առկա են տարբեր երկարության և ոճի հագուստներ: Երբեք այդքան շատ ընտրություն

չի եղել արտահայտման համար, բայց ի՞նչ ենք ասում այդ ամենով: Արդյո՞ք մենք ավելի շատ ազդեցիկ ենք և արդյունքի ենք հասնում արտահայտչամիջոցների այսպիսի ազատությամբ:

Օրինակ, եթե ցանկանում ես, որ տղամարդը գնահատի քեզ քո խելքի համար, մի՛ շեղիր նրան քո ոտքերով. դու ոչնչի չես հասնի: Եթե խառնես քո ազդանշանները կամ երկիմաստ ուղերձներ հաղորդես, մեկնաբանման մեջ ինչ-որ բան հաստատ կկորչի: Տղաների համար դժվար կլինի նայել ձեր տեսանելի հատկանիշներից այն կողմ և նկատել ձեր զարմանալի, չերևացող մտավոր կարողությունները: Այն, թե ինչպես ես հագնվում և ներկայացնում քեզ, ոչ միայն ուրիշներին կհաղորդի ակնհայտ ու անմիջական տեղեկություն, այլև կարող է ակնարկել ավելին, որի մասին դու իրականում մտադիր չէիր հայտնել: Այն կարող է մատնել ձեր իրական կարծիքը ինքներդ ձեր մասին, կամ այն, թե ինչին եք վստահում, կամ որտեղից է գալիս ձեր ուժը, կամ էլ, իհարկե, ում եք պատկանում:

> *Եթե ցանկանում ես, որ տղամարդը գնահատի քեզ քո խելքի համար, մի՛ շեղիր նրան քո ոտքերով:*

Մի պահ մտածեք այդ մասին: Իմ տղաները խոսում են իրենց դպրոցում գոյություն ունեցող տարբեր խմբավորումների մասին, որոնք խստորեն տարբերվում են իրենց հագուստի ոճով: Գոթական ոճին հարողները հագնում են գոթական զգեստներ, իսկ մեկ այլ ոճին հարողները՝ դրան համապատասխան հագուստ: Երբ տղաներիս հետ գնումներ ենք կատարում, հարցնում եմ նրանց. «Ի՞նչ կասեք այս վերնաշապիկի մասին»: Ես լսում եմ. «Ո՛չ, դա անվավոր չմուշկներով սահողների համար է»: Որտեղի՞ց իմանայի դա: Երեխաներն ունեն իրենց մշակած համակարգը. եթե նրանք չմշկորդներ չեն, իրենց հագուստից դա կերևա: Գոյություն ունեն նաև այսպիսի արտահայտություններ՝ *«սպիտակ օձիք» և «կապույտ օձիք»*: Առաջինն օգտագործվում է գրասենյակային աշխատողներին, իսկ երկրորդը՝ բանվորներին նկարագրելու համար: Այս արտահայտությունները նշանակում են որոշակի հագուստի ոճ՝ ներառելով նրանց ուղեկցող նշաններն ու կանխակալ կարծիքները:

Ի՞նչ եք դուք հաղորդում: Ի՞նչ ուղերձներ եք ուղարկում: Արդյո՞ք դրանք ձեր իսկական էության ճշգրիտ արտացոլումն են, թե՞ պարզապես ձևացնում եք: Սրանք շատ կարևոր հարցեր են: Ձեզ հարկավոր է ժամանակ վերցնել և անկեղծորեն պատասխանել դրանց: Ձեր հագուստը և արտաքին տեսքը կարող են ճշգրտորեն արտացոլել, թե ով եք դուք: Դուք կարող եք ասել. «Ես մասնագետ եմ, և իմ հագուստը համապատասխանում է իմ մասնագիտությանը»: Կամ, միգուցե, դու ուսանող ես և պատկանում ես ուսանողական ինչ-որ խմբավորման, և դա պետք է երևա նաև քո հագուստի ոճից: Բայց ավելի խորը քննենք:

Ինչպիսի՞ ազդեցություն է թողնում ձեր հագնվելու ոճը ուրիշների վրա: Արդյո՞ք դրանով տղամարդկանց մեջ առաջացնում եք աստվածային մտքեր կամ ցանկություններ: Մարդիկ ձե՞զ են տեսնում, թե՞ միայն այն, ինչ հագնում եք: Երբ ուրիշները նայում են ձեզ, ի՞նչ են տեսնում: Դուք միգուցե ձեր հիշողությունից դուրս եք բերում աստվածաշնչյան տեղեր և վիճում, որ արտաքին տեսքը կապ չունի, որովհետև Աստված նայում է սրտին, և մենք չպետք է դատենք արտաքին տեսքից: Այո՛, Աստված նայում է մեր սրտին, բայց մենք դեռ ապրում ենք այս երկրի վրա, և այստեղ ամեն մեկը նայում է արտաքինին, որովհետև միայն Աստված է նայում ներսը:

«...մարդը տեսնում է աչքի առջևինը, բայց Տերը սրտին է նայում» (Ա Թագ. 16.7):

Այս խոսքը հաստատում է այն փաստը, որ մենք շարժվում ենք մեր տեսածով: Մեզ հորդորում են զգույշ լինել, որ ուրիշներին չշփոթեցնենք մեր տեսքով: Մեզ զգուշացրել են, որ ամեն ինչ անցողիկ է, ուստի հիմարություն է մեր տեսքին վստահելը:

Վերադառնանք գլուխ 1-ում առաջադրված հարցին՝ արդյո՞ք կարելի է գայթակղիչ հագնվել: Ո՞րքան բաց կարելի է հագնվել: Ես ցանկանում եմ, որ մենք ավելի խորը քննենք այս հարցը: Ինչպես որ գրավում ենք տղամարդուն, այդպես էլ նա կակնկալի, որ լինենք: Օրինակ՝ գայթակղիչ հագուստը խոստանում է սեռական հարաբերություն: Մեր հագնվելու ձևը միայն ինքնաարտահայտման, մեր անձնական կամ մասնագիտական արժեքը հաղորդելու ձև չէ: Այն ավելի շատ բան

է ասում: Որպես Աստծո զավակներ՝ մենք պետք է հասկանանք, որ մեր կյանքում ամեն բան պետք է պատվի մեր Հորը:

Խնդրում եմ, գիրքը չփակեք կամ ինձ կրոնական չհամարեք: Մի՛ պատկերացրեք, որ ես պաշտպանում եմ իմ անձը, պարկանման հագուստը: Ո՛չ: Ես հավատում եմ, որ մենք կարող ենք նորաձև և գրավիչ լինել առանց ձուլվելու աշխարհին: Բայց, նախ և առաջ, պահանջվում է որոշ անձնական նրբանկատություն, քանի որ միշտ էլ ավելի հեշտ է լինում ծայրահեղությունների մեջ ընկնել: Ես ուզում եմ ձեզ մարտահրավեր նետել՝ ավելի պատասխանատու վերաբերվելու ձեր հագուստի ընտրությանը: Որովհետև հատող գիծը ամեն օր ջնջվում է, և երբեմն այնպես է թվում, որ քրիստոնյաներն այլևս ոչ թե հակառակ են այս աշխարհի քաղաքակրթությանը, այլ դառնում են նրա կրկնօրինակը:

Երբ գրում էի այս գիրքը, պատահաբար հեռուստացույցով ցուցադրում էին մի շոու, որտեղ արծարծվում էր մայրերի հուսահատության թեման, որոնց աղջիկները լիակատար ապստամբության մեջ էին: Այս աղջիկները հասարակության մեջ հայտնվելիս հրաժարվում էին կրել պատշաճ հագուստ: Նրանք սիրում էին ուշադրություն հրավիրել իրենց վրա: Այդ օրը մեկը հագել էր միայն լողազգեստի վերին մասը և կարճ կիսաշրջազգեստ: Մյուսը կրում էր ծիրանագույն կեղծամ, նեղ շապիկ և չափից կարճ տաբատ, որը հազիվ գրկում էր նրա գեր մարմինը: Այս աղջիկներն ընդամենը տասնչորս-տասնհինգ տարեկան էին, և երկուսն էլ պարծենում էին, որ ներգրավված են սեռական հարաբերությունների, թմրադեղերի և ալկոհոլի օգտագործման մեջ:

Նրանք նման էին օգտագործված մարմնավաճառների: Չկար երիտասարդական ոչ մի թարմություն կամ անմեղություն: Նրանց մայրերն այնպես էին լաց լինում, որ կարծես աղջիկները մահացել էին: Նրանց փոխակերպումը՝ երեխաներից թեթևաբարո կանանց, այնքան հիմնովին և լիարժեք էր արտահայտված: Մայրերը, արցունքներն աչքերին, խոսում էին իրենց աղջիկների անցյալի գեղեցկության և այն ցավի ու ամոթի մասին, որ նրանք իրենց վարքագծով պատճառել էին իրենց ընտանիքին: Նրանք ասում էին, թե ինչպես են վախենում, որ մի օր կարթնանան և իրենց աղջիկներին մահացած կգտնեն ինչ-որ փողոցում: Այդ ամբողջ ժամանակ երկու աղջիկներն էլ ծիծաղում ու հայ-

հոյում էին իրենց մայրերին և ցանկացած հանդիսատեսի, ով նրանց դեմ էր խոսում: Նրանց լեզուն այնքան կեղտոտ էր, որ նրանց բերանից դուրս եկած գրեթե ամեն բան գրաքննության էր ենթարկվում: Ես սկսեցի լաց լինել նրանց մոլորության և անօգնական, անհույս մայրերի սարսափելի ընկճվածության համար:

Այս մայրերի վերջին հույսը՝ իրենց անամոթ աղջիկներին ազգային հեռուստատեսությամբ ցուցադրելու միջոցով նրանց խելքի բերելն էր: Ինչո՞ւ էին այդ մայրերն այդքան անզոր: Ինչպե՞ս էր այդ ամենը այսքան խորացել: Եվ, ընդհանրապես, ո՞ւր էին այդ աղջիկների հայրերը:

> *Նրանք սխալվում էին՝ կարծելով, որ ցանկասիրություն առաջացնելու իրենց կարողությունը կապված է այդպիսի վարքի հետ:*

Այդ աղջիկների մեջ ես ոչ մի կանացիություն չտեսա: Դժվար թե գտնվեր մեկը, որ նրանց «սեքսուալ» համարեր: Նրանք շատ «էժանագին» տեսք ունեին: Ես ամաչում էի նրանց համար: Իրենց մոլորության մեջ նրանք կարծում էին, թե իրենց տեսքով հավասար են ինչ-որ փոփ երգչի, բայց՝ ոչ: Ես ինձ վիրավորված էի զգում որպես կին՝ միայն նրանց նայելով: Նրանք ո՛չ ամոթ ունեին, ո՛չ գեղեցկություն, որովհետև նրանց մեջ չէր մնացել համեստության կամ իմաստության ոչ մի հետք: Նրանց դեմքին միայն բացարձակ արհամարհանք կար իրենց արտասվող մայրերի հանդեպ:

Ակնհայտ էր, որ աղջիկներին թվում էր, թե իրենց զգեստապահարանն էր իրենց ուժ տալիս: Նրանք սխալվում էին՝ կարծելով, որ ցանկասիրություն առաջացնելու իրենց կարողությունը կապված է այդպիսի վարքի հետ: Նրանք քայլում էին փողոցով և պատկերացնում, որ նրանց նայող տղամարդիկ իսկապես ցանկանում էին իրենց: Եթե նրանք մի փոքր ավելի խորամիտ լինեին, կհասկանային, որ այդ տղամարդկանցից ոչ ոք իրականում չէր ցանկանում իրենց: Նրանք պարզապես ցանկանում էին թուլացնել իրենց սեռական լարվածությունը: Իրականում այս փոքր աղջիկները սխալ ճանապարհ էին ընտրել: Այս տղամարդիկ չէին պատրաստվում խնդրել, որ իրենց հետ կիսեն կյանքը: Նրանք միայն ցանկանում էին օգտագործել նրանց, իսկ հետո մի կողմ գցել, բայց այս հիմար աղջիկները պարզապես չէին հասկանում սա:

Նրանց հագուստը վկայում էր իրենց կյանքում իշխանության համար մղվող խորը պայքարի մասին: Անցյալում, երբ մի պետություն պատերազմում էր մյուսի դեմ, հաղթողներն ունեին ավարը վերցնելու արտոնություն: Այս վերջին հարվածը ամենանվաստացուցիչ վրեժն էր և ավելի դաժան էր, քան ցանկացած հարձակում կռվի դաշտում: Նրանք ոչնչացնում էին ընտանիքների պատիվն ու անվտանգությունը՝ այրելով նրանց տները և բռնաբարելով կանանց: Սա համարվում էր պարտված թշնամու ամենավերջին ստորացումը: Պատմության մեջ չկա որևէ հիշատակում, որ կանայք չվնասվեին կողոպուտից: Նրանք սարսափահար վազում էին և փորձում թաքնվել այս վայրագ տղամարդկանցից:

Բայց այս շոուին մասնակցող մոլորված աղջիկները երբեք էլ դա չէին ընդունի որպես բռնաբարություն և վիրավորանք, կամ նույնիսկ չէին գիտակցի, որ իրական հարցը ոչ թե սեռական հարաբերության, այլ պատվի մեջ է: Նրանք դուրս էին գալիս փողոց, ողջունում էին տղամարդկանց և կարծում էին, որ վերջիններիս գրավում են իրենց գեղեցկությամբ: Նրանք չէին գիտակցում, որ յուրաքանչյուր սեռական կապով ավելի էին փչանում: Նրանց կանացի և գեղեցիկ տեսքը դառնում էր ընդամենը հինգդոլարանոց մարմնավաճառի գրավական:

> *Նրանց հագուստը վկայում էր իրենց կյանքում իշխանության համար մղվող խորը պայքարի մասին:*

Անդրադառնանք գայթակղության կերպարին, որին շատերը փորձում են նմանվել, և որը նրանց իշխանություն է խոստանում: Ի՞նչ է ասում մեզ այդ կերպարը: Այն արհամարհանքով մեզ է նայում ամսագրերի կազմերից՝ յուրաքանչյուր օդանավակայանում, խանութում և կրպակում: Խիստ ընդգծված կրծքերով, գլուխները բարձր պահած՝ նրանք ասում են. «Ես հզո՛ր եմ: Լսե՛ք իմ իմաստությունը»: «Cosmo», «Allure», «In Style» կամ գրեթե ամեն կանացի ամսագիր խոստանում է ձիգ ազդրերի և խենթացնող սեքսի գաղտնիքները: Նրանք ձեզ կդարձնեն լավագույն մարմնավաճառը:

Մեկ անգամ, երբ խանութում անցնում էինք ամսագրերի կողքով, իմ իննամյա որդին, մի փոքր ավելի մոտենալով ինձ, շշնջաց. «Մայրի՛կ, ինձ թվում է, որ այդ կինը ցանկանում է ինձ ուտել»: Այդ կնոջ անբարո-

յական կեցվածքը վախեցրել էր նրան: Ես կարծում եմ, որ ոչ քիչ տղամարդիկ միևնույն զգացողությունն ունեն, չնայած դա չեն գիտակցում այնպես, ինչպես իմ անմեղ տղան:

Ճչացող, հարձակողական, գայթակղիչ տեսքը կարող է արթնացնել տղամարդու սկզբնական բնազդները: Տղամարդը կարող է օդում զգալ հաղթանակի հնարավորությունը, և այդ ժամանակ նրա մեջ բարձրանում է տեստոստերոնի մակարդակը՝ ի պատասխան այդ մարտահրավերի: Հետո նա պետք է հավաքի իր ամբողջ ուժերը աղջկան տիրելու համար: Կարծես տղամարդկանց միշտ հետապնդում են սեռականորեն ագրեսիվ կանայք: Դրանք լինում են և՛ ամսագրերի կազմերի, և՛ գովազդային վահանակների վրա, չհաշված երաժշտական աշխարհի դիցուհիները, որոնք համարձակորեն մարտահրավեր են նետում այսպես. *«Ուզո՞ւմ ես փորձել ինձ», «Դու կարող ես նայել ինձ, բայց ես միշտ անհասանելի եմ լինելու քեզ համար»:* Այս պատկերները մնում են նրանց մտքում, բայց քանի որ նրանք չեն կարող հասնել այդ կանանց, դիմում են հասանելի միջոցների:

> *Արթնացե՛ք: Մի՛ լսեք այդ ստերը: Որտե՞ղ են այդ խոստացված իշխանությունն ու ուժը:*

Եթե տղամարդիկ հավատային կանանց ամսագրերի կազմին և պոռնոգրաֆիկ նյութերին, կմտածեին, որ բոլոր կանայք միայն սեռական հարաբերություններ են ուզում, նույնիսկ եթե նրանք ժխտեն դա: Նրանք կմտածեին, որ մենք իրականում նկատի չունենք այն, ինչ ասում ենք. դա ընդամենը սեռական երևակայական խաղի մի մաս է: Նույնիսկ ֆիլմերում սեքսի և իշխանության միջև կապը հետզհետե մեծանում է՝ տարբերվելով սեքսի և սիրո հնագույն պատկերացումից: Կա նույնիսկ սեքսի և մահվան միահյուսում: Երբեք չես կարող հստակ իմանալ՝ նրանք ցանկանում են միասին սեռական հարաբերությո՞ւն ունենալ, թե՞ սպանել մեկը մյուսին:

Արթնացե՛ք: Մի՛ լսեք այդ ստերը: Որտե՞ղ են այդ խոստացված իշխանությունն ու ուժը: Դուք չեք հաղթում, դուք պարտվում եք: Ձեզ մերկացնում և բռնաբարում են: Որտե՞ղ է ձեր պատիվը: Որտե՞ղ է ձեր ուժը: Որտե՞ղ է ձեր արժանապատվությունը. այն հեռացել է ձեզնից:

Երբ նայում էի այդ կանանց, հիմարություն էի տեսնում: Նրանք մի-

գուցե գեղեցիկ էին արտաքուստ, բայց ես կասկածում էի նրանց ներսի իրական գեղեցկությանը: Իսկական գեղեցկությունը իրեն պաշտպանելու կամ պահպանելու ցանկություն է առաջացնում: Իսկական կանացի գեղեցկությունը իր գրավչությունն է շնորհում թե՛ երիտասարդներին, թե՛ ծերերին: Մեր առջև ցուցադրվող այս պատկերները հազիվ թե որևէ մեկին շողոքորթեն, բացի երիտասարդներից, ովքեր կհամարձակվեն մերկանալ: Այս գայթակղիչների գրկում անհնար է գտնել քնքշություն, ապահովություն կամ մխիթարության խոստում այս կյանքի փոթորիկների մեջ: Միգուցե պատկերացնեք, թե ես նախանձում եմ, որովհետև ավելի մեծ եմ, բայց՝ ո՛չ: Ես հասկանում եմ, որ այս կերպարները առաջին հայացքից գրավիչ են և իշխանություն են խոստանում: Ես էլ եմ անցել դրա միջով, ու այդ ամենը ինձ դատարկ և ծարավ են թողել՝ դրդելով գտնել մեկին, որը իսկապես կսիրեր և կպաշտպաներ ինձ: Ես հոգնել էի ուժեղ և անկոտրում լինելուց, փոխարենը փափագում էի, որ ինձ սիրեին և փայփայեին:

Ինչպես ավելի շուտ նշեցինք, եթե կինը մանկության և պատանեկության ժամանակ առողջ փոխհարաբերություններ չի ունեցել իր հոր հետ, դա հակառակ ազդեցությունն է թողնում տղամարդու հետ նրա փոխհարաբերությունների վրա (այդպես կլինի, քանի դեռ նրան չի փրկել Արքայազնը, ինչպես որ իմ կյանքում եղավ): Հայրերը պետք է հիանան իրենց աղջիկներով և նրանց հետ վարվեն՝ ինչպես թանկարժեք գանձերի:

Հինգ տարեկանում ես կորցրի իմ մի աչքը՝ միաժամանակ կորցնելով գեղեցիկ ու կանացի զգալու ցանկացած հույս: Դպրոցում ինձ անվանում էին «միաչքանի», «ցիկլոպ». ոչ մի անվանումն էլ իմ մեջ չէր արթնացնում ցանկալի լինելու զգացողություն: Աչքս կորցնելուց հետո հայրս իրեն հեռու էր պահում ինձնից, և ես սովորեցի խիստ և կոպիտ լինել այս կյանքում գոյատևելու համար: Երբ նա այնուամենայնիվ շփվում էր ինձ հետ, դա անում էր իր հպարտության և իմ կոպիտ բնավորության պատճառով: Նա անվանում էր ինձ «վագր» և «փոքրիկ կռվարար»: Հագուստներն ու կանացի մանրուքները չէին համապատասխանում այս կերպարներին: Այսպիսով՝ ապահով լինելու համար ես որոշեցի երբեք չլինել փափկասուն աղջիկ:

Միջին դասարաններում սովորելու տարիներին ես մի ֆիլմ դիտեցի, որտեղ գտա այն կնոջ կերպարը, ում նման էի: Նա չէր հագել վարդագույն հագուստ, ո՛չ էլ երևակայում էր իրեն: Նրա կյանքը լի էր արկածներով: Նա Ջեյմս Բոնդի ընտիր աղջիկներից մեկն էր: Ինձ ավելի հարազատ էր այս գայթակղիչ կանանց կերպարը, որոնք կրում էին նեղ տաբատներ, ատրճանակներ և իրենց պահում էին տղամարդու պես: Նրանք ոչնչով չէին զիջում տղամարդկանց, և ոչ ոք չէր համարձակվում նրանց մի կողմ հրել: Նրանք չէին սպասում, որ ինչ-որ տղամարդ կպաշտպանի իրենց. իրե՛նք էին իրենց պաշտպանում:

> *Ինձ ավելի հարազատ էր այս գայթակղիչ կանանց կերպարը, որոնք կրում էին նեղ տաբատներ, ատրճանակներ և իրենց պահում էին տղամարդու պես:*

Մինչ այդ, մի ամսագրի մեջ ես այդպիսի կանանց նկարներ էի տեսել: Ես և ընկերուհիս այդ ամսագիրը գտել էինք նրա հոր պահարանում: Այն կոչվում էր «Playboy»: Ես մտածում էի, որ սրանք այնպիսի կանայք էին, որոնց գաղտնի ցանկանում էին բոլոր տղամարդիկ, այդ պատճառով էլ նրանք այդպիսի ամսագրեր էին տուն բերում: Թույլ տվեք այստեղ ձեզ կողմնակի զգուշացում անել. մայրե՛ր և հայրե՛ր, երբեք մի՛ կարծեք, որ դուք կարող եք ինչ-որ բան թաքցնել ձեր տանը. ո՛չ, չե՛ք կարող: Այսպիսի նյութերը ձայն ունեն, որն այնքան է կանչում ձեր երեխաներին, մինչև նրանք գտնում են դրանք:

Վերադառնանք իմ պատմությանը. կինոնկարը դիտելու ժամանակ ես տասներեք տարեկան էի և արդեն ինքս ինձ որոշել էի, որ տղամարդկանց չի կարելի վստահել: Քանի որ իմ հայրն էլ էր հեռացել մեզնից, ես ենթադրում էի, որ բոլոր տղամարդիկ, ի վերջո, հեռանում են: Այս նախապաշարմունքը ստիպեց ինձ շատ լուրջ սխալ թույլ տալ, որն ազդեց իմ կյանքի ուղղվածության վրա: Բայց ինձ շրջապատող քաղաքակրթությունը շարունակեց վերահաստատել իմ ընտրության գրավչությունը: Երբ ես սովորում էի բարձր դասարաններում, շատ մեծ հռչակ էր վայելում «Չարլիի հրեշտակները» հեռուստաշոուն:

Մեկ անգամ դպրոցում մի դեպք տեղի ունեցավ, երբ մենք բեմադրություն էինք պատրաստում «Կալիֆոռնիայի աղջիկները» երգի ներքո: Պատկերացրեք, որ ես միշտ սարսափել եմ ելույթ ունենալ մարդկանց

առջև, բայց ինչ-որ ձևով ընդգրկվեցի այդ ներկայացման մեջ: Ես պետք է ասեի հետևյալ խոսքերը. «Եվ հյուսիսի աղջիկներն իրենց համբույրներով ամբողջ գիշեր ջերմության մեջ են պահում տղաներին»: Ես չգիտեի՝ կարո՞ղ էի դա ասել առանց ուշաթափվելու: Բայց այդ ամենը փոխվեց ելույթից մեկ գիշեր առաջ, երբ ես փորձում էի իմ հանդերձը՝ մայրիկիս կաշվե բարձրակրունկ, երկարաճիտ կոշիկները, սև տաբատը և նեղ սվիտերը: Ես հայելու մեջ զարմանքով նայում էի ինձ: Ես նման էի Բոնդի աղջիկներին: Հաջորդ օրը իմ շիկահեր ընկերները և ես (միշտ թուխ մազերով) միասին հավաքվեցինք հանդերձարանում, որպեսզի հագնեինք մեր հանդերձները: Աղջիկներից մեկը հագնված էր մարզական, մյուսը՝ ամառային գեղեցիկ հագուստ՝ կարճ տաբատով, երրորդը՝ ջինսե տաբատ և բաճկոն: Հերթը իմն էր: Ես շարունակ հուզվում էի և նյարդայնանում՝ իմ ելույթին սպասելիս, բայց երբ մտա դահլիճ և լսեցի տղաների արձագանքը, ամեն բան փոխվեց. լինել խիստ կին՝ սեռական գրավչությամբ, այն է, ինչ պետք էր: Ես սկսեցի ավելի ու ավելի առաջ գնալ այդ կեցվածքի մեջ, բայց յուրաքանչյուր քայլով ավելի շատ կորցնում էի, քան ձեռք բերում:

> *Բոնդի բոլոր կանայք վախի մեջ էին այս կամ այն չափով (ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ էին նրանք ատրճանակ պահում):*

Եկեք ետ գնանք և ավելի իրատեսական նայենք Բոնդի ընկերուհիներին: Եթե ես ճիշտ եմ հիշում, յուրաքանչյուր սերիայում այդ աղջիկներից մեկը սպանվում էր: Վերջում Ձեյմսը անկողին է մտնում վերջին աղջկա հետ, որը կենդանի էր մնացել, որից հետո նրան այլևս չենք տեսնում: Ձեյմսին սպասում էր հաջորդ արկածը, որտեղ չկային հին աղջիկները: Միշտ հայտնվում էր հերթական գեղեցկուհին, որի հետ անկողին մտնելով՝ Ձեյմսը թողնում էր նրան: Նրանք դառնում էին Բոնդի ծառաները, որոնք, տրվելով նրան, զրկվում էին իրենց ուժից և իշխանությունից:

Ես գիտեմ, որ այս խիստ, համառ և սեռական առումով ինքնավստահ կանայք միգուցե առաջին հայացքից ձեզ համարձակ թվան, բայց այդպես չէ: Բոնդի բոլոր կանայք վախի մեջ էին այս կամ այն չափով, հատկապես երբ նրանք չէին տնօրինում իրավիճակը (ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ էին նրանք ատրճանակ պահում): Նրանցից շատերը փոքր ժամանակ երբեք չեն ստացել պաշտպանություն և սեր իրենց

հարազատ հայրերից, ուստի որոշել են երբեք չվստահել տղամարդկանց: Մյուսներն էլ ստացել են սեր և հոգատարություն, բայց լսել են այն քաղաքակրթությանը, որը խրախուսել է նրանց Աստծո փոխարեն վստահել իրենց գեղեցկությանը, այդ պատճառով ձգտել են ինքնահաստատվել բազմաթիվ տղամարդկանց միջոցով: Բայց, ի վերջո, այդ բոլոր կանայք հասկացել են, որ իրենք վանդակի մեջ են: Զուտ այն պատճառով, որ նրանք սեռական ցանկություն են առաջացնում, չի նշանակում, որ նրանք երբևէ ազատ են:

> «Բայց Գիրքն ի՞նչ է ասում. «Դո՛ւրս հանիր աղախնին և նրա որդուն, որ աղախնի որդին ժառանգություն չպիտի ստանա ազատի որդու հետ: Սրա համար, եղբայրնե՛ր, աղախնի որդիներ չենք, այլ՝ ազատի» (Գաղատ. 4.30,31):

Մեր քաղաքակրթությունը ավելի շատ հնարավորություն է տալիս կապ ունենալ եսասեր և գերի, քան ազատ կնոջ հետ: Ինչպես շատ երիտասարդ աղջիկներ՝ ես մի երկար օր անցկացրի կինոթատրոնում՝ դիտելով «Քամուց քշվածները» կինոնկարը: Ես գիտեմ, որ ցանկանում էի նմանվել Սքարլետին: Դա ապշեցուցիչ էր, քանի որ վերջում նա ամեն բան կորցնում է: Ես երբեք չէի երազում լինել թույլ Մելանիի պես: Եթե սրանք լինեին իմ միակ երկու ընտրությունները, ես հաստատ չէի ցանկանա լինել նվնվացողի և ուշաթափվողի դերում: Բայց, իհարկե, նրանք միայն ցանկանում էին, որ մենք հավատանք, թե ուրիշ ընտրություն չունենք. կամ լինել հաճելի, թույլ, տկար, զիջող կին, որը մահանում է երիտասարդ հասակում, կամ լինել ուժեղ, բարկացկոտ կին, ով հանուն իր նպատակի, նույնիսկ պատրաստ է սպանության՝ միայն շատ ուշ հայտնաբերելով, որ կորցրել է այն, ինչ նա իսկապես սիրել է:

> *Կան այլ ընտրություններ, և վաղուց ժամանակն է, որ սովորենք, թե որոնք են դրանք:*

Կան այլ ընտրություններ, և վաղուց ժամանակն է, որ սովորենք, թե որոնք են դրանք: Կանանց համար ավելի վեհ և հզոր միջոց կա իրենց զարդարելու համար: Այն չի պահանջում ո՛չ հատուկ հանդերձներ, ո՛չ էլ զենքեր ինքնապաշտպանության համար: Այսպիսի կինը շատ ավելի համարձակ է, քան ցանկացած սեռական առումով ագրեսիվ կին: Տղամարդիկ

չեն ցանկանում հարձակվել նրա վրա, նրանք փափագում են արժանանալ նրան: Այսպիսի կինը կյանք տվող է և ոչ թե վերցնող: Նա ծածկված է իմաստությամբ և պատշաճ զարդարանք ունի: Նա չի ներշնչում տղամարդկանց լինել կոպիտ և ագրեսիվ, այլ՝ քնքուշ, ուշադիր և իմաստուն:

Ցավում եմ, բայց կանացի այսպիսի կերպարներ հազվադեպ են լինում կանանց ամսագրերի կազմերին: Այսպիսի կանայք ազնվական են և հազվադեպ հանդիպող, նրանք ոչնչով նման չեն հանրախանութներում վաճառվող ամսագրերի սովորական, փայլուն կերպարներին: Եթե հարկ լիներ նրանց համար համապատասխան զգեստապահարան ընտրել, ես պիտի ժամանակի մեջ ետ գնայի: Նրանց հանդերձների գեղեցկությունը կշոյեր ցանկացած մարդու աչք՝ անկախ տարիքից: Ես կարող էի հեշտությամբ ընտրել Ջեյն Օստինի ֆիլմերի զգեստներից կամ ժամանակակից Մոխրոտիկի պատմությունից: Կարելի էր նաև «Բեն Հուր» ֆիլմի հանդերձանքը: Դա շատ հեռու կլիներ ժամանակակից հագուստի պատկերացումից, բայց կմարմնավորեր կանացիության էությունը: Ինձ համար ամենամոտ հագուստը, որ կարելի է համեմատել այդպիսի հագուստի հետ, իմ հարսանեկան զգեստն է:

Հաճախ, երբ նայում էի այս կամ այն դարաշրջանի մասին պատմող կինոնկարներ, ինքս ինձ միշտ հարցնում էի. «Ինչո՞ւ այսօր այդպիսի զգեստներ չեն կարում»: Ես համոզված եմ, որ ձեզ էլ են ծանոթ այդ ոճերը, և միգուցե ունեք ձեր սիրելին: Նրանք այնքան գեղեցիկ են, որ նույնիսկ վախենում ես դիպչել և փչացնել: Այդ հագուստների մեջ ոչ մի ճչացող բան չկա. ոտքից գլուխ դրանք երգում են քնքշության և գեղեցկության մասին. հրապուրիչ են, բայց համեստ:

Երբ կարդում եմ Երկնքում սրբերի հանդերձների նկարագրությունը, տեսնում եմ, որ դրանք փայլում են լույսով և փառքով, նույնիսկ գործվածքը լուսաշող է: Այդ հագուստների մեջ ոչ մի անճաշակ բան չկա, բոլորն էլ հիասքանչ են:

Վերադառնանք Աստծո Խոսքին և տեսնենք, թե ինչ է այն ասում արտաքին տեսքի մաքրության վերաբերյալ: Քանի որ մենք Նրանն ենք, պարտավոր ենք այնպես հագնվել, որ հաճո լինենք Նրան՝ անկախ այն բանից՝ ամուսնացած ենք, թե ոչ, այրի ենք, թե ամուսնալուծված: Աստված կանչել է մեզ լինել գեղեցիկ և համարձակ դուստրեր:

Ազատ մնալու համար մենք ընտրում ենք հոգով ապրելը, որովհետև դա է Աստծո Խոսքը պահելու շարժառիթը: Նայենք մի քանի տեղեր Նոր կտակարանից, որոնք վերաբերում են հագնվելուն: Առաջինը Տիմոթեոսին ուղղված թղթում է.

> «Այնպես էլ կանայք վայելուչ հագուստով, ամոթխածությունով և պարկեշտությունով իրենց անձերը զարդարեն, ոչ թե հյուսվածներով կամ ոսկով կամ մարգարիտներով կամ թանկագին հանդերձներով, այլ ինչպես վայել է աստվածապաշտությունը հանձն առած կանանց՝ բարի գործերով» (Ա Տիմոթ. 2.9,10):

Իմ կարծիքով այստեղ մի քանի մեծ գաղափարներ կան: Նախ և առաջ, կնոջ հագուստը պետք է լինի վայելուչ. սա նշանակում է հպարտության բացակայություն և ուշադրություն գրավելու ոչ մի մտադրություն: Երկրորդը՝ պետք է ամոթխածությամբ լինի, որը նշանակում է մաքուր, բարոյական և առաքինի: Մենք արդեն ծանոթ ենք դրա հակառակ պատկերին՝ անամոթությանը: Ես պետք է անկեղծ լինեմ ձեզ հետ. երբեմն հարց է ծագում, երբ նայում եմ եկեղեցու չամուսնացած կանանց և երիտասարդ աղջիկների հագուստին: Հիշում եմ, որ ես աչք էի ծակում, երբ ապաշխարեցի ու սկսեցի եկեղեցի հաճախել, որովհետև ես ունեի միայն «հեթանոսի» զգեստապահարան: Բայց այս մասին չեմ խոսում: Եկեղեցում մեծացած աղջիկների մեջ առկա է համեստության պակաս, որը հետզհետե անհանգստացնող է դառնում: Ինձ միշտ մոտենում են երիտասարդ տղաների մայրերը և ասում. «Ասե՛ք երիտասարդ աղջիկներին, որ նրանց հագուստը ազդեցություն է թողնում երիտասարդ տղաների վրա»: Այս խոսքում հագուստի երրորդ նկարագրությունը պարկեշտությունն է: Սա նշանակում է տեղին և չափավոր: Ինչպես որ հարսանիքին մարզական հագուստ հագած հյուրը կանարգի հարսին և փեսային, այնպես էլ մենք պետք է զգայուն լինենք, որպեսզի ուրիշներին հարգենք մեր հագուստի ընտրությամբ:

> *Մենք պետք է զգայուն լինենք, որպեսզի ուրիշներին հարգենք մեր հագուստի ընտրությամբ:*

Այնուհետև Պողոսը համեմատում է արտաքին զարդարանքը բարի գործերի հետ: Նա մտածում էր այլ կերպ՝ վերերկրային, որովհետև նա եղել էր Երկնքում և

գիտեր, որ այն, ինչ ունենք այստեղ, համեմատելի չէ այնտեղինի հետ: Նա խորհուրդ է տալիս կանանց իրենց ժամանակը և ուժերը չտրամադրել երկրային գանձերին, այլ գանձեր դիզել Երկնքում՝ իրենց զարդարելով բարի գործերով:

Քրիստոնյա կնոջ զգեստապահարանի մասին մեկ այլ տեղ հանդիպում ենք Ա Պետրոսի թղթում.

> «Որ ձեր զարդարանքը չլինի դրսևանց մազեր հյուսելը և ոսկեղեններ շարելը կամ շքեղ հանդերձներ հագնելը, այլ սրտի ծածուկ մարդը՝ հեզ և հանդարտ հոգու անեղծությամբ, որ դա Աստծո առջև շատ թանկագին է: Որովհետև այսպես էլ մի ժամանակ այն սուրբ կանայք, որ իրենց հույսն Աստծո վրա էին դրել, զարդարում էին իրենց անձերն իրենց մարդկանց հնազանդվելով» (Ա Պետր. 3.3-5):

Պետրոսն ասում է, որ կանանց զարդարանքը արտաքնապես չլինի՝ հատկապես անտեսելով ներքին գեղեցկությունը: Հետո նա ցույց է տալիս սուրբ կնոջ գեղեցկության գաղտնիքը, որն է՝ հեզ և հանդարտ հոգին: Այս զարդարանքի մեջ խոշոր գործոն է Աստծուն վստահել սովորելը: Պողոսը կանանց խրախուսում է զարդարվել բարի գործերով, իսկ Պետրոսը նրանց հայացքն ուղղում է չերևացող գանձի վրա: Եթե մենք զարգացնենք մեր հոգին, ինչպես հին, սուրբ կանայք, մենք կհագնենք շնորհքի և փառքի հանդերձը, որը երբեք չի մաշվում, այլ ժամանակի ընթացքում ավելի է փայլում:

> «Ամեն կերպ չար բանից հեռո՛ւ մնացեք» (Ա Թեսաղ. 5.22):

Մեր հագուստը նույնիսկ չպետք է *գայթակղության նշույլ պարունակի:* Այստեղ չի ընդունվում Բոնդի աղջիկների զգեստապահարանի զգալի մասը: Ես համոզված եմ, որ ինձ հարկավոր չէ բառացի ասել, բայց ես կանեմ դա պարզության համար: Կրծքերի արանքը, պորտը կամ ոտքերի վերին մասը ցույց տալը անվայելուչ է եկեղեցական ծառայությունների, պատանեկան խմբակների կամ այլ հոգևոր միջոցառումների ժամանակ: Նույնը վերաբերում է չափից նեղ շապիկներին, տաբատներին կամ զգեստին, որոնք նույնիսկ երևակայության տեղ չեն թողնում: Այսպիսի հագուստի համար այդքան էլ շատ հարմար

տեղեր չկան: Այսպիսի հագուստը չի կարելի վայելուչ համարել, որովհետև դրա ամբողջ նպատակն է՝ ուշադրությունը հրավիրել կրծքերի, պորտի, ոտքերի կամ ազդրերի վրա: Սա քաղաքավարի չէ, որովհետև կարող է ուրիշներին գցել անհարմար դրության մեջ, հատկապես այն տղամարդկանց, որոնց մոտ ուժեղ է հորմոնային ազդեցությունը և տեսողական կենտրոնացումը: Եվ դա բոլորովին չի համապատասխանում նրանց, ովքեր հռչակում են, որ պատկանում են Աստծուն: Ես կոչ եմ անում վերանայել քո զգեստապահարանը և խնդրել Սուրբ Հոգուն լինել քո նորածնության խորհրդատուն: Երբ հագնվում ես, հարցրո՛ւ ինքդ քեզ. *«Արդյո՞ք սա վայելուչ է: Արդյո՞ք սա պարկեշտ է: Արդյո՞ք սա հարմար է այն վայրին, որտեղ լինելու եմ: Արդյո՞ք սա պատվում է Նրան, Ում ես պատկանում եմ: Ինչպիսի՞ ազդեցություն եմ թողնելու իմ շրջապատում գտնվող տղաների վրա իմ հագուստով: Արդյո՞ք ես հարգում եմ նրանց և ներշնչում, որ հետամուտ լինեն մաքրությանը»:*

Քո թշնամին ցանկանում է քեզ մերկացնել, ծաղրել և վաճառել քո մարմինը, բայց քո երկնային Հայրը ցանկանում է հագցնել քեզ հավիտենական գեղեցկությամբ, ուժով, արժանապատվությամբ և պատվով:

> *Քո թշնամին ցանկանում է քեզ մերկացնել, ծաղրել և վաճառել քո մարմինը:*

Սիրելի՛ երկնային Հայր,

Ծածկի՛ր ինձ Քո Որդիով: Ես ցանկանում եմ քայլել արժանապատվության, զորության և պատվի հանդերձներով: Տո՛ւր ինձ իմաստություն և հասկացողություն քայլելու ոչ թե այս աշխարհի հոսանքի ուղղությամբ, այլ երկնային նպատակներին համահունչ: Ծածկի՛ր յուրաքանչյուր բնագավառ, որտեղ տիրում է մերկության ամոթը: Ես ցանկանում եմ լինել խոստմունքի ազատ դուստր: Ես հրաժարվում եմ սեռական ագրեսիայի և գայթակղության կերպարների ազդեցությունից: Վերականգնի՛ր իմ կանացիության առեղծվածային գեղեցկությունն ու անմեղությունը: Ես չեմ ուզում մերկ և խայտառակված լինել, այլ ուզում եմ լինել մեկը, ով ազատ ապրում է լույսի մեջ:

Սիրով՝ Քո դուստր

14 *Ապրել առանց զղջալու*

Եթե ցանկանում ես ապրել առանց զղջալու, պետք է ապրես նպատակով՝ հայացքդ ուղղելով ապագային: Դու չես կարող ապրել այս կյանքում՝ առանց երազանքներ ու նպատակներ ունենալու կամ ակնկալելու, որ կհասնես ինչ-որ բանի: Շատ հաճախ մենք արթնանում ենք և տեսնում, որ գտնվում ենք այնտեղ, որտեղ չէինք ցանկացել լինել: Մենք միգուցե գալարվում ենք անկողնու մեջ՝ զարմանալով, թե ինչպես ենք հայտնվել զղջման այս մռայլ երկրում: Զղջումը սարսափելի նպատակատեղ է, և այնտեղ գնալու ճանապարհը մեզնից շատ կյանք և զորություն է պահանջում: Այս պատճառով Աստվածաշունչը բազում խորհուրդներ է առաջարկում այս մղձավանջից խուսափելու համար և տալիս է իմաստություն, որի մասին ավելի ուշ կքննարկենք այս գլխում:

> *Դու չես կարող ապրել այս կյանքում՝ առանց երազանքներ ու նպատակներ ունենալու կամ ակնկալելու, որ կհասնես ինչ-որ բանի:*

Զղջումը մի զգացում է, որն ունի անպատմելի ցավ պատճառելու անհավանական կարողություն: Այն քո սիրտը կպատի հուսահատության ծանր թիկնոցով և կստիպի սուզվել անհուսության խորքերը: Երեխա ժամանակ մենք այնքան շատ ծանոթ չենք լինում զղջմանը, որքան նրա հետևանքներին: Մանկությունը մեր կյանքում ավելի պարզ ժամանակ է, երբ կա հստակ պատճառ և հետևանք. եթե այսպես վարվեմ, ապա այն կկորցնեմ: Երեխաների առջև դրվում են մանրամասնորեն բացատրված ընտրություններ, որպեսզի օգնենք նրանց կայացնել առողջ, ողջամիտ որոշումներ: Երբ ամեն ինչ հստակ ներկայացված է, դուք վատ ընտրություն կկատարեք միայն այն ժամանակ, եթե մտածեք, որ կարող եք շրջան-

ցել հետևանքները: Բայց շատ հաճախ մենք այդպես էլ մտածում ենք:

Ես հիշում եմ, որ հինգ տարեկանում ինձ արգելում էին փողոցը մենակ անցնել: Ես կարող էի անցնել մայրիկի կամ տարիքով ավելի մեծ երեխաների հետ: Սա ինձ համար անբացատրելի դժվար կացության աղբյուր էր, չնայած մայրս պարզ բացատրել էր, թե ինչու է այդքան կարևոր նրա ասածներին հետևելը: Ես հասկանում էի, որ մենք ապրում ենք բանուկ փողոցում, և մեքենաները կարող էին ինձ փքաբլիթի նման տափակեցնել: Ուրիշ երեխաներին անհրաժեշտ էր ընդամենը երկու կողմերը նայել, իսկ ինձ հարկավոր էր հատուկ ուղեկցորդ:

Մեկ օր ես անհագ ցանկություն ունեի գնալ Ջենիֆերի հետ խաղալու: Նրանց տունը փողոցի մյուս կողմում էր: Ուստի, մայրիկս ամբողջ ճանապարհը ձեռքս բռնած տարավ ինձ նրանց տուն: Ես թակեցի դուռը և ներսից քրքջոց լսեցի: Համոզված էի, որ նրանք ծիծաղում էին իմ թիկնապահի վրա: Ես մայրիկին ձեռքով ցտեսություն արի և ներս մտա՝ մի քանի ժամ անհոգ երանություն անցկացնելու: Երբ տուն գնալու ժամանակը եկավ, Ջենիֆերի մայրն առաջարկեց, որ իր ավագ դուստրն ուղեկցի ինձ, բայց արդեն բավակա՛ն էր. ես հասկացրի, որ չափազանց մեծ եմ փողոցը մենակ անցնելու համար: Ես ստեցի՝ ասելով, որ մայրս թույլ է տվել ինձ մենակ տուն գնալ: Ճանապարհ ընկա, չնայած ներսումս տհաճ զգացողություն կար: Ես անտեսեցի դա, նայեցի երկու կողմերս և հաջողությամբ անցա փողոցը: Ես ուշադիր էի, որպեսզի չկորցնեի տան ճանապարհը: Հայտնվելով փողոցի մյուս կողմում՝ ծառուղիով շտապեցի տուն: Երբ ներս մտա, տեսա, թե ինչպես է մայրիկը խոսափողը վայր դնում:

- Ողջո՛ւյն, մայրի՛կ, ես տանն եմ,- ասացի և ուղղվեցի դեպի իմ ննջասենյակ:

- Մի րոպե,- մայրս կանգնեցրեց և ասաց,- նստի՛ր, ես պետք է հարցնեմ՝ ո՞վ քեզ տուն բերեց:

Տհաճ զգացողությունն ուժեղացավ: Նախքան պատասխանելը ես պատուհանից փորձեցի տեսնել այն ճանապարհը, որտեղով անցել էի փողոցը, որպեսզի համոզված լինեի՝ մայրիկը տեսե՞լ է ինձ, թե՞ ոչ:

- Համոզվա՞ծ ես, որ Սինդին քեզ տուն բերեց,- համառեց մայրիկս: Ես գլխով արեցի՝ չցանկանալով կրկին բարձրաձայն ստել:

- Ձանգե՞մ տիկին Հոֆմանին և հարցնեմ:

Ես կտրուկ գլխով արեցի՝ ո՛չ:

Այնուհետև մայրս ասաց, որ տիկին Հոֆմանն ասել է իրեն, որ ես մենակ եմ փողոցն անցել: Ես բռնվեցի. ոչ միայն անհնազանդ էի եղել, այլև ստել էի: Մայրս ուղարկեց ինձ իմ սենյակ, որտեղ պետք է մնայի մինչև հայրիկի գալը: Ամեն անգամ, երբ ինձ ուղարկում էին իմ սենյակ, չէին թույլատրում պառկել մահճակալին կամ խաղալ խաղալիքներով: Ես պետք է նստեի փայտե աթոռակին, որի վրա երկար նստելիս ավելի անհարմար էր դառնում: Ես վախեցած սպասում էի հայրիկի վերադարձին: Տան կողքով անցնող ամեն մի մեքենա նոր սարսափի ալիք էր բերում. նա շուտով գալու էր, և ես ստանալու էի իմ պատիժը: Մեկուսացած լինելու ժամանակ ես բոլորովին այլ տեսարան էի պատկերացնում: Հավանաբար, ոչ մի ապտակ չէր լինի, միգուցե հայրս համաձայներ, որ ես բավականին մեծ եմ փողոցը մենակ անցնելու համար: Սպասելու ժամանակը կարծես հարատև լիներ: Ի վերջո նա եկավ:

Որպես կանոն, երբ նրա մեքենան կանգնում էր, ես ընդառաջ էի գնում՝ նրան դիմավորելու: Ուստի իմ բացակայությունը կարող էր երկու բան նշանակել. կա՛մ ես տանը չէի, կա՛մ անախորժության մեջ էի: Ես լսում էի, որ ծնողներս ցածր ձայնով խոսում էին միմյանց հետ: Ես գիտեի, որ նրանք խոսում էին իմ հանցանքի մասին: Հետո լսեցի ոտնաձայներ: Դուռը բացվեց, և ես տեսա հայրիկիս լուրջ դեմքը:

- Լի՛զա, դու կարող ես դուրս գալ, մենք պետք է խոսենք քեզ հետ: Ես մաքրեցի արցունքներս և հետևեցի նրան՝ ինչպես մի գառ, որ տարվում է մորթվելու: Դատը տեղի էր ունենում հյուրասենյակում: Ես նստեցի կանաչ աթոռին, իսկ ծնողներս միասին նստեցին դիմացի սպիտակ բազմոցին: Նրանք նախատում էին ինձ, բայց ես անկարող էի լսել նրանց, որովհետև նրանց ձայները խլանում էին ավելի կարևոր հարցից, որը պտտվում էր իմ մտքում. *«Ինձ ապտակելո՞ւ են, թե՞ ոչ»:*

Ես վերադարձա իրականությանը, երբ հայրս, ի վերջո, ուղղակիորեն հարցրեց. «Դու իրո՞ք չես հնազանդվել և սուտ ես խոսել»:

- Այո՛, այո՛,- լաց եղա ես՝ ի սրտե զղջալով և հուսալով, որ դատավորը ողորմած կլինի: Բայց վճիռն արդեն կայացված էր:

- Դու գիտե՞ս, թե ինչ պետք է անեմ այդ դեպքում,- հարցրեց հայրիկը:

- Այո՛,- վիատությամբ պատասխանեցի ես: Ես գիտեի, որ պետք է ապտակ ստանայի:

- Արի՛, արագ ավարտենք այս ամենը,- նա կանչեց ինձ իր մոտ:

Սա նշանակում էր, որ ես պետք է քայլեի հյուրասենյակի միջով: Ես մի պահ կանգ առա սենյակի մեջտեղում՝ մտածելով առջևի դռնով փախչելու մասին, քանի որ մեկ քայլ հետո այլևս ետդարձ չկար: Ես ավելի մոտեցա, կանգնեցի հայրիկիս առջև և գլուխս կախեցի: Ստացա ապտակը և վե՛րջ... վե՛րջ: Հայրս պահել էր ինձ իր ծնկներին, իսկ մայրս ասում էր, թե որքան շատ է նա ցանկացել վստահել ինձ: Հիմա էլ նա ցանկանում է վստահել և կվստահի: Վախի զգացողությունն ամբողջությամբ հեռացավ, և ինձ զգացի մաքրված, սիրված և ընդունված. ես երբեք կրկին չլսեցի իմ հանցանքի մասին: Հաջորդ անգամ, երբ անցնում էի փողոցը, ո՛չ վախ զգացի, ո՛չ էլ ամոթ: Ես սովորեցի իմ սխալից և խրատվեցի իմ հանցանքի համար: Կցանկանայի, որ հիմա էլ այդպես հեշտ լիներ:

> *Ես սովորեցի իմ սխալից և խրատվեցի իմ հանցանքի համար: Կցանկանայի, որ հիմա էլ այդպես հեշտ լիներ:*

Շատ հաճախ զղջումը ավելի խորն է լինում և ավելի երկար տևում, քան արարքի հետևանքները: Զղջումը շարունակում է արձագանքել մեր կյանքում այնքան ժամանակ, քանի դեռ այն չի լռեցվել: Փոքր երեխայի մոտ այն արագ գալիս և գնում է. «Ես չպետք է այդպես վարվեի կամ ասեի»: Այն հաճախ հայտնվում է փաստից անմիջապես հետո: Բայց հասուն մարդկանց մոտ զղջումը կարող է այլ կերպ դրսևորվել, որովհետև ծնողներն այլևս խուզարկու-փրկողի դերում չեն: Շատ հաճախ, երիտասարդ հասակում, մենք գաղտնի գործողությունների մասնագետ ենք դառնում և հմտորեն թաքցնում այն, ինչ անում ենք: Մենք պատճառաբանում ենք հետևյալ կերպ. «Եթե ոչինչ չիմանան, դա չի վնասի նրանց»: Մենք միամտորեն հավատում ենք, որ ոչ ոք երբևէ չի իմանա մեր գաղտնիքները: Բայց չենք գիտակցում, որ զղջման սերմը ցանվել է, և այն կշարունակի անտեսանելիորեն աճել երիտասարդության հողի մեջ: Այն կսպասի, մինչև բույսն ամբողջությամբ աճի, և այնժամ դուրս կգա մեր անցյալի ստվերներից ու բացահայտ իրեն կհայտնի անհարմար ժամանակ:

Ովքեր գիտեն, թե ինչ է զղջումը, քաջատեղյակ են նրա ցավոտ ճանկերին: Այն բռնում է մեր ձեռքերը և թույլ չի տալիս գնալ, մինչև բոլորին չհայտնի մեր հիմարության մասին. «Հիշո՞ւմ ես, երբ... և այլն»: Ապա այն լույս աշխարհ է բերում ինչ-որ բան, որը մենք ետ ենք մղել անցյալի մշուշի մեջ, կամ ժամանակն ինքն է ծածկել երկար տարիների ծածկոցի տակ՝ թաքցնելով մեր իսկ հիշողություններից: Բայց հիմա դա ներկայացվում է բոլորի աչքի առջև այնպես, կարծես երեկ է պատահել: Եվ մենք լսում ենք մեր սրտերի հառաչանքը. «Ա՛խ, եթե...»:

Զղջումն ընդունակ է նաև արագ հետևելու մեր սխալներին: Ինչ-որ բան, որ երեկ ասվել կամ արվել է ծածուկում, անսպասելիորեն բացահայտվում է այսօր: Անմիտ խոսքը, անփույթ արարքը, իմիջիայլոց ասված դիտողությունը միշտ ավելի մեծ կշիռ են ձեռք բերում, երբ մտքով անցկացնում ենք իրավիճակը: Այսօրվա լույսի ներքո այն միշտ ավելի սուր է հնչում և բոլորովին այլ կերպ երևում, քան իրականում կար երեկվա մտադրություններում: Մենք ցանկություն ենք ունենում ինչ-որ ձևով պաշտպանել մեզ՝ արտահայտվելով այսպես. *«Ես դա նկատի չունեի», «Դու չես հասկանում», «Դա այդպես չէր»:* Մենք մշտապես կունենանք զղջման զգացում, եթե ապրենք պահի թելադրանքով և չկշռենք մեր խոսքերն ու արարքները նախքան դրանց կյանքի կոչելը:

> *Մենք մշտապես կունենանք զղջման զգացում, եթե ապրենք պահի թելադրանքով և չկշռենք մեր խոսքերն ու արարքները նախքան դրանց կյանքի կոչելը:*

Ես գիտեմ՝ ինչ է զղջումը, և չեմ ցանկանում, որ այն խայթի ձեզ: Ես իմացել եմ ներկայի ցավը, որովհետև քայլել եմ երեկվա հիմարության խորհրդով: Ես չէի հավատում այն բաներին, որոնցով այսօր կիսվում եմ ձեզ հետ: Երիտասարդ հասակում ես պատկերացում չեմ ունեցել հետևանքների մասին և հավատացած եմ եղել, որ խավարի ծածկոցի տակ կատարած արարքները հետագայում քիչ հետևանք կունենան ինձ վրա: Որպես քո ընկեր՝ ես չեմ ցանկանում տեսնել քեզ միևնույն ճանապարհով քայլելիս, որով ես եմ քայլել:

Ես հավատում եմ, որ յուրաքանչյուր սերունդ ունի հնարավորություն և պարտավորվածություն՝ խոսելով ճշմարտությունը՝ ազատվել սխալներից, և այդ մասին զգուշացնել հաջորդ սերնդին: Այն աղջիկ-

ները, ովքեր մայրեր են դառնում, հնարավորություն ունեն փոխանցելու իրենց սովորածը, որպեսզի դուստրերը ավելի բարձր կանգնեն, ավելի հստակ տեսնեն և խուսափեն այն որոգայթներից, որոնցից չեն խուսափել իրենց մայրերը: Սա նշանակում է, որ մենք պետք է մեր անցյալի գաղտնիքները բերենք ներկայի մեջ, որպեսզի մյուսները լսեն և դասեր քաղեն: Սա հրավեր է այն կանանց, ովքեր զղջացել են սեռական հարցերում թույլ տված սխալների համար: Դուք կարող եք ճշմարտության լույսը փայլեցնել մութ ճանապարհներին, որոնցով մյուսներն ուզում են գնալ:

Սա զգուշացնում է նրանց, ովքեր մտածում են տարբեր սեռական կապերի մասին. *փախե՛ք այդ ճանապարհից:* Դրա համար *շատ բարձր գին է վճարվում, իսկ հետևանքները երկարատև են լինում:* Նրանք, ովքեր ընտրել են լույսի, օրհնության և հնազանդության ճանապարհը, թող սա օգնի պահպանել և ամրացնել ձեր որոշումը: Այսպես թե այնպես, եթե երկար ապրեք, կտեսնեք, որ մի բան հստակ է. իրականում ոչ մի ծածուկ բան չկա:

> *Երբ մենք հիմար, մեղավոր բաներ ենք ասում կամ անում ծածուկում, ոչ թե Աստված է դնում մեզ դժվար կացության մեջ, այլ՝ ինքներս:*

«Որովհետև ծածուկ բան չկա, որ չհայտնվի, և ոչ թաքուն բան, որ չիմացվի և չհայտնվի» (Ղուկ. 8.17):

Ուշադրություն դարձրեք «բան չկա» կամ «ոչինչ» բառերին: Այս բառերի մեջ հնարավոր չէ սխալվել. ոչինչ՝ նշանակում է ոչ մի բան: Շատ հաճախ մենք կարդում ենք Սուրբ գիրքը և այսպիսի տողերի հանդիպելիս պատկերացնում, թե ավելի խելացի ենք, կամ ինչ-որ ձևով արդարացնում ենք մեզ՝ հրաժարվելով ըմբռնել դրանց իմաստը: Աստվածաշունչ կարդալիս մենք շրջանցում ենք այդ մասերը և մտածում, որ Աստված երբեք մեզ դժվար կացության մեջ չի դնի:

Երբ մենք հիմար, մեղավոր բաներ ենք ասում կամ անում ծածուկում, ոչ թե Աստված է դնում մեզ դժվար կացության մեջ, այլ՝ ինքներս: Դա նման է նրան, որ մենք գաղտնի սերմեր ցանենք, և երբ ծիլ արձակեն, բարկանանք Աստծո վրա: Միգուցե ինչ-որ չափով մենք հավատում ենք, որ ընդունակ ենք բավականին լավ թաքցնել մեր

արարքները, իսկ այս խոսքը իրականում չի վերաբերում մեր հանգամանքներին: Բայց եթե Սուրբ գիրքն ասում է՝ *«ոչ մի բան»,* նշանակում է՝ առանց բացառության ամեն ծածուկ կամ թաքնված բան կհայտնաբերվի և կիմացվի:

Սա իմանալով՝ կարևոր է, որ մենք ապրենք՝ ավելի մեծ ուշադրություն դարձնելով մեր վարքագծին: Եփեսացիների գիրքը սա անվանում է «զգուշությամբ» ապրել:

> «Բայց ամեն բան՝ լույսից հանդիմանված, հայտնի է լինում. որովհետև ամեն բան, որ հայտնի է լինում, լույս է... Ուրեմն, նայե՛ք, թե ինչպես զգուշությամբ վարվեք, ոչ թե ինչպես անխելքներ» (Եփես. 5.13-15):

Զգուշությամբ ապրել նշանակում է ապրել այն գիտակցումով, որ մեր կյանքում ամեն ինչ փոխկապակցված է, և ուշ թե շուտ կգա ժամանակ, երբ մեր անցյալից որևէ դեպք ապագայում կկանգնի մեր առջև: Անգլերենում «circumspectly»՝ զգուշությամբ, բառի արմատը «circum»-ն է, որը նշանակում է «շուրջը քայլել» կամ «շրջապատել», «spec» նշանակում է «նայել կամ տեսնել ինչ-որ բան», սա ավելի բնորոշ է շինարարին, որը «նայում է» տանը այնպես, ինչպես պոտենցիալ գնորդները կուսումնասիրեին նրա որակը նախքան այն գնելը: Նույնպես և մենք պարտավոր ենք ապրել մեր կյանքը՝ կշռելով մեր որոշումներն ու գործողությունները բոլոր կողմերից և տեսանկյուններից: Մենք պետք է քայլենք մեր որոշումների կողքով, նայենք նրանց ամեն կողմից և համոզված լինենք, որ բոլոր կողմերից էլ մեզ դուր է գալիս նրանց տեսքը, նախքան կհետևենք նրանց: Բայց համոզված չեմ, որ մեզնից շատերն իսկապես հավատում են, որ սա անհրաժեշտ է:

Կոլորադո տեղափոխվելուն պես գնացի բազմոց գնելու: Հիշում եմ, գտա մեկը, որն ինձ իսկապես դուր եկավ: Ես մտածեցի. «Ահա հիանալի բազմոց»: Այն հիասքանչ տեսք ուներ կահույքի խանութի պատի մոտ՝ երբ շրջապատված էր գեղեցիկ առարկաներով և նկարներով: Բայց հետո հիշեցի, որ իմ բազմոցի ետևում պատ չի լինելու: Այն պետք է լավ տեսք ունենա՝ ինչպես առջևից, այնպես էլ ետևից: Երբ բազմոցը պատից այն կողմ հրեցի, հասկացա, որ այն այնքան էլ հարմար չէր լինի իմ

սենյակին: Եթե ես միայն նայեի բազմոցի առջևի մասին, կտանեի այն տուն, կնստեի վրան և ինքս ինձ կշնորհավորեի նրա հարմարավետության և գեղեցկության համար: Այն ինձ դուր կգար այնքան ժամանակ, մինչև գնայի խոհանոց ու հայացք գցեի նրա ետևի մասին:

Շատերս նայում ենք միայն իրերի երևացող մասերին: Մեզ դուր է գալիս, թե ինչպիսի տեսք և որակ ունեն դրանք, և ինքներս մեզ ասում ենք. *«Ի վերջո, ես արժանի եմ այդ ամբողջ հաճույքին և բավարարվածությանը… ես կընտրեմ դա»:* Միայն հետագայում մենք ստուգում ենք ետևի կողմը և ծանր կացության մեջ հայտնվում:

Երբ ես անսանձ երիտասարդ էի, ինքս ինձ համոզում էի, որ պետք է ազատորեն տրվեմ այն ամենին, ինչ ցանկանում եմ: Ի վերջո, ես քոլեջի ուսանող էի, լիովին հասուն և իրավունք ունեի քվեարկել, մեքենա վարել և մասնագիտություն ընտրել ամբողջ կյանքի համար: Կյանքն ինքնին մի արկած էր ներկայացնում, որը բարձրաձայն կանչում էր ինձ: Իմ երիտասարդական բուռն տարիներին ոչ մի անգամ չէի պատկերացրել այն ցավը, որ կարող էի վերապրել քսան տարի անց, երբ նայելու էի իմ երկու ավագ որդիների ազնիվ աչքերին ու պատասխանելու էի նրանց անկեղծ հարցին. «Մայրի՛կ, դու կույս էիր, չէ՞», երբ հայրիկի հետ ամուսնացար»: Նրանց քաղցր ձայնը չմեղադրեց ինձ, բայց նրանք փնտրում էին այն արժանիքի հաստատությունը, որն, իրենց կարծիքով, անկասկած ուներ իրենց մայրը. մի բան, որը ես պետք է ազնվորեն ժխտեի:

> *Իմ երիտասարդական բուռն տարիներին ոչ մի անգամ չէի պատկերացրել այն ցավը, որ կարող էի վերապրել քսան տարի անց:*

Քոլեջի բուռն տարիներին ես երբեք չէի պատկերացնում, որ այսպիսի հարցեր գոյություն ունեն: Եթե բավականին խորաթափանց լինեի և մտածեի ապագայի մասին, հավանաբար հիմար ձևով չէի հպարտանա իմ սեռական բնագավառում ունեցած հաղթանակներով: Բայց այդ ժամանակ հպարտությունը թերևս ամենահեռու զգացումն էր, որ ունեի: Ես կարող էի ստել և ասել նրանց, որ կույս եմ եղել իմ ամուսնության օրը, կամ կարող էի ասել, որ դա նրանց գործը չէ՝ այդկերպ խուսափելով ազնիվ պատասխանից: Ես նաև կարող էի տալ դասական քրիստոնեական արդարացում

իմ վարքագծի համար, քանի որ ես քրիստոնյա չէի, երբ կորցրի իմ կուսությունը: Ավելի լավ տարբերակ չգիտեի: Կամ կարող էի ընտրել ամենացավոտը՝ գարշելի մերկ ճշմարտությունը: Ես խորը շունչ քաշեցի և ճիշտ պատասխան տվեցի. «Ո՛չ, ես կույս չեմ եղել, որի համար մինչև այսօր զղջում եմ: Ես հավատում եմ, որ ձեր ժառանգականությունը բոլորովին տարբեր կլինի»:

Ցանկացած բան, բացի ազնիվ պատասխանից, կքայքայի մեր երեխաների ուժն ու կարողությունը մաքրության մեջ քայլելու համար: Ճշմարտությունը ծնունդ է տալիս ազատությանը, ինչպես որ ամոթը օժանդակում է ստին: Քեզ հարկավոր չէ մանրամասն պատմել քո արածների մասին, որովհետև հնարավոր է ասել ճշմարտությունը՝ առանց լիովին մերկացնելու բոլոր մանրամասները:

> *Ցանկացած բան, բացի ազնիվ պատասխանից, կքայքայի մեր երեխաների ուժն ու կարողությունը մաքրության մեջ քայլելու համար:*

Այս պահին միգուցե դուք այս փաստարկը բերեք. *«Ես ներված եմ և դարձել եմ նոր արարած: Հներն անցել են, և ամեն բան ինձ համար նոր է»:* Իհարկե, սա Աստծո Խոսքի վերջնական ճշմարտությունն է: Ես նույնպես հավատում եմ, որ ներված եմ: Ես նույնպես հավատում եմ, որ իմ մեղքերը մաքրվեցին, երբ խոստովանեցի դրանք: Ես հավատում եմ, որ դարձա նոր արարած և վերապրեցի Քրիստոսի առատ ողորմությունը: Բայց սա չի նշանակում, որ իմ անցյալի ընտրությունների բոլոր կողմնակի պտուղները վերացան: Ես այլևս մեղավոր չեմ և չեմ գտնվում դատապարտության տակ, բայց որոշ հետևանքներ մնում են: Եթե իմ երեխաները կոտրում են ծաղկամանը, ես ներում եմ նրանց, բայց ծաղկամանը մնում է կոտրված:

Հետագա հարցերից խուսափելու համար պատկերացնենք մի իրավիճակ: Ի՞նչ կլիներ, եթե ես հղիանայի այդ բուռն կյանքի շրջանում: Հավանաբար դա ահազանգ կլիներ ինձ համար: Ես կդառնայի քրիստոնյա հղիության ժամանակ: Չնայած որ կվերապրեի Աստծո սերն ու ողորմությունը, արդյո՞ք իմ որովայնում գտնվող երեխան կանհետանար: Ո՛չ, իհարկե՝ ո՛չ: Բայց երեխայի գոյությունը չէր բացառի իմ մեղքերի թողությունը, ինչպես որ մեղքերի թողությունը չէր ջնջի երե-

խայի գոյությունը: Միևնույն է, կմնար այն սերմի պտուղը, որ ես տնկել էի, և այն ընտրությունների հետևանքը, որ ես կատարել էի: Բայց ես սիրով կընդունեի այդ երեխայի ծնունդը՝ չնայած նրան, որ նրա բեղմնավորումը տեղի էր ունեցել ամուսնությունից դուրս:

Ահա իրական կյանքից մի դեպք: Երբ մենք նոր էինք ամուսնացել, ես ճանապարհորդում էի որպես դիմահարդարման ֆիրմայի ներկայացուցիչ: Մենք ունեինք երեք մասնաճյուղ Դալլասում և երեքն էլ Հյուստոնում: Մեզնից մի քանիսը քրիստոնյաներ էին, և մենք սիրում էինք, երբ հնարավորություն էր լինում միասին ճանապարհորդելու և միմյանց հետ շփվելու ճաշի և ընթրիքի սեղանի շուրջ: Ամենագեղեցիկ չամուսնացած աշխատողներից մեկը, որը նույնպես քրիստոնյա էր, ուներ մի շարք առողջական խնդիրներ և անհանգստության սարսափելի նոպաներ: Ես վախենում էի, որ նա կկորցնի իր աշխատանքը, որովհետև մշտապես բացակայում էր հիվանդության պատճառով և տկարանում աշխատանքային պարտականություններն իրականացնելիս: Մի երեկո մենք միասին գտնվում էինք մեր ապրանքների ցուցահանդես-վաճառքին, և ես հարցրի նրան, թե կարող ենք միասին աղոթել: Ես վախենում էի, որ նա հուսահատության և կործանման ճանապարհին էր, և իսկապես հույս ունեի, որ աղոթքի միջոցով հնարավոր էր կանխել այդ ընթացքը: Նրա մոտ ամեն բան լավ էր. ուներ եկեղեցի, ծառայողական մեքենա, լավ աշխատավարձ, մեծ արտոնություններ, հետաքրքիր ճամփորդություններ, բայց երբեք երջանիկ չէր: Ես հարցրի նրան, թե որն է խնդիրը, և նա խոստովանեց.

- Դու չես հասկանում: Դու ամուսնացած ես, իսկ ես՝ ոչ: Դու չգիտես՝ ինչ է միշտ մենակ լինելը:

Ես քաջալերեցի նրան ակտիվ լինել եկեղեցում, դադարել դժգոհելուց և գոհանալ այն ամենի համար, ինչ ուներ:

- Դա չի օգնում ինձ, փորձել եմ: Ես շատ եմ ճանապարհորդում և երբ տուն եմ գալիս, այնքան հոգնած եմ լինում, որ ամբողջ շաբաթ-կիրակին վերականգնում եմ ուժերս հաջորդ շաբաթվա համար,- պատասխանեց նա:

Քիչ անց ինձ թվաց, որ անկախ նրանից, թե ինչ էի ասում, նա փորձում էր այս կամ այլ կերպ դրա տակից դուրս գալ: Արդեն մթնում էր, և

մենք նույնիսկ չէինք էլ աղոթել, բայց ես հիասթափվել էի, և ինձ համար նրա իրավիճակը անելանելի էր թվում:

- Ե՛կ աղոթենք: Դո՛ւ սկսիր,- առաջարկեցի ես:

Մենք բռնեցինք միմյանց ձեռքից, և նա սկսեց աղոթել: Բայց ես նույնիսկ չէի լսում, թե ինչ էր ասում: Ես բոլորովին ուրիշ բան էի տեսնում: Սուրբ Հոգին հստակ ցույց էր տալիս մի բան, որ այն գրեթե սարսափեցնում էր ինձ: Եթե ես ասեի նրան՝ ինչ տեսնում էի, բայց սխալված լինեի, ապա ամեն ինչ կորած կլիներ: Ես խոստացա Աստծուն խոսել այդ մասին առաջին իսկ հնարավորության դեպքում: Տեսարանը անհետացավ, և ես կրկին լսում էի նրա աղոթքը: Նա կանչում էր Աստծուն. «Խնդրո՛ւմ եմ, խնդրո՛ւմ եմ, Աստվա՛ծ, ների՛ր ինձ»:

- Նա ներել է,- ասացի ես:

- Ո՛չ,- առարկեց նա,- Նա չի ներում ինձ: Ես խնդրում եմ, իսկ Նա չի ներում:

Ես սեղմեցի նրա ձեռքը, բացեցի աչքերս և նայեցի նրա աչքերին:

- Ես գիտեմ, թե ինչու ես կարծում, որ Աստված քեզ չի ներում:

- Ո՛չ, դու չես հասկանում: Ես գիտեմ, որ Նա չի ներել ինձ:

Ես խորը շունչ քաշեցի և շարունակեցի.

- Դու կարծում ես, որ Աստված չի ներել քեզ, որովհետև Նա չի բժշկել քեզ սեռական հերպեսից:

Նա ցնցվեց և շշնջաց.

- Որտեղի՞ց իմացար:

- Ես չգիտեի: Աստված հենց նոր ցույց տվեց: Նա ցանկանում է, որ դու իմանաս, թե որքան շատ է քեզ սիրում: Եթե դեռևս չես բժշկվել, չի նշանակում, որ դու չես ներվել:

Հետո նա ինձ հետ կիսվեց իր տխուր, ողբերգական պատմությամբ, և ամեն բան ի վերջո պարզ դարձավ: Նա իր ամբողջ կյանքը քրիստոնյա է եղել: Բայց մի օր այնպես է պատահում, որ նա ներկա է գտնվում այնպիսի երեկոյի, որտեղ գիտեր, որ չպետք է լիներ: Նա իրեն անհարմար է զգում և սկսում է մի փոքր խմել, որպեսզի ավելի հանգիստ զգա անծանոթ միջավայրում: Զգալով նրա շփոթությունը՝ մի գրավիչ տղամարդ, ուշադրություն դարձնելով նրան, մոտենում է, ընկերանում և ասում, թե որքան գեղեցիկ է նա:

Նախքան աղջիկը կհասկանար, թե ինչ է տեղի ունենում, նկատում է, որ կանգնած է այդ երիտասարդի հետ մեն-մենակ: Կրքերը շիկանում են, բայց նա մտածում է, որ կարող է վերահսկել իրավիճակը: Նա չի գիտակցում, թե որքան դժվար է ամեն ինչ հսկողության տակ պահել, երբ երկուսը հայտնվում են առանձին վայրում՝ կիսամերկ և թեթևակի արբած: Նա ոչ է ասում, բայց տղամարդը չի լսում, և այնտեղ այլևս ոչ ոք չկար, որպեսզի կանգնեցներ նրանց: Այդ երեկո նա կորցնում է իր կուսությունը և ձեռք բերում անբուժելի վեներական հիվանդություն՝ սեռական հերպես: Այդ դեպքից հետո տարիներ են անցել, բայց նրան դեռ տանջում է մեղքի և ամոթի զգացումը:

Նա բավականին երկար էր ապրել զղջման ծանրության տակ, որ շրջվել էր և սկսել մեղադրել Աստծուն:

- Առաջին անգամ այդ քայլին գնալով՝ ես վարակվեցի: Իմ ընկերներն ապրում էին՝ ինչպես ուզում էին, և հիմա նրանց մոտ ամեն ինչ կարգին է: Շատերը նույնիսկ ամուսնացել են,- լաց լինելով ասաց նա:

- Աստված ցույց չտվեց դա ինձ, որ դատապարտի քեզ, այլ՝ որ իմանաս, որ Նա լսել է քո աղաղակը, գիտի քո ցավը և ներում է քեզ: Ինչո՞ւ Նա պետք է այս բանը ցույց տար, եթե ոչ՝ Իր ձեռքը քեզ մեկնելու համար,- կրկին հաստատեցի ես:

Այդ երեկո նա ազատվեց Աստծո հանդեպ ունեցած բարկությունից և ընդունեց Նրա ներումը: Նա բավականին երկար էր ապրել զղջման ծանրության տակ, որ շրջվել էր և սկսել մեղադրել Աստծուն: Մինչ այդ ամեն անգամ, երբ նրա վիճակը վատանում էր, նա վախենում էր, որ միգուցե Աստված է դատապարտում իրեն մեղքերի համար, և կրկին զգում էր այդ ցավը:

Այդ երեկո մենք աղոթեցինք, որ նա ազատվի մեղքի զգացումից, ինչպես նաև աղոթեցինք նրա հոգու, շնչի և մարմնի բժշկության համար: Դա տարիներ առաջ էր: Ես նրան չեմ տեսել գրեթե քսան տարի: Չգիտեմ՝ արդյոք նա ֆիզիկապես բժշկվել է, թե ոչ, բայց հստակ գիտեմ, որ նրա սրտի բժշկությունը սկսվեց հենց այդ գիշեր: Արդյո՞ք ես հավատում եմ, որ Աստված կարող է բժշկել նրան նաև ֆիզիկապես: Այո՛, Աստծո համար անհնարին ոչինչ չկա, բայց երբ սիրտն է կոտր-

ված, առաջին հերթին Աստծուն դա է մտահոգում:

Այժմ նայենք մեկ ուրիշ միայնակ կերպարի: Նա նստած է հողմահարված ծովապատնեշի եզրին: Քամին մուգ մազերը խփում է նրա դեմքին, իսկ նա փորձում է տանել ականջների ետևը: Նրա աչքերը լցված են արցունքներով: Նա ոտքերը սեղմել է կրծքին՝ ծնկների վրա պահելով գիրքը: Բայց քամին տարուբերում է էջերը, և աղջիկն ուժգնորեն պայքարում է քամու դեմ՝ փնտրելով մխիթարություն կամ պատասխան, բայց ոչինչ չի գտնում: Նա վեր է կենում իր ամոթահար վիճակից և ուղղում դեմքը՝ այլևս ետ չտանելով ալեկոծվող մազերը՝ կարծես թույլ տալով, որ քամին հարվածի դեմքին՝ որպես պատիժ:

Քսաներկու տարեկանում նա բախվել է սեփական ընտրության իրականությանը: Նա հավատում է, որ Աստված ողորմած է, բայց միևնույն ժամանակ վախենում է, որ իր մեղքերը չափազանց մեծ են: Այս երեկո նա պետք է պատասխան տա այն բաների համար, որոնք, կարծում էր, որ թաղված են ծովի խորքերում: Նկատելով, որ ուշ ժամ է, նա աղոթում է վերջին հուսահատ աղոթքը և հեռանում: Մեքենային մոտենալով՝ նա երդվում է լինել համարձակ և ազնիվ: Այս երեկո նա պետք է դեմ առ դեմ կանգնի այն մարդուն, ում սիրում է. նա համոզված էր, որ վերջինս խնդրելու է ամուսնանալ իր հետ, բայց մինչ այդ պետք է իմանա ամբողջ ճշմարտությունը իր սիրելի աղջկա մասին: Նա կրկին պատկերացնում է տղայի հիասթափությունը… չէ՞ որ այդ երիտասարդը կույս է, և նա ընտրել է իրեն՝ որպես կին: Նա արժանի է ավելի լավին, և այս երեկո տղային կասի այդ մասին: Վերադառնալով իր դատարկ մեկուսեցյալանոց բնակարանը՝ ցնցուղ է ընդունում և պատրաստվում տղայի հետ հանդիպմանը:

Անցած գիշեր նա ասել էր տղային, որ ցանկանում է խոսել իր հետ և կուզեր, որ ինչ-որ տեղ գնալու փոխարեն պարզապես զբոսնեին: Նա ցանկանում էր հեռու լինել անծանոթ մարդկանց աչքերից և ականջներից, երբ կխոսեր տղայի հետ: Տղայի բնակարանը մի քանի թաղամաս այն կողմ էր, և աղջիկը ցանկանում էր մի քիչ ժամանակ անցկացնել միայնակ, նախքան կհանդիպեին: Նա կրկնում էր իր տխուր պատմությունը քամուն և սարսռում էր, երբ խոսքերը դուրս էին գալիս բերանից: Մինչ պատրաստ կլիներ, արդեն կանգնած էր տղայի դռան առջև:

Նա թակում է դուռը մի փոքր երկմտելով՝ մտածելով, որ միգուցե սա վերջին անգամն է, որ իրեն ներս կհրավիրեն:

Նրա առջև կանգնած է լավագույն ընկերը, որ ունեցել է ամբողջ կյանքում: Երիտասարդն անմիջապես զգում է աղջկա ներքին պայքարը և մոտենում է, որ գրկախառնվի, բայց վերջինս ձեռքով կանգնեցնում է նրան՝ փորձելով որոշակի տարածություն պահպանել: Աղջիկը վախենում է, որ եթե տղան փարվի իրեն, նա բավականաչափ համարձակ չի լինի ճշմարտությունն ասելու նրան: Աղջիկը նյարդայնացած շուրջն է նայում.

- Որտե՞ղ է սենյակակից ընկերդ:

- Նա տղաների հետ դուրս է եկել… քեզ հետ ամեն ինչ կարգի՞ն է:

- Ո՛չ, ես ավելի լավ կզգամ քեզ հետ խոսելուց հետո:

- Շատ լավ, հիմա կոշիկներս հագնեմ և գնանք… բայց դեմ չե՞ս, եթե քեզ համար Սուրբ գրքից մի տեղ կարդամ: Ես զգում եմ, որ պետք է դրանով կիսվեմ քեզ հետ:

Աղջիկը լուռ գլխով է անում և դողում՝ մինչ տղան գնում է Աստվածաշնչի ետևից: Ի՞նչ կարող էր Աստված ասել իրեն: Նա աղաղակել էր Նրան մի ամբողջ օր՝ հուսալով մի փոքր շշնջոց լսել, բայց բացի սեփական խղճի ձայնից ոչինչ չէր լսել: Ի վերջո, եթե խիղճը դատապարտում էր իրեն, մի՞թե նույնն էլ Աստված չէր անում:

- Ահա՛, այն մի փոքր անսպասելի է: Հուսով եմ, այն քեզ չի վիրավորի:

- Կարդա՛,- ասաց աղջիկը

- Ես գիտեմ, որ դու արդեն գիտես սա, բայց լսի՛ր. «Ուրեմն, եթե մեկը Քրիստոսում է, նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ» (Բ Կորնթ. 5.17):

Նա շարունակեց.

- Ես գիտեմ, որ սա տարօրինակ է հնչում, բայց զգում եմ, Աստված ասում է, որ ասեմ քեզ՝ հներն անցան, և ամեն բան նոր եղավ, և դու հիմա կույսի պես ես:

Աղջիկը հազիվ պատասխանում է արցունքոտ աչքերով.

- Ես կույս չեմ: Դա այն է, ինչ ես պատրաստվում էի քեզ ասել:

Տղան ձեռքերը դնում է նրա ուսերին և ասում.

- Եթե Աստված ասում է, որ կույս ես, ո՞վ ենք մենք, որ վիճենք:

Աղջիկը տարուբերում է գլուխը՝ կարծես չհավատալով ականջներին: Թեթևություն զգալով՝ նա սկսում է լաց լինել: Տղան աղջկան սեղմում է կրծքին և թողնում, որ լաց լինի այնքան, մինչև փոթորիկն անցնի, և նա իրեն մաքրված զգա:

- Գնանք զբոսնելու:

- Շնորհակալություն,- պատասխանում է աղջիկը:

ժամանակն է շրջվել մեղքից դեպի ապաշխարություն, թող դա կոտրի ձեր սիրտը, և այդ կտորները տվեք Արքայազնին:

Այդ երեկո նրանք ժամերով քայլում են միասին և նայում, թե ինչպես է արևը մայր մտնում: Այլևս չկար այդ խայտառակ գաղտնիքը, որը սպառնում էր բաժանել նրանց: Աստծո ողորմությունն իսկապես հավիտյան է: Դա գրեթե քսան տարի առաջ էր, և այդ ժամանակվանից ես ու Ջոնը միասին ենք:

Հիմա դուք գիտեք, թե ինչու եմ ի սրտե ցանկանում, որ ձեզ երբեք հարկավոր չլինի պայքարել անցյալի ուրվականների հետ, ինչպես ես եմ պայքարել: Ոմանք միգուցե արդեն եղել են իմ իրավիճակում. ժամանակն է դեմ կանգնել փոթորկին և շրջվել դեպի ճշմարտությունը: Ժամանակն է շրջվել մեղքից դեպի ապաշխարություն, թող դա կոտրի ձեր սիրտը, և այդ կտորները տվեք Արքայազնին: Նա ողորմած է և քնքուշ գթասրտությամբ է լցված այն կանանց հանդեպ, որոնց մերժել են և մի կողմ նետել:

Ցանկանում եմ ձեզ հետ կիսվել մոր կողմից իր դստերը գրված մի գեղեցիկ նամակով, որովհետև ուզում եմ, որ դուք նայեք այն սեռական մաքրության գեղեցկությանը, որտեղ չկա ոչ մի զղջում: Ահա այդ նամակից մի հատված.

> «Իմ ցանկությունն է, որ այս ճշմարտությունները դրդեն քեզ մաքուր մնալ՝ որպես Աստծո կին… Ես հասկացել եմ, որ պատճառներից մեկը, որ այդպես վայելում եմ քո հայրիկի հետ ֆիզիկական մտերմությունը, այն է, որ ես չեմ իմացել ոչ մի ամոթ: Որովհետև ինձ ճիշտ են դաստիարակել, և ես իմացել եմ մաքրության արժեքը երիտասարդ հասակում: Ես գիտեի, որ դա գանձ է: Աստված պարգևել էր ինձ մի տղամարդու, ով մաքուր էր մնացել և հարգել էր իմ մաք-

> ությունը՝ երբ դեռ նշանված էինք: Ես վայելում եմ քո հայրիկի հետ սեռական մտերմությունը, և մինչև օրս մեր ննջասենյակի պատից կախած հարսանեկան զգեստը խոսում է մեր մաքրության մասին: Ես շարունակ փառք եմ տալիս Աստծուն այդ պարգևի համար, որը կարող եմ այդպես ազատ վայելել»:

Նրա խոսքերում չկա զղջում. միայն ուրախություն է: Ես նույնն էլ ձեզ եմ ցանկանում: Եթե դուք մեղանչել եք, ձեր կյանքից այդ ստվերը հեռացնելու միակ ճանապարհն այն է, որ թույլ տաք, որ աստվածային տրտմությունը թափանցի ձեր սրտի ցանկացած կարծրության միջով, և ապաշխարության ուժը տանի ձեզ փրկության:

> «Որովհետև Աստծո ուզած կերպով տրտմությունը ապաշխարություն է գործում փրկության համար՝ առանց զղջալու, բայց աշխարհի տրտմությունը մահ է գործում» (Բ Կորնթ. 7.10):

Ո՞րն է աշխարհի տրտմությունը. աշխարհիկ բաների կորստի համար տրտմելն է՝ ներառյալ հեղինակությունը, փողը, ունեցվածքը, փոխհարաբերությունները կամ այլ աշխարհիկ բաներ: Այն կենտրոնանում է սեփական կորուստների վրա՝ չգիտակցելով ուրիշներին կամ Աստծուն պատճառած ցավը: Այն փորձում է փոփոխություն բերել սեփական ուժերով, կրոնական ջանքերի միջոցով՝ առանց անդրադառնալու սրտի շարժառիթների արմատներին: Աշխարհիկ տրտմության լավագույն աստվածաշնչյան օրինակ է Հուդան:

> *Աստվածային տրտմությունը չի մտահոգվում հետևանքների համար և կենտրոնանում է Աստծո հետ մեր փոխհարաբերությունների վրա:*

Աստվածային տրտմությունը չի մտահոգվում հետևանքների համար և կենտրոնանում է Աստծո հետ մեր փոխհարաբերությունների վրա: Այն բարձրացնում է վարագույրը, և մենք կարողանում ենք իրերը տեսնել այնպես, ինչպես կան: Սրա լավագույն օրինակն են Դավթի խոսքերը Սաղմոս 51.1-ում.

> «Ողորմի՛ր ինձ, Աստվա՛ծ, Քո ողորմության պես, և Քո մեծ ողորմության պես ջնջի՛ր իմ անօրենությունները»:

Դավիթը բարձրացնում է իր աչքերը դեպի Աստված և խնդրում է, որ Իր ողորմությամբ մաքրի իր անօրենությունները:

«Միմիայն Քո դեմ մեղանչեցի և չարը Քո աչքի առջև գործեցի, որ Դու արդար լինես քո խոսքերում և մաքուր լինես Քո դատաստանում» (Սաղմ. 51.4):

Այստեղ նա ո՛չ պաշտպանում է իր արարքները, ո՛չ էլ մեղադրում ուրիշներին: Նա բացահայտ ընդունում է իր մեղքը: Երբ մենք անկեղծորեն խոստովանում ենք, իսկապես մաքրվում ենք: Երբ մենք ողորմության կարիք ունենք (իսկ ո՞վ չունի), պետք է խոնարհենք մեր անձերը, որպեսզի Աստված բարձրացնի մեզ մեր հանգամանքներից:

«Սրբի՛ր ինձ զոպայով, և ես մաքուր կլինեմ. լվա՛ ինձ, և ձյունից սպիտակ կլինեմ» (Սաղմ. 51.7):

Դավիթը հիմա խնդրում է, որ Աստված մաքրի իրեն: Նա ընդունում է, որ ինքը չի կարող իրեն մաքրել: Կրկին դիմում է Տիրոջը, որ ջնջի ոչ միայն իր մեղքը, այլև յուրաքանչյուր հետք կամ ստվեր:

«Սուրբ սի՛րտ ստեղծիր ինձանում, ո՛վ Աստված, և ուղի՛ղ հոգի նորոգիր իմ ներսում» (Սաղմ. 51.10):

Նրա մեղքը մաքրված է, և հիմա նա խնդրում է, որ Աստված շնորհք տա իրեն՝ սուրբ սիրտ և ուղիղ հոգի ունենալու համար: Դավիթը հասկանում էր, որ մեղքը կարող էր թմրեցնել սիրտը և թուլացնել հոգու ցանկությունը՝ ծառայելու Աստծուն: Հետո նա շարունակում է՝ խնդրելով.

«Դարձյալ տո՛ւր ինձ Քո փրկության ուրախությունը և կամավոր հոգով հաստատի՛ր ինձ: Ապա անօրեններին կսովորեցնեմ Քո ճանապարհները, և մեղավորները ետ կդառնան Քեզ մոտ» (Սաղմ. 51.12,13):

Այս վերջին երեք խոսքերը թերևս իմ ամենասիրած տեղերն են այս Սաղմոսում: Նրանք պարունակում են վերականգնված ուրախության խոստում այնտեղ, որտեղ եղել են զղջում և տրտմություն: Դրանք տա-

լիս են նոր սկիզբ ունենալու խոստում՝ ստեղծելու ինչ-որ գեղեցիկ բան այլանդակի փոխարեն: Դրանք հնարավորություն են տալիս սովորեցնել այլ մեղավոր պանդուխտներին Աստծո հավատարիմ ողորմության և սիրո մասին, ինչպես նաև օգնել նրանց վերականգնվել:

Թող մեր երկնային Հայրը զղջման յուրաքանչյուր մութ վայրը փոխարինի Իր հավատարմության և ճշմարտության փայլուն փարոսով: Թող Նա հաղթանակ տանի ձեր փրկագնման մեջ: Դուք էլ ձեր հերթին ցավի յուրաքանչյուր վայրը դարձրեք գեղեցկության և ազատության օրինակներ՝ սովորեցնելով մեղավորներին Աստծո Խոսքը, որը մարմին է դարձել ձեր կյանքում:

> *Թող մեր երկնային Հայրը զղջման յուրաքանչյուր մութ վայրը փոխարինի Իր հավատարմության և ճշմարտության փայլուն փարոսով:*

Վերանայենք Սաղմոս 51-ը:

1. Մենք դիմում ենք Աստծուն՝ հիմնվելով Նրա ողորմության, ոչ թե մեր արժանիքների վրա:
2. Մենք խոստովանում ենք մեր արարքը՝ որպես Նրա առջև գործած մեղք:
3. Մենք ընդունում ենք, որ Նրա դատաստաններն արդար են:
4. Մենք խնդրում ենք, որ Նա մաքրի մեզ, և ընդունում ենք դա որպես փաստ:
5. Մենք խնդրում ենք, որ Նա մաքրի ամեն պղծություն և նորոգի մեր հոգին:
6. Մենք խնդրում ենք Նրա փրկության ուրախությունը:
7. Մենք պարտավորվում ենք սովորեցնել ուրիշներին մեր սխալների վրա և քայլել խոնարհության մեջ:

Ես այլևս չեմ ցանկանում տանջվել այն մտքից, որ ճիշտ որոշումներ չեմ կայացրել, չնայած ցանկանում եմ, որ Աստծո յուրաքանչյուր դուստր, ով իր ձեռքում պահում է այս գիրքը, ապրի ուրիշ կյանքով: Մեր Հոր ողորմությունը պատել է ինձ, և Նա թույլ է տվել, որ իմ մեղքերը ձեզ համար ծառայեն որպես զգուշացում, իմ վերականգնումը՝ հույս, և իմ ազատությունը՝ ազատագրում: Այժմ աղոթենք Դավթի հետ միասին:

Սիրելի՛ երկնային Հայր,

Ողորմի՛ր ինձ: Ջնջի՛ր իմ անօրենությունները Քո ողորմության պես, Քո մեծ սրտացավության պես: Լվա՛ ինձ իմ անօրենություններից և սրբի՛ր ինձ իմ մեղքից: Ես ճանաչում եմ իմ անօրենությունները, և իմ մեղքն ամեն ժամանակ իմ առջև է: Միմիայն Քո դեմ մեղանչեցի և Քո առջև չարություն գործեցի: Դու արդար ես Քո խոսքերում և մաքուր՝ Քո դատաստանում… Դու սիրում ես ճշմարիտ միտքը և ծածուկ տեղը իմաստություն ես սովորեցնում: Սրբի՛ր ինձ զոպայով, և ես մաքուր կլինեմ. լվա՛ ինձ, և ձյունից սպիտակ կլինեմ: Թող կրկին ցնծամ և ուրախանամ: Սուրբ սի՛րտ ստեղծիր ինձանում, ո՛վ Աստված, և ուղիղ հոգի նորոգի՛ր իմ ներսում: Քո աչքի առջև պահիր ինձ, և Սուրբ Հոգին թող չհեռանա ինձնից: Դարձյալ տո՛ւր ինձ Քո փրկության ուրախությունը և կամավոր հոգով հաստատի՛ր ինձ: Ես անօրեններին կսովորեցնեմ Քո ճանապարհները, և մեղավորները ետ կդառնան Քեզ մոտ… իմ լեզուն կփառաբանի Քո արդարությունը: Տե՛ր, բա՛ց արա իմ շրթունքները, և իմ բերանը կպատմի Քո գովությունը: Աստծո ընդունելի պատարագները կոտրված հոգին է. կոտրված ու փշրված սիրտը Դու չես անարգի, ո՛վ Աստված (Սաղմ. 51.1-17):

15 *Ինչու ենք ունենում կորուստներ, երբ նվիրվում ենք*

«Կնոջ սեռական գրավչությունը շատ բանում կախված է իրեն թաքցնելուց: Մեր ժամանակներում, երբ աղջիկներն այդքան հասանելի են, այս խնդիրն ավելի քան արդիական է»:

– ԼԻԶԱ ՇԻՖՐԵՆ, «ԿԱՆԱՅՔ» ԱՄՍԱԳՐԻՑ

Այս արտահայտությունը մտածելու տեղիք է տալիս, հատկապես, որ այն գրվել է աշխարհիկ ամսագրում: Կարծես բոլոր հները նոր են դառնում, և Աստված ավելի շատ է կանանց պաշտպանի դերում, քան մենք կարծում ենք: Նույնիսկ աշխարհիկ հասարակությունը արթնանում է կանանց հիասթափված սերնդի բարկացած ձայնից, որն ընդունում է, որ տարբեր սեռական հարաբերություններն իրականում չեն հասել ցանկալի նպատակին: Կանայք ավելի շատ են կորցնում, երբ զիջում են, քան տղամարդիկ:

Իհարկե, այսպիսի իմաստուն խոսքերն առաջարկում են չափավորել մեր մոտեցումը մեր սիրելի ցանկություններին հասնելու համար: Բայց սա բավական չէ: Մեզ համար կա ավելի բարձր կոչում: Մենք չպետք է չափավորենք մեր վարքագիծը ցանկալի արդյունքին հասնելու համար: Հարցը կանանց մի ամբողջ սերնդի արժանապատվության, պատվի, ուժի և նույնիսկ իշխանության վերականգնման մասին է: Մի սերնդի, որն այլևս չի ցանկանում տանուլ տալ: Լսե՛ք Դանիել Կրիտենդենի այս խորաթափանց մտքերը «Ինչ չեն ասել մեզ մեր մայրերը» գրքից.

Հարցը կանանց մի ամբողջ սերնդի արժանապատվության, պատվի, ուժի և նույնիսկ իշխանության վերականգնման մասին է: Մի սերնդի, որն այլևս չի ցանկանում տանուլ տալ:

«Հիրավի, ազատության և անկախության հասնելու կարողության մասին մեզ՝ կանանցս տրված բոլոր խոստումների մեջ սեռական ազատության խոստումը հավանաբար եղել է ամենապատրանքա-

յինը: Այս օրերին մենք դա իմանում ենք շատ դաժան ձևով: Ամբողջ սեռական խրոխտանքները, որ աղջիկն ունի, չքանում է, երբ առաջին անգամ նրան իսկապես դուր եկող տղան, բավարարելով իր ցանկությունը, հասկացնել է տալիս, որ նա այլևս իրեն պետք չէ: Որքան էլ աղջիկը ձևացնի, որքան էլ համոզի, որ իրեն այդպիսի տղա պետք չէ, ոչինչ նրան չի պաշտպանի այն ցավից ու նվաստացումից, որ նա ունենում է տղայի հեռանալուց հետո, երբ մնում է միայնակ և զգում ոչ թե սեռական առումով հաստատված, այլ դեն նետված:

Օգտագործված, այնուհետև մի կողմ նետված լինելու սարսափը հատկապես անհանգստացնող է մերժված երիտասարդների համար: Երբ մենք լիովին մերկանում և տրվում ենք ինչ-որ մեկին, մեզ պետք է ոչ թե դեն նետեն, այլ ընդունեն ու փայփայեն: Մենք նախատեսված չենք, որ մեզ թողնեն ու հեռանան՝ մեր ինտիմ տեղերը մուտք ունենալուց հետո: Սեռական միությունը պետք է լինի երկուսը մեկ դառնալու ձուլման գագաթնակետը: Այն երբեք չի նախատեսվել լինելու վերջին գործողությունը բաժանվելուց առաջ: Որքան սարսափելի է լսել. «Ես ստացա այն, ինչ ցանկանում էի. գնացի… օ՜, իմիջիայլոց, շնորհակալություն»:

Մեր արգանդը նախատեսված չէ խավարի մեջ անփութորեն նետված սերմերի համար, այլ՝ հոգատարությամբ ու սիրով ցանված կյանքի սերմերի: Մեր արգանդը նման է պարտեզի, որը պետք է այնպես մշակել, որ ծաղկի: Աստված պատվիրեց Իսրայելի նոր ամուսնացած տղամարդկանց ամուսնությունից հետո մի ամբողջ տարի տանը մնալ և պարզապես երջանկացնել իրենց կանանց (տե՛ս Երկր. Օր. 24.5): Նրանց պետք է ապահով տնկեին երջանկության պարտեզում, որտեղ կարող էին ծաղկել և նոր կյանք տալ:

> *Մենք ծարավ ենք մտերմության, սիրերգի և կրքի: Մենք ուզում ենք ճանաչել ու ճանաչված լինել:*

Որպես կանայք՝ մենք ստեղծված ենք լինելու ավելին, քան տղամարդու համար սեռական բավարարվածության առարկա: Որպես կանայք՝ մենք արժանի ենք ավելիին, քան պարզապես սեռական բավարարվածություն ստանալուն: Մենք ծարավ ենք մտերմության, սիրերգի և կրքի: Մենք ուզում ենք ճանաչել ու ճանաչված լինել: Այնտեղ,

որտեղ չկա ուխտ, չի կարող լինել հարատև վստահություն: Ինչպե՞ս կարող ես վստահել մեկին, ով քեզ ոչ մի հիմք չի տալիս հավատալու, որ նա վաղը քեզ հետ կլինի: Եթե նա չի կամենում սպասել քեզ այսօր, մի կողմ դնել իր անմիջական սեռական կրքերը, նա չի սպասի քեզ վաղը: Տղամարդիկ բնույթով նվաճողներ են. երբ նրանք բավականություն են ստանում ամբողջ ավարից, շարժվում են դեպի հաջորդ նշանակակետը:

Տղամարդ-կին փոխհարաբերության մեջ կա մեկ այլ խորամանկ առանձնահատկություն: Գրեթե անհնար է հարաբերությունները սկսել սեռական շփումով, ապա անցնել ավելի խորը մտերմության: Տղամարդկանց չի հետաքրքրում ավելի լավ ճանաչել նրանց, ում արդեն արագ ճանաչել են, որքան էլ որ ֆիլմերը հակառակն ասեն: Ինչո՞ւ ժամանակ տրամադրել գինու պիտակին ավելի մոտիկից ծանոթանալու համար, եթե արդեն դատարկել ես այն:

Տղամարդը սիրում է արկածներ, գաղտնի սիրային կապեր և այնպիսի կանանց, ովքեր դրդում են նրան ավելիին, որովհետև հավատում են, որ կա ավելին: Տղամարդը ցանկանում է հավատալ նրան, ով հավատում է իրեն: Նա ուզում է համոզված լինել, որ կարող է վստահել կնոջը իր սիրտը, իր երեխաներին և իր գումարները: Հոգու խորքում լավ տղամարդիկ ցանկանում են լինել ինչ-որ մեկի փայլուն զրահապատված իշխանը. եթե սպասում ես քո արքայազնին, երբեք մի՛ մոռացիր, որ նա էլ արքայադուստր է փնտրում:

Այժմ ետ դառնանք և տեսնենք, թե մենք՝ կանայքս, ի՞նչ ենք կորցնում, երբ մտնում ենք տարբեր սեռական հարաբերությունների մեջ.

կորուստներ. հարգանք, կուսություն, իշխանություն, յուրօրինակություն, առեղծվածություն, անմեղություն, վստահություն, լավ համբավ, վերահսկողություն, սեռական առողջություն, մաքրություն, պտղաբերություն, ազատություն և փոխհարաբերություններ ունենալու ապագա:

Կենսաբանական առումով իհարկե կինն է հղիանում, ոչ թե տղամարդը: Նա կարող է հենց այնպես հրաժարվել երեխայից, իսկ կինը՝ ոչ: Կինն է, որ սպանում է իր երեխային կամ ծնում անհայր երեխա, մինչ նա մեծանում է իր որովայնում: Կինն է, որ պետք է կրի երեխային՝

իմանալով, որ հետագայում կարող է թողնել նրան: Կինն է, որ պահելով և խնամելով երեխային՝ մեկ օր պետք է բացատրի այդ փոքրիկին, թե ինչու է հայրը լքել իրեն: Սրանք ցավոտ ընտրություններ են:

Շատ վեներական հիվանդություններ քայքայում են կնոջ վերարտադրողական համակարգը, նախքան կկարողանան հայտնաբերել դրանք: Սա հաճախ նշանակում է, որ նրա համար դժվար կլինի հղիանալ, եթե, իհարկե, նա արդեն անպտուղ չի դարձել: Գոյություն ունի նաև ՁԻԱՀ-ի խնդիրը, որը կրճատում է մարդու կյանքը: Տղամարդիկ կարող են անցնել մի սեռական կապից մյուսը շատ ավելի արագ, քան կանայք, և կարող են նրանց փոխանցել ավելին, քան միայն իրենց սերմը՝ առանց նույնիսկ գիտակցելու դա:

Մի երիտասարդի հաջողվել էր նույն շաբաթում հղիացնել մի երիտասարդ աղջկա, ում ես գիտեմ, և նրա լավագույն ընկերոջ քրոջը: Նրանք մի քանի օրվա տարբերությամբ լույս աշխարհ բերեցին իրենց երեխաներին: Իսկ որտե՞ղ էր այդ երիտասարդը, երբ այս աղջիկները երկունքի ցավեր էին քաշում: Արդյո՞ք բռնել էր նրանց ձեռքը. ո՛չ, նա փախել էր:

Հիմա դիտարկենք կնոջ հնարավոր օգուտները տարբեր սեռական հարաբերություններից՝ ժամանակավոր հաճույք և սեռական փորձառություն:

Իսկ հիմա նայենք տղամարդու օգուտներին և կորուստներին.

կորուստներ. կուսություն և սեռական առողջություն.

օգուտներ. ժամանակավոր հաճույք, սեռական փորձառություն, հաղթանակի վերապրում, ազատություն՝ շարժվելու դեպի հաջորդ ավարը:

Դուք կարող եք տեսնել, որ այս ներկայացումը ամեն օր ցուցադրվում է հեռուստատեսությամբ: Վերջերս պատահաբար հեռուստացույցով տեսա մի շոու, որտեղ տասնհինգամյա մի աղջկա կրծքին երկտող էր փակցված. «Նա կարծում է, թե երիտասարդն է երեխայի հայրը»: Այստեղ կարծես հայրության հարցն էր քննարկվում: Տղան համաձայնել էր արյան անալիզ հանձնել իր անմեղությունն ապացուցելու համար, և հենց եթերում նրան կա՛մ կմեղադրեին, կա՛մ կարդարացնեին: Ծրարը, որի մեջ դրված էին անալիզի արդյունքները, այնպես է բաց-

վում, կարծես Օսկարի մրցանակաբաշխություն լինի. «Եվ անալիզի արդյունքները ցույց են տվել… որ դուք չեք երեխայի հայրը»: Երիտասարդ տղան տեղից ցատկում է և ուրախությունից թռչկոտում. «Ես տուն կգնամ ազատ, ես ազա՛տ եմ: Չէ՞ որ քեզ ասում էի, որ դա իմ երեխան չէ»: Ընկերների ձեռքերին թեթև հարվածելով՝ նա շարունակեց իր ուրախությունը տոնել վարագույրի ետևում:

Այն, ինչը ցնցեց ինձ, սարսափն էր այդ երիտասարդ աղջկա դեմքին: Նա միանգամայն կորած և անհույս տեսք ուներ: Նույնիսկ հաղորդավարը զգաց նրա վախը, բռնեց նրա ձեռքից և ասաց. «Մոռացի՛ր նրան: Մենք քեզ կօգնենք»: Աղջիկը անզգայացած՝ գլխով արեց, մինչդեռ երիտասարդը շարունակում էր ցատկոտել և ուրախանալ վարագույրի ետևում:

Պետք է խոստովանեմ, որ, երբ տեսա այդ հաղորդումը, աչքերս արցունքով լցվեցին: Ինչպե՞ս կարող էր նրա կյանքը նույնը մնալ: Նա իր իրավիճակը ներկայացրել էր այս ազգի առջև՝ հույս ունենալով, որ իր երեխային կապահովի հայրիկով, բայց պարզվում է, որ նրա համար չկա հայր: Իհարկե, այստեղ հարց է ծագում. ինչո՞ւ նա չէր բերել բոլոր տղաներին, որոնց հետ անկողին էր մտել այդ ժամանակահատվածում: Միգուցե այդ երիտասարդը միակն էր, ում հետ նա հարմար էր գտնում կապել իր կյանքը: Այն ճշմարտությունը, որ նա փնտրում էր, ոչ մի պաշտպանություն չտվեց իրեն: Նա խայտառակվեց և անզոր վիճակում հայտնվեց միլիոնավոր անծանոթների առջև: Լսարանի անմիջական արձագանքը խառն էր. ոմանք ապշած էին, ոմանք գլուխներն էին օրորում, իսկ մյուսներն էլ քմծիծաղ էին տալիս: Ես այնպես էի ցանկանում գրկել նրան:

> *Տարբեր սեռական հարաբերությունների գինը տղամարդկանց համար նվազագույնն է՝ համեմատած այն գնի հետ, որ կինը պետք է վճարի:*

Ես չեմ կարող ինչ որ բանով օգնել այդ աղջկան, բայց ձեզ կարող եմ զգուշացնել. տարբեր սեռական հարաբերությունների գինը տղամարդկանց համար նվազագույնն է՝ համեմատած այն գնի հետ, որ կինը պետք է վճարի: Ես հավատում եմ, որ սա մի մասն է այն պայքարի, որ տրվել է մեզ Եդեմի պարտեզում մեղանչելու արդյունքում:

Սա ևս մի օրինակ է այն բանի, թե ինչպես են կանայք տառապում, երբ խախտվում են սիրո օրենքները: Այս օրենքները երբեք չեն հաստատվել, որ ձեզնից խլեն ուրախությունը և հաճույքը, այլ ընդհակառակը՝ որ պաշտպանեն ձեզ: Մեղքն անշուշտ տալիս է ժամանակավոր հաճույք: Ես համոզված եմ, որ այս երիտասարդ աղջիկը ակնթարթային հաճույք էր վայելում այդ երիտասարդի գրկում, ինչպես որ մեկ ուրիշի գրկում կվայելեր: Բայց այդ անցողիկ հաճույքը ոչինչ էր՝ համեմատած նրա հետ, ինչ նա պիտի վերապրեր այդ օրը տեսախցիկի առջև:

Երբ դուք սկսում եք այնտեղից, որը նախատեսված է միության գագաթնակետը լինելու համար, այդ ժամանակ այդտեղից ամեն բան արագորեն իջնում է: Եթե ամենաինտենսիվ մակարդակը (սեռական) զարգանում է ամենասկզբում՝ անտեսելով փոխհարաբերությունների մնացած կողմերը, արդյունքում պակասում է այն շաղախող նյութը, որն ամրացնում է փոխհարաբերությունները: Տղամարդուն պետք չէ հեռվում փնտրել այն կնոջը, որը կբավարարի իր սեռական ցանկությունները: Այսօրվա հասարակության մեջ նույնիսկ հարկավոր չէ վճարել կնոջը այդպիսի ծառայության համար:

Ես ցանկանում եմ կիսվել ձեզ հետ, թե ինչ տեսա տղամարդկանց պոռնոգրաֆիկ ամսագրում տարիներ առաջ: Տղամարդն ու կինը անկողնում են՝ պատրաստ կենակցելու: Կինը դադարեցնում է՝ սպասելով իր հարցի պատասխանին. «Կշարունակե՞ս հարգել ինձ առավոտյան»: Հաջորդ նկարում տղամարդը շփոթված նայում է. «Հարգել քեզ առավոտյա՞ն: Ես հիմա քեզ չեմ հարգում»:

Եթե դուք հարգանք եք փնտրում, ապա չեք գտնի այն տարբեր սեռական հարաբերությունների մեջ: Տղամարդիկ շարունակում են նախընտրել ամուսնանալ այնպիսի կանանց հետ, ովքեր չեն կենակցել ոչ մեկի հետ, հատկապես նրա, ում նրանք ճանաչում են: Տղամարդիկ սիրում են անկողին մտնել, սիրախաղով զբաղվել և նույնիսկ ժամադրվել թեթևաբարո աղջիկների հետ, բայց այսպիսիք սովորաբար առաջինը չեն նրանց ամուսնության ցուցակում:

Տարբեր սեռական հարաբերությունները կանանց ազատություն են տալիս սեռական հարաբերություններում իրենց պահել տղամարդ-

կանց պես: Բայց ճշմարտությունն այն է, որ անկախ նրանից, թե ինչպես ենք մեզ պահում, մենք երբեք տղամարդ չենք լինի… այդ դեպքում էլ ինչո՞ւ վարվենք նրանց նման. կնոջ ուժը նրա կանացիության մեջ է:

Իհարկե, մեր քաղաքակրթությունն ամեն ինչ արել է «կանացի» տերմինը թույլ, փափկասուն և անվստահ կերպարի հետ կապելու համար: Ես ենթադրում եմ, որ եթե կնոջ հատկությունները վերագրեք տղամարդուն, նա իսկապես տարօրինակ տեսք կունենա: Բայց կանացիությունը հենց կնոջն է հատուկ: Երբ կանայք հաստատուն են մնում իրենց դերում, տղամարդիկ մարտահրավեր են ստանում բարձրանալ նոր մակարդակի իրենց դերի մեջ: Տղամարդիկ ձգտում են արժանանալ այն կանանց հարգանքին, մտերմությանը և ուշադրությանը, ովքեր, իրենց կարծիքով, հավասար են իրենց, բայց իրենց լրացնող կեսն են: Լավ չէ, որ տղամարդը մենակ լինի, որովհետև նրա աշխատանքը և կյանքը չեն ունենա իսկական նպատակ առանց մեկի, որի հետ նա կարող է կիսել այդ ամենը: Տղամարդկանց ոչինչ չի դրդում պաշտպանել այն կանանց, ովքեր մերկ են, այլ, ընդհակառակը, նրանք նվաճում և բռնանում են այդպիսիներին: Տղամարդը ցանկանում է պաշտպանել նրան, ով ծածկված է:

> *Սեռական ազատությունը ոչ թե բարձրացնում, այլ ցածրացնում է կնոջ կերպարը:*

Եթե մենք ուզում ենք վերագտնել մտերմությունը, ապա պետք է հաշտվենք ճշմարտության հետ: Եթե ցանկանում ենք ետ բերել մեր արժանապատվությունն ու հարգանքը, ապա պետք է կամենանք կրկին ծածկոց հագնել: Սեռական ազատությունը ոչ թե բարձրացնում, այլ ցածրացնում է կնոջ կերպարը: Դու կարող ես գայթակղել առանց ազդեցիկ լինելու քո կանացիությամբ, բայց կանացիությունը կրում է կնոջ գրավչության գաղտնիքը:

Դարեր շարունակ Եվայի դուստրերը գոչել են Ադամի որդիներին. «Տո՛ւր ինձ զոհաբերող սեր: Ազատի՛ր և պաշտպանի՛ր ինձ: Բավարարի՛ր անվտանգության և ապահովության իմ խորը կարիքը»: Երբ Ադամի որդին պատասխանում է, նա այնպիսի հայտարարություն է անում, որը չի կարող կատարել, բայց իր հերթին հույս ունի, որ աղջիկը կբավարարի իր փափագը, որը նա չի կարող բառերով արտահայտել: Երկուսն էլ դատապարտված են անհաջողության, որովհետև

միայն Աստված է ցանկանում բավարարել մեր ներսի այս խորը ցանկությունները:

Հուսահատության մեջ մենք վաճառել ենք ինքներս մեզ, պայքարել և պատերազմել Ադամի որդիների հետ՝ փորձելով ստիպել նրանց օրինել մեզ և հաստատել մեր արժեքը: Բայց այս պայքարը լավագույն դեպքում հիասթափության մեջ է գցել: Շատ հաճախ մեզ հիասթափեցրել են՝ թողնելով բռնաբարված, վիրավորված և միայնակ: Վերջում այդ ամենը դառնում է անիմաստ և հոգնեցուցիչ գործընթաց, որտեղ երկու կողմն էլ տանուլ է տալիս: Դա Ադամի որդիների մեղքը չէ. նրանք չեն կարող տալ մեզ այն օրհնությունը, որ մենք փնտրում ենք: Մենք ենք նրանց վախեցրել՝ տալով այդքան շատ իշխանություն մեր հոգիների վրա: Մենք պետք է սովորենք, որ այն օրհնությունները, որոնց կարիքը մենք իսկապես ունենք, գալիս են միայն Աստծուց: Մենք պետք է թույլ տանք Աստծուն տալ մեզ նոր անուն, որովհետև մենք այլևս Եվայի դուստրերը չենք, այլ խոստման և լույսի դուստրերը, Նրա հարսնացուն:

Ջոն Էլդրիջը իր «Խենթ սրտերը» (հրատարակիչ՝ Թոմաս Նելսոն, 2001թ.) հիանալի գրքում կիսվում է տարածված հիասթափության մասին, որը տղամարդիկ ունենում են, երբ բավարարվածություն են փնտրում, այսպես կոչված, «շիկահերների» մեջ: Իսկ ի՞նչ կասեք կանանց մասին: Արդյո՞ք մեր մեղքը ավելի մեծ չէ: Որովհետև մենք նայել ենք Ադամին և հիասթափվել: Ադամը Եվայից առաջ էր: Եվ մինչև հիմա էլ Ադամը նրանից առաջ է: Ադամն ունի ինչ-որ առաջնային բան, որը կինը երբեք չի իմանա, որովհետև նա Ադամից հետո եղավ: Ադամը նրա եղբայրն էր և ինչ-որ առումով նաև հայրը, որովհետև նա միակ կինն էր՝ տղամարդու կողից ծնված: Նա հիասթափվեց Ադամի ընտրությունից, ինչպես և իր ընտրությունից: Մենք իսկապես ցանկանում ենք այնպիսի տղամարդկանց, ովքեր իրենց ուժը ստանում են ավելի մեծ բանից, քան մենք:

> *Ադամը երբեք չի կարող քանդել մեր շղթաները: Երբ նայես միայն Ադամին, դու կպայքարես և կհիասթափվես:*

Ադամը երբեք չի կարող քանդել մեր շղթաները: Երբ նայես միայն Ադամին, դու կպայքարես և կհիասթափվես: Բայց երբ նայես Աստ-

ծուն, այլևս Եվայի մերկ և խայտառակված դուստրը չես լինի, այլ կլինես խոստմունքի ծածկված և փրկագնված դուստրը, փառավոր հարսնացուն, որը պարում և երգում է՝ սպասելով իր արքայազնին: Դու փոխել ես օրենքը փափագի հետ, գերությունը՝ ազատության հետ, և կանոնները՝ փոխհարաբերության հետ: Դու ազնվական կին ես: Որոշ կանայք ճաշակել են զղջման դառնությունը նախքան ողորմության ուրախ հեղեղը վերապրելը: Սա հրատապ կանչ է կանանց վերադառնալու իրենց ուժի, արժանապատվության և պատվի առաջնային դիրքին: Գլուխներս բարձր պահած՝ մենք կարող ենք ազատություն հռչակել մեր քույրերին և դուստրերին. այո՛, մենք կարող ենք նրանց արձակել, որ գնան և այլևս մեղք չգործեն:

ԵԶՐԱԿԿԱՑՈՒԹՅՈՒՆ. *Սիրո ուժը*

Ես արդեն քսան տարի է՝ ամուսնացած եմ, բայց եթե ետ նայեմ, կարող եմ դեռ հիշել, թե ինչ է նշանակում հարսնացու լինել: Ես չեմ խոսում հարսանիքին պատրաստվելու խնդիրների և ֆինանսական ծանրության մասին. սրանք երբեք հարսնացուի ուսերին չպետք է դրվեն, այլ հարսնացուին միշտ պետք է ուսերի վրա տանել: Ո՛չ, ես խոսում եմ այն սիրո ուրախության մասին, որին սպասում են, և որը բացահայտ տոնում են բոլորը: Հիշում եմ, թե ինչպես էի հաշվում այն օրերը, երբ իմ կյանքը կդադարեր սովորական լինելուց, և ես կսկսեի իմ երազանքների ճանապարհորդությունը: Արդյո՞ք իմ կյանքը կլիներ այնպիսին, ինչպիսին պատկերացնում էի:

Քանի որ բոլորս էլ Նրա հարսնացուն ենք, կարևոր է հասկանալ, թե ինչպես պետք է մտածի հարսնացուն:

- *Հարսնացուն փափագում է իր փեսացուի հետ փախչել գաղտնի և գեղեցիկ վայր՝ հեռու ուրիշների աչքից և աղմուկից: Այս լուռ մենության մեջ նա փափագում է սիրված լինել ավելի, քան միայն խոսքերով:*

- *Հարսնացուն փափագում է, որ փեսացուն դիպչի իրեն: Նա աղջկա մեջ արթնացրել է խորը զգացմունքներ և բուռն ցանկություն, որոնք կարող են բավարարվել միայն նրա հպումով: Աղջիկը փափագում է անկաշկանդ տրվել նրա գուրգուրանքներին:*

- *Հարսնացուն սիրում է ունենալ հատուկ երգ, որով նա կիսվում է միայն իր փեսացուի հետ. այս մեղեդին մարմնավորում է նրանց սերը և դառնում «երկուսի» երգը:*

- Հարսնացուն սիրում է փեսայի ձայնը, հատկապես, երբ նա քնքշորեն շշնջում է նրա ականջին: Նա գիտի, որ այդ խոսքերը պահված են միայն իր համար:
- Հարսնացուն փափագում է լինել գեղեցիկ հագնված և ապա քնքշորեն հանված:
- Հարսնացուն փափագում է իր փեսացուի առջև կանգնել մերկ և առանց ամոթի: Նա ցանկանում է զգալ, որ իր մարմնի յուրաքանչյուր մասը գեղեցիկ և ցանկալի է փեսային. նրա կառուցվածքը և ձևը հենց այնպիսին են, ինչպիսին նա ցանկանում էր:
- Հարսնացուն փափագում է հաճելի լինել իր փեսային ամեն կերպ:
- Հարսնացուն ցանկանում է լինել մաքուր և կրքոտ այն ամենում, ինչ նա անում է:
- Հարսնացուն փափագում է խոսել և լսված լինել ոչ միայն հասարակ լեզվով, այլև սրտի բարդ լեզվով: Նա ցանկանում է, որ իրեն հասկանան ավելի խորը, քան կարող է արտահայտել բառերով:
- Հարսնացուն կարիք ունի իրեն ապահով զգալ, երբ կբացվի ամբողջությամբ:
- Հարսնացուն սիրում է առանց վախի արտահայտել ազատությունը:
- Հարսնացուն հիանում է անակնկալներով և անսպասելի նվերներով:
- Հարսնացուն սիրում է գաղտնիքներ կիսել իր փեսացուի հետ:
- Հարսնացուն սիրում է, երբ իր սիրելին հետապնդում է իրեն, և ապա ինքն է հետապնդում:
- Հարսնացուն սիրում է իմանալ պատկանելիության ուրախությունը:
- Հարսնացուն ցանկանում է, որ իրեն խնամեն, պաշտպանեն, ուղղություն տան և նույնիսկ հեզությամբ ուղղեն, բայց երբեք չքննադատեն: Երբ նա իրեն քննադատված է զգում, դադարում է ծաղկելուց և խուսափում է իր սիրելիի հպումից:

- *Հարսնացուին չի հետաքրքրում ուրիշ սեր, որովհետև նա կլանված է իր առաջին միակ սիրով:*

Եթե այս նկարագրությունները կոտրում են ձեր սիրտը, թող կոտրեն: Իրականում Աստված է, որ փխրեցնում է անմշակ և կոշտ հողը և ասում. «Թո՛ւյլ տուր Ինձ սիրել քեզ»: Այս ցանկությունները կան յուրաքանչյուր կնոջ մեջ… դրանք այնքա՜ն խորն են, որ ոչ մի երկրային տղամարդ չի կարող բավարարել: Ադամի որդիները կարող են երբեմն բավարարել այս կարիքներից մի քանիսը, բայց մյուս ցանկությունները կանտեսվեն: Չնայած երկրային սերը կարող է խույս տալ ձեզնից կամ հիասթափեցնել ձեզ, ճշմարտությունն այն է, որ դուք փափագում եք այլ սեր: Այս երկնային Արքայազնը երբեք չի հիասթափեցնի կամ վիրավորի ձեզ: Նա է դրել այդ երազանքը, ինչպես որ դուք եք եղել Նրա երազանքը:

«… և փեսան հարսով ուրախանալուն պես, պետք է քեզնով ուրախանա քո Աստվածը» (Եսայի 62.5):

Փեսացուի համար պատրաստվելը երբեք չի եղել հանգիստ, պասիվ արարողություն. դա միշտ եղել է բուռն զգացմունքների ժամանակ. հարսնացուի աշխարհից փոխադրում դեպի սիրեցյալի աշխարհ: Դուք միանում եք մի հնագույն շքերթի, որն ուրախանում է և դողում հուզմունքից. Երկնքի ընտրյալ դուստրերը փափագում են լսել Աստծո ձայնը և զվարճանալ Նրա գրկում:

Ես փորձեցի ցույց տալ ձեզ, թե ինչպիսի խնամքով է Աստված փնտրում Իր հարսնացուին: Ցանկանում եմ, որ դուք տեսնեք, թե որքան խորը Աստված կարող է պաշտպանել և պահել ձեզ Իր Որդու համար: Դուք երբեք չեք կարող ճշմարտապես Նրանը լինել, մինչև չճանաչեք Նրա անսպառ սերը: Նա պետք է գրավի մեր սրտերը, որպեսզի կարողանա քաշել մեզ Իր մոտ: Որովհետև որտեղ մեր գանձերն են, այնտեղ էլ մեր սիրտն է:

«Ես ուրախությամբ պիտի ուրախանամ Տիրոջով, իմ անձը պիտի խնդա իմ Աստծով, որովհետև Նա ինձ փրկության հանդերձներ հագցրեց, արդարության պատմուճանը գցեց ինձ վրա, ինչպես մի

փեսա, որ դնում է իր խույրը, և մի հարսի պես, որ զարդարվում է իր զարդերով» (Եսայի 61.10):

Ծածկե՛ք ձեր մերկությունը Նրա փրկությամբ: Հագե՛ք Նրա արդարությունը: Զարդարվե՛ք Նրա թանկարժեք զարդերով: Ուրախացե՛ք Նրա գրկում, և թող ձեր սիրտը պարի Նրա առջև:

Սիրելի՛ երկնային Հայր,

Կենդանացրո՛ւ ինձ: Ես Քոնն եմ: Թույլ տուր տեսնեմ Քո սերը և ճանաչեմ Քո հպումը: Ես ցանկանում եմ նայել Քո սրտին: Ամո՛ւր պահիր ինձ: Ես սիրում եմ Քեզ՝ իմ գեղեցիկ և փառավոր Արքայազն: Զարդարի՛ր ինձ Քո փրկությամբ: Ե՛կ, Տե՛ր Հիսուս:

Սիրով՝ Քո դուստր

Հեղինակի մասին

Լիզա Բիվերը հեղինակ է մի շարք գնայուն գրքերի, ինչպիսիք են՝ *«Ես վերահսկողությունից դուրս եմ, և դա ինձ դուր է գալիս», «Կնոջ իսկական կշիռը», «Բարկացի՛ր, բայց մի՛ հարվածիր» և «Դու այն չես, որքան քո կշիռն է»:* Նա ճանաչված քարոզիչ է և հաճախակի հանդես է գալիս ռադիո- և հեռուստահաղորդումներում: Լիզան ապրում է Կոլորադոյում՝ ամուսնու՝ Զոնի (ով նույնպես գնայուն գրքերի հեղինակ է) և չորս տղաների հետ:

Երախտիքի խոսքեր

Հիսուսին՝ իմ գերագույն Արքայազնին և Փրկչին. Դու ծածկեցիր իմ մերկությունը արժանապատվությամբ, իմ ամոթը՝ պատվով: Իմ սահմանափակ խոսքերը և գործողությունները երբեք չեն կարող համապատասխանաբար արտահայտել իմ երախտագիտությունն ու սերը: Թող Քո թանկագին Խոսքը միշտ մարմին դառնա իմ կյանքում, որպեսզի մյուսները տեսնեն Քո գեղեցկությունը:

Իմ ամուսնուն՝ Ջոնին. Քսան տարի առաջ դու իմ ամոթից ու խայտառակությունից այն կողմ տեսար գեղեցկություն, հետո հանեցիր ինձ իմ մղձավանջից և փոխադրեցիր երազանքների կյանք… շնորհակալությո՛ւն:

Իմ չորս որդիներին՝ Էդիսոնին, Օստինին, Ալեքին և Արդենին. դուք թույլ տվեցիք, որ ձեր թանկ ժամանակից կիսվեմ նաև ուրիշների հետ՝ գրելով և խոսելով: Թող Աստված բազմապատկի այն ամենը, ինչ դուք ցանել եք, և ամեն մեկիդ տա ձեր սրտի երազանքները: Ես զմայլվում եմ ձեզնով:

Կրիստեն Լուկասին. լսող ականջների, խրախուսանքի խոսքերի և հմուտ խմբագրման համար:

Վիկտոր Օլիվերին. իմաստության համար, որը դրդեց ինձ ավելի խորը գնալ:

Բելինդա Բասին. դու թույլ տվեցիր օգտագործել քո մտքերը:

Պամելա Կլիմենցին. քո ծիծաղի համար, երբ որ ինձ համար շատ դժվար էր:

Մայք Հայաթին. «մեծ գաղափար» պահանջելու համար:

Նրանց, ում անունները չնշեցի, ովքեր իրենց պարգևներն ու տաղանդները դրեցին այս գործի մեջ: Թող այն ազատ արձակի գերիներին:

ԱՆԿՈՏՐՈՒՄ՝ ԻՆՉՊԵՍ ԱԴԱՄԱՆԴԸ

Գտնել ճշմարտությունը կարծիքների աշխարհում

Այսօր, ավելի քան երբևէ, մենք պետք է անկոտրում պահպանենք մեր սերը և ճշմարտությունը: Աստված Սեր է: Աստված Ճշմարտություն է: Ե՛վ սերը, և՛ ճշմարտությունն անժամանակյա են և վեր են մերօրյա միտումներից ու կարծիքներից: Երբեմն մեծագույն սերը, որը կարող ենք ցուցաբերել, ճշմարտությունը խոսելն է, սակայն ճշմարտությունը խոսելը սկսվում է ճշմարտությամբ ապրելուց:

Օգտվելով Սուրբ գրքից և օգտագործելով մի շարք պատմություններ՝ հանրաճանաչ հեղինակ Լիզա Բիվերը սովորեցնում է ոչ միայն բնակվել Աստծո անսասան ճշմարտության և սիրո մեջ, այլև դառնալ անկոտրում մարդ՝ ով հաստատակամ է, աներեր և նպատակաուղղված:

Աստծո ծրագիրն ի հայտ է գալիս, երբ մենք բնակվում ենք Նրանում: Նրանում է, որ մենք կերտվում և ձևավորվում ենք: Բնակվելով Քրիստոսի մեջ, Ով մեր Անկյունաքարն է, մենք դառնում ենք անկոտրում անձնավորություն:

Դիտե՛ք և ներբեռնե՛ք լրացուցիչ ուսումնական նյութեր
բազմաթիվ լեզուներով **CloudLibrary.org** կայքից:

ԿՅԱՆՔ ԱՌԱՆՑ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ

Ընդունե՛ք ձեր ինքնությունը և իրականացրե՛ք ձեր կյանքի նպատակը՝ շփոթությամբ և մրցակցությամբ լի այս աշխարհում:

Մենք դիտարկում ենք մարդկանց որպես մրցակիցների և սահմանափակում ենք մեր կյանքը՝ շարունակ համեմատվելով և մրցակցելով նրանց հետ: Նման վերաբերմունքը խորը հիմքեր ունի: Մենք թշնամի ունենք, ով հարձակում է գործում մեր մտքի, կամքի և զգացմունքների վրա: Նրա նպատակն է՝ թշնամացնել մեզ թե՛ ինքներս մեզ, թե՛ մեկս մյուսի հետ: Մենք ասես փակ շրջանում ենք, որը մեկուսացնում է մեզ մարդկանցից, կասկածի է ենթարկում մեր ինքնությունը և սահմանափակում է մեր արդյունավետությունը:

«Կյանք՝ առանց մրցակցության» գրքում հանրաճանաչ հեղինակ Լիզա Բիվերը ցույց է տալիս, թե ինչպես է հայտնությունն Աստծո սիրո մասին քանդում այս սահմանափակումները: Դուք կսովորեք այլևս չդիտարկել մարդկանց որպես մրցակիցների և սերտ հարաբերություններ կառուցել ձեր փափագելի Ստեղծողի հետ, ինչի շնորհիվ կբացահայտեք ինքներդ ձեզ և մտերմորեն կճանաչեք Նրան:

Լիզայի առողջ աստվածաշնչյան ուսմունքը՝ հագեցած մեր օրերի վերաբերյալ մարգարեական խորաթափանցությամբ և համեմված հումորով ու ավյունով, կոչ է անում ձեզ քայլ անել դեպի կյանք՝ առանց մրցակցության:

Դիտե՛ք և ներբեռնե՛ք լրացուցիչ ուսումնական նյութեր բազմաթիվ լեզուներով **CloudLibrary.org** կայքից:

«Մեսինջեր ինտերնեյշնլ» ծառայության նպատակն է՝ օգնել անհատներին, ընտանիքներին, եկեղեցիներին և ազգերին գիտակցել և վերապրել Աստծո Խոսքի վերափոխող զորությունը: Շնորհիվ այս գիտակցման՝ կփոխվեն թե՛ մարդիկ, թե՛ ամբողջ բնակավայրեր, և հասարակությունը գործուն կերպով կպայքարի այս աշխարհը կեղեքող անարդարության դեմ:

CLOUD LIBRARY

CloudLibrary.org կայքը առցանց հարթակ է, որը թույլ է տալիս ամբողջ աշխարհի հովիվներին և առաջնորդներին ստանալ անվճար թվայնացված ուսումնական նյութեր՝ իրենց լեզուներով:

Այցելե՛ք **CloudLibrary.org** կայքը և օգտվե՛ք Ջոն և Լիզա Բիվերների մի շարք այլ նյութերից ավելի քան **100 լեզուներով:**

էլեկտրոնային գրքեր, աուդիո և վիդեո ուսուցումներ, աուդիո գրքեր, Աստվածաշնչեր...

Ցանկանում եք ավելի՞ն:
Տեսածրե՛ք պատկերակը. CloudLibrary.org

CLOUD LIBRARY

ԹՐԵՐ ԿՐՈՂ ԿԱՆԱՅՔ

ԻՆՉՊԵՍ ՀԵՐՈՍԱԲԱՐ ԿՐԵՔ ՁԵՐ ԽԱՉԸ

Եթե երբևէ եղել է ժամանակ, որ կանայք պետք է զինված լինեն, ապա այն հիմա է: Աշխարհով մեկ նրանք նախապաշարմունքների, թրաֆիքինգի, բռնության և նույնիսկ սեռասպանության թիրախներ են: Լիզա Բիվերը գրում է, որ այս հարձակումներն ավելի շատ ցույց են տալիս, թե ինչպիսին կարող են կանայք լինել ապագայում, քան՝ թե ինչպիսին են նրանք եղել անցյալում:

«Թրեր կրող կանայք» գրքում նա ցույց է տալիս, որ մեր հոգևոր թշնամին ձգտում է զինաթափել կանանց՝ բոլոր կողմերից: Ժամանակն է, որ կանայք դառնան այնպիսի հերոսուհիներ, ինչպիսին Աստված ստեղծել է նրանց, և զբաղեցնեն իրենց դիրքը՝ լինելով խիզախ, զանազանող, ներող և իմաստուն:

Դուք կարող եք ներբեռնել այս գիրքը, ինչպես նաև Ջոն և Լիզա Բիվերների այլ ուսուցումներ՝ այցելելով «Մեսինջեր» ծառայության անվճար կայքը.

CloudLibrary.org

Ինչու են կանայք *ունենում կորուստներ,*

երբ նվիրվում են

Կանայք ստեղծված են՝ լինելու ավելին, քան սեռական առարկաներ տղամարդկանց համար: Ժամանակն է վերականգնել արժանապատվությունը, պատիվը, ուժը և, այո՛, նույնիսկ իշխանությունը թե՛ երիտասարդ, թե՛ տարեց կանանց կյանքերում, որոնք այլևս չեն ցանկանում ունենալ կորուստներ:

- Բացահայտե՛ք անկեղծ և Աստծո իմաստությամբ լի պատասխաններ դժվարին հարցերին
- Քնեցրե՛ք այն, ինչը չափազանց վաղ է արթնացել ձեր կյանքում
- Ընդունե՛ք Աստծո անսահման ներումը
- Վարվե՛ք ազատությամբ, զորությամբ և մաքրությամբ

Նա ջերմեռանդ է: Հակված է ծայրահեղությունների: Շփվող է: Ուժեղ է: Զվարճալի է: Այս խոսքերը նկարագրում են **Լիզա Բիվերին,** ով միջազգային ճանաչում ունեցող քարոզիչ է, հանրաճանաչ գրքերի հեղինակ՝ ըստ «Նյու Յորք Թայմս» ամսագրի, և *«Ավետաբեր»* հեռուստահաղորդման համատեղ հաղորդավարը, որը հեռարձակվում է ավելի քան 200 երկրներում:

Լիզան քարոզում է Ավետարանն իր թափանցիկ ոճով՝ բերելով օրինակներ իր անձնական փորձառությունից, որպեսզի զորացնի մարդկանց՝ ազատություն պարգևելով և վերափոխելով նրանց: Նրա սիրտը ցավում է հասարակական անարդարության պատճառով, և որպես փոփոխության ջատագով՝ նա հորդորում է մարդկանց դառնալ պատասխան այն խնդիրներին և դժվարություններին, որոնք ամենուր են:

Անվճար ներբեռնումների և տեսանյութեր դիտելու համար այցելեք CloudLibrary.org կայքը:

Cloud Library

MESSENGER INTERNATIONAL
MessengerInternational.org

Այս գիրքը նվեր է հեղինակի կողմից և վաճառքի ենթակա չէ:

Ցանկանո՞ւմ եք ավելին Տեսնել ինչ է պատահում

CLOUD LIBRARY